


8 91 . 99 ար

450

1935

00 AUG 2010



ՀԱՆԴԻՄ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

№ 2



ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

Փ Ա Ր Ի Զ
1935

“VEM,”

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE

Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱԻՐԵԱՆ.— Կովկասի մշակութային պատմությունը 1

Կ. Վ. ՏԱՅԳ.— Լեւոն Շանթի գեղարվեստական երկերը . . . 15

Յ. ԻՐԱԶԵԿ.— Հայկական տպագրութեան անցեալից . . . 27

ԳՐՕ.— Մի հատուած յուշերից . . . 45

ԱՆԴՐԷՆ ՄԱՆԴԵԼՇԱՍՄ.— Ռուսաստանի քաղաքականությունը
Թուրքիայում մեծ պատերազմից առաջ . . . 55

ՇԱԽԱՐՇ ՆԱՐԳՈՒՆԻ.— Նպաստ մը հայ եւ քուրճ աշուղական
գրականութեան համեմատական ուսումնասիրութեան . . . 78

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՈՐԸՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ . . . 89

ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ.— Երկու վաւերագիր.- Գրիբոյէդովի սպա-
նութիւնը . . . 97

ԱՆՅԵԱԼԻ.— Յարութիւն Յորդանանեան.- Միերան Սվազլի.-
Յովսէփ Միրզայեանց.- Տիգրան Մուշեղեան, Ա. Սոնդ-
կարեան . . . 102

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ.— Գարնալ ազգ.-եկեղեցական սահմա-
նադրութիւնը.- Երւ. Տէր-Անդրէասեան.- Տիկ. Ե.
Զօրեանի յորելեանը.- Նուպարեան Մատենադարանը.-
Ա. Ահարոնեանի առողջութիւնը.- Կոմիտասի անտիպ
գործերը.- Բաֆլիի ծննդեան հարիւրամեակը . . . 110

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ.— «Յուսաբեր»-ի բացառիկ քիւր.- Նոր
պարբերականներ ՝ Մամուլը Հայաստանում.- Հա-
մագայիւնի տարեգիրքը . . . 119

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ.— Գ. Լեւոնեան, «Հայոց Պարբերական Մամու-
լը», Ս. Վր.

ՅԱԻԵԼԻԱՍ.— Վ. Եպ. Մանկունի, Գեորգ Գ. եւ իր ժամանակը 145


Gérant : V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE, 42, Rue de la Jomiquière, PARIS (47)

03.05.2013

00 AUG 2010

1-ii ЭКЗ



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Գ. ՏԱՐԻ, ԹԻՒ 2

1935

ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱԻՐԵԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

4253

«Վէմ»-ի խմբագրութիւնը ինձ յանձնարարել է ծանօթացնել իր ընթերցողներին հանդուցեալ ահադ. Ն. Մառի հայադիտական ուսումնասիրութիւններին: Ինձ յարմար թւայ կանգ առնել Կովկասի եւ Հայաստանի քաղաքակրթական պատմութեան ընդհանուր ուրազիծը ներկայացնող «Կովկասի մշակութային աշխարհն ու Հայաստանը» ուսերէն աշխատութեան վրա, որ լոյս է տեսել 1915-ին, պատերազմի ամենատաք օրերին, երբ հրապարակ էր դրւած եւ նոյն իսկ նախորդել էր ճնշւած ժողովուրդների ազատութեան խնդիրը: Իր այդ դրւածքով Ն. Մառը բարոյական պարտք համարեց դիտանկանօրէն հիմնաւորել հայերի ազատագրութեան ձգտումները:

Ի հարկէ, թերեւս, աւելի լաւ կը լինէր ուղղակի Մառի աշխատութեան թարգմանութիւնն առաջ բերել, բայց ի նկատի ունենալով որոշ առիթով դրւած յօդւածի բնոյթը եւ «Վէմ»-ի սահմանափակ էջերը՝ ինձ աւելի նպատակաշարժար է թուում տալ յօդւածի ամփոփումը, յաճախ, հեղինակի իսկ խօսքերով, պահանները լրացնելով Մառի միւս գրւածքներից:*) Միւսնոյն ժամանակ ինձ յարմար է թուում նիւթը խտացնել երկու յօդւածի մէջ՝ 1) «Կովկասի մշակութային պատմութիւնը», 2) «Հայաստանի մշակութային պատմութիւնը»:

*) Գլխաւորապէս հետեւեալ աշխատութիւններից.-

1) «Արկաուն, Բրիտանոնեաների մոնղոլական անունը քաղաքական հայերի կապակցութեամբ»:

2) «Հայերի, վրացիների եւ աշանների մկրտութիւնը Ս. Գրիգորի ձեռագրով, Արարական տարբերակ», 1905 թ.

643

504-2001



նը» : Այս երկու յողւածում էլ ինձ պատկանում է ոչ աւելի քան հարիւր բառ , մնացած ամբողջը առնւած է Մառի գործերից : Ես միայն հաւաքել ու կապակցութեան մէջ եմ դրել մեծանուն գիտնականի փաստերն ու մտքերը :



Կովկասի մշակութային պատմութեան լուսարանութիւնը շատ դժւար գործ է : Բայց եւ այնպէս , որքանեւ փափուկ լինին շօշափւած խնդիրները , որքան նրանց լուսարանութիւնը ցաւազին արձագանգներ դտնէ այս կամ այն ժողովրդի սրտերում , անկարելի է ուրանալ , որ ակադ . Մառը բացառիկ բարեացակամութեամբ եւ դիտական արտակարգ հմտութեամբ է մօտեցել իր քննած հարցերին :

Կովկասի մշակութային պատմութիւնը աւելի քան վեց ու կէս հազար տարիների անցեալ ունի : Այդ անցեալը թողել է եօթը լեզուներով գրւած պատմական յիշատակներ : Առաջաւոր Ասիայի ժողովուրդների մէջ յայտնի լաւագոյն ներկայացուցիչները ոչնչացել են՝ իրենց յետեւը թողնելով յուշարձանների բեկորներ , որոնք թաղւած են դետնի տակ , ժամանակագրական տեսակէտից տարբեր խաւերում : Գետնի տակի քաղաքակրթական այդ խաւերի մասին վկայում են դետնի երեսը , յաճախ լեռների բարձունքներում մնացած քարէ յուշարձանները եւ դեռ չյփերձանւած այնքան խորհրդաւոր արձանագրութիւնները : Այդ հնագոյն պատմական ժողովուրդների ապրումների վրա աճել ու դարգացել են երկու հին քաղաքակրթութիւններ , մէկը իրանական , եկած կովկասեան աշխարհի արեւելքից , միւսը հելլենական , հետագային հին - քրիստոնէական եւ ապա բիւզանդական՝ եկած արեւմուտքից : *)

Կովկասեան աշխարհը , բանալով իրեն համար քրիստոնէութեան հետ հաղորդակից լինելու առանձին ճանապարհ , կարողացաւ երկու քաղաքակրթութիւնից էլ ապահովել իր անկախութիւնը : Քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ , Կովկասեան աշխարհը հոգեպէս մասը դարձաւ մի աւելի ընդարձակ աշխարհի՝ համայն բազմալեզու քրիստոնեայ Արեւելքի , որ երկուստեք ցնցում էր երկու պետական կազմակերպութիւնների կողմից , արեւելքից՝ Պարսից կուսպաշտ միապետութեան եւ արեւմուտքից՝ բիւզանդական քրիստոնեայ կայսրութեան :

*) Հոովմայեցիք Կովկասի հետ շփելիս կամ Կովկաս մտնելիս , նայած ժամանակին , գործել են այս կամ այն միջամկեալ (յուճակամ) մշակութային միջավայրի միջոցով :

Հարաւից հասած հարւածը խորտակեց բազմալեզու քրիստոնեայ Արեւելքի մի մասը , որ ընկնելով՝ իր հետ զգետնեց եւ Կովկասեան աշխարհի մի մասը : Իրանից առաջ , հարաւի հարւածի տակ փլել էր իրանական աշխարհը : Տապալւած քրիստոնեայ արեւելքի ուսերի եւ քաղաքակրթ իրանի աւերակների վրա ծաղկեց արեւելեան մահմետական քաղաքակրթութիւնը արաբների օրով՝ վերածնւեց մահմետական Պարսկաստանը իրանական աւանդութիւնների հողի վրա , ծաղկեց Իրան - մահմետական աշխարհը , եւ Արեւելքում ցրիւ եկաւ արաբական լուսամիտ խալիֆայութիւնը : Իրան - մահմետական աշխարհի անկումով՝ ընկաւ եւ Բիւզանտիոնը : Մեր աչքի առջեւ քաղաքական փլուզումի մատնւեց թիւրք - մահմետական կայսրութիւնը , որ փոխակերպւելով Նոր Թիւրքիայի՝ փորձում է ազատել վերջնական խորտակումից :

Կովկասեան աշխարհը կողմնակի դիտող չէ այս ահագնադղորդ խորտակումների հանդէպ . կամայ թէ ակամայ՝ նա միշտ մասնակցել է դէպքերին : Նրա գլխին են իջել ամենից ահարկու հարւածները : Ետտոնց կրճատւած սահմաններով՝ նա սեղմւած է Կովկասեան լեռներում , կորցրել է իր եօթը գրական լեզուներից հինգը , տկարացած է մշակոյթով , բայց կենդանի է միշտ , ընդունակ է յենարան ու մղիչ ոյժ դառնալու համաշխարհային պատմութեան համար ոչ միայն իր տեղազրութեամբ ու դիրքով , այլեւ ժողովրդի հոգեբանութեամբ ու բարոյական ուժով :

Կովկասեան , կամ , աւելի ճիշտ , յարեթական աշխարհը միայն մի մասով է յենւում Կովկասեան լեռներին , իսկ միւս մասով տարածւում է բաւական հեռու , լեռների միւս կողմը : Հարաւում նա ի վաղուց անտի կպած է սեմական աշխարհին : Նրա հետ ունեցել է աղգակցական կապեր : Նրա հետ ընդհարել ու մրցել է : Նրա հետ հետագային հաստատել է , վերջապէս , անցնող մի սահմանագիծ Միջագետքով : Մեր աշխարհի անմիջական շփումն ու հաղորդակցութիւնը սեմական աշխարհի հետ Միջագետքում մնացել է եւ այն ժամանակ , երբ Առաջաւոր Ասիայում յայտնւեցին արիականները , որոնք շարժւում էին երեք ուղղութեամբ . 1) հարաւից՝ Թրակիայից դէպի Փոնդիա եւ աւելի հեռուները , դէպի արեւելք . 2) արեւելքից , Իրանի վրայով՝ դէպի արեւմուտք եւ 3) հիւսիսից հարաւ , Կովկասեան լեռների վրայով : Արիական - եւրոպական աղգային զանգւածների բոլոր այս հոսանքները , վերջ ի վերջոյ , ամուր կերպով գրաւեցին մասնաւորապէս այն հողամասը , որի վրա հետագային ծագեց պատմականօրէն ծանօթ Հայաստանը :

Կովկասեան աշխարհի գրեթէ բոլոր շրջանները հետզհետէ կա-

րեւոր չափով ողողեցին արիական ցեղերի հոսանքներով: Հիւսիսում, Կովկասեան լեռների մօտ, մեր աշխարհի թիկունքն էր, որ իր երեսը դարձրել էր հարաւի կողմը, դէպի կեդրոնը այն ժամանակւայ քաղաքակրթութեան: Թիկունքը չէր փակուում Կովկասեան լեռներով. նա կազմուում էր Կովկասեան քաղաքակրթութ Աշխարհի այն ցեղերից ու ժողովուրդներից, որոնք պարտւել էին առաջաւոր դիրքերի վրա՝ ընդհարւելով արիական - եւրոպական ռազմատենջ աղւային զանգւածների հետ, որոնք ունէին զինւորական մշակոյթ ու զինւորական ուժեղ կազմակերպութիւն: Չարդւած ու մի կողմ շարտւած՝ մեր աշխարհի ամենից յառաջադէմ ժողովուրդներն ու ցեղերը իրար յետեւից քաշուում էին այն ժամանակւայ թիկունքը հիւսիսում, թաղւում էին Կովկասի անմատչելի կիրճերում ու բարձրունքներում՝ ձգտելով սահայանել իրենց հաղարամեակների ընթացքում զարգացած աշխարհը, իրենց ասուածներին, իրենց հաւաան ու լեզուն, իրենց արւեստի եւ արհեստի ընտելութիւններն ու ճաշակը: Անցնում էին լեռնաշղթայի միւս կողմը, ուր մինչեւ օրս էլ մնացել են նոյն աշխարհի բեկորները - չէչէնները, իրենց աղւակից ցեղերով արւելքում, եւ չէրքէսները՝ աղւակից ցեղերով արւեմուտքում: Շատ վաղուց է, որ այս թիկունքի մէջ, Սեպի պէս մտել են արիական - իրանեանները, այսպէս կոչւած օսերը, որոնք իրենց իրոն են կոչում, եւ աւելի ուշ՝ թուրքական ցեղերը՝ կարազայներ, բալկարներ եւ ուրիշներ:

Ինչոր այս այլացեղ ժողովուրդներն ու ցեղերը հոսում - թափւում էին Կովկասեան առանձնացած աշխարհը: Ճեղքում - անցնում էին աւելի հարաւակողմը, ողողում էին եւ Կովկասեան աշխարհի բնիկների միջին եւ հարաւային շերտերը: Ո՛չ մի շերտ ազատ չի մնացել արիական աղւային աղւեցութիւնից, որ դալիս էր հարաւից կամ հիւսիսից: Հիւսիսային ոչ միայն հնդեւրոպացի, այլեւ թուրք այլազգիների աղւեցութիւնը խիստ մեծ չափով բարդացրեց լեռնաշղթայի վրա ընկած Կովկասեան աշխարհի թիկունքի լեզուները: Այստեղ էր եւ Կովկասեան անմատչելի ամրոցը կապաշտութեան, որ բերւած էր հարաւից՝ նրա սկզբնական հայրենիքից աստղերի եւ սրա հետ կապւած դարբնութեան արհեստի պաշտամունքի հետ միասին: Սրա հետ կապւած էին եւ արւեստի ու արհեստի վարպետութիւնները, որոնք մինչեւ այսօր էլ երեւան են դալիս արծաթագործութեան եւ պղնձագործութեան բնագաւառում:

Այս կապաշտութեան թիկունքին, հիւսիսային այս շերտին, հետագային արեւելքից միացաւ եւ Աղւանից երկիրը, որ բնակեցւած էր իր հետ աւելի սերտ աղւութիւն ունեցող մի ժողովրդով:

Կովկասեան ժողովուրդների երկրորդ կամ միջին շերտը, որ տարածւած էր լեռնային ցեղերին զուգընթաց, Աղւանքից դէպի արւեմուտք, ներկայացնում էին վրացիներն ու մինգրէլները լազերի հետ միասին:

Երրորդ, հարաւային շերտը բովանդակում էր Հայաստանը: Նա ամենից աւելի բաց էր ներգաղթողների համար եւ այդ պատճառով մեզ չի հասել անխառն վիճակում նրա բնիկ ժողովուրդը, որ սերտ արիւնակցական կապերով կապւած էր առաջին եւ երկրորդ շերտերի ժողովուրդների հետ: Այս վերջին շերտերի ժողովուրդներից շատերի համար երրորդ շերտը եղել է եթէ ոչ սկզբնական հայրենիք, գոնէ երկարատեւ բնակութեան վայր:

Ինչոր երեք շերտերի բազմաթիւ ժողովուրդներն ու ցեղերը կազմում էին մէկ արիւնակից, այնժամանակ դեռ անխառն, աղւակցական ընտանիք, որ խօսում էր միեւնոյն լեզու կամ միեւնոյն լեզուական ընտանիքի բարբառներով: Այդ լեզւական ընտանիքը դիտութեան մէջ վերջերս ստացաւ յարեթական անունը: Արիւնով ու լեզուով սերելով միեւնոյն արմատից՝ յարեթական էրը կրօնական հաւատալիքներով ընդհանուր պաշտամունքով էլ միացած էին: Կրօնական հաւատալիքների ընդհանրութիւնից բխում էր կրօնական պարերի հետ կապւած եւ պաշտամունքի կարիքներին ծառայող երգի ինչպէս եւ ասուածների ծագման մասին եղած առասպելների ընդհանրութիւնը: Առասպելները այլափոխուում էին հեքիաթների, որոնք իրենց բովանդակութեամբ մինչեւ այսօր էլ միմեանց նման են յարեթական աշխարհի բովանդակ տարածութեան վրա:

Յարեթականները միացած էին եւ այն նւաճումներով, որ ձեռք էին բերել նիւթական, ամենից առաջ մետաղագործութեան, ապա խոշոր ջրարաշխական կառուցումներ պահանջող կատարելագործւած երկրագործութեան եւ այգեգործութեան բնագաւառում:

Արւեստի զարգացման աստիճանի մասին վկայում են թէ հաղւստների զարգանկարները եւ թէ քարից շինւած, երբեմն 4-5 մետր մեծութիւն ունեցող այն վիշապները, որոնք վերջերս յայտնագործւել են Երեւանի մօտերը:

Նախ քան արիւնակցիներին իրենց երկրում երեւալը, Քրիստոսից 4500 տարիներ առաջ, յանձին էլամիտների, յարեթականները արդէն ունէին սեփական դիր, իսկ յանձին շումէրների, կարող են, առհասարակ, իրենց սեփականացնել տառերի դիւտի առաջնութիւնը: Նրանք սեփական դրեր ունին զեռեւս Աքիմէնեան եւ դրանից առաջ Վանայ թագաւորութեան ժամանակ, ինչպէս այդ վկա-

յում են այն բազմաթիւ սեպածե արձանագրութիւնները, որոնք յայտնագործւած են Վանայ լճի աւազանից մինչեւ Ախալքալաք երկարող տարածութեան վրա: Բոլոր այս տւեալները, եւրոպական քաղաքակրթութեան արշալոյսից դեռ շատ առաջ, յարեթականներից ու յարեթակերպներից մշակեցին ինքնայատուկ և ինքնուրոյն մի աշխարհ, դեռ ա՛յն ժամանակները խորացրին նրանց ցեղային բարդ հոգեբանութեան ազգակցութիւնը, ստեղծեցին նրանց մէջ մի առանձին քաղաքակրթական թթիւմ որ, որը ինքնուրոյն մշակութեան էր ենթարկւում ներմուծող բոլոր մշակոյթներն ու հաւատալիքները:

Յարեթական աշխարհի նոր քաղաքակրթութիւնը, որ սկսւում է Քրիստոսից յետոյ չորրորդ դարից, ծագել է, հիմք ունենալով քրիստոնէական սկզբունքները, որոնք ընկան տեղական հին յարեթական քաղաքակրթութեան սկզբունքների վրա, կամ հետզհետէ թափանցելով ժողովրդի մէջ, աստիճանաբար ծծեցին նրա կենսական տարրերը: Թէ քրիստոնէական վարդապետութիւնը մեր աշխարհում, թէ քրիստոնէական կենցաղը և թէ քրիստոնէական արւեստը յարեթական հիմքեր են յայտնաբերում: Քրիստոնէական սկզբունքները Կովկասեան աշխարհը մտան քաղաքակրթութեան հին, վաղուց ի վեր հարթւած ճանապարհով, հարաւից: Քրիստոնէական քարոզչութեան նպատակով առաջ եկած՝ նոր գրերը արամական ծագում ունէին և գալիս էին Սիւրիայից: Ս. Գրքի առաջին թարգմանութիւնները արւել էին ասորական լեզուից: Տեղական քրիստոնէական գրականութեան առաջին յուշարձանները առնւում էին սիւրիական բնագիրներից կամ յղանում էին նրանց ազդեցութեան տակ: Քրիստոնէական արւեստի հնագոյն յաշարձանները, մանաւանդ ճարտարապետութեան մէջ, մեծ չափով նման են Սիւրիայի հին քրիստոնէական արւեստին:

Չուտ արեւելեան ծագում ունեցող և նոյնիսկ բիւզանտական միջավայրից չանցած քրիստոնէական այս հիմքերը ընդ միշտ որոշեցին Կովկասեան աշխարհի եկեղեցական կեանքի և առհասարակ եկեղեցական կենցաղի բնոյթը. մի կողմից եկեղեցական հիմնարկութիւնների անկախութիւնը քաղաքացիական իշխանութիւնից, միւս կողմից եկեղեցու ժողովրդականութիւնն ու մատչելիութիւնը իւրաքանչիւր ցեղին նրա սեփական լեզուով: Յունական քրիստոնէութիւնը, որ Սեւ Մովի ափերով դնում էր իր նաւերի յետեւից, չէր կարող խորունկ արմատներ ձգել, որովհետեւ նա կրօնական նոր վարդապետութեան հետ միաժամանակ բերում էր ազգարնակութեան համար խորթ յունարէն լեզուի պարտագրութիւնը: Բացի այդ յոյն

քարոզիչները շատ ուշ հասան երկրի ներսերը և ստիպւած եղան տեղի տալ սիւրիական ժողովրդական քրիստոնէութեան քարոզչութեան առջեւ:

Սակայն, այդ ամենը բնաւ չի նւազեցնում յոյն քրիստոնէական կրթութեան, մանաւանդ քերականական և փիլիսոփայական դպրոցների ազդեցութեան ոյժը, բայց նրա նպաստել է միայն առաջին մէկ պահին իւրացւած սկզբունքների, միանգամ ընդ միշտ հաստատւած ուղղութեան խորացման:

Կուպաշտական ժամանակներից ժառանգելով առանձին ազգային - քաղաքակրթական մի թթիւմ որ, քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ էլ, դեռեւս հինգերորդ դարում, Կովկասեան աշխարհը սեփական դիր, սեփական եկեղեցի, սեփական արւեստ ստեղծելով՝ աւելի ցայտուն կերպով արտայայտեց իր հոգևոր ինքնուրոյնութիւնը: Կովկասեան աշխարհի ինքնուրոյն մշակոյթի այս գործօնների նշանակութիւնը բնաւ չթուլացաւ, այլ, ընդհակառակ, զօրացաւ, երբ հարիւր տարի յետոյ, մէկ գրից, մէկ եկեղեցուց, մէկ արւեստից, ազգային խմբաւորումներին համապատասխան, դուրս եկան տարբեր գրեր, տարբեր եկեղեցիներ, տարբեր արւեստներ, որոնք բոլորն էլ ունէին մէկ հիմք և վերին աստիճան իրար նման ձևեր, այնպէս որ երբեմն դժւար է լինում նոյնիսկ զանազանել մէկը միւսից:

Պաշտպանելով իր ուրոյն մշակութային դիրքերը՝ Կովկասեան աշխարհը պարիսպ չէր քաշում ոչ իրանի առջեւ, որի հետ կապւած էր դարաւոր մշակութային աւանդութիւններով, ոչ էլ Բիւզանտիոնի, որի հետ մօտ էր նոր, այլևս հարագատ դարձած քաղաքակրթութեան աւանդութիւններով և ոչ էլ սեմական աշխարհի՝ որի հետ բացի ազգային յարեթական լեզուների արմատներից, առանձնապէս սերտ կապերով կապում էր հարազատ եկեղեցին, որ իր ըսկիզբը առել էր Սիւրիայից: Նոյնիսկ, աւելի ուշ, եկեղեցական միութեան խանգարումից յետոյ էլ (է. դար), երբ կազմեցին հայոց ու վրաց զոյգ եկեղեցիները, Կովկասեան աշխարհը չզաղարեց սերտ բարկամական կապեր պահելուց սեմական քրիստոնէայ աշխարհի հետ, յանձին հայոց եկեղեցու՝ սիւրիացիների և զպտիների հետ, յանձին վրաց եկեղեցու՝ քրիստոնէայ արարների և յոյն ողղափառների: Այս հին քրիստոնէայ Արեւելքը, հակառակ արեւմտեան եկեղեցու, մէջը հաշտելով և յունականը, բազմալեզու է կամ «ազգային լեզուի» տէր: Չնայած այդ բազմալեզուութեան, յիշեալ ժողովուրդները կազմում էին մէկ ընդարձակ և ամբողջական աշխարհ:

Մահմեդականութիւնը Կովկասեան աշխարհում ծայր աստիճանի ալլաղան է: Աղլային զանգւածներէն մի քանիսը շատ ուշ են երեւացել Կովկասում, ինչպէս օրինակ, թուրք - սելջուկները, որ եկան ժ.Ա. դարում: Սիւննի մահմեդականների ահաբիւն մասը Կովկասեան աշխարհում կազմւած է նախկին քրիստոնեաներից: Տեղ - տեղ նրանք պահել են մայրենի լեզուն - վրացերէն, լազերէն (վերջինս նոյնն է ինչ որ մինդրելերէնը), հայերէն, ինչպէս համընցիները եւ բազմաթիւ լեռնական լեզուներ: Բացի այդ, նրանք յաճախ ժառանգել են քրիստոնէական կենցաղային աւանդութիւնները, պահելով երբեմն նոյն իսկ քրիստոնեայ ազգակիցների ուխտատեղիներն ու տօները: Տեղ - տեղ մնացել են և ազգակցական կապերը քրիստոնեաների ու մահմեդականների միջև: Տարբեր է և այդ հիմնական զանգւածների հաւատափոխութեան ժամանակը: Սկսելով ժ.Գ. դարից՝ մահմեդականացման դործը, որոշ տեղեր, ինչպէս օրինակ ձորոխ գետի աւազանում, տեւեց մինչև 19րդ դարի վերջերը եւ կարելի է, որ դեռ այսօր էլ շարունակուի է:

Ինիկները մահմեդականացած զանգւածը առաջնորդի դեր էր կատարում տեղական կենցաղային և կրօնական առանձնայատկութիւնները ընդհանուր մահմեդական միջավայրին փոխանցելու գործում և իր հերթին մահմեդական լուսաւորութեան աղբիւր էր հանդիսանում այն ժամանակները բարձր զարգացում ունեցող Կովկասեան աշխարհի համար: Քիչ նկատելի է և արար մահմեդականների ազդեցութիւնը, ի բաց առեալ բժշկական դիտութեան, դուցէ և իրաւունքի բնագաւառը, թէև այստեղ էլ ազդեցութիւնը անցել է ոչ թէ արարների, այլ արարացած սիւրբիացիների և հրեաների միջոցով:

Իրանի քաղաքակրթութեան ազդեցութիւնը Կովկասեան աշխարհի վրա դալիս է ի հնուց անտի: Նա հիմնւած է Կովկասեան աշխարհի ժողովրդական - հոգեբանական ազգակցութեան վրա Իրանի հետ, որ անկասկած ծծել ու լուծել է իր մէջ յարեթական ազգային զանգւածներ:

Իրանական - մահմեդական քաղաքակրթական հոսանքի դերը Կովկասեան աշխարհում եղել է ահաբիւն, բայց միայն հրահրող: Նա նպաստել է Կովկասեան աշխարհի քաղաքակրթական հորիզոնի լայնացման եւ օժանդակել է նրա ազատագրութեան կրօնական միակողմանի ուղղութիւնից: Իրան - մահմեդական մշակոյթային հոսանքը աշխարհականացրեց հասարակական միտքը եւ կեանքի կոչեց զուտ

աշխարհական մի ուղղութիւն, որ նայած միջազգային պայմաններին՝ մի տեղ արտայայտեց քաղաքացիական արեւստի, մի այլ տեղ՝ աշխարհիկ դեղարեւստական գրականութեան մէջ:

Ժողովուրդների մերձաւոր ազգականութիւնը որոշում էր նրանց միացումը ազգային մէկ խմբաւորման, մէկ պետութեան մէջ: Կովկասը, կամ աւելի ճիշտ, յարեթական աշխարհը չգիտէր որեւէ դէպք, որ մի ժողովրդի ցեղից կազմւած լինի մի պետութիւն կամ գոնէ պարզ ազգային մի խումբ: Վրաստանն ու Հայաստանն էլ այդ տեսակէտից բացառութիւն չեն կազմում: Կովկասեան աշխարհի պատմական բովանդակ կեանքը ընթացել է ոչ միայն միմեանց մօտիկ, այլև յարեթական մշակութային շաղախի ընդհանուր տարրերի տեսակէտից միմեանց յարակից ժողովուրդների միութեան ստեղծագործական հունով:

Աղլային բնական հաւաքականութիւնները որոշ ժամանակից ի վեր սկսեցին խմբաւորւել ըստ տնտեսական - ընկերային հիմքերի: Արհեստների եւ նիւթական մշակոյթի տարբեր տեսակների արտադրութեան վաղուց ի վեր գոյութիւն ունեցող բնական բաշխումը ըստ ցեղերի պահուց շատ երկար:

Վերը մատնանշած պատմական օրէնքի անշեղ կիրարկումը թուլանում էր որհետակցական եղբայրակցութիւնների գոյութեամբ, որտեղ իշխում էին ընտրական սկզբունքներ եւ ձեռնադրութեան ծիսակատարութիւններ: Այդ միութիւններն էին, որ հետագային վերածւեցին այն համընթացութիւնների, որոնք վաղ բնոյթ էին կրում եւ նւիրւած էին քրիստոնէական այս կամ այն սուրբին, որին համարում էին իրենց հովանաւորողը: Աղլային հաւաքականութեան հարազատ միջավայրում համընթացութիւնները չէին կարող խախտել ոչ ընդհանուր հասարակարգի եւ ոչ էլ կենցաղի հիմքերը: Դրանք հաւասարապէս անխախտ էին մնում նաեւ հակառակ գոյութիւն ունեցող դասակարգային ու դասային բաժանումների:

Քաղաքների եւ դրանց հետ միասին առեւտրական ու արհեստաւորական (համընթացութիւններ) դասակարգերի աճման զուգընթաց, այս վերջինները ցուցահանում էին սիստեմատիկ գործունէութիւն ազգային ուղիների եւ հաւաքականութիւնների շրջափակից դուրս՝ միջազգային մրցակցութեան շուկայում: Օտարութեան մէջ, մասնաւորապէս ազգակցական հարազատ միջավայրում վերոյիշեալ առեւտրական դաղութները ներկայացւում էին որպէս երկար ժամանակով բնակութիւն հաստատող հիւրեր: Բայց ժամանակի հետ, նրանք բռնում էին ապազգայնացման ուղին եւ ձուլւում էին իրենց ընդունող ազգային հաւաքականութեան մէջ, կազմելով նրա առեւ-

տրական դասը: Այս կամ այն ձևով, այդ առեւտրա - արդիւնաբերական դասը զարգանում էր ու ամրասնուում տնտեսական պայքարի հետեւանքով:

Միայն մէկ ժողովրդի՝ քրդերի ցեղը չկարողացաւ ոչ յարել կազմակերպուող ազգային հաւաքականութեան, ոչ առանձին ազգ կազմել եւ ոչ էլ հեռանալ, անջատուել Կովկասեան աշխարհից եւ ձուլուել պարսիկներին, որոնց հետ քրդերին մօտեցնում է լեզուների նմանութիւնը: Քրդերի լեզուն, ներկայումս զուտ իրանական լինելով հանդերձ, պահել է յարեթական լեզուների բազմաթիւ մնացորդներ, իսկ կրօնը, որ աստղապաշտական տիպ է եւ յարեթական ծագում ունի, նրանց դարձնում է ազգակից կովկասեան աշխարհի ժողովուրդներին: Քրդերի մի մասի իսլամացումը ստեղծեց հոգեկան երկճիւղում այդ ժողովրդի մէջ, բայց անջատուած մասերը միանում են ժողովրդական հարուստ բանասիրութեամբ ու երգերով, որոնք մեծ ժողովրդականութիւն ունեն նաեւ թուրքերի եւ հայերի մէջ: Քրդերն էին հարստացնում թուրքերի դրաւոր դրականութիւնը, որի ամենափայլուն ներկայացուցիչն է համարուում բանաստեղծ Ֆուզուլին, որ քիւրդ էր: Ռազմական գործի ասպարէզում համաշխարհային հռչակ է վայելում խաչակրաց շրջանից բոլորին յայտնի Սալահէդդինը, որ հայոց երբեմնի մայրաքաղաք Դւինի քրդերի ցեղից էր: Նոյն ցեղից է ծագել նաեւ քրդական այն հարստութիւնը, որ մի ժամանակ տիրել է հայոց միւս մայրաքաղաքին՝ Անիին:

Որպէս կազմակերպիչ ոյժ է՛լ աւելի նւազ է եղել նշանակութիւնը այն թուրք - մուսուլմանների, որոնք Կովկաս են եկել աւելի ուշ, երբ տեղական ժողովուրդները արդէն ներկայացնում էին ձեւակերպուած ազգային հաւաքականութիւններ: Թուրքերը Կովկասում երեւան են դալիս միայն ԺԱ. դարում, բայց զանգւածային բնակութիւն հաստատում են այնտեղ աւելի ուշ, ընդորում դալիս են երկու կողմից - հարաւ արեւելքից՝ ադրբէջանցի շիաները եւ հարաւ արեւմուտքից՝ օսմանցի սիւնիները: Թուրքերը, որ ընդհանուր ոչ մէկ բան ունէին Կովկասի բնիկ ժողովուրդների հետ, բնականաբար դուրս են մնում կովկասեան աշխարհից: Հին ժամանակներում, մըշակութային սերտ կապ պահպանելով մէկ մասը Թուրքիայի, իսկ միւսը Պարսկաստանի հետ (նայած ինչ կրօն են դաւանում) եւ կամ մտնելով այդ պետութիւններից մէկի եւ միւսի գերիշխանութեան տակ, նրանք Կովկասեան աշխարհում չկարողացան ստեղծել ու չստեղծեցին ինքնուրոյն ու իւրայատուկ եւ ոչ մէկ բան:

Այսպիսով Կովկասում՝ ըստ բնական պայմանների, կազմակեր-

պրեցան երեք հաւաքականութիւններ՝ աղւանական, վրացական եւ հայկական:

Կովկասեան Աղւանքը, արանեան կամ աղւանեան հաւաքականութիւնը, (նոյն եւ արարների յիշատակած աղւանները), կովկասեան աշխարհի համար ներկայացնում է կարծես թէ մեռած, միայն պատմական շահեկանութիւն: Մի ժամանակ, արդէն քրիստոնէական շրջանում, աղւանները հայերի եւ վրացիների հետ միասին, կազմում էին յանուն քրիստոնէութեան ու կովկասեան աշխարհի քաղաքակրթութեան համար պայքարող առաջամարտիկների մի երրորդութիւն: Աղւանները, չկարողանալով ստեղծել իրենց համար մի այնպիսի հասարակակարգ, որ հնարաւոր դարձնէր նոր մշակոյթի իւրացումը, ցրիւ եկան ու ձուլուեցին հայ եւ վրացական ազգային հաւաքականութիւնների մէջ:

Աւելի կենդանի շահեկանութիւն է ներկայացնում հայ ազգային հողերի ընդարձակումը, որ տեղի ունեցաւ չորհիւ նախևառաջ հայ մշակոյթի եւ ապա նաեւ եկեղեցու ունեցած յաջողութիւնների եւ այդ՝ ոչ միայն Աղւանից աշխարհում, այլ նաեւ Ճորոխի աւազանում: Այդ աւազանը եւ նրա շրջակայքը նախապատմական ժամանակներում բռնւած է եղել յարեթական ցեղերով: Յաջորդ շրջանում բընակչութիւնը արիականացել է եւ դարձել է յարեթա - արիա - եւրոպական, այսինքն հայկական: Քրիստոնէութիւն ընդունելու ժամանակ եւ նախ՝ քան հայ եւ վրացական եկեղեցիների բաժանումը այստեղ գտնուել են հայկական Տայք եւ Կլարճ գաւառները: Եկեղեցիների բաժանումից յետոյ, այդ գաւառների բնակչութիւնը, որ քաղքէդոնական նախասիրութիւններ ունէր, սկսեց հակել դէպի իր հաւատակիցները, այսինքն դէպի քաղքէդոնական վրացիները: Սկսած Ը. դարից հայերին սկսան դուրս քշել այստեղից, եւ վրացի քարթլեցիները սկսեցին վրացացնել ամբողջ ազգաբնակչութիւնը, բաց թողնելով իրենց ազգային տիրապետութեան համար հետեւեալ բնորոշ կարգախօսը. «Վրաստան է համարուում այն լայնածաւալ երկիրը, որտեղ եկեղեցական արարողութիւնները կատարուում են եւ բոլոր ազօթքները կարդացուում են վրացերէն լեզուով»: Սակայն շատ հիմքեր կան ենթադրելու, որ այդ գաւառներում վրացերէնը - գոնէ մինչեւ Ժ. դարու կէսը եւ հաւանօրէն նաեւ դրանից յետոյ - գործ էր ածուում միայն եկեղեցիներում, իսկ ազգաբնակչութեան խօսակցութեան լեզուն շարունակում էր մնալ հայերէնը:

Դժբախտաբար այստեղ հնարաւորութիւն չկայ աւելի մանրամա-

սըն կանգ առնել հայ - վրացական յարաբերութիւնների վրա, ուստի եւ ստիպւած ենք վերադառնալ արաններին :

Հայ եւ վրացական հաւաքականութիւնների մէջ ձուլւեց աղւանները այն մասը միայն, որ ընդունել էր քրիստոնէութիւն, որովհետեւ Աղւանից աշխարհում, բացի այն կատաղի պայքարից, որ տեղի ունէր քրիստոնէական երկու դաւանութիւնների միջեւ, տարւում էր է՛լ աւելի կատաղի պայքար քրիստոնէութեան եւ կռապաշտութեան միջեւ :

Կռապաշտութեան հաւատարիմ մնացած աղւան ցեղերը քշեցին դէպի հիւսիս, դէպի կովկասեան աշխարհի յարեթական թիկունքը, կազմելով որոշ չափով նոյնիսկ նրա մի մասը : Աղւանների արագազաղթը իրենց երկրից եւ լեռնական յարեթական ցեղերի միութիւնը Դաղստանից մինչեւ Աբխազիա փաստեր են, որոնք ներկայումս արդէն հաստատուած են լեզուների համեմատական ուսումնասիրութեան շնորհիւ : Լեռնական ժողովուրդների յարեթական կռապաշտութիւնը աղւան դրօշի տակ միացնելու դէմ մշակութային արշաւ սկսեցին քրիստոնէական քարոզիչները Հայաստանից, Բիւզանտիոնից եւ Վերաստանից : Քրիստոնէութիւնը յաջողութիւն գտաւ ոչ միայն ծայրամասերում, այլ եւ թիկունքում, սակայն լեռնական ժողովուրդների մէջ նա չկարողացաւ գերիշխել : Կառչելով յամառօրէն իրենց հարազատ յարեթական աստուածների պաշտամունքին, լեռնական ժողովուրդները սնուցանում էին թշնամական վերաբերմունք նոր կրօնի հանդէպ : Եւ այդ պատճառով, երբ հետագային երեւան եկաւ երրորդ, նորագոյն կրօնը՝ քրիստոնէութեան թշնամի խոյամբ, նա գտաւ պատրաստի հող յարեթական ժողովուրդների ողջ փիւռքի մէջ, Կասպից ծովից սկսած մինչեւ Սեւ Մովր, կովկասեան աշխարհի կռապաշտական ընդարձակ թիկունքում : Լեզուն եւ նրա հետ կապուած հոգեբանութիւնը մնացին որպէս անձեռնմխելի գրաւական լեռնական յարեթականների եւ կովկասեան աշխարհի միւս մասերի միջեւ գոյութիւն ունեցող հոգեկան կապի : Հակառակ իսլամի դործ դրած չափազանց ուժեղ ազդեցութեան, յարեթական կռապաշտութեան մնացորդները մինչեւ այժմ էլ մի տարբեր բնոյթ են տալիս կովկասեան լեռնականների մասմեղականութեան, յաճախ նրա գոյութիւնը գերօրի հաւասարեցնելով : Նամանականդ երկրի լեռնային շրջաններում :

Վրացական հաւաքականութիւնը իր հիմնական կորիզով ներկայացնում է երեք ժողովրդների խմբակցութիւն, որոնք խօսում են երեք տարբեր, բայց ազգակից լեզուներով : Այդ խմբակցութիւններն

են՝ վրացիները կամ քարթլները, իրերացիք (այժմեան մինգրելներն ու չաները) եւ սվանէթները : Լազերը, նոյն եւ չաները վաղուց է ինչ անջատուել են նաև մշակութով վրացական հաւաքականութիւնից, ինչպէս որ բաժնուել են զանազան ժամանակաշրջաններում նաև նրա ուրիշ մասերը :


Վրացական մատենագիրները շատ աւելի յստակութեամբ, քան հայ սրբագիրները, գիտակցում են, որ կովկասեան աշխարհի ժողովուրդները ընդհանուր ծագում ունին : Թորգոմի ութ որդիներից Կարտլոսը վրացիների նախահայրն է, աւագ զաւակը Հայոսը (Հայիօղ — Հայկ)՝ հայերի եւ Թորգոմի միւս որդիներն ու Կարտլոսի հինգ որդիները կրում են Կովկասի տարբեր ժողովուրդների անունները : Եղաւ մի շրջան Վրաստանի սրբագրութեան մէջ, Թամարա Թագուհու փայլուն օրերին (1184-1212), երբ այդ գաղափարը մի պահ իրականութիւն դարձաւ : Այդ ժամանակ վրաց թագաւորութեան սահմանները տարածուած էին Տրապիզոնից մինչեւ Կասպից ծովը եւ այդ թագաւորութիւնը միացնում էր ոչ միայն զանազան ազգակից ժողովուրդներ, այլ նաև միմեանց հետ ազերս ունեցող ազգային խմբաւորումներ, ինչպէս, օրինակ, հարաւում գտնուող հայերը եւ հիւսիսում գտնուող լեռնականները : Բայց Թամարայի թագաւորութեան վերջին տարիներին Վրաստանը կորցրեց իր գրաւած երկրները և սմիտիւնից կրկին իր նախկին սահմանների մէջ և այդ վիճակում էլ շարունակեց իր գոյութիւնը մինչեւ ուսումների գալը 1801 թւին, նպաստելով ուսական իշխանութեան հաստատման իր պահպանած պետական կազմակերպութեամբ :

Հայ ազգային հաւաքականութիւնը, որ գտնուում է հարաւում, վաղուց արդէն կորցրել է ոչ միայն իր կաղմի բազմացեղութիւնը, այլև իր դասային շերտաւորութիւնը : Նա այժմ կովկասեան աշխարհի ամենապարզ ներկայացուցիչն է, բայց եւ ամենազգաւոր պատմա - մշակութային լուսարանութեան համար, որովհետեւ նրա անցած ուղին շատ բարդ է եղել : Իր այժմեան պարզութեամբ ու կղզիացումով, իր հոգեկան զարմանալի միատարրութեամբ հանդիսանալով հակապատկերը կովկասեան աշխարհի խայտարակութեան, հայ ժողովուրդը ժամանակավրիպօրէն նաև անցելու է ներկայացուած է որպէս միայնակ և մինչև անգամ իր շրջապատին խորթ մի ժողովուրդ :

Հայաստանը, որով Արեւմտեան Եւրոպայում աւելի են զբաղւել, ուսումնասիրւել է եթէ ոչ ժամանակից, գոնէ տարածութիւնից դուրս : Նա ուսումնասիրւել է անկախ պատմութեան բերումով նրա համար ստեղծուած կացութիւնից, անկախ իր բնական միջավայ-

րից, որից նրան կամեցել են դուրս հանել եւ դուրս են հանում, կարծես թէ նա մի օտար մարմին է՝ կպած այդտեղ եւ ոչ թէ ոսկր ոսկրից եւ մարմին մարմնից իր կուլտուրական միջավայրի. կարծես թէ Արեւելքում Հայաստանը մինակ ու կղզիացած է եղել եւ է: Եւ ստացել է մի պատմութիւն, առանց հողի ու հիմքի, մինչդեռ հէնց արեւելեան այդ լայն ու պայծառ հիմքի վրա է, որ զծւել է դոյներով հարուստ ու բաւականին բարդ պատկերը Հայ. պատ. կեանքի, մի կեանք, լի յոյսերով ու յուսահատութիւններով, հոգրութեամբ ու տկարութեամբ, երկնասլաց վերելքներով ու անկումներով մինչեւ ամենադժնդակ խորխորատները. մի կեանք՝ լի նորանոր սպասելիքներով ու խորտակւած երազներով, փայլուն նւաճումներով ու յաճախ անպտուղ ճիգերով:

Այդ կեանքի ուսումնասիրութեանը նւերւած կը լինի մեր յաջորդ յոգւածը:



Կ. Վ. ՏԱՅՔ

ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻ ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ

II

Բայց քէմայի զաղափարապաշտութիւնը ամէն արեւստագէտ կը մղէ բանելու արեւստի համար զժւարամատչելի ատաղձներու վրա: Շատ անգամ մատնանշւած վտանգաւոր զառիթափ, ուրկէ սակայն չդլտորիլ բարոզի ու հրապարակագրութեան ծանծաղուտները - սակաւթիւ օժուածներուն միայն տրւած է: Արդ, Շանթի մօտ որո՞նք են տաղանդի այն յատկութիւնները, պատրաստութիւնն ու հոգեկան կարողութիւնն ընծեւած եւ հեղինակի գրական դաւանանքէն պարտադրւած այն միջոցները, որոնք՝ գոհացում տալով իսկական արեւստի պահանջներուն՝ բանւածքներէն համադրեցին արեւստի երկեր:

Արդէն ըսի թէ Շանթ խառնւածքով առարկայական է, ինչ որ թոյլատրւած է «ես»-էն դուրս եղող երեւոյթներ յաջողորէն անցընել վերլուծող «ես»-ի մը բիւրեղէն. բայց դեռ այս հոգեբանական գործողութեան վերեւ կը սաւառնի համադրող-ընդհանրացնող, փիլիսոփայոց կարողութիւնը՝ ուժ ու խոյանք առած գրական բազմակողմանի եւ սխաթէմաթիկ զարգացումէ մը, որուն բարձրութեան հասնելու բախտաւորութիւնը հազիւ թէ մեր գրողներէն մէկ քանիին տրւած ըլլայ: Ու զարգացումի յոյսին տակ վերլուծող - համադրող միտքը արեւստագէտին մէջ լուցած է աչքը խորաթափանց, ամենապարփակ դիտողութեան եւ լարած է զօրեղ զսպանակը անխոնջ աշխատողի եւ խղճամիտ ուսումնասիրողի:

Բայց գրողէտին բախտորոշ շեշտ, գոյն ու կերպարանք տւողը, անոր տեղը որոշող վճռական մատը հոգիի ուրիշ մէկ կարողութիւնն է: Աստուծային երեւակայութիւնն է ան: Ասոր որակն ու քանակը:

Հազիւ թէ գտնւին մէկ-երկու հայ գրողներ, որոնց երեւակայութիւնը Շանթինին չափ ըլլայ բոցեղ, սլացիկ եւ պայծառատես,

եւ այդ երեւակայութեան առաքինութիւնները ըլլան թիւով ալ դերակշիռ: Ծանթի երեւակայութեան հրաշանաւը ընդունակ է դէպի վերին ոլորտները, դէպի հեռաւոր հեռուները թռիչքին՝ վայելելու եւ վայելել տալու համար վերին եւ հեռաւոր գեղեցկութիւնները, ինչպէս նաև ընդգրկելու համար ամբողջութիւններ, համայնապատկերներ: Յետոյ, ընդունակ նաև խոյանքի դէպի անդնդային խորութիւնները՝ լոյս աշխարհ բերելու համար մթին մանրամասնութիւններ եւ նրբին գեղեցկութիւններ: Ծանթի երեւակայութիւնը - ե՛լ վերարտադրող, ե՛լ ստեղծագործող - արձևտես տեսանողն է եւ կորովաբեր, մանրազնին տեսնողը՝ չղաւաճանող յիշողութեամբ եւ սեւեռուն նայւածքով օժտւած, ինչ որ հնարաւոր կընէ պայծառ տեսնել երեւակայութեան առարկան եւ զայն երկար ատեն անլթար պահել գիտակցական մակարդակին վրա: Ահա այս առաքինութիւններէ կուգան Ծանթի յղացողութեան բեղմնաւորութիւնն ու աղնական վեհութիւնը եւ դէմքերու ու դէպքերու իրապաշտ յստակութիւնըն ու կենդանութիւնը (ի հարկէ, ուրիշ պայմաններէ արտօնւած սահմաններու մէջ): Մասամբ ատկէ նաև Ծանթի վերջին հինգ երկերէն կարգ մը տեսարաններու բացառիկ, ցնցող ուժեղութիւնը:

Առանց առաջնակարգ երեւակայութեան արտակարգ արդիւնքներուն՝ գաղափարի եւ քեֆնիքի այն սպչեցուցիչ հանգիտութիւնները, որ Ծանթի երկերը ունին «Երգ Երգոց»-ի (Կինը), «Պրանտ»-ի (Հին Աստուածներ), «Ջրասոյգ Չանդակը»-ի (Շղթալաճը) հետ, դրախօսը պիտի հարկադրէին անոնց հեղինակը ամբաստանելու որպէս հետեւող, ընդօրինակող:

Եւ սակայն, հակառակ այն դրայի աղդեցութեանց, որ Ծանթ կրած է գուցէ նախ քիչ մը Բաֆֆիէն, Փ. Հայդէն, Չուարմանէն ու Հաուսթիմանէն, մանաւանդ Իպսէնէն եւ վերջին հերթին Մէթէրլինկէն, կարծեմ ո՛չ ինքզինքս հակասած կըլլամ եւ ո՛չ ալ սխալած, եթէ ըսեմ թէ արւեստագէտի անհատականութիւն ունեցող սակաւթիւ հայ գրադէտներէն է Ծանթ: Այս վերագրումով կուգէի վեր հանել այն առողջ մտայնութիւնն ու ինքնեկ եղանակը, որոնցմէ պայմանաւորւած՝ Ծանթի ստեղծագործութիւնները նպաստաւորեցան այս կամ այն գրական ուղղութիւնէն: Նախ բացարձակ բացակայութիւնը դարոց ընդօրինակելու անյուրջ գիտաւորութեան: Ոչ ալ ոեւէ հետք ուղղութեանապաշտ միակողմանիութիւններէ եւ ծայրայեղութիւններէ: Ծանթ Հիւսիսի գրականութեան արժանաւոր հայ աշակերտն է: Իր արւեստը - գրական դարդացման արդիւք եղող անբռնադրօսիկ, ինքնաբեր, բայց շրջահայեաց կիրարկում արւեստի այս կամ այն միջոցին՝ խստօրէն յարգելու պայմանով սեփական

խառնւածքը, ինչպէս նաև նիւթ-միջոցին և քեֆնիքին առանձնայատկութիւնները: Նիւթ-միջոցին և քեֆնիքին պատշաճող իւրայատուկ լծակցութիւն մը իրապաշտ և խորհրդապաշտ արւեստներու: Այսպէս է որ Ծանթի երկերը ստացան անհատականութեան եւ արւեստի հարազատութեան դրոշմը:

Մեծ է նաև նպաստը, որ խորհրդապաշտ արւեստը բերաւ Ծանթի ստեղծագործութիւններուն: Մեր մէջ, Սիւսանթոս ոճի, քերականական արտասովոր ձևերու, շեշտի ու հունչի եւ պարզ զուգորդութեանց խորհրդապաշտը լուր եղաւ: Թէքէեան կրցաւ հասնիլ մըտապատկերներու խորհրդապաշտութեան միայն: Վարուժան կիրարկեց քեֆնան ընդգրկող խորհրդապաշտութիւնը, բայց փոքրադիր պատառի վրա եւ շատ ցանցաւորէն: Ծանթ դարձաւ խորհրդապաշտ արւեստի անմրցելի վարպետը մեր մէջ՝ այդ արւեստը կիրարկելով ոչ միայն մտապատկերներու, այլև տարածելով բարդ ըմբռնումներու, ընկերա-քաղաքական պահերու վրա, ու այսպէս հասնելով արւեստի պահանջներուն դիմացող այլարանութեան մը, ուր պատմական շրջան մը իր դէմքերովն ու անոնց գործերովը կը խորհրդանշէ ներկայէն պահ մը, ներկայէն դէմքեր ու դէպքեր եւ յաւիտենական գաղափար ու ճշմարտութիւններ: Ծանթի վիսպական երկերուն, «Ճամբուն վրա» ողբերգութեան եւ հաւանաբար նաև զայն նախորդող երկու թատերգութիւններուն մէջ հաղիւ թէ խորհրդապատկերներ ըլլան: Անոնցմով Ծանթ կուտայ ընդհանրացումներ, ներկայացուցիչներ միջավայրի ընկերա-քաղաքական պահերու ծրնունդ դէմքերու, այլեւայլ իրողութեանց ու ճշմարտութեանց կըրողներու: «Հին Աստուածներ»-ով կը սկսի իսկական խորհրդապատկերի կիրարկումը, ուր սակայն, որովհետեւ երկը կառուցւած է երկու - համամարդկային եւ աղգային - քեֆներու վրա, խորհրդանշական երկու խմբաւորում կայ - մին ան՝ որուն առանցքն է Վանահայրը, միւսը ան՝ որ կը ներկայացուի Վահագնի տաճարին տեսարանով: Յաջորդ ողբերգութեան՝ «Կայսրը»-ին մէջ ալ մարդկայինէն դանազան գաղափարներ խորհրդապատկերներով կրնայելուին աղգայինին ակնարկող խորհրդապատկերային խումբին մէջ (Օհան Գուրգէն, Անդոկ Իշխանը եւ Համնա Իշխանուհին): «Շղթալաճը»-ով խորհրդապաշտութիւնը հասած է արդի այլարանութեան բարձրութեան, ուր, հակառակ մարդկայինէն թանգակներու, ապահովւած է գրական նպատակի միութիւնը և ասոր պատշաճեցուցւած է խորհրդապատկերի միութիւնը մը: Ուրիշ խօսքով՝ նիւթ-խորհրդապատկերը ամբողջովին կը ծածկէ ընկերա-քաղաքական պահ մը, որ քեֆնան իսկ է: «Ինկած Բերդի Իշխանուհին»-ին մէջ ալ յարգւած են նպա-

1004-200

643

տակի միութիւնը եւ խորհրդապատկերի պատշաճեցումը, միայն թէ հոս քէման սքողած է երկրորդական տարրերու բազմաձայլ շղարշի մը տակ: Ծանթի վերջին ողբերգութիւնը» «Օչին Պայլ»-ն ալ կը գտնուի խորհրդապաշտ արւեստի նոյն այլաբանական բարձրութեան վրա, ուր հասած է «Շղթալաճը»-ն: Միայն թէ հոս կը գտնենք իրապաշտ եւ խորհրդապաշտ արւեստներու աւելի յաջող գործակցութիւն: Ուրիշ շահեկան երեւոյթ մըն ալ Ծանթի խորհրդապաշտութեան մէջ: Մինչ «Հին Աստուածներ»-ու եւ «Շղթալաճը»-ի խորհրդապաշտութիւնը պէտք կը զգայ զիմելու գերբնականին, հրաշայինին, «Կայսրը»-ի, «Ինկած Բերդի Իշխանուհին»-ի եւ «Ոչին Պայլ»-ի խորհրդապաշտութիւնը կը գոհանայ նուրբ, վերլուծող իրապաշտութեան մը ճարտար լծակցութիւնովը:

Գրականութեան մէջ՝ արւեստի ա՛լ սովորականացած, մաշած միջոց է սէրի հակադրումը այլ զգացումներու, այս կամ այն բմբռնումի, դիտաւորութեան կամ իտէալի, այնքան որ այս հակադրումին առջեւ շատերը, անոնք որ դիրքէն սովորած, կեանքէն ճաշակած են սիրոյ չարն ու բարին, յայնարեբան յորանջելով՝ հեղինակներու հասցէին կը նետեն «չատ ենք տեսած, շատ ենք լսած» մեղադրանքը: Ինձի կը թւի թէ հայ ընթերցողի համար Ծանթի բոլոր գործերը առհասարակ, իսկ մինչեւ անգամ օտարներու համար անոր վերջին հինգ ողբերգութիւնները զերծ են յորանջեցնող կրկնումի ծնունդ տպաւորութիւներէ: Որովհետեւ, նախ՝ այդ հակադրումները քիչ բացառութեամբ օժտած են տեղականի երանգի գրաւչութիւնովը - հայրենիքի մը՝ որ անմեռ, մշտաբխուն եւ կորովի՝ բազմած է զրազէտի հոգիին մէջ: Յետոյ՝ անոնց, այդ հակադրումներու վերեւ կը սաւառնի Ծանթի գաղափարապաշտութեան արծիւը՝ անոնց տալով սուրբ, վեհ կերպարանքի բացառիկ ուշազրաւութիւնը: Աւելցուցէք նաեւ դիտական միտքը, որ անբնականութեան, հոգեբանական անճշդութիւններու մէջ չի յնայու համար դիտէ իրապաշտի վայել կեցածքով դիտել եւ տեսնել ճիշդը, նուրբը, խուսափուկը: Ու նաեւ արւեստագէտի խառնած քէն եկող բանաստեղծականութիւնը, որ կը ծորի Ծանթի ստեղծագործութիւններէն: Անոր արւեստին մէջ դէքորը, տեսարանաւորումը, բեմադրական ցուցմունքներն անգամ մերթ բանաստեղծակա՛ն են, սէմպոլիֆ. եւ յաճախ բանաստեղծականութիւնն ու սէմպոլը կը նկարեն յաջող դէքորներ: Հա՞պա փսոսուած անցեալի մը, հարազատ դէմքերու իրական, շնորհ վերակենդանացման քաղցր պատրանքը, որ՝ պատմական փոքրիկ անճշտութիւններն ու արւեստէն ընդունւած ինչ ինչ ոգեկան անհարազատութիւնները ենթադրաբար հանդերձ՝ կապրինք Ծանթի վերջին եր-

կերէն, շնորհիւ իր տաղանդին, անխոնջ ուսումնասիրողի խղճամբողջութեան, բոցավառ երեւակայութեան եւ զերազանցօրէն հարազատ հայ հոգիին - յատկութիւններ, որոնք Ծանթը ըրին պատմական նիւթերու եղական թատերադիրը:

Ու նաեւ շնորհալի զրուցողի ընդոճին տուրքը, որ մեծապէս կը նպաստէ Ծանթի պատմումներուն, դերասանութեան ու հաճելիութեան: Առաւելութիւն, որուն իրենց կարեւոր նպաստը կը բերեն ուրիշ երկու յատկութիւններ:

Նախ բանաւոր չափը, որ Ծանթ նախանձախնդիր եղած է սահմանելու հետաքրքրութեան համար: Ծանթ չունի ոչ Օչականի ու Զարեանի արհամարհոտ կեցածքը գործողութեան հետաքրքրութեան հանդէպ, ոչ ալ այն միւս, ամէն գնով հետաքրքրելու տկարութիւնը, որուն կը զոհուի արւեստի ամէն մտահոգութիւն եւ որ գլխաւոր պատճառներէն մին կը դառնայ գրածք մը վտարելու գեղեցիկ դպրութեան աստարէզէն դուրս եւ դայն վերածելու թերթօնային վաճառքի. եւ կամ - յաւաքոյն պարագային - երկին գեղարւեստական դիմագծութիւնը աղճատելու հեքեքային տարրերով, ինչ որ որոշապէս կը նշմարելի Համաստեղի վերջին գործին՝ «Սպիտակ Զիւլորը»-ին մէջ:

Երկրորդ, լիովին վարձագրւած խնամքը տրամախօսութեան վրա, ուր երեւան կուգայ խօսքի հանճարեղ գիտութիւն մը եւ, մանաւանդ վերջին երկերուն մէջ, որակի ու քանակի հաշւոյն անբասիր համաչափութիւն գործի ու խօսքի միջև: Ուր ոչ մէկ աւելորդ կամ անտեղի խօսք ու դադափար: Ուր տրամախօսութիւնը կը քայլ գործողութեան հետ համաչափ ու ներդաշնակ, եւ նո՛ւրբ, կիրթ հիւմորով համեմաւած ու առողջ առածներով փարթամ: Ուր խորաթափանց հոգեբանը, իմաստասիրող պատմագէտն ու ընկերաբանը և աղնրական գաղափարապաշտը կրեւան կուգան՝ լիովին գոհացնելու համար, ինձի կը թւի, խստապահանջ ճաշակներն անգամ ու միացած եղակիօրէն ճարտար թատերական Էմքրիկին հետ՝ կը կերտեն կարգ մը տեսարաններու ցնցող, շունչ բռնող ուժգնութիւնը, որուն վայելքը մեր թատերադիրներէն ոչ մէկուն տրւեցաւ ընծայել:

Հօր տեսարաններու սարքումին իր բախտորոշ բաժինը կը ընդ նաեւ հանճարեղ Էմքրիկին հիւսւած ողբերգական կիճիւր՝ սովորականութեան, մաշածութեան ամէն մեղքէ դերծ: Իսկ թատերական յուժումը, անբնականութենէ հեռու եւ իրապաշտ ըլլալով հանդերձ, չի հակասեր Ծանթի ստեղծագործութիւններէն ծորող քաղցր, ազնրական յաւատեսութեան, որ խտացած է հետեւեայ երկու բանաձեւերուն մէջ (մին՝ աղգայինին, միւսը՝ համամարդկայինին նկատ-

մամբ) . «Այս շղթաները փշրելու համար պիտի դայ նո՛ր սերունդ, նո՛ր ձեռքեր... բայց պիտի դայ, պիտի դայ Արտաւազդը» եւ «Դուք դեռ մարդու մէջ նախնական նմոյշն էք միայն, Աստու առաջին փորձերը անասունէն մարդը ստեղծելու:»

Ուրիշ բնորոշ գիծ մը: Հակառակ խորհրդապաշտ արւեստէ իր լայն օգտագործումներուն՝ Ծանթ նախասիրաբար կը յարգէ բանահիւսութեան մէկ հիմնական սկզբունքը - հասկցիլ, եւ առանց գրոնեկանալու հասկցիլ: Ծանթ հաւատարիմ է այս սկզբունքին թէ իր երկերու ճարտարապետութեանը, թէ՛ իր ոճին ու լեզւին մէջ: - Իմաստ գտնելու ճիգին՝ հաճոյք կրնկերանայ. բայց այս գոհացումը չարաչար գործածող ամէն խրթնութիւն, որ երկարատեւ, լարած ճիգ կը պարտադրէ, բան մը կը տուժէ ընթերցողի մօտ հետապնդւած գեղարւեստական նպատակէն ու նաեւ երկի երկարակեցութիւնէն: Ծանթ բանահիւսական այս ճշմարտութեան համոզւած հաւատացեալն է:

Իր բոլոր գործերուն յորինւածքին մէջ կը պահէ գործողութեան ժամանակագրական կարգը: Ակններե է որ արւեստագէտը այս կարգը կրնդունի կառուցւածքի պարզութեան հիմնական պայման: Իր բանաստեղծութիւններուն եւ վէպերուն ճարտարապետութիւնը նախնական պարզութիւն ունի: Իր ողբերգութիւնները՝ ի հարկէ սեռի բերումովն իսկ՝ պիտի հեռանային նախնականութիւնէ: Ծանթ «Ճամբուն վրա» ողբերգութեան եւ հաւանաբար՝ նախորդող երկու թատերգութիւններուն մէջ հետեւած է թատերական քէֆնիքի դասական եղանակին: Իւրաքանչիւր արարին մէջ յարդւած են հանդրանի կամ դրւադի ժամանակի եւ տեղի միութիւնները: Աճէն մէկ արար դրւազային տրամաբանական ամբողջութիւն մըն է՝ նոյն ժամանակի եւ տեղի մէջ կատարւած: Վերջին հինգ թատերգութիւններուն մէջ որդեգրւած է քէֆնիքի արդի եղանակը, որ՝ շնորհիւ բեմադրական արւեստի կատարելագործութիւններուն, աղատ է կաշկանդումներէ: Արս հինգ ողբերգութիւններուն մէջ պահւած են դրւադի տրամաբանական ամբողջութիւնը եւ ժամանակի միութիւնը, բայց տեղի միութիւնը՝ ոչ: Իւրաքանչիւր արար բաժնւած է վարպետի կարօտ երկու երեք տեսարաններու, ինչ որ սակայն ներկայացման պահուն դրւազին տրամաբանական միութիւնը խաթարելու, կտրատելու եւ բեմադրութիւնը երկարաձգելով՝ ճանճրացուցիչ դարձնելու անպատեհութիւնները չունի՝ շնորհիւ - ինչպէս ըսի - արդի կատարելագործւած թատրոնին:

Ծանթի ոճն ալ խտտօրէն կը հետապնդէ լիովին հասկցելու քերականութիւնը: Պարզ է ան եւ ամէն յաւանութիւնէ՝ ղերծ. բառերու

ճիշդ ընտրութեամբ, որ մեծապէս կը նպաստէ ոճի արտայայտիչ ըլլալուն. յետոյ՝ ժողովրդական տարրերով հարուստ ու պատկերաստոր, հետեւաբար կենդանի: Բայց տեղ-տեղ շարադասութիւնը անսովոր, եւ քիչ անգամ ալ բառերը ոչ-սովորական առումով գործածւած: Ունի նաեւ սակաւաթիւ նորակերտ բառեր, ինչպէս նաեւ՝ շատ ցանցաւորէն՝ լեզւական խորթութիւններ ու քերականական անճշգրտութիւններ:

Մէկ քանի խօսք ալ Ծանթի ստեղծած (չըսեմ տիպարներու մասին, չզայրացնելու համար մեր գտարիւն եւ գիտնական իրապաշտներն ու հոգեկերելուծապաշտները) մարդերուն մասին:

Ծանթի գլխաւոր մտահոգութիւնը մարդկային հոգիի ազգային եւ համամարդկային գիծերը ըլլալով հանդերձ, անուշադիր չէ թողւած անհատ մարդը, եթէ ուզէք՝ մարդանասունը:

Ծանթի տիպարները արւեստի տեսակէտէն կա՛մ պարզ ընդհանրացումներ են, ներկայացուցիչներ, կա՛մ խորհրդապատկերներ: Իսկ ոգեղէնի տեսակէտէն կա՛մ համամարդկային-մարդկային են, կա՛մ ազգային-մարդկային, եւ կամ երեք դիմակողմերով միաժամանակ օժտւած:

Հոս պէտք է յիշել այր մարդու եւ կնոջ խառնւածային հակադրութիւնները Ծանթի երկերուն մէջ: Այդ տիպարները կը ներկայանան առ հասարակ իրենց զգացումներուն տիրել եւ «ես»-ի պատեանէն դուրս ելլել կրցող, զոհաբերութեան ընդունակ, բայց անգամ իրենց ուժեղագոյն ներկայացուցիչներուն (պողպատեայ կամքով վանահայրը, ռազմիկ՝ շրջահայեաց Նիկոֆորը, դիւային Գող Վասիլը եւ աննկուն՝ առաքինի Օշին Պայլը) սիրոյ հանդէպ տկարացող եւ ճակատագրական սխալներ գործող են: Իսկ կիները, գեղեցիկ խորհուրդներու ներշնչարան, հակառակ քիչ բացառութեամբ գոռոզ ըլլալուն՝ հեղինակութիւնէ մը տիրելու պէտքէն նւաճւած, «ես»-ի պատեանէն ելլել չկրցող, հանրային հորիզոններ գիտելու համար շատ կարճատես, բնազդներէն շատ աւելի տարւած, կրքոտ, նախանձոտ, երբեմն ամենանուրբ էնթրիկանը, սիրւելու համար ամէն նւիրականութիւն մուցո՛ղ, կոխկոտո՛ղ: Այնպէս որ «Կինը»-ի Օր Ատէկնը, կիներէն ամենէն բարեյոյսը, որովհետեւ գիտութեան մարդ - քժչուհի - , պաղարիւն, որոշ առնականութիւնով, մտածումի եւ զգացումի մաքրութիւն պարտադրող, արւեստի, գեղեցկութեան, ստեղծագործութեան ներշնչարան, բայց վերջին վայրկեանին՝ երբ արւեստագէտ այրը գտած ըլլալ կը կարծէ իտէալ կինը, երեւան կուզայ բուն կինը՝ ամէն ուրիշ գեղեցկութիւն ու նւիրականութիւն սիրոյ մողօքին զոհաբերել պահանջող: Մինչեւ անգամ «Ինկած Բեր-

սանքի խմբաւորումը օրիանք-ասիոնի դիմակին տակ սեփական շահ եւ դիրք հետապնդողներու խմբային խորհրդապատկերն է, ուր դարձեալ որոշապէս ի յայտ կուգան կարեւոր երանգաւորումները: Խմբաւորումէն առանձնապէս աչքի կը զարնէ պապական նւիրակը՝ իշխելու ծարաւի, իգամոլ, նենգամիտ ճիգերի թիփը:

Ուշագրաւ են Շանթի ներքինիները: «Շղթայածը»-էն Ապտուլ-լահը, մանաւանդ «Կայսրը»-էն Վասիլ Լէկապէնը - երկուքն ալ իշխողներու խորհրդականներ, բայց իրական կառավարողները, իշխողները: Շանթ այս երկու խորհրդատիպերով կը պաշտպանէ այն քէզը թէ կատարեալ պետական մարդը, իշխողը, պէտք է իր մէջէն պոկէ հանէ սեռային զգացումի յետին հետքերը:

Շանթ գերբնական - առասպելական մարդերէ ալ անձնաւորութիւններ փոխ կառնէ՝ խորհրդանշելու համար մարդկային բնաւորութեան հակասական դիժերը կամ սքողած մէկ կողմը, ինչպէս նաեւ տրւած արարքի մը հակադրող ենթագիտակցական ներքին խորհուրդ մը: Այսպէս՝ «Հին Աստուածները»-էն ձերմակաւորը կը մարմնաւորէ սեփական մարդ-անասունի մասին մեր ենթագիտակցութիւնը: Ծովու (ապրո՛ղ, եռուն աշխարհի խորհրդապատկերը) կապւած միգանոյշներն ու հովիւները ենթագիտակցւած դգայութիւններն ու բնագրային խուլ մղումները կը խորհրդանշեն: «Շղթայածը»-էն Կեանքի Դեւը մարդկային «ես»-ի խորհրդապատկերն է, իսկ թզուկները՝ անոր յոռի յատկութիւնները կամ բացասական բնագրները:

Շանթը ինքնիրեն հետ բաղդատած:

Ան հայ իրականութեան մէջ հազւագիւտ գրական դէմքերէն է ոչ միայն իր բնականոն զարգացումովը, իր լինելութեան տարիներուն նպաստաւոր մթնոլորտովը եւ մօտ կէս դարու գրական գործունէութեան հազադէպ պատեհութիւնովը, այլ նաեւ անով որ կրցաւ սեռէ սեռ բարերախտ անցումներ ընել՝ սկսած համեմատաբար պարզէն ու ծաւալով համեստէն մինչեւ ամենէն բաղմապահանջն ու բա՛րդը, երկարաշունչը:

Շանթի բանաստեղծութիւնները հանդուրժածներու, միջակութենէ հազիւ ազատաւորներու շարքէն են: Իրենց պարզ, անկեղծ շեշտին համար հաճոյքով կը կարդացելին դեռ: Անոնց մէջ աչքառու դիրք ունի «Լեւրան Աղջիկը» հովերգութիւնը՝ իբրեւ մեր մէջ գլորեթէ չփորձւած սեռ մանաւանդ: Անձնական ապրում մըն է ան, բայց տարիներ վերջ երգւած, ու ասոր համար իսկ՝ հաւանաբար՝ սիրոյ նւիրւած տողերը, բնութեան ձօնաւորումն քնարականութեանը քով, տեղ-տեղ աղօտ, յուզականութիւնէ աղքատ. մերթ ալ վի-

պումը ճապաղ, շատախօս պատմումի իջած: Այնուամենայնիւ «Լեւրան Աղջիկը» իր ամբողջութեանը մէջ յիշատակելի գործ է եւ հայ բանաստեղծութեան մէջ իր տեղն ունի:

Շանթ աւելի բախտաւոր եղաւ իր վիպական երկերուն մէջ: Թէև անոնցմով չկրցաւ հասնիլ մեր գրականութեան համար բացառիկին, չգլւածին, բայց բացառիկ արժանիք մը կայ իր հաշտոյն արձանագրելի: Ան իր վէպերովը կարող եղաւ քէմայի դաղափարապաշտութիւնը մեծ մասամբ ազատել բամանք-իզմի անկենդանութիւնէն ու անբնականութիւնէն, գործողութիւնը՝ խօսքին քարոզային բեռէն, ու միեւնոյն ժամանակ իրապաշտութեան մատնանշեց աւելի հեռաւոր ու լուսաւոր հորիզոններ: Իր վիպական գործերէն լուսագոյններն են, ըստ իս, «Իերասանուհին» եւ մանաւանդ «Կինը»:

Շանթ թատերգութիւններով է որ հասած է հայ գրականութեան մէջ իր վերջնական տեղը: Բայց անոր թատերական երկերը նշանակելի հանգրւանով մը բաժնւած են երկու շրջաններու. մին մինչեւ 1908, միւսը 1908էն առիւն: Վէպերուն հաւասար գրական արժէք ունի «Ճամբուն վրա»-ն, հաւանաբար նաեւ նախորդող երկու թատերգութիւնները: Հող՝ քարոզ բուրոյ խօսքը դեռ բոլորովին չէ անհետացած, հող տակաւին չէ դտնւած արեւստէն պարտադրւած համաչափութիւնը գործողութեան եւ խօսքի քանակին ու որակին միջեւ, ու այդ իսկ պատճառով երկը թոյլ մնացած է, թէեւ տրամախօսութիւնը եւ իրապաշտ արեւստէ դորաւոր տարբեր պատւարեր անջրպետ մը կը դնեն այս ողբերգութեան եւ Պէշիկթաշեանի, Դուրեանի եւ Ահարոնեանի թատերական փորձերուն միջեւ: Բայց «Հին Աստուածները»-էն սկսած իր երկերը կը նշեն աչքառու խոյանք դէպի կատարելագործում, դէպի բացառիկ դիրքեր: Շնորհիւ այլեւս հասուն տաղանդին եւ շնորհիւ այն իրողութեան, որով քէմայի իտէալիզմը կրցաւ որպէս արեւստ կիրարկել իրապաշտութեան ու խորհրդապաշտութեան ներդաշնակ համագործակցութիւն մը, Շանթի վերջին հինգ ստեղծագործութիւնները հասան այնպիսի բարձունքի, ուր հայ գրականութիւնէն ոչ մէկ ողբերգական երկ կայ:

Շանթի հետ յիշելիք թատերագիրներն են Սունդուկեանց եւ Շիրվանդադէ: Այս վերջինը, անձուկ հորիզոններու գրագէտ, արեւստի մէկ քանի գիծեր եւ գունաւորում միայն կրցաւ տալ իր լուսանկարչային իրապաշտութեանը: Իսկ Սունդուկեանց իր մէկ ողբերգութիւնովը՝ «Պէպոյ»-ով միայն կարող եղաւ իրապաշտութիւնը հասցնել արեւստի բացառիկ բարձրութեան մը:


Պատշաճ կարեւորութեամբ ու լրջութեամբ ըմբռնելու համար Շանթի բաղմակողմանի գրական արժանիքները՝ անհրաժեշտ է աչքի

առջեւ ունենալ նաեւ անհաւասարակչութիւնը, որմէ կը տառապին, նւազ բազմապահանջ երկերու մէջ, արդի հայ գրողներէն ամենէն տաղանդաւորներն անգամ - Օշական, Զարեան (մեր անառարկելիօրէն հեղինակաւոր գրադէտները միեւնոյն ատեն) եւ այն միւսը՝ այնքան արդէն սիրւած եւ իրաւամբ արտակարգ ուշադրութիւն գրաւած Համաստեղը:

Ու երբ Շանթի մասին մտքի ու խղճի պարտք այս խօսքերս կը վերջացնեմ, Օշականի քրմական շրթունքներէն նետւած պատգամին ի լուր, անտեղիտալի ներքին անհրաժեշտութիւնէ մը կը մղւիմ աղաղակելու թէ հայ իրականութիւնը՝ ընկերա - քաղաքական արժէքով շատ փարթամ եւ տարածքով շատ պատկառելի ժամանակաշրջաններու մէջ միայն կրնայ հասցնել Շանթեր:

Լեւոն Շանթ իր վերջին հինգ ողբերգութիւններովը եղաւ արդի հայ գրականութեան մեծագոյն դէմքը:

Հայէպ.



Յ. ԻՐԱԶԵԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼԻՑ

(Մի քանի նշտումներ եւ լրացումներ)

Ա.

Հայկական Տպագրութիւնը Հայ Մշակոյթի առաջնակարգ արտայայտութիւններից մէկն է եւ միեւնոյն ժամանակ պերճախօս սպացոյցը մեր ցեղի քաղաքակրթական ընդունակութիւնների: Մենք պարծանքով կարող ենք ասել, որ այսօր աւելի քան չորս հարիւր տարիների պատկառելի հասակ ունի նա: Եւ, ժամանակի այդ հսկայ տարածութեան ընթացքում, որպէս մէկ մշտալատ փարոս կամ մէկ անջնջելի ջահ, միշտ բոցավառել է հայոց մթնած երկնքում, լոյսի ու լուսաւորութեան անսպառ աղբիւր հանդիսանալով ժողովրդի համար եւ նրա տառապալից ուղին լուսաւորելով:

Դժբախտաբար, մինչեւ այսօր տակաւին մենք չունենք մեր Տպագրութեան լիակատար եւ ստոյգ պատմութիւնը - սկզբից մինչեւ մեր օրերը, որ կը լինէր միաժամանակ եւ մեր ժողովրդի քաղաքակրթութեան պատմութեան լաւագոյն յուշարձաններից մէկը. քանզի չէ՞ որ տպագրութիւնը մի ժողովրդի քաղաքակրթութեան լաւագոյն աստիճանացոյցն է:

Որքան մեզ յայտնի է՝ այդ ուղղութեամբ առաջին փորձը կատարել է Ս. Ղազարի ահանաւոր միաբաններից Հ. Գարեգին Զարպ-հանալեանը, 1895 թւին հրատարակելով իր Հայկական Տպագրութեան պատմութիւնը, ջանալով 250 ութածալ էջերի մէջ ամփոփել հայ տպագրութեան ամբողջ պատմութիւնը - սկզբից մինչեւ մեր օրերը: *) Հասկանալի է, որ այսքան նեղ սահմաններում չէր կարելի հարկաւոր ընդարձակութեամբ ներկայացնել մեր Տպագրութեան պատմութեան հսկայ նիւթը: Ու Հ. Զարպհանալեանի աշխատութիւնը նրա մէկ սեղմ համառօտութիւնն է միայն, կմախքը:

*) Պատմութիւն Հայկական տպագրութեան - սկզբնաւորութեան միջին առ մեզ. Վեմետիկ, Միսիքաբեան տպ. 8, 250 + 31 էջ (վերջին 31 էջը Տպագրութեան սկզբից մինչեւ 1800 թիւը լայն տեսած գրքերի ցուցակն է):

Այնուհետեւ Լէօն 1901 եւ 1902 թւականներին հրատարակում է իր հանրածանօթ «Հայկական տպագրութիւնը», երկու հատոր, որ համեմատաբար աւելի ընդարձակ է եւ աւելի լիակատար, թէեւ մի քիչ վիպական:*

Ուրիշ հրատարակութիւններ այդ ուղղութեամբ մենք չգիտենք, եթէ չհաշուենք Աղ. Երիցեանի եւ այլոց մի քանի պատահական յօդւածներն ու գրքոյկները:

Իայց թէ Հ. Զարպհանալեանի եւ թէ Լէօի գործերը, թէպէտ իրենց տեսակի մէջ այնուամենայնիւ շատ արժէքաւոր, լիակատար չլինելու հետ միասին, մի շարք բացեր ու անճշտութիւններ ունեն իրենց մէջ:

Մենք միանգամայն հեռու ենք դրա համար նրանց հասցէին որ-եւէ մեղադրանք անգամ ենթադրելու մտքից, որովհետեւ շատ լաւ գիտենք, որ մեղաւորը իրենք չեն, այլ մեր կեանքի առարկայա-կան պայմանները, եւ ոչ էլ որ լինէր նրանց փոխարէն, մեր կեանքի այս պայմաններում հազիւ թէ կարողանար աւելի կատարեալ գործ հրապարակ բերել:

Լիակատար եւ ստոյգ Տպագրութեան պատմութիւն գրելու հա-մար ամենից առաջ հարկաւոր է, որ հեղինակն իր տրամադրութեան տակ ունենայ հայերէն լեզուի լոյս տեսած բոլոր գրքերն ու հրատա-րակութիւնները - սկզբից մինչեւ մեր օրերը: Կամ թէ չէ՝ գոնէ նը-րանց լրիւ մատենագրութիւնը, այսինքն՝ լիակատար ցուցակը հա-յերէն բոլոր հրատարակութիւնների - իրենց համառօտ բովանդա-կութեամբ, նկարագրութեամբ, յիշատակարաններով եւ մի շարք այլ անհրաժեշտ ծանօթութիւններով: Դժբախտաբար մենք ո՛չ ազ-գային գրադարաններ ունենք, ուր ամբարւած լինէին մեր բոլոր տը-պագրութիւնները, ոչ էլ Հայկական լրիւ մատենագրութիւն:**)

Սոյն յօդւածով մենք նպատակ ունենք սրբագրելու մեր նկատած կարեւոր անճշտութիւնները, ինչպէս եւ մի քանի անհրաժեշտ լրա-ցումներ անելու, յատկապէս Հնդկահայոց Տպագրութեան պատմու-թեան վերաբերմամբ - թէ՛ Հ. Զարպհանալեանի եւ թէ՛ Լէօի աշ-

* Լէօ՝ «Հայկական տպագրութիւն» - մեր կեանքը, գրականութիւնը անցեա-լում. Թիֆլիս, Ա. հատոր, 451 էջ, Բ. հատոր, 610 էջ:

** Հ. Զարպհանալեանի «Մատենագիտութիւնը», տպագրութեամ սկզբից մինչև 1883 թիւը, գժբախտաբար շատ թերի է ու պակասաւոր. իսկ Հ. Ղազիկեանի, որ փակապէս ձայնակապ աշխատութիւն է, մնաց կիսատ (մինչև Ն տառը), հեղի-նակի վաղաժամ մահուամ պատճառով:

խատութիւնների մէջ: Այդ անում ենք այն գիտակցութեամբ, որ առհասարակ պատմութիւնը պէտք է լինի ստոյգ եւ ճիշտ:

Բուն նիւթին անցնելուց առաջ, սակայն, անհրաժեշտ ենք հա-մարում մէկ համառօտ ակնարկ ձգել Հնդկահայ Տպագրութեան պատմութեան վրա, որ մեր նիւթի լուսաբանութեան տեսակէտից շատ կարեւոր է:

Բ.

Ինչպէս յայտնի է, Հնդկահայ դաղութը իր սկզբնաւորութեան օրից հսկայական դեր է խաղացել մեր ազգային - հասարակական բովանդակ կեանքում: Իր փոքրիկ տեղովը՝ նա յաճախ իր կամքն է թելադրել ո՛չ միայն Սպահանին ու Նոր Զուլային, որ թերեւս ա-ւելի հասկանալի է, այլեւ հեռաւոր Էջմիածնին, Ռուսաստանում, եւ բուն հայրենիքում ապրող հայութեան: Հաստատուելով մէկ հեքեա-թային երկրում, դրա հետ միասին եւ իր ցեղային փայլուն ընդու-նակութիւնները գործի դնելով՝ նա կարճ ժամանակի ընթացքում նիւթական ահազին կարողութիւն է ձեռք բերում, ուղղակի առա-պելական: Իսկ դրամը, հարստութիւնը մեր աշխարհում ինքն ըստ ինքեան արդէն հղորութեան մի գորաւոր դէնք է: Մանաւանդ որ հնդկահայ մեծատունը կարողանում է գեղեցիկ ձեւով օգտագործել իր հարստութիւնը եւ դրանով է՛լ աւելի զօրացնել իր ոյժն ու հե-ղինակութիւնը:

Հնդկահայ հարստի տիպը, ընդհանուր առմամբ, բարեգործ է եւ իր ժողովրդի ցաւերին ու կարիքներին արձագանքող, հոգ չէ թէ իր ժողովուրդը կը լինի բուն երկրում, թէ աշխարհի բոլոր ծայրե-րում սիւսած դաղութներում: Միլիոններով կարելի է հաշուել այն գումարները, որ հնդկահայ մեծատունը սիրով նւիրարել է իր ցե-ղի հողեւոր - կրօնական, մշակութային ու բարեգործական պէտ-քերին - բուն հայրենիքում, Ռուսաստանում, Պարսկաստանում, Եւրոպայում եւ այլ վայրերում: Եւ տասնեակներով, դուցէ հարիւր-ներով՝ այն հիմնարկութիւններն ու ձեւարկները, որ հնդկահայ վաճառականի մեծագործութեան արդիւնք են:

Իայց այդ ամենի հետ միասին՝ հնդկահայ մի գեղեցիկ բնու-թագիծ էլ ունէր, ի հարկէ, խօսքը անպիտանների ու վատերի մա-սին չէ: Այն է՝ լուսաւորել եւ լուսաւորել իր հայրենակիցներին:

Ընկնելով Անդրիայի նման մի լուսաւոր պետութեան հովանաւոր-ութեան ներքոյ, այլեւ ազատ հնարաւորութիւններ ունենալով ուս-ման, լուսաւորութեան հետամուտ լինելու, հնդկահայութիւնը այդ

մարզում եւս երեւան է բերում իր ցեղային ընդունակութիւնները եւ գեղեցիկ ձևով օգտագործում: Դրա արդիւնքը լինում է այն, որ շուտով իր ծոցում ծնունդ է տալիս այն բոլոր հիմնարկներին - դպրոց, տպարան, մամուլ, գրականութիւն, թատրոն եւ այլն - որոնք իւրաքանչիւր ժողովրդի լուսաւորութեան ու զարգացման գլխաւոր գործօճներն են հանդիսանում: Ու այդ ամենը նա անում է գիտակցաբար, - ինչպէս ասացինք - երկու գեղեցիկ նպատակ հետապնդելով:

Առաջին՝ իր բնածին ուսման ծարաւին գոհացում տալու նպատակով՝ մանաւանդ որ այդ այլեւս օղի չափ անհրաժեշտ էր նրան՝ իր նոր հայրենիքում ապրելու, յարատեւելու եւ յատկապէս լուսաւոր տիրոջների հանդէպ մրցութեան դիմանալու համար:

Երկրորդ՝ նա մտածում էր լուսոյ այդ աղբիւրներից կենսատու ճառագայթներ սփռել հեռուները եւ լուսաւորել խաւարի մէջ խարխափող իր ազգակիցներին, առաջին հերթին՝ մայր հայրենիքում, անթափանց մթութեան մէջ նստած իր հարազատներին:

Լաւազոյն միջոցը լուսաւոր դադափարները, մանաւորապէս ազգասիրութեան ու ազատասիրութեան դադափարները հայ սրտերում սերմանելու համար, տպարանն էր, տպագրութիւնը: Դրա համար էլ հնդկահայերը, տպարանի եւ տպագրութեան վրա չեն նայում որպէս նիւթական հարստութեան մէկ աղբիւրի: Սա երկրորդական է. գլխաւորը՝ որ նրանց միջոցով ուսում, լոյս տարածեն եւ իրենց ժողովրդի բարձրացման սրբազան դործին ծառայեն:

Ահաւասիկ մէկը հնդկահայ տիպար հայրենասէրներից՝ տպարանատէր Սարգիս Աղա Վարդանը, որը Մաղբասում իր տպարանը հիմնելով «ցանկայր ամենայն յօժարութեամբ սրտի, հանդերձ ծախիւք իւրովք, զի յիւրում տպարանի տպագրեսցին ամենայն նորատիպ մատենք առ ի հոգեւոր վայելումն սովորացնելու հայկազգեան տոհմի» (Ընդգծումը մերն է. Իրագեկ):

Չմոռնանք նաեւ արձանագրել, որ այդ աղաչէն գործում հնդկահայ բոլոր քաղաքների թւում առաջնութեան պատիւը պատկառում է հեռաւոր Մաղբասին - գոնէ տպարանական ու գրական մարզում: Մաղբասումն էր, որ բացեց առաջին հնդկահայ տպարանը, եւ Մաղբասն էր որ հիմնադիրը եղաւ ո՛չ միայն հնդկահայութեան, այլեւ բովանդակ հայութեան լրագրութեան: («Աղբարար» Շմաւոնեանի): Մաղբասի գեղեցիկ օրինակին հետեւեցին եւ միւս հնդկահայ քաղաքներն ու հնդկական հայաբնակ կղզիներից մի քանիսը, բայց գլխաւորապէս Կալիպթան, որը հետագայում բովանդակ հնդկահայութեան մտաւոր - ազգային կենտրոնը դարձաւ:

Մի կողմ թողնելով հնդկահայոց բազմադիւն գործունէութիւնը կեանքի միւս մարզերում, մի քանի խօսքով ներկայացնենք այստեղ միայն երկու գլխաւոր կենտրոնների - Մաղբասի եւ Կալիպթայի - կատարած նւաճումները յատկապէս հայկական տպագրութեան մարզում:

Հնդկահայոց առաջին տպարանը բացել է Մաղբասում 1772 թւին: Այնուհետեւ տարբեր ժամանակներում, բայց կարելի է ասել՝ յաջորդաբար, մինչեւ 1812 թիւը, Մաղբասում գոյութիւն է ունեցել հայ տպագրութիւնը: Չորս տպարան ենք ունեցել այստեղ - Յակոբ Շահամիրեանի, Յարութիւն քահ. Շմաւոնեանի (Շիրազցի), Սարգիս Աղափախանի եւ եղբարք Յակոբ ու Յովսէփ Շամբանների:

Կալիպթայում հայկական առաջին տպարանը հիմնել է 1796 թւին եւ այնուհետեւ իրար յետեւից այստեղ գործել են 10 տպարաններ - Ս. Նազարէթ եկեղեցու կամ Յովսէփ քահ. Ստեփաննոսեանի, Աւետ Զնթրումեանի (նաեւ Զնթրում Աւետեանի), Օճանասփիւռեան ընկերութեան (սկզբում Բոմբէյ քաղաքում), Մարդասիրական ճեմարանի, Անդրիական Եպիսկոպոսական ճեմարանի, Մկրտիչ (Բապտիստ) միսիոնարների, Արարատեան ընկերութեան (յետոյ՝ Ազգասէր Արարատեանի), Պողոս Վիջէնեանի «Արծիւ», Միսիոնարաց եւ իջակեան Յովհաննէս քահանայի:

Մեր կազմած ցուցակով՝ Մաղբասի չորս տպարաններում միասին տպագրւած է ընդամենը 36 կտոր դիրք եւ 3 թերթ, իսկ Կալիպթայի 10 տպարաններում - շուրջ 160 կտոր դիրք (չհաշւած բազմաթիւ օրացոյցները) եւ 6 թերթ, որից Օճանասփիւռեան ընկերութեան համանուն թերթը Բոմբէյում:

Գ.

Այս թուուցիկ ակնարկից յետոյ, անցնենք մեր ճշտումներին ու լրացումներին, սկսելով ժամանակի աւագութեան կարգով՝ Հ.Գար. Զարպէանալեանից.

Գիտնական հայրը իր աշխատութեան մէջ ընդամենը 13 էջ է յատկացրել (196-209 էջ) Հնդկահայոց Տպագրութեան Պատմութեան: Պարզ է ուրեմն, թէ ո՛րքան սեղմ պիտի լինի նա, թուուցիկ: Բաւական է յիշել, որ դրքի վերջում դրւած Հայերէն տպագրութիւնների ժամանակագրական ցուցակում - Հայ տպագրութեան սկզբից մինչեւ 1800 թ. - օրինակ, Մաղբասում տպագրւած 22 դրքերից նա յիշատակում է միայն 10, իսկ Կալիպթայում տպւած 5 դրքերից՝ միայն 1 դիրք:

Մեր այս աշխատութեան մէջ, դիւրութեան համար, նախ առաջ բերենք Հ. Զարպէանայեանի առաջադրութիւնները, ապա անմիջապէս ներկայացնենք մեր դիտողութիւնները: Աւելացնենք նաեւ, որ մենք մեր ձեռքի տակ ունեցել ենք հնդկահայ համարեա բոլոր հրատարակութիւնները եւ ուրեմն, մեր դիտողութիւնները, փաստական կողմից, կարող են զերծ համարուել ամէն մի կասկածից:



1. Յակ. Շահամիրեանի տպարանից միմիայն 4 հրատարակութիւններ յիշատակելով - «Յորդորակ», «Որոգայթ Փառաց», «Պատմութիւն Նազր Շահի» եւ «Թարգմանութիւն նամակի շնորհաց», - Հ. Զարպէանայեանը գրում է - «Կը թողումք յիշել քանի մը տետրակներ: Այսչափ է, գէթ մեր դիտցածը, նկատմամբ Շահամիրեանի տպարանական գործին» (էջ 200):

Այս խօսքերից այն տպաւորութիւնն է ստացւում, որ կարծէք Շահամիրեանի տպարանը այնքան էլ մեծ ու արժէքաւոր գործունէութիւն չէ ունեցել - ընդամենը 4 անուն գիրք եւ «քանի մը տետրակներ»: Այն ինչ, եթէ անգամ մի րոպէ հարցական համարենք նոյն տպարանում լոյս տեսած Մովսէս Բաղրամեանի երկու շատ նշանաւոր աշխատութիւնները՝ «Այբբենարան» (1772) եւ «Աշխարհագրութիւ Հայաստանի» (1772) - որոնց, գեթախտարար մենք չենք հանդիպել - Հ. Զարպէանայեանի չյիշատակած միւս երկու կարեւոր հրատարակութիւնները - Մեսրոպ Երէցի «Պատմութիւն Մնացորդաց Հայոց եւ Վրաց» եւ «Տետրակ որ կոչի Նշտուակ» - արժանի է անպայման յիշատակութեան եւ սլոտիւ են բերում Շահամիրեանի տպարանին:

2. Իր հրատարակութիւնների գէթ քանակի եւ մանաւանդ տպարանական արւեստի կատարելութեան տեսակէտից աւելի նշանաւոր է Շմաւոնեան քահանայի տպարանը: Զարպէանայեանը նրա բազմաթիւ ու արժէքաւոր հրատարակութիւններից յիշատակում է միայն «Ազգարար» թերթը եւ 5 գիրք - Մարիանէ կոյսի պատմութիւնը, Սօգինեան քահանայի «Ողբ Հայաստանեայց», Շնորհալու «Յիսուս Որդի», Պորփիրի «Ներածութիւն»-ը եւ Մարմուտէի «Բեւիտարիոսը»: Յայտնի է, որ Շմաւոնեանի տպարանից, բացի «Ազգարար» թերթից, լոյս է տեսել 20 կտոր գիրք, գոնէ մեր ունեցած ցուցակով, որոնցից մի քանիսը մանաւանդ պատկառելի են թէ իրենց ծաւալով եւ թէ՛ բովանդակութեամբը, ինչպէս, օրինակ, Փոնցիանոսի պատմութիւնը 335 էջ, Բաղդասար դպրի հռչակաւոր քե-

րականութիւնը 609 էջ, Երկրաչափութեան դասագիրքը 55 էջ, Դաւիթ Անյաղթի Սահմանաց գիրքը 658 էջ եւ այլն:

3. Սուելով «Ազգարար»-ի մասին, Հ. Զարպէանայեանը անմիջապէս աւելացնում է «Վրան երեսուն եւ հինգ տարի անցնելէն ետքը՝ Սարգիս Ծատուր Աղավալեան նոր տպարան մը կը հաստատէ ի Մադրաս» (էջ 205):

Հաւանարար «երեսուն եւ հինգ տարին» տպարանական վրիպակ պիտի լինի եւ կամ ոչ ճիշտ հաշւած, որովհետեւ Սարգիս Աղավալեանը իր տպարանը հիմնել է «Ազգարար»-ի սկզբնաւորութիւնից (1794 թ.) ամենաուշը 15 տարի յետոյ: Յայտնի է, որ 1809 թ.ին Աղավալեանի տպարանից դուրս են եկել Կարնեցի Պետրոս Վարդ. Պուռնազեանի մէկ թարգմանութիւնը՝ «Թանգարան բարեգարդ» 2 հատոր, եւ իր իսկ Աղավալեանի կազմած «Այբբենարանի» 2 հատորները: Հետեւապէս որեւէ հաշւով 35 տարի ստացել երբեք չի կարող, անգամ եթէ «Ազգարար»-ի սկզբնաւորութիւնից, այլ ոչ թէ դադարումից, հաշւենք ժամանակը:

4. Աղավալեանի տպարանը բաւական արդիւնաւէտ գործունէութիւն է ունեցել. լոյս է ընծայել 6 կտոր (4 անուն) գիրք, որոնցից միայն երկունն է յիշատակում Հ. Զարպէանայեանը - Շնորհալու «Ողբը» եւ Յովհաննէս Մրքուց վարդապետի «Արքայնագործութիւն կամ ճաշակեցէք»-ը: Չեն յիշատակւած՝ «Թանգարան բարեգարդ» 2 հատոր եւ «Նոր տետրակ այբուբենական» 2 հատոր:

5. Մադրասում գոյութիւն է ունեցել ու գործել մէկ տպարան եւս - եղբարք Յակոբ եւ Յովսէփ Շամրեանների տպարանը: Հ. Զարպէանայեանը որեւէ յիշատակութիւն այդ տպարանի մասին չի անում եւ բոլորովին լուրթեամբ է անցնում նրա կողքով, մինչեւ իսկ անունը չյիշատակելով:

Թէեւ նա - ինչպէս երեւում է - շատ կարճատեւ կեանք պիտի ունեցած լինի, հաղիւ մէկ տարւայ գոյութիւն, սակայն, նրա գործունէութիւնը նշանաւոր է յատկապէս նրանով, որ նրա հրատարակութիւնները բոլորովին մէկ այլ ուղղութիւն ունեն, քան իր նախորդները: Իրանցից մեզ յայտնի են եւ մեր ձեռքի տակ ունենք միմիայն երկուսը - Վոլտէրի «Յուլիոս Կեսար» ողբերգութեան եւ Յիլթիանի «Նումայ Պոմպիլիոսի» թարգմանութիւնները: Երկունն էլ տպագրւած 1812 թ. «ի Տպարանի երկոցունց հարադատացն Պարոնաց Յակոբայ եւ Յովսէփայ Նազար Շամրեանց»:

6. Անցնելով այնուհետեւ Կալիթային՝ Վարդապետ Հեղինակը շատ աւելի թուրքիկ ու կղկտուր տեղեկութիւններ է հաղորդում, քան Մադրասի մասին: Տպարանների շատերի անունն անգամ չի յի-

չատակում, իսկ 160-ի չափ հրատարակութիւններից մէկ-երկուսի անունն է միայն տալիս: Բայց այդ աղքատիկ տեղեկութիւնների մէջ էլ կան անճշտութիւններ: Այսպէս օրինակ, 208 էջում կարգում ենք. «Կալիթայի տպագրութեանց մէջ Ձնթլումէն յառաջ Եպիսկոպոսական տպարանին մէջ եղած է Ձուղայեցի Յովհաննէս Վարդապետի Հայ-արար եւ Սիւլէյման տոհմի (1665) ընծայւած կրօնական երկասիրութիւնը»:

Այս փոքրիկ պարբերութեան մէջ մի քանի կարեւոր անճշտութիւններ կան: Ամենից առաջ՝ վերոյիշեալ տպարանը աւելի յայտնի է ո՛չ թէ Ձնթլում Աւետեանի, այլ Աւետ Ձնթլումեանի անունով: Երկրորդ՝ յիշեալ Յովհաննէս Վարդապետի աշխատութիւնը հրատարակւած է ո՛չ թէ Անգլիական Եպիսկոպոսական ճեմարանի տպարանում, այլ Հայոց Ս. Նազարէթ եկեղեցու տպարանում: Երրորդ՝ «Հայ-արար» բառերը ո՛չ մի առնչութիւն չունեն այդ հրատարակութեան հետ: Ճիշտ է, Յովհաննէս Մրքուզ Վարդապետը հմուտ էր եւ արար լեզւին, բայց իր գիրքը գրել է, գոնէ ըստ աւանդութեան - հայերէն եւ պարսկերէն լեզուներով - մի էջը հայերէն, մի էջը պարսկերէն: Իսկ Ս. Նազարէթի հրատարակութիւնը միմիայն հայերէն է: Եւ, վերջապէս, չորրորդ՝ երկասիրութիւնը ոչ թէ ձօնւած է Սիւլէյման շահին, այլ վիճարանութիւն է, որ Վարդապետը ունեցել է Սիւլէյման շահի հետ:

Ի՛նչպէր հետեւեալն է. պատմում են, որ մի անգամ շահ Սիւլէյմանը մեծ շուքով հիւր է գալիս Նոր-Ձուղայի Ամենափրկչեան վանքը: Մտնելով տաճարը, նա տեսնում եւ հիանում է ներսի հոյակապ նկարներով: Հետաքրքրւում է եւ նրանց բովանդակութեամբ, թէ ինչ է, օրինակ, Քրիստոսի Աստուածութիւնը, երրորդութիւնը եւ այլն, որոնցով այսպէս գեղեցիկ կերպով նկարազարդւած են տաճարի ներսի պատերը: Յովհաննէս Մրքուզը, որ իր գիտնականութեան ու ճգնազգեսաց կեանքի համար նաեւ «տիեզերալոյս» է կոչւում, առաջ է գալիս ու մի առ մի բացատրում եւ այնքան շնորհալի ու խելացի, որ միանգամայն դարձացնում է շահին: Յետոյ նոյնը գրի առնելով, մի երեսը հայերէն, միւսը պարսկերէն ներկայացնում է շահ Սիւլէյմանին: Յովհաննէս Վարդապետի այդ վիճարանական բացատրութիւնները քրիստոնէական կրօնի էութեան մասին առանձին գրքով առաջին անգամ լոյս են տեսնում Կալիթայում, Ս. Նազարէթ եկեղեցու նորահաստատ տպարանում: Աւելորդ չենք համարում բերել այստեղ այդ հազազիւտ գրքի ամբողջ ճակատը..

«Գիրք պատմութեան արարեալի Նորն Ձուղայու սրբոյ Ամենափրկչի գերահրաշ վանի միաբան Յովհաննէս ճգնազգեսաց վարդա-

պետին՝ վիճարանութիւն առ Շահ Սլէյմանն պարսից: Տպագրեալ... յամի վերկութեան աշխարհի 1797: Եւ ի մերոյ ՌճնՁ: Ի Հընդիկս. ի ծովընթեր մայրաքաղաքն Կալիթայ, ընդ իշխանութեամբ մեծին Բրիտանացուց. ի նորակերտ տպարանի սր ընդ հովանեաւ սուրբ Նազարէթ անուամբ եկեղեցույն Հայոց»:

7. Կալիթայի լաւագոյն եւ մանաւանդ արեւտի տեսակէտից շատ ծաղկած տպարաններից մէկը, եթէ ոչ առաջնակարգը, Պոլսեցի Պօղոս Վիլջնեանի «Արծիւ» տպարանն էր, հիմնւած 1846 թւին: Այդ տպարանի սկզբնաւորութիւնը Չարպհանալեանը սխալմամբ դրնում է 1842 թ.: «Վիլջնեանն՝ Արծիւ տպարանն - գրում է նա - հաստատեց ի Կալիթայ, 1842, ուր այլեւայլ հրատարակութիւններ ըրաւ, մանաւանդ եկեղեցական գրոց» (էջ 208):

Որքան մեկ յայտնի է՝ Վիլջնեանի առաջին հրատարակութիւնն է «Բուրվառ աղօթից», տպւած 1846 թւին: Հաւանական չէ, որ 1842 հիմնւած տպարանը մինչեւ 1846 թիւը, այսինքն՝ ամբողջ 4-5 տարի, որեւէ հրատարակութիւն չունենար: «Արծիւ» տպարանը ըստ մեզ՝ հիմնւած պիտի լինի ոչ թէ 1842, այլ 1846 թւին:

Մեր այս ենթադրութեան միւս ապացոյցն էլ այն է, որ Վիլջնեանի տպարանում 1848 թւին տպագրւած Ատենի ժամագրքի, սովորական ժամագրքի եւ «Պատարագ կամ ժամերգութիւնք» գրքերի ճակատին կարդում ենք՝ «տպագրեալ յերկրորդում ամի տպարանին»: Ուրեմն, երբ մէջտեղում տպարանատիրոջ վկայութիւնն ունենք, այն էլ երեք տարբեր առիթներով, այլեւս խօսք լինել չի կարող այն մասին, թէ Վիլջնեանի «Արծիւ» տպարանը հիմնւած է 1842 թ.:

8. Գլխի վերջում Հ. Չարպհանալեանը ասում է. «1833-ին ալ հայկական տպագրութիւնը եղած են ի Կալիթայ ի Մկրտիչ Միսիոնարաց» (էջ 209): Այս խօսքերից այն տպաւորութիւնն է ստացւում, որ կարծէք - ա. Բապտիստ կամ Մկրտիչ Միսիոնարների տպարանը հիմնւած պիտի լինի 1833 թւին, եւ բ. որ այդ տպարանում միայն 1833 թւին է հայերէն գրքերի տպագրութիւն եղել, իսկ նրանից առաջ կամ յետոյ՝ ո՛չ:

Յայտնի է, որ Մկրտիչ Միսիոնարների տպարանը գոյութիւն ունէր 1833 թւից եւ առաջ, եւ յետոյ: Ապացոյց՝ նրա լոյս ընծայած հրատարակութիւնները: Այսպէս, «Մտածութիւն ի վերայ Աստուածաշունչի» 1931 թ. «Բովանդակութիւն բոլորի սրբազանի գրուածոց» 1832 թ., «Յորդոր առ գրագիրութիւն» 1840 թ., «Լաւ տետրակ» 1841 թ., «Առաջին քրիստոնէական վարդապետութիւն», 1841, են:

9. Անցնելով Հնդկահայ մամուլին, Չարպանալեանը յիշատակում է երկու «Ազդարար»-ները Մադրասում եւ «Ազգասէր», «Օճանասփիւռ», «Հայելի», «Ուսումնասէր» ու «Հայրենասէր» լրագիրները Կալկաթայում եւ առհասարակ Հնդկաստանում:

Այս ցանկի մէջ Մադրասի թերթերից մտուցւած է վիմատիպ «Բանասէրն», իսկ Կալկաթայի թերթերից «Եղբայրասէր», «Շտեմարան» եւ «Ազգասէր Արարատեան» թերթերը, որոնցից մանաւանդ վերջին երկուսը բաւական երկար կեանք են ունեցել եւ շատ մեծ ժողովրդականութիւն վայելել ժամանակին: «Օճանասփիւռ» կամ աւելի ճիշտը՝ «Օճանսրփոեան» թերթը հրատարակւած է եղել ո՛չ թէ Կալկաթայում; ինչպէս Չարպանալեանն է յիշում, այլ Բոմբէյում: Իսկ «Հայրենասէր» անունով թերթ ո՛չ թէ Կալկաթայում, այլ ամբողջ Հնդկաստանում -որքան մեղ է յայտնի- չի եղել: Եթէ յիշուած է Սինկափորի «Ուսումնասէր» թերթը, ապա պէտք է յիշէր նաեւ այն տեղում հրատարակւած «Սինկափոր» թերթը, ինչպէս եւ «Արեւելեան Հնդկաց Լրագիր»-ը:

Այսքանը 2. Չարպանալեանի մասին:

Անցնելով Լէօնի՝ նախ պէտք է խոստովանել, որ նա իր աշխատութեան մէջ համեմատաբար աւելի ընդարձակ տեղ է յատկացրել Հնդկահայ Տպագրութեան պատմութեան: Մէկ ամբողջ գլուխ 200 էջից բաղկացած (էջ 416-610): Սակայն զուտ տպագրութեան պատմութեան վերաբերող մասը կրկին այնքան էլ հարուստ չէ, այն էլ ցարք ու ցրիւ էջերի այդ ընդարձակ տարածութեան վրա: Գլխի մեծագոյն մասը յատկացւած է հնդկահայ կեանքին ընդհանրապէս, որը յաճախ ներկայացւած է վիպական դոյնով ու մանրամասնութիւններով: Բայց, դժբախտաբար, այդ քիչն էլ դերձ չէ մի շարք անճշտութիւններից ու բացերից, որոնց կարեւորագոյնները սրբազրբել աւելորդ չենք համարում:

1. Հնդկահայ առաջին տպարանի՝ Յակոբ Շահամիրեանի տպարանի ութ անուն հրատարակութիւններից Լէօն յիշատակում է մի-միայն հինգը - «Այբբենարան», «Յորդորակ», «Որոգայթ փառաց», «Պատմութիւն մնացորդաց» եւ «Պատմութիւն Դահմաղի»: Զի յիշատակում Մովսէս Բաղրամեանի «Աշխարհադրութիւն Հայաստանի», «Թարգմանութիւն նամակի շնորհաց» եւ «Տետրակ որ կոչի նշաւակ» գրքերը:

2. Դահմաղի կամ Նազր շահի պատմութիւնը յիշատակելով, Լէօն գրում է. «Դրանից յետոյ - այսինքն՝ 1780 թ. յետոյ - բոլորովին անհետանում է Շահամիրեանի տպարանը» (էջ 548): Մի այլ

տեղում այդ անհետացումը նա դնում է 1781 թւից, հակասելով վերի ասածին: «1781 թւականից յետոյ - կարդում ենք 596 էջում - այդ տպարանի (իմա Շահամիրեանի) գոյութեան մասին ոչինչ տեղեկութիւն չկայ»: Յայտնի է սակայն, որ Շահամիրեանի տպարանից 1783 թւին լոյս է տեսել վերոյիշեալ «Տետրակ որ կոչի նշաւակ»-ը:

3. Երրազեցի Յար. քահանայ Շմաւոնեանի համառօտ կենսագրութիւնը տալով, գրում է. «1784-ից Մադրասի եկեղեցու քահանան էր նա» (էջ 597): Այն ինչ, իր՝ Շմաւոնեանի հրատարակած «Բեկիսարիոս» (1809 թ.) անունով գրքի յիշատակարանից պէտք է եղրակացնել, որ Շմաւոնեան քահանան 1784-ից շատ աւելի առաջ էլ պէտք է Մադրասում եղած լինէր - գուցէ Շահամիրեանի տպարանի սկզբնաւորութեան տարիներում:

Դէպքը հետեւեալն է. Շահամիր Սուլթան Շահամիրեանը, ցանկանալով իր սրբու անունով տպարան բանալ եւ նստրադիր և տառը շունենալով, խնդրում է Տէր Յարութիւնին - որովհետեւ շնորհալի մարդ էր նա - նստրադիր և տառը պատրաստել իր համար: Սա էլ, թէեւ գործին միանգամայն անծանօթ, բայց յոյսը Աստուծովրա դրած յանձն է առնում եւ պատրաստում է մի գեղեցիկ և նստրադիր: Ինքը, Շմաւոնեան քահանան այսպէս է պատմում դէպքը.

«Տէրն իմ - այսինքն՝ ինքը - հրամանաւ Նոր Զուղայու առաջնորդ Մկրտիչ Արքեպիսկոպոսին՝ առաջադրեալ էր գալ ի Մադրաս, վասն քահանայագործութեան հայոց: Յաւուր միում Ազնուամիտ Աղայ Շամիր Սուլթան, այրն հանձարեղ, ասացեալ է. «Տէր հայր, լսեմ շնորհալի միտս ունես, նստր դիր մի ևս՝ պակաս է ի տպարանէ մերմէ. արդ կարո՞ղ ես յօրինել, քանզի ցանկալի է ինձ այդ տպարան, վասն անուան որդւոյ իմոյ»: Տէրն իմ - այսինքն՝ ինքը Շմաւոնեանը - երբէք չէր տեսեալ այն գործ, եւ ոչ լուեալ բնաւ. ասպախնելով ի տուրիչն բարեաց՝ Սուրբ Հոգին, խոստացեալ էր չինել, որպէս կայ նոյն դիր մինչեւ ցայսօր»:

Ուրեմն Շմաւոնեան քահանայի իր իսկ վկայութիւնից պարզ երևում է, որ նա, յերաւի, 1784 թւից առաջ էլ Մադրասում եղել է որովհետեւ յայտնի է, որ Շահամիրեանի տպարանը բացել է 1772 թւին: Անգամ եթէ ընդունենք, որ նա Շահամիրեանի տպարանի գոյութեան ընթացքում է այդ և տառը պատրաստել, այնուամենայնիւ այդ պիտի լինի 1784 թւից առաջ, որովհետեւ գիտենք, որ Շահամիրեանի տպարանի գոյութիւնը տեսել է մինչեւ 1783 թիւը:

Կարելի է ենթադրել, որ Շմաւոնեան քահանան երկու (եւ գուցէ աւելի) անգամ է եղել Մադրասում - մէկը մինչեւ 1784 թիւը,

խակ միւսը՝ 1784-ից: Եւ անհասկանալի չէ այդ: Մինչեւ այսօր էլ Զուղայի (այլ եւ զաւառների) քահանաները հերթով կամ ընտրութեամբ գնում են Հնդկաստան (այլ եւ Պարսկա-Հնդկաստանի թեմի միւս շրջանները) քահանայադործութեան համար. կամ ինչպէս ընդունւած է ասել՝ գնում են թեմի: Պաշտօնավարութեան ժամանակաշրջանը սովորաբար 3 տարի է, որից յետոյ թեմի գնացած քահանան կամ պիտի վերադառնայ եւ կամ կրկին հրաւիրւի մէկ եռամսեակի համար: Ծմաւոնեան քահանան եւս, ըստ այդ աւանդական սովորութեան, կարող էր երկու անգամ (կամ զուցէ աւելի) գէպի Մազրաս թեմի գնացած լինել - 1770-ական թւականներին եւ 1784 թւին:

Մեր նպատակը չէ հերքել Լէօի ասածը, թէ «Ծմաւոնեանը 1784-ից Մազրասի եկեղեցու քահանան էր»: Ո՛չ. այլ ցոյց տալ, որ Լէօի այդ խօսքը չպէտք է հասկանալ բացարձակ իմաստով, թէ Ծմաւոնեանը միմիայն 1784 թւից յետոյ է Մազրասում եղել, իսկ նրանից առաջ - երբե՛ք:

4. Ծմաւոնեանի տպարանը իր հրատարակած գրքերի քանակով - այլ եւ նրանց զեղարեստական կատարելութեամբ - ամենահարուստը եւ ամենաբեղմնաւորն է Մազրասի բոլոր հայ տպարանների թւում: Մինչդեռ Եասամիրեանի տպարանը հրատարակել է ընդամենը 8 կտոր գիրք, Աղավալեանի տպարանը՝ 6 կտոր, Եղբարք Յակոբ եւ Յովսէփ Եամրեաններինը՝ 2, Ծմաւոնեանի տպարանը հրատարակել է 20, որոնցից մանաւանդ մի քանիսը թէ նրբի եւ թէ ծաւալի տեսակէտից բաւական աչքի ընկնող:

Լէօն այդ հրատարակութիւններից շատ քչերն է յիշում, ընդամենը 4 հատ - Մարիանէ կոյսի վկայութիւնը, Սօգինեան քահանայի «Ողբ Հայաստանեայց»-ը, Ենորհալու «Յիսուս Որդի»-ն եւ Պորփիւրի «Ներածութիւն»-ը: Չի յիշատակում - «Գիրք պատմութեան Կայսերըն Փոնցիանոսի» (1790), Սիմէօն Կաթուղիկոսի «Փոքրիկ տաղարան»-ը (1791), Բաղդասար դպրի քերականութիւնը (1791), Զուղայիցի Յակոբ Թաղեանի «Գրքուկ Երկրաչափական»-ը (1792), Արղութեան Արքեպիսկոպոսի «Օրինակ հանդիսաւոր ծանուցման»-ը (1792), «Պատմութիւն անցից սրբակրօն Յակոբ Արքեպիսկոպոսի» (1793), Լուսովիկոս XVI-ի համառօտ պատմութիւնն ու կտակը (1793), Արղութեան Արքեպիսկոպոսի «Օրինական Օրհնութիւն թղթոյն» (1794), «Գիրք Սահմանաց Դաւթի» (1797), «Ղեկավար մանկանց» (1797), «Նպաստամատոյց վաշխայոյզ վաճառականաց» (1801), «Քառգիրք անդլ - հայ լեզուի» (1803), «Տետրակ որ կոչի պատճառ»

(1804), «Տետրակ աղօթից» (1804), «Անցք եւ գործք երկուց ժողովոց» (1806) եւ «Բեկիսարիոս» (1809):

5. Վերոյիշեալ ցուցակից դուք տեսնում էք, որ ճիշտ չէ ներկայացնում Լէօն Ծմաւոնեանի տպարանից ելած գրքերի յաջորդականութիւնը: Օրինակ, նա ասում է. «Մարիանէ կոյսից յետոյ (1789 թիւ) Երկրորդ գիրքը (ընդգծումը մերն է. Իր.) Սօգինեանցի «Ողբ Հայաստանեայց»-ն է (1791): Այն ինչ՝ 1789 եւ 1791 թւերի միջում, այն է՝ 1790 թ. լոյս է տեսել Փոնցիանոսի պատմութիւնը, մէկ բաւական սուար գիրք, 335 էջից բաղկացած: Հետեւապէս Մարիանէ կոյսից յետոյ Երկրորդ հրատարակութիւնը ո՛չ թէ Սօգինեան քահանայի «Ողբ»-ն է - որը երրորդն է - այլ Փոնցիանոս կայսեր պատմութիւնը:

6. Կամենալով բնորոշել Ծմաւոնեանի տպարանական գործունէութեան ուղղութիւնը, գէթ առաջին շրջանում, Լէօն գրում է. «Երմաւոնեանը սկզբում լոկ հրատարակիչ է եւ տպագրում է գլխաւորապէս կրօնական գիրքեր» (ընդգծումը մերն է. Իր.): Վերոյիշեալ ցուցակից պարզ երեւում է, որ Լէօի բնորոշումը թէ Ծմաւոնեանը տպագրում է «գլխաւորապէս կրօնական գրքեր» - իրականութեան չի համապատասխանում: Նա իր եղրակացութիւնը հանել է Մարիանէ կոյսի վկայարանութիւնը ի նկատի ունենալով: Մինչդեռ իրապէս կրօնական գրքերը շատ քիչ տեղ են բռնում Երկրաչափ տպարանական գործունէութեան մէջ:

7. Սօսելով Սօգինեան քահանայի «Ողբ Հայաստանեայց» աշխատութեան մասին, Լէօն գրում է. «Թէ ի՛նչ էր պարունակում այդ «Ողբը», մենք չգիտենք» (էջ 598): Դժբախտաբար, այդ գիրքը մեր ձեռքն եւս չի ընկել: Սակայն նրանից մի խոշոր հատուած բերւած լինելով «Յորդոր առ գրադիտութիւն» (Կալկաթա, 1840 թ.) ժողովածուի մէջ, պարզ ու որոշ գաղափար է տալիս «Ողբի» բովանդակութեան եւ ողղութեան մասին: Հայրենասիրական - կրօնա - խրատական մի երկ է այդ, գրւած տաղաչափութեամբ եւ գրաբար լեզուով: Մի կտոր այդ հատուածից աւելորդ չենք համարում ներկայացնել՝ ընթերցողին որոշ հասկացողութիւն տալու համար այդ եղակի աշխատութեան մասին.

Եկա՛յք որդեակի այսքան ցան է ինձ բաւական.
Արիացէ՛ք՝ գոչիք ժառանգ ձեր սեպիական:
Հարցումն արէ՛ք՝ ես ձեզ ասեմ բան խրատական,
Թէ՛ զինչ լինի՝ հնար որդւոյդ փրկութեան:
Ի ձե՛նք բարձէ՛ք՝ բնութիւնըն ձեր գոռոզական,
Խոնարհեսցի՛ք եւ տփեսցի՛ք ուսումնական:

Ընթեռնըլով ի հին գրուածըս պատմական,
 գտջիք գպատնա՛ Ագգակորոյս մեր աւերման:
 Արդ՝ դուք բարձէք անձանց ձերոց ախտ ծուլութեան,
 արիացէ՛ք՝ մո՛ւէք հանդէսըս քաջութեան:
 Իմաստութեամբ զարդարեսջիք պատրաստական,
 վարուք մաքուր, մտօք ըզգաստ արթնական:
 Ի բաց քողէք զխղճալի վարք ձեր սր կան,
 նախանձ բարեաց ի ձեզ բերէք յարամնական:
 Եւ մի՛ կարծէ՛ք՝ մեզ նորագումն անհնարական,
 զի յԱստուծոյ եւ հնարաւորք ամենայն բան:
 Հայեցարուք՝ զխուրք Ագգացն Անգլիական,
 որք ի բնէ ձկնորսք էին եւ ապա բան:
 Զարթեան ի քնոյ՝ տեսին զինքեանս թէ որպէ՛ս կան,
 եւ զհաղցութիւն ազատութեան մտօք ծանեան:
 Ուստի ջանիւ՛ իմաստութեան հետեւեցան,
 եւ զծուլութիւն յինքեանց քողին միանգամայն:
 Այսօր փայլին ի մէջ Ագգաց իբր կարկեհան,
 իմաստութեամբ եւ զօրութեամբ յոյժ հոխացան:
 Արդ տեսանեմ՝ յԱգգէս մերմէ որ բազումք կան,
 զմերն քողեալ՝ յարին ի վարս այլասերման:
 Ոմանք Պարսից՝ զկերպն առեալ որպէ՛ս բնական,
 ոմանք եղեն Հագարացոց նըմանական:
 Ոմանք վարուք՝ Անգլիացոց կերպ փոխեցոս,
 որք բընակեալք՝ կան ի կողմուներս Հնդկական:
 Թողում յիշել՝ եւ այլք բազումք որք ցրուեալք կան,
 ազգի ազգի կերպս փոխելով, գոն այլագոս:
 Տէր Աստուած մեր՝ ի քէն հայցեմ անձամբ քախձեալ,
 լուր զիմ բանիս՝ որ վասն Ագգիս պաղատեցեալ:
 Թէպէտ եմ ես՝ յոյժ գազրալի, մեղօք լըցեալ,
 Բայց դու Փրկիչ՝ շնորհիդ քոյ եմ ապաւինեալ:
 Ագգին մերոյ՝ այց արասցես որ եմք նուագեալ,
 զի միւս անգամ ժողովեցես՝ որ կամք ցրուեալ:

«Յորդոր» էջ 26-30.

8. Իր աշխատութեան 607 էջում Լէօն գրում է. «1796 թւականից յետոյ, Յարութիւն քահանային մենք այլեւս չենք տեսնում զրական եւ հրատարակչական ասպարէզում»: Իրականութեան չի համապատասխանում եւ այս վճռական յայտարարութիւնը: Շմաւոնեանի տըպարանի հրատարակութիւնների ցուցակը, որ բերինք վերևում, բողոքում է դրա դէմ: Ընդհակառակը, 1796 թւից, այն է՝ «Ազգարա-

ր»-ի դադարումից յետոյ՝ բաւական երկար ժամանակ ապրել ու գործել է Տէր Յարութիւնի տպարանը, տալով ազգին ութը նշանաւոր հատորներ, որոնց վերջինը՝ «Բելիսարիոսը» 1809 թ.: Նշանակում է՝ «Ազգարարի» դադարից յետոյ Շմաւոնեան քահանան, հակառակ Լէօի պնդումին, ամբողջ 13 տարի մնացել ու գործել է «դըրական ու հրատարակչական ասպարէզում», ունենալով բաւական արդիւնաւէտ գործունէութիւն:

9. Լէօն Շմաւոնեանի տպարանով փակում է Հնդկահայոց տըպարանական - հրատարակչական գործունէութիւնը Մաղբասում եւ այնուհետեւ անցնում է Կալիաթա: «Բայց տպագրութիւնը Հնդկաստանում չի անհետանում», այսինքն՝ Մաղբասից յետոյ - կարգում ենք մենք այնտեղ: «Նոյն 1796 թւին, երբ դադարեց «Ազգարարը», մի նոր տպարան բացվեց, այս անգամ Կալիաթայում» (էջ 608):

Պարզ է, որ մի խոշոր թիւրիմացութիւն կայ այստեղ, որովհետեւ - ինչպէս յիշեցինք - Շմաւոնեանի տպարանից յետոյ՝ դեր երկու ուրիշ տպարան էլ ենք ունեցել Մաղբասում - Սարգիս Մատուր Աղաւալեանի եւ Յակոբ եւ Յովսէփ Շամրեանների:

10. Անցնելով Հայկական տպագրութեան Կալիաթայում, Լէօն մեզ տալիս է միմիայն Ս. Նազարէթ եկեղեցու կամ Յովսէփ քահանայ Ստեփաննոսեանի տպարանի գործունէութիւնը, որը տեղի է ունեցել ԺԸ. դարի վերջերում: Կալիաթայի միւս բազմաթիւ հայ տըպարանների մասին նա լուր է, որովհետեւ նրանց գործունէութիւնը ընկնում է արդէն ԺԹ. դարում, իսկ ինքը նպատակ է դրել իր գըրքի երկրորդ հատորում ներկայացնել միմիայն ԺԸ. դարի հայկական տպագրութեան պատմութիւնը:

Ս. Նազարէթ տպարանից էլ նա յիշատակում է ընդամենը երկու գիրք միայն - Աբրահամ Կաթողիկոս Կրէտացու պատմագրութիւնը եւ Յովհաննէս Տիեզերալոյս վարդապետի «Վիճարանութիւն առ շահ Սլէյման Պարսից» խորագրով աշխատութիւնը: Ուրիշ խօսքով՝ ուրեմն չի յիշատակում նոյն տպարանում լոյս տեսած միւս 3 հրատարակութիւնները - «Գրքոյի ժողովածու խրատական» (1796 թ.), «Տետրակ առ ի պէտս վաճառականաց» (1797 թ.) և «Գրքուկ որ կոչի «Էֆի մերտէ» (1798 թ.):

Հետեւաբար, ըստ Լէօի՝ Ս. Նազարէթ եկեղեցու տպարանը ընդամենը երկու տարւայ կեանք է ունեցել եւ ազգին տւել է միայն 2 գիրք: Այն ինչ նա ունեցել է 3 տարւայ կեանք (1796-1798) եւ տրւել է 5 կտոր գիրք:

11. Սուելով հնդկահայոց ականաւոր մանկավարժ եւ սեփական վարժարանի հիմնադիր ու տնօրէն Յարութիւն Գալուցեանի մասին,

Լէօն գրում է. «Պատանեկուսական հասակում այս հայը, որ ծնած էր Բերիայի գաւառում, դնում է Հնդկաստան, ուսում է ստանում Բէնդալեան նահանգի (երեւի Կալիպթայի) անգլիական դպրոցում եւ ապա բաց է անում կանոնաւոր դպրոց XVIII դարի վերջերում: Դրպրոցը 25 տարի գոյութիւն է պահպանում եւ այնքան յայտնի է դառնում, որ նոյն իսկ Պարսկաստանից այնտեղ երեխաներ էին ուղարկում: Գալուցեանը պատրաստում է բազմաթիւ աշակերտներ, որոնցից շատերը նշանաւոր հանդիսացան նոյն իսկ Հնդկաստանում. (էջ 610):

Այս ամբողջ պարբերութիւնը կարիք ունի հիմնական սրբագրութեան, որովհետեւ մի շարք անճշտութիւններ ունի մէջը: Ամենից առաջ՝ պարզ չէ, թէ Լէօն Բերիայի գաւառ ասելով ի՞նչ է հասկանում. արդեօք Հալէպի՞ շրջանը, որ այսօր Սսի Կաթողիկոսութեան Բերիայի կամ Բերիոյ թեմն է կազմում, թէ՞ Սպահանի նահանգի (Պարսկաստան) Փէրիայի հայաբնակ գաւառը: Երկրորդ՝ մինչեւ այսօր էլ տակաւին պարզած չէ վերջնապէս Գալուցեանի ստոյգ ծըննդավայրը: Օրինակ, ըստ «Յորդորի» (Կալիպթա, 1840), ուր կայ Գալուցեանի համառօտ կենսագրութիւնը, Հալէպցի է նա: Իսկ ըստ Յովհաննէս Աւդալեանի, որը նրա աշակերտն է եղել ու յետոյ էլ պաշտօնակիցը, Եւզոկիացի է: Ուրեմն Հալէպցի կամ Եւզոկիացի, բայց յամենայն դէպս ո՛չ Սպահանի Փէրիացի: Երրորդ՝ ստոյգ յայտնի է Գալուցեանի դպրոցի բացման թւականը, անգամ ամիսն ու ամսաթիւը - 1797 թ. Դեկտ. 28, թէեւ «Յորդորը» դնում է 1798 թւին: Հետեւապէս այս որոշութեան հանդէպ շատ անորոշ է Լէօնի «XVIII դարի վերջերում» արտայայտութիւնը: Չորրորդ՝ Գալուցեանի դպրոցն ու մանկավարժական գործունէութիւնը տեւել են ո՛չ թէ 25 տարի - ինչպէս դնում է Լէօն, այլ 35 տարի: Այս մասին քանիցս շեշտած է «Յորդորի» մէջ: Բացի դրանից Յովհ. Աւդալեանը նրա 35-ամեակին նւիրած մի ներբող ունի հրատարակած, որը որեւէ կասկած չի թողնում այդ մասին: Գրքոյկի խորագիրն է. «Ներբողեան յիշատակ բարեպաշտին Գալուցեան Պարոն Յարութիւնին՝ երեսուն և հինգամեայ արդիւնաշատ վարժապետին» (Կալիպթա, 1834):

Աւելորդ չենք համարում մի քանի քաղաք անելու թէ՛ «Յորդորից» եւ թէ՛ «Ներբողեանից» նախ՝ մեր դիտողութիւնները հաստատելու, եւ երկրորդ՝ հնդկահայոց մշակոյթի այդ ակնանաւոր ներկայացուցչի ու տիպար ուսուցչի կեանքին աւելի մօտկից ծանօթացնելու համար.:

«Վարպետ Յարութիւն Գալուց 1) Հալապցին Կալիպթու Ինկլիզի Ողորմութեան ըշխօլումն (Փրի սգուլ) մուֆթ2) բնակութիւն, խաց, շոր, դիրք, քաղաթ3) դղալ4), և ինկլիզեար սաւորէց. և ըշխօլիցն դուս եկալ: Սա թէպէտ Հայեար գրել կարգալն Հալապ Գաղաքումըն պղտկուց սաւորէլէր. ապա հայեար քերականութիւնն ի Կալիպթա Աղայ էմինի մօտ սաւորէց: Սա Կալիպթու Գրէքի 5) ժամատան մօտ Ինկլիզեար Հայեար ուսում տալէ 6) համար թիւն. 1798-ումն ըշխօլ բացաւ. իւր ջանքովն. բարի եւ համեստ բնութեամբն. իւր էս ըշխօլն օրաւուր ըսկսեց մեծանալն. եւ Վրացի Աղա Դաւութ Աղայ Աստուածատրէ ըշխօլն ոչընչացաւ. պատճառն որ Աղա Դաւութն մի միայն Հայեար էր ուսում տալման 7) ապա սա Հայեար եւ Ինկլիզեար. Վարպետ Յարութիւն Գալուցի ուսումնարանն (ըշխօլն) էնպէս մեծացաւ որ իւր եկամտովն յինքն 8) պսակվէց... Իւր ըշխօլումն փողով եւ անփող ուսումված աշակերտներիցն դեռ եւս շատոնք Կենդանի են. և ոմանքէլ երեւելի Պարնիքեն: 10)

Վարպետ Յարութիւն Գալուցն իւր ըշխօլովն Հայոցս Ազգումն էնպէս համեստ եւ խաթրապախութեամբ եւ ջանացողութեամբ վարվէց. որ ինքն լէվ 11) առաջացալ. եւ Ազգին լաւ օգնական եղև. և Ազգին էնպէս սիրելի եղև որ երբոր մեռաւ Պատուելի Հայ Պարնիքեն սորա պատկերքն քաչել տվին և Կալիպթու Մարդասիրական ձեմարանումն որմիցն 12) կախեն տվէլ. («Յորդոր», էջ 60-62):

«Ներբողեանի» սկզբում կայ Յովհ. Աւդալեանի Ազգը, ուր կարդում ենք. «Զբարեյիշատակ զարդիւնաշատ զբազմերախտ Վարժապետն զՊարոն Յարութիւն Գալուցեան Եւզոկիացին, որ յընթացս երեսն և հինգ ամեայ մեղուաջան անդուլ անձանձիր երկասիրութեան՝ հերկագործեալ մշակեաց արգասաւոր պտղաբերութեամբ ըզբանեղէն անդս մտաց հարիւրոց հարիւրոց Հայասեռ համբակաց ի

1) Հնդկահայերը, ինչպէս եւ Ջուզայեցիք, անգլիական ազդեցութեամբ, ազգանուն եւն վերջաւորութիւնը յաճախ ձգում են: 2) Մուֆթ-ձրի. 3) քաղաք - բուրք. 4) գդալ-տոացաւ. գտնել բայը Ջուզայի եւ հնդկահայոց բարբառում գործ է ածուում նաեւ ստանալու մտքով. 5) Գրէքի-յոււնաց. 6) տալէ, Աստուածատրէ սեռական են. Ջուզայի եւ հնդկահայոց բարբառում սեռական հոլովը յաճախ վերջանում է է-ով: 7) տալման, գովման եւն.-տալիս, գալիս. 8) յինքն-ինքն. Ջուզայի եւ հնդկահայոց բարբառում ձայնաւորով սկսուող բառերը, մանաւանդ ի - ով եւ ա - ով, յաճախ սկզբից առնում են յ. 9) ուսումված - ուսած, սովբած. 10) պարնիք - պարններ, աղայի, մեծ մարդու իմաստով. 11) լէվ - լաւ. 12) որմիցն - պատիցն, որմ - պատ:


Կալկաթա եղելոց և ի կողմանց Հնդկաց այսր իբրև ի նոր Աթէն
դասադաս եկելոց ժողովելոց...»

Այնուհետև յաջորդում է բուն ներբողը ոտանաւորով, որից
ահաւաստի՛կ մի-երկու հատւած, քաղելով նոյն «Յորդոր»-ից .-

Հարան սաստիկ ի հոգի իմ փուշք սգոյ,
Ազբերք սրտիս լնանին իմ՝ լինք լուսոյ,
Երբ նկարեմ աչաց իմոց յանդիման
զիմ վարժապետ՝ գՅարութիւն Գալուցեան:
Նորուն նգամբք դպրոց ուսման կառուցաւ,
ուր վարժեցան մանկունք քուով ո՛չ սակաւ .
մեզ գիտութեան շաւիղ նուաւ յարդեցաւ,
կրկին կրկին դուռն իմաստից մեզ բացաւ:
Յորդին և յիս շիք-ք արտասուաց սաստկագոյն,
յիս՝ ի նուաստ քոյ աշակերտ ձեռնասուն,
ուր ինամածու եղև քոյ քաղցր հայրութիւն,
ուր յար ցուցեր սէր երախտեաց սէր անհուն... .

Մէկ անգամ էլ կրկնենք, որ մեր այս ճշտումներով ու լրացում-
ներով մենք միայն մէկ նպատակ ունենք - նիւթ մատակարարել
մեր Տպագրութեան պատմութեան համար եւ նպաստել, որ այդ
պատմութիւնը գրւի ճիշտ: Եւ, ի հարկէ, բնաւ յաւտկնութիւն չու-
նենք, որ այս ճշտումնրն ու լրացումները վերջնական են, անխոցե-
լի: Նրանք ճշմարիտ են մի միայն այսօրւայ տւեալներով, այսօրւայ
մեր ունեցած տեղեկութիւնների սահմաններում: Սակայն վաղը կա-
րող են հնդկահայ հրատարակութիւններից նոր հատորներ գտնուել
եւ նոր լոյս տրուելով՝ այսօրւայ տեսութիւնները հիմնովին յեղա-
շրջել:

Նոր Զուրա - Սպահան



ԳՐՈ

ՄԻ ՀԱՏԻԱԾ ՅՈՒՇԵՐԻՑ

ՍԻՍԵԱՆ ԳԻՒՂԻ ԿՌԻՒԸ

Անցեալ անգամ խոստացայ պատմել Գեորգի հետ վարած մեր
կռիւնների մասին:*) Բայց նախ քան այդ, մի քանի խօսքով պատ-
մեմ, թէ ի՞նչ կաղմակերպութիւն էինք առաջ բերում մեզ յանձնը-
ւած շրջաններում, ինքնապաշտպանութեան համար:

Համաձայն Դումանից ստացած հրահանգի, հայկական բոլոր
գիւղերում մենք ստեղծում էինք հետեւակ ու ձիաւոր մնայուն եւ
թուրքիկ խմբեր: Երջանը, որի գլուխ կանգնած էր ընդհանուր խմ-
բապետը կամ հրամանատարը, գիւղերի դասաւորութեան համե-
մատ, բաժանում էր շրջանակների: Ամէն մի շրջանակում փորձը-
ւած հարդուկներից մէկը նշանակւում էր խմբապետ եւ մէկն էլ՝
նրան օղնական: Ըստ Դումանի յատուկ կարգադրութեան, տեղական
հետեւակ թուրքիկ խմբերը կաղմուում էին ուսուսական բանակում ծա-
ուայութիւն արած երիտասարդ զինւորներից: Տեղական սեփակա-
նութիւն եղող զէնքերը տրւում էին զինավարժ սղաներին, որոնք
մտնում էին տեղական զինեալ ուժերի շարքերը: Կուսակցական
փամփուռտ արւում էր միայն թուրքիկ խմբերին, որոնք նորը ըս-
տանալու համար պարտաւոր էին ներկայացնել կրակւած փամ-
փուռտները:

Տեղական թէ մնայուն եւ թէ թուրքիկ խմբերը, քիչ բացառու-
թեամբ, դործում էին ուսու զինւորական կանոններով: Այսպէս,
ունէինք տասնեակներ (ատղելենիէ) իրենց տասնապետներով, քը-
տանեակներ (վզվոդ)՝ 20-30 հոգուց բաղկացած, իրենց քսանապետ-
ներով: Թեթեւ կռիւների ժամանակ առաջին հերթին դործի էին
հանւում թուրքիկ ձիաւոր եւ հետեւակ խմբերը, իսկ պահանջւած
զէպքում շարժման մէջ էին դնում զինւորական բոլոր ուժերը: Թըշ-
նամուն հարւածը տալուց յետոյ, զինւած ուժերը վերադառնում էին
իրենց տեղերը և սպասում նոր հրահանգների:

*) «ՎԷՄ», 1934 թ. № 6:

Ջինևորական մեծ շրջաններում, ինչպիսին էր, օրինակ, Սիսեանը, Դաշնակցութեան Կենտրոնական Կոմիտէն, ունէր իւր ներկայացուցիչը - շրջիկ, որի պարտականութիւնն էր կոմիտէներէ եւ ենթակոմիտէներէ հետ միասին լուծել տեղական վարչական ու դատական խնդիրները, աջակցել զինևորական մարմիններին, հաւաքել կուսակցական եւ ինքնապաշտպանութեան յատկացած տուրքերը, հետեւել, որ անշեղօրէն կատարեն զինևորական մարմնի կարգադրութիւնները, յատկապէս ունևոր գիւղացիների վրա դրւած դէնք գնելու պարտաւորութիւնը: Զէնքը այն օրերին շատ թանգ էր. մի մոսին հրացան 2-300 բուբլի արժէր, փամփուշտի հատը՝ 30-40 կոպէկ: Գիւղի ամէն ունևոր բնակիչ պարտաւոր էր գնել որոշւած քանակով եւ տրամադրել ինքնապաշտպանութեան ընդհանուր գործին:

Այս ձեւի կազմակերպութիւն էինք առաջ բերում Լեւոնային Նախիջևանի գիւղերում, երբ մի օր էլ հրաման եկաւ Դււմանից, որ անմիջապէս մեկնենք Զանգեզուր: Մեզ փոխարինող ուրիշ ուժեր հասան, իսկ ես ու Քեռին մեր խմբերով անցանք Զանգեզուր եւ կենտրոնացանք Սիսեանի շրջանում, ուր ձեռնարկեցինք նոյն ձեւի կազմակերպութեան ստեղծման: Մեր խմբերի մէջ մտել էին նոր տղաներ: Ունէինք երեսունի չափ ձիււորներ: Ես Քեռիի օգնակներն էի: Նա ինձ տւել էր գործելու կատարեալ աղատութիւն: Ինձ էր յանձնել շրջանի տեղական ուժերի կազմակերպումը, մի սահմանափակումով սակայն.

- Դու ձիււորները թող. անոնք ունին իրենց խմբապետները:

Եւ ես ձիււորներին թողած, ամբողջապէս կլանւեցի տեղական մարտական ուժերի կազմակերպման գործով:

Հետաքրքրական էր լսել մեր աչքառու հայդուկների կարծիքը Դոււմանի կարգադրութիւնների մասին: Օրինակ, Բերդակցի Օսկանը, Կոփեցի Կնեազը, Մոկացի Խէչօն (որ մեր խմբի աշուղն էր ու ծաղրածուն), Խլաթցի Գալօն անսահման արհամարհանքով էին նայում ուսական ծառայութիւնը անցած զինևորների վրա եւ յաճախ կէս - լուրջ, կէս - կատակ դանդաղում էին:

- Տօ՛, պարոն Դերօ, էդա մըր պարոն Դոււման ի՞նչ ի մոգոնի. սարգաթ պտի կազմակերպես, զօռով շարք մացնես - կռի՞ւ պտի քշես. էնոր էրած կռիւ ի՞նչ կեղնի: Դաշնակցութեան զինևոր իր խէր, մէր մոռցած մարդ ի. աղգի սիրուն մէկ ոտ հոս, մէկ ոտ հոն, գիշեր-ցերեկ սար ու ձոր մացած՝ ինոր բան ուրիշ ի. էդա զինևորներ իրենց օլուխ-չոջուխի կշտին՝ էտոնք ի՞նչ պտի կուին: Տօ, վալլա՛, մեր պարոն Դոււմանի բաներ օյին ի, օյին...

Տղաները այսպէս յաճախ քննադատում էին ու հեղձում՝ դրանով, մի տեսակ, բաւարարելով իրենց հայդուկի վերաւորւած ինքնասիրութիւնը: Անխառն հաճոյք էր լսել մեր այս լեռնական, պարզ ու անդրադէտ մարտիկների անսեթեւեթ խօսքերով արտայայտւած յուզումն ու զարմանքը: Ես ժպտում էի քթիս տակ եւ սպասում էի այն օրւան, երբ գործի մէջ երեւան պիտի դար Դոււմանի «օյին»-ի ոյժը: Եւ այդ օրը չուշացաւ:

Գիւղերում ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու նպատակով 10-15 օրով ես դուրս եկայ շրջանը: Երբ վերադարձայ Բոնակոթ եւ մտայ Քեռու շտաբը, աչքիս պատկերացաւ հետեւեալ տեսարանը. - ընդարձակ սենեակում երկու կարի մեքենայ դրւած մի կողմ, մի չուստ կարելու մեքենայ էլ մի ուրիշ կողմ, տեղացի մի քանի հագուստ ու չուստ կարող արհեստաւորներ մեծ եռանդով աշխատում էին: Պատերից կախւած էին հասարակ կտորից կարւած հագուստներ եւ աժաննոց կտաւից սպիտակեղէններ, որ Քեռին պատրաստել էր տւել զինևորների համար: Պատերից խնամքով կախւած էին նաև ձիերի զոլաններ, թարքի թաղիքներ, նոխտաներ: Այդ ահագին պաշարը պատրաստել էր վերջին 10-15 օրւայ ընթացքում:

Մեր զինևորներից շատերը ունէին դիպալնայ թանգնոց կտորից շաւարներ եւ կարարդին մորթէ փափախներ: Քեռին շարունակ դժգոհութիւն էր յայտնում եւ դիտել էր տալիս, թէ ժողովուրդը դրամ չունի մեղ դիպալնայ շաւարներ ու կարարդին փափախներ հազցնելու համար: Եւ այդ պատճառով աժան կտորից հագուստներ ու սպիտակեղէն էր պատրաստել: Մեր զինևորները տրանջում էին երբեմն նոյն իսկ բողոք բարձրացնում, թէ միւս խմբապետները իրենց տղաներին լաւ կտորից հագուստ էին տալիս, իսկ Քեռին զրկում, միւս խմբապետների պէս չի նայում իր զինևորներին: Բայց Քեռին անյողողոյգ էր. աղգի ամէն կոպէկ նա հաշուով էր ծախսում: Եւ շնորհիւ այսպիսի վերաբերումի, կուսակցական դրամարկից ստացած 2000 բուբլուց մի տարւայ ընթացքում ծախսել էր հազիւ 500 բուբլի: Դոււմանը խմբապետների ժողովում բացառիկ դովասանքով ու ջերմ գնահատանքով էր խօսել Քեռու խնայողութեան մասին ու նրա ներկայացրած հաշիւները իբրեւ օրինակ ցոյց տւել քիւս խմբապետներին:

Իմ Բոնակոթ գալու օրն իսկ Քեռին կարգադրեց, որ զինևոր առնեմ եւ անցնեմ Թաղա գիւղ, որ հանդիսանում էր շրջանի գիւղերի սիրտը եւ մի տեսակ հանգոյց էր դէպի Մազրա տանող ճանապարհի: Ես չէի ուզում նոյն օրը մեկնել, բայց Քեռին պնդեց իր

կարգադրութեան վրա: Նա կարծես բնազդով զգում էր, թէ մի բան է պատահելու:

- Այսօր եւ եթ պէտք է երթաս, ասաց նա վճռական կերպով, ես այդ գիւղէն քիչ մը կը վախնամ: Զիւտորներ ալ առ հետդ, որը որ կուզես:

Ես հետս առի իմ մշտական զինուորներից Իգդիրցի Քիւրդ Խէ- չօին, Բերդակցի Օսկանին, Խլաթցի Գալօին, մեր մշտազարճ Մո- կացի Խէչօին եւ մի քանի ուրիշներին, ընդամենը տասը հոգի: Քե- ուին տղաներին բաժանեց իր արհեստանոցում պատրաստած սպիտա- կեղէնից մի-մի զոյգ, քննեց եւ իր ձեռքով շտկեց ձիերի սարքը ու բարի երթ մաղթեց: Իմ ձիու ոտը պայտառը մեխով էր գցել. Քե- ուին մի լաւ թակեց պայտառին եւ իր ձին տւեց ինձ: Ու մենք ճա- նապարհի ընկանք:

Թաղա գիւղում ժողովուրդը մեծ ուրախութեամբ ընդունեց մեզ: Մեզ համար յատուկ տեղ էր պատրաստւած, դարբինի մեծ տանը, որի կողքին ձիերի համար էլ կար մի ընդարձակ դոմ:

Թաղա գիւղի հրացան ունեցող կուռղների թիւը տասնից չէր անցնում: Նրանց խմբապետը, Բողզան անունով, ոռւս բանակում ծառայած մի ենթասպայ էր: Ես նրան կարգադրեցի, որ վտանգա- լոր կէտերում մի-մի հրացանաւոր զնի, իսկ սրանց կողքին էլ՝ եր- կուական անդէն տղաներ, որպէս զի վտանգի դէպքում կապ պահեն հրացանաւորների եւ գիւղացիների միջեւ: Ապա գնացինք ուտելու գիւղացիների պատրաստած առատ ճաշը: Գիւղացիք չափազանց ու- բախ էին մեր դալու առթիւ եւ ոչինչ չէին խնայում մեզ հիւրասի- բելու համար:

Հացկերոյթից յետոյ, ուրախ ու զւարթ, վերադարձանք մեր բնակարանը քնելու, բայց քունը չէր գալիս մեր աչքերին: Ամենքի տրամադրութիւնը շատ բարձր էր: Մանաւանդ, արտակարգ կեր- պով ուրախ էր մեր խմբի ծաղրածուն՝ Մոկացի Խէչօն: Աւելը բըռ- նած իբրեւ սազ՝ նա նւագում ու ծաղրական երգեր էր երգում զի- նակից ընկերների մասին, յաճախ, ենթարկւելով այս վերջինների հայհոյանքին ու ծեծին:

Հռհռոցն ու աղմուկ լեցւած էր սենեակը, երբ ներս մտաւ Բող- ղանը եւ ինձ յանձնեց Քեռուց մի նամակ: Քեռին նորից ու նորից զգուշացնում էր, որ արթուն հսկեմ եւ բոլոր վտանգւած կէտերը պահակներ դնեմ: Ինքն էլ խոստանում էր առաւօտեան գալ Թա- ղա գիւղ: Յայտնում էր նաեւ, որ թուրքական Միսեան գիւղում թշնամի ուժեր են հաւաքւում. ըստ արժանահաւատ տեղեկութիւն- ների այնտեղ էր եկել իր տասը ընկերներով նաեւ յայտնի Ղաչազ

Խանլարը: Անհրաժեշտ էր, որ ես անմիջապէս հրահանգ ուղարկէի Պննուս եւ Ախլաթեան գիւղերի թուուցիկ խմբերին, որ պատրաստ լինեն: Քեռին ուղարկել էր նաեւ տասը նոր մարտիկներից բաղկա- ցած օգնական ոյժ:

Բողզանից յետոյ ներս մտաւ եւ Բունակոթի քահանայի տղան՝ Յովհաննէսը (Վահան Խորէնու մեծ եղբայրը), որին Քեռին 15 տղաներով ուղարկել էր Թաղա գիւղ՝ հսկելու համար, որ զինուոր- ները նեղութիւն չտան գիւղացիներին, եւ կուրի դէպքում օգնելու մեղ: Եթէ չեմ սխալւում, նա կոմիտէի անդամ էր:

Երբ ես վերջացրի անհրաժեշտ կարգադրութիւնները, մեր ան- պիտան Խէչօն սկսեց ծաղրական շեշտով երգել.

- Բարով եկար, դո՛ւ, Բունակոթի տէրտէրի տղայ. դու եկել ես գլուխ տալու մոկուց իշխան քաջ Խէչօին:

Ու դառնալով Քիւրդ Խէչօին. -

- Խողիդ խորի, քրո՛՛, բա՛ց քեօ խուրջին, պատէ՛ զհիւր:

Քիւրդ Խէչօն անմիջապէս տեղից վեր թռաւ, բաց արաւ խուր- ջինը, հանեց շիշը ու մի բաժակ օղի լեցնելով՝ հրամցրեց հիւրին: Յետոյ, երկրորդ բաժակը լեցրեց ու երկարացրեց Մոկացի Խէչօին: Երբ սա ձեռքը մեկնեց դէպի բաժակը, Քիւրդ Խէչօն մի ուժպով կուլ տւեց օղին, շիշի բերանը պինդ գոցեց ու դրեց խուրջինը: Պայ- թեց ընդհանուր ծիծաղ բոլոր տղաների կողմից, բայց, մանաւանդ, բարձր հրհռում էր Օսկանը: Մոկացին առնւեց ու լռեց:

Լռեց, բայց չմարսեց ստացած վիրաւորանքը: Մի քանի օր յե- տոյ նա իր վրէժը լուծեց Օսկանից: Այս վերջինը նահապետական բարբի տէր, կամանց խնդիրներում չափից աւելի խստապահանջ ու բարոյական մարդ էր: Մոկացի Խէչօն հազնում է տեղական կնոջ շորեր եւ փողոցում հանդիպելով Օսկանին՝ փաթաթւում է նրա վը- դով: Խեղճ Օսկանը չչմում է, մի բոպէ կորցնում է գլուխը. ո՞վ է այս «անբարոյական» կինը, որ փողոցում, արար աշխարհի առջեւ յանդգնում է խայտառակել հայուկ Օսկանին: Ու երբ քիչ յետոյ, ուշքի է գալիս եւ հասկանում է Խէչօի խաղը, սարսափելի կատա- դած, դաշոյնը ձեռքին՝ ընկնում է նրա յետեւից: Մեր մոկացի հե- բոսը հազիւ ազատւում է նրա գայրոյթից:

Բերդակցի Օսկանն էլ, սակայն, առիթ է գտնում վրէժ առնելու մոկացի հերոսից: Մի կուռւմ հարկաւոր է լինում գրաւելու գիւղի մէջ գտնւած ջրաղացը, որի ճանապարհին արդէն 3-4 հոգի սպանել էին: Օսկանը, Քիւրդ Խէչօի հետ, հրամայում է Մոկացի Խէչօին

անմիջապէս գրաւել շրագացը, բայց սա տեղից չէ շարժուած: Այն ժամանակ Օսկանը սպառնում է նրան հրացանազարկ անել: Մոկացին կէս-կատակ, կէս-լալկան ձայնով աղաչում է.

- Տօ', տղայ, մէկ խառ մոկացի իշխան ունիք ձեր մէջ, էնիկ կուզիք էսա էրկի՞ր թողիք. դուք Փիտայիներ մէջ մըջքի կը՝ կուէք, ձիկ ձգեր իք գեղցոց մէջ ու կըսիք՝ դեմ՝ զձաղաց վերցու: Տօ', էդ իմա՞լ խիղճ ի ձեր խիղճ:

Օսկանն ու Քիւրդը մեղմանում են եւ թողնում են հանգիստ «մոկացի իշխանին»...

Մեր Թագա գիւղ հասնելու յաջորդ առաւօտ ես ընդհանուր ժողով էի նշանակել եկեղեցում. պատրաստել էի ճառ ասելու: Երբ քահանան եկեղեցական արարողութիւնը վերջացրեց, չեմ յիշում ըսկըսել էի ճառս թէ ոչ, յանկարծ, դուրսը լսեցին հրացանների դըրաքոցներ: Ինչպէս յետոյ պարզեց, անպիտան դիշերապահները, մտածելով թէ գիւղում զինւած ոյժ շատ կայ եւ բան չի պատահի, առաւօտան դէմ գիրքերը թողել ու վերադարձել էին իրենց տները. թշնամին գրանից օգտւելով՝ յարձակել էր գիւղի վրա:

Հրացանների որոտին հետեւեց հաւար եւ իրարանցում: Զանգան կողմերից ձայներ էին լսւում, թէ Սիսեանի թուրքերը արդէն գիւղն են մտել, թէ թշնամին սպառնում է թալանի տալ գիւղը:

Այդ օրերին սովորութիւն էր եկեղեցի էլ զինւած դեմալ. զինւած եկել էին ճառս լսելու և Բոնակոթից: Մեր տղաներից եկեղեցում էին գտնւում միայն Գարեգինն ու Մոկացի Խէչօն: Մենք պատրաստեցինք շտապով գրաւելու գիրքերը: «Տղե՛րք, հետեւեցէք ինձ», հրամայեցի ես բոնակոթցիներին, եւ ամենքս դուրս թռանք եկեղեցուց: Մեր միւս տղաներն էլ տկուր ձիերը նստած, կայծակի արագութեամբ բարձրանում էին դէպի թուրքերի բռնած գիրքերը: Մեզ միացաւ եւ տէրտէրի տղան՝ Յովհաննէսը իր մարդկանցով:

Մենք աճապարեցինք բռնել Սիսեանից դէպի Թագա գիւղ տարածւող բարձրունքները, որպէսզի արգելք լինենք թշնամու ներխուժումին, սակայն դեռ տեղ չհասած տեսանք, որ թուրքերն արդէն գրաւել էին այդ բարձունքները: Վայրկեանը ճգնաժամային էր: Գիւղը իրական վտանգի տակ էր: Ամէն կողմից լսւում էին անհանգիստ աղաղակներ: Մոկացի Խէչօն ի գէ՛ն էր հրաւիրում ժողովրդին եւ ինձ սիրտ տալու համար անվերջ կրկնում էր.

- Դերօ, ջան, վայլահ տղեկներ յրմէն ելան դիրքեր:

Մեր տղաներից ոմանք նոյն իսկ ժամանակ չէին ունեցել սանձելու ձիերը, հեծել էին առանց թամբի ու նոխտաներով եւ այդպէս արշաւում էին թշնամու դէմ: Երբ նրանք մօտեցան թուրքերի դիր-

քերին, յանկարծ, ձիերից մէկը վարնւեց: Բոնակոթցիները իմ կազմած վզվողը, երկու շղթայ կաղմած, զինւորական կարգով ու կանոնաւոր համադրկերով բարձրանում էր բլուրն ի վեր թուրքերին դիրքերից քշելու նպատակով: Ես ու հետիս մարտիկներն էլ դիրքեր գրաւեցինք ու սկսեցինք կուռել: Այդ վայրկեանին խմբապետ Բողզանը ձիով արագութեամբ մօտեցաւ մեզ եւ պատմեց, թէ թուրքերը խոշոր ուժեր են կենտրոնացրել մեր 6-7 ձիաւոր տղաների դէմ եւ աջ կողմից առաջանալով՝ սպառնում են անցնել նրանց թիկունքը: Զիւրից մէկ-երկուսը խփւել են, իսկ տղաներից լուր չունի թէ ըսպանւե՞լ են թէ ողջ են: Պահանջւում էր արագ օգնութիւն: Առանց ժամանակ կորցնելու, Բողզանի, Մոկացի Խէչօի եւ տեղական մի քանի հրացանաւորների հետ ես շտապեցի վտանգւած հայրուկների օգնութեան:

Երբ տեղ հասանք, մեր աչքերին պարզեց հետեւեալ պատկերը. թուրքերը իրենց գրաւած բլուրի աջ կողմի ձորակի մօտից հետը-հետէ առաջանալով՝ աշխատում էին անցնել մեր տղաների յետեւը: Մի քիչ եւս, եւ մերոնք պիտի կտրւէին թիկունքից: Մենք անմիջապէս վրա տւինք ու շեշտակի կրակի տակ առինք թուրքերին, որոնք, անակնկալի եկած, սկսեցին խուճապով յետ քաշւել: Մենք երեք հոգով, տաքացած, առանց մեկ հաշիւ տալու թէ ինչ ենք անում, անցանք առաջ: Մէկ էլ, յանկարծ, այդ թո՛հ ու բո՛հի մէջ, մեր ահանջին հասան սուճրերի պայթումի որոտներ: «Երեւի մեր տղաները խառնւել են թուրքերին», մտածեցի ես ու մի բնագղական վախ համակեց ինձ: Երկու ոտմբ էլ մեր կողմից Գարեգինը նետեց: Բայց թշնամին տեղի չէր տալիս եւ գնդակների տեղատարափով յուսահատօրէն դիմադրում էր մեր գրոհին. մենք էլ յամառօրէն առաջ էինք շարժւում:

Իսկապէս, երկու կողմի համար էլ կուր օրհասական էր: Մենք նահանջի տեղ չունէինք. թուրքերն էլ հասկանում էին, որ եթէ տեղի տան, ոչ միայն իրենց ամբողջ ձեռնարկը կը վիժէր, այլ և անձնապէս էլ կը վտանգւէին: Մի գերագոյն ճիգ եւս մեր կողմից, եւ մենք հասանք բլրի դագաթը, դէմ առ դէմ մեզ վրա արշաւող թրքական նոր ուժերի: Շտապով ամրացանք, ու սկսեց մի կատարի գիրքային կուռ: Մեզ թշնամուց բաժանող տարածութիւնը հազիւ 80-100 քայլ էր: Իմ ձախ կողմը կուռում էր Քիւրդ Խէչօն իր ընկերներով. աջ կողմս բոնակոթցի եւ տեղական ուժերն էին: Թշնամու գնդակների տարափը այնքան սաստիկ էր, որ զլուխ բարձրացրնել հնարաւոր չէր, եւ ես չէի իմանում, թէ ինչ դրութեան մէջ էին իմ աջի ու ձախի ուժերը: Իմ մօտի տղաներից Բողզանը վերա-

ւորեց ձեռքից: Մի թեթեւ վէրք էլ ես ստացայ աջ ոտքիցս: Յետոյ սարդուեց, որ ես դուրս էի եկել թուրք դաջախ Խանյարի խմբի դէմ, որ բաղկացած էր յայտնի կուռղ աւազակներէց:

Բողդանին ուղարկեցի զիւղ եւ պատուիրեցի, որ անմիջապէս մեզ օգնութեան դան 10 բռնակոթցիներ: Բողդանը զիւղը մտնելիս՝ հանդիպում է Քեռուն, որը իր խոստման համաձայն 10 ձիաւորներով օգնութեան էր եկել Թաղա դիւղ: Բողդանը նրան պատմում է մեր վիճակը, յայտնում է իր վիրաւորելը, աւերացնում է, թէ ես էլ եմ վիրաւորւած, եւ թէ շտապ օգնութիւն է հարկաւոր: Քեռին կարծում է թէ ես սպանւած եմ, և Բողդանը թաղցնում է տղաների մէջ լքում առաջ չբերելու համար: Ուստի, առանց երկար մտածելու, թռչում է ձին եւ քառասմբակ արշաւում դէպի մեր դիրքերը:

Ճգնաժամային վայրկեան էր մեզ համար: Մենք մնացել էինք չորս հոգով եւ համարեա չըջապատուելու վրա էինք: Իբրեւ վերջին զերազոյն ձիւք, ես Մոկացի Խէչօին էլ ուղարկեցի օգնական ուժեր կանչելու համար, բայց ոչ ոք չէր երեւում: Մեր փամփուռն էլ վերջանալու վրա էր: Թշնամին արդէն ցնծութեան մէջ էր եւ աւելի վստահ ու յանդուգն կերպով էր կուռում: Մեր դիակները վրայով թուրքերը տէր պիտի դառնային Թաղա դիւղին, ուղիւղաբախտաբան տեսակէտից այդ շտա կարեւոր վայրին:

Մէկ էլ - ի՞նչ տեսնեմ: Գարեգինը իր քափ ու քրտինք դարձած ձիու վրա, թշնամու գնդակների կարկուտի տակ, մեր դիրքերը հասաւ: Ձին անմիջապէս խիւեց: Գարեգինը մի ակնթարթում դիրք մտաւ մեր կողքին:

Նոյն վայրկեանին, կատաղի փոթորիկի պէս սրարշաւ, հասաւ նաեւ Քեռին: Ես սարսափած դողացի:

- Քեռի՛, թուրքերը մօտ են, շուտ իջիր ձիուց, կը խիւես:

Դեռ խօսքս չէի վերջացրել, երբ նրա տակի ձին գնդակահար դետին գլորեց: Անայայտ, կարծես ոչինչ չէր պատահել, մտրակն ու պարարելլում ատրճանակը ձեռքին, Քեռին առաջ խոյացաւ թուրքերի վրա: Տատանելու ժամանակ չէր. մենք էլ հետեւեցինք նրան: Յետեւից օգնութեան հասան եւ բռնակոթցիք: Այժմ արդէն նեղւելու հերթը թշնամունն էր. մեր դիրքերի առջև դռնուղ բոլոր թուրքերը կոտորեցին: Ով կարողացաւ ազատել՝ փախաւ: Մեր յաղթութիւնը եղաւ կատարեալ:

Երբ արդէն թուրքերը դիրքերից քշւած էին, վրա հասան Ախլաթեան ու Պննուս դիւղերի ուժերը: Ինչ մեղքս պահեմ, ես Քեռու հրահանգը չէի գործադրել եւ պննուցիներին ու ախլաթեանցիներ-

րին լուր չէի աւել, բայց նրանք հրացանների որոտը լսելով, ինքնաբերաբար, շտապել էին հասնել օգնութեան:

Այս բոլոր ուժերը համախմբած ու շղթայ կազմած՝ մենք քշեցինք Սիսեան թուրք դիւղի վրա: Քեռին ձին հեծած անվերջ «ուռա՛» գանչելով՝ զնում էր շղթայի առջեւից: Նա հրահանգել էր հիմքից այրել Սիսեանը, որ ոչինչ չմնայ այդ թշնամու համար կարեւոր ուղիւղական նշանակութիւն ունեցող դիւղից: Մենք էլ Քեռու «ուռա»-ների «ուռա»-ներով պատասխանելով՝ մտանք Սիսեանը եւ ինչ որ կարելի էր այրել ու ոչնչացնել՝ ոչնչացրինք, դիմադրողներին էլ ջարդ ու փշուր արինք: Կոտորուեցին եւ շրջակայ դիւղերից եկած բաւական մեծ թւով թուրքեր, որոնք հաւաքուել էին Սիսեան՝ Թաղա հայ դիւղի թալանին մասնակցելու համար: Սիսեանից մնացին միայն հրկիւզած տները կոյտեր...

Երբ Սիսեանը արդէն դրաււած էր, Քեռին նոր միայն ուշադրութիւն դարձրեց իմ վիրաւորւած վնասները վրա եւ պատուիրեց, որ անմիջապէս թողնեմ ու վերադառնամ Թաղա դիւղ:

- Քեռի ջան, վէրքս թեթեւ է, քանի դու Սիսեանումս ես, ես չեմ հեռանայ մօտիցդ, աւարկեցի ես:

Ու մենք միասին լրացրինք «պատերազմական գործողութիւնը»: Փառաւոր ճակատամարտ էինք շահել: Սիսեանի այրելը սարսափելի տպաւորութիւն գործեց չըջանի թրքութեան վրա, որի ողնաշարը վերջնականապէս կոտորում էր: Սիսեանը, իր մեծութեամբ ու խաղացած ազդեցիկ դերով, չըջանի թրքութեան սիրտն էր:

Այս կուռում մենք ունեցանք երեք սպանւած եւ 3-4 վիրաւորներ: Սպանուեցին նաեւ 4-5 ձիեր: Քեռու Ձէյրանը ազատեց շորհիւ այն բանի, որ Բռնակոթում Քեռին ինձ էր տրամադրել: Քեռու տակ ըսպանւեց մի ուրիշ ձի:

Թաղա դիւղում մեզ փառաւոր ընդունելութիւն ցոյց տւին եւ մեր յաղթութեան լուրը տարածւեց ամէն կողմ՝ բարձրացնելով հայ ժողովրդի մարտական տրամադրութիւնը եւ միաժամանակ՝ մեր համբաւը:


Այս կուռից յետոյ էր, որ Մոկացի Խէչօն առիթ գտնելով՝ մեղայի եկաւ, թէ ինքը ինձ սխալ էր ճանաչել եւ տղաների առջև իմ կարողութիւնները ծաղրելու համար մոկաց իշխանների առակն էր պատմել:

Այս կուռում էր նաեւ, որ հայդուկների աչքին բարձրացաւ Գուլամի դիւնուրական կազմակերպութեան ձեւը, որ այնքան հեղինակաւոր առարկայ էր եղել մինչեւ այդ:

Հետաքրքրական էր Ալաթցի Գալօի գնահատութիւնը բռնակոթ-
ցի զինւորների եւ տեղական միւս ուժերի վարած կռիւների մասին:
Այդ գնահատութեան մէջ խտացւած է մեր հայդուկների ընդհանուր
եզրակացութիւնը:

- Տօ՛, վալլահ, տղեկներ, իրեն յատուկ ոճով ասում էր Գալօն,
մեր պարոն Դուժան էնդտար անխելք պա՛ն չի կարդազրի. էնի էրե-
ւան նստուկ՝ իմացիր ի, թէ էստեղի զինւորներ իմալ պաի կուը-
ցու: Տղեկնե՛ր, էսոնք մրդ պէս կռիւ չեն ըներ. մընք էրկու հոգի
հոս, էրկու հոգի հոն գիրք կը բռնենք, ու Փիտայու գիւլլէն վը՛ժժժ
կը թափի թշնամու գլխուն: էսոնք թելի պէս կը շարւին. էնոնց էն
թելաւոր շաւուշ լէ էն շան լեղւով բան մը կը բռնէ, յըմէն տղեկ-
ներ Փը՛րթ - Փը՛րթ - Փը՛րթ թւանքներ կը կրակեն...

Տղէ՛ք ջան, չկարծէք թէ ես լէ Փիդայու անուն ձգի. վալլա՛հ,
ջաղցի առուի վիէլ բռնած՝ էնոնց միշտ յառաջ, միշտ յառաջ կը-
ւուցի... Մեր Դերօն լէ, Գեոուերու գլուխ ելանք, ոուսալար կը
բռնէր, զինւորներ լէ կրակ կը թափէին վըր թշնամուն: Վալլա՛հ,
թէ դուզն կուզիք բսիմ, էդա տեղական զինւորներ դուժան խանած
էին գիւղի մէջ ու գիրքերու քով...



ԱՆԳՐԷ Ն. ՄԱՆԴԷԼՇԱՍ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋ

II

ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՒՄՆԵՐԸ 1913 - 14

§ 1. Օսմանեան կայսրութեան ներքին վիճակը.- Ռուսաստանի
խակական քաղաքականութիւնը Թիւրքիայի նկատմամբ պատերազմի
նախօրեակին, թերեւս, ոչ մի տեղ այնպէս ցայտուն կերպով չի ար-
տայայտուել, ինչպէս հայկական խնդրում: Այս քաղաքականութիւնը,
որի միակ նպատակն էր Օսմանեան կայսրութեան պահպանութեան
եւ խաղաղութեան համար անհրաժեշտ եւ անյետաձգելի բարենորո-
գումների կիրառումը, պաշտպանում էր եւ Ֆրանսայի ու Անգլիա-
յի կողմից, բայց երկար ժամանակ կասկածով ու հակառակու-
թեամբ էր դիտուում Գերմանիայից: Սակայն, ի վերջոյ Գերմանիան
էլ ընդունեց Ռուսաստանի անշահախնդիր դիրքը այս հարցում եւ
համաձայնութեան եկաւ նրա հետ: Ահա թէ ինչու մեր նիւթի տե-
սակէտից մեծ շահեկանութիւն է ներկայացնում այս ժամանակա-
շրջանի ոուս եւ գերմանական քաղաքականութեան թիւրքահայերին
վերաբերող վաւերագրերի քննութիւնը:

1913 թ. սկիզբը, Օսմանեան կայսրութիւնը, պատերազմից,
յոռի վարչաձեւից ու խանդարւած ելեմուտքից թուլացած՝ թուժ
էր այլեւս մտած քայքայման շրջանը: Երկու գլխաւոր հակառա-
կորդների՝ Ռուսաստանի Պոլսի դեսպան Պ. Գիրաի եւ Գերմանիայի
դեսպան բարոն Վանգէնհայմի կարծիքներն այդ մասին բնաւ չէին
տարբերում իրարից:

1912 թ. նոյեմբ. 26-ին Սաղոնովին ուղարկած տեղեկագրի մէջ
Գիրսը մտայլ դոյներով է նկարագրում հայերի ողբերգական վիճակը
Թիւրքիայում: 1894 - 1896 յիշատակելի թւականներից սկսած, ա-
սում է դեսպանը, կացութիւնը բնաւ չի բարելաւուել: 1895 թ. հոկտ.

20 բարենորոգումների հրամանագիրը մնացել է մեռած տառ: Հոլալին խնդիրը կնճուռտում է օրէ ցօր: Հողերի մեծ մասը յափշտակուած է քիւրդերի կողմից, իշխանութիւնների հաճութեամբ: Ռուսական հիւպատոսները շարունակ սպանութիւնների, աւարառութիւնների եւ քիւրդերի կողմից հայերի վերաբերմամբ գործւող ուրիշ ոճիրների լուրեր են հաղորդում:*)

Գերմանիայի Պոլսի դեսպան բարոն Վանդէնհայմի վրձինը թերևս է՛լ աւելի մոռյլ գոյներ է գործածում: Նրա 1913թ. մայիս 21 տեղեկագիրը արտաքին գործոց նախարարին ներկայացնում է ողբերգական պատկերը այն դրութեան, որի մէջ գտնւում է ամբողջ Օսմանեան Կայսրութիւնը: Այլատարր ազգութիւնների մէջ ամէն տեղ արտայայտւում են անշատման ձգտումներ. թիւրքերից էլ շատերը յուսահատւած են ապագայի վերաբերմամբ. Փինանները՝ քայքայուած, հարկերը՝ անտանելի, բանակը՝ բարոյալքուած, սպաները՝ քաղաքականապէս բաժան - բաժան, պաշտօնեաներն այլևս չեն գործադրում իրենց պետերի հրամանները. համիտեան ռեժիմի առաւելութիւնները վերացած են, իսկ թերութիւնները կրկնապէս աւելի են զգացւում: «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» Կոմիտէն տակաւին միակ ազգակն է, որ կարող է հակադրել ամբողջ կայսրութեան սահմաններում գործող կազմալուծիչ գործօններին: Եզրակացութիւնը պարզ է. «Ասիական Թիւրքիան այլևս անկարող է կանգուն մնալ միայն սեփական ուժերով»:**)

§ 2. Ռուս եւ գերման ծրագիրները.- Վերեւ յիշւած տեղեկագրում դեսպան Գիրսը մատնանշում է թիւրքահայերի ռուսասիրական հակումները, յենւում է Հայոց Կաթողիկոսի վերջին դիմումների վրա Կովկասի փոխարքային եւ արտայայտւում յօգուտ ռուսական նախաձեռնութեան հայկական խնդրում: Դեսպանը յիշեցնում է 1895 թ. բարենորոգումների ձախողանքը եւ պնդում ազգու երաշխիքների անհրաժեշտութեան վրա՝ նոր բարենորոգումները դրնելով ռուս կամ եւրոպական գործակալների իրական հակակշռի տակ: Դեսպանին թւում է կանխահաս հայկական նահանգների ռուսական գրաւումը, որ ցանկալի է նկատւում հայերից շատերի համար:

*Livre Orange russe sur les réformes en Arménie, 1915, № 1. Dépêche de M. de Giers à M. Sazonow du 26 nov. 1912.

**) Rapport du Baron Wangenheim au chancelier de Bethmann-Holweg du 21 mai 1913. (Die Grosse Politik der enropaischen Kabinette, 38 Band, № 15332.

Սակայն եւ այնպէս, նա կարծում է թէ թիւրքական անիշխանութեան խնդրում պէտք է հաշւի առնել, որ բարենորոգումները բաղձալի անդորրութիւնը չբերին եւ, ուրեմն, պէտք է պատրաստ լինել այնպիսի հաւանականութեան, երբ ռուսական գորքերի մուտքը հայկական նահանգները դառնայ մի անհրաժեշտութիւն:

Այսպիսով, պ. Գիրսի ծրագրով, առաջին հերթին, անհրաժեշտ են հակակշռի տակ դրւած բարեկարգումներ թրքահայաստանում, իսկ զինուած միջամտութիւն ընդունում է միայն անյաջողութեան դէպքում: Այս ծրագիրն ընդունել եւ բազմաթիւ առիթներով զարգացրել է նաեւ Սազոնովը:

Բարոն Վանդէնհայմի ծրագիրն էլ ըստ էութեան նոյնն է: Գերման դեսպանը մտածում է, թէ Ասիական Թիւրքիայի կազմալուծումը շատ հեռւոր ժամանակների հարց չէ: Միայն նա կարծում է, թէ Գերմանիայի համար շահաւոր չէ ներկայ ժամին դնել Թիւրքիայի բաժանման խնդիրը:*) Գանի Գերմանիան ապահով չէ, որ բաժանման դէպքում միւս սյուսութիւնները համաձայնեն իրեն էլ ընդունել Փոքր Ասիայի «աշխատանքի շրջանում», - պէտք է շարունակէ թիւրքասէր քաղաքականութիւնը:**) Բայց, թէկուզ եւ ժամանակաւոր կազմալուծման առաջն առնելու միակ միջոցը Թիւրքիայի վերակազմութիւնն է օտար սկտութիւնների կողմից: Եւ այս վերակազմութիւնը պէտք է կատարւի Թիւրքիայի պետական կեանքը իրական հակակշռի ենթարկելով օտար պաշտօնեաների եւ զինւորականների կողմից: Սակայն, որքան եւ գերմանական քաղաքականութիւնը Թիւրքիան ըստ կարելոյն երկար պահպանելու մէջ լինի, Գերմանիան պէտք է պատրաստ լինի եւ յոռեգոյն հնարաւորութեան՝ բաժանման համար:

§ 3. Ռուսական նախաձեռնութիւնը.- Ռուսաստանն էր, որ վերցրեց հայկական բարենորոգումների նախաձեռնութիւնը: Բայց, որոշ տառանումներից յետոյ, Գերմանիան էլ կսմեցաւ նախաձեռնութիւն ստանձնել եւ այդ մտքից հրաժարւեց միայն այն ժամանակ, երբ հասկացաւ, թէ թիւրքերը լաւ աչքով չպիտի նայեն իր այդ նախաձեռնութեան:***) Միւս կողմից, բոլորովին սխալ է գերմանական մեղադրանքը, թէ Ռուսաստանը կամենում է բարենորոգ-

*) Rapport du Baron Wangenheim du 21 mai 1913.

**) Privatbrief v. Wangenheim an Jagow vom 6 August 1913. Grosse Politik, 38 Band, № 15376.

***) Yagow - Wangenheim, 4 et 7 Juin, 1913. Grosse Politik, Bd. 38. № 1532 und 15330.

ման գործունէութիւնից դուրս ձգել Երրեակ զինակցութիւնը: 1913 թ. մայիս 22 հեռագրով՝ քաշած Բերլինի դեսպանին, Սազոնովը, մասնանշելով, որ Գերման կառավարութիւնը սկսում է հետաքրքրւել հայկական խնդրով, արտայայտում է հետեւեալ ձեւով. «Հետեւաբար, մենք մեր կողմից գտնում ենք ցանկալի որքան հնար է փութացնել մէկ ընդհանուր ծրագրի հաստատումը Երրեակ Դաշնակցութեան պատկանող պետութիւնների միջեւ եւ ապա առաջարկ ուղղել բոլոր կառավարութիւններին՝ մասնակցելու հարցի քննութեան՝ բաղձալով, բնականաբար, ըստ կարելոյն խուսափել հակամարտութիւնից պետութիւնների երկու խմբերի միջեւ: Եթէ մենք նախօրոք բանակցում ենք Անգլիայի եւ Ֆրանսայի հետ, այդ բացառապէս նրա համար է, որ ապահովենք նրանց լիակատար հաւանութիւնը հետագայ քայլերի ժամանակ - սակայն մենք ուզում ենք մեզ վերապահել նախաձեռնութիւնը՝ համաձայն Լոնդոնի դահլիճի առաջարկութեան:»*)

Այսպիսով, ուրեմն, Ռուսաստանը իրեն է համարում ամենից աւելի շահագրգռւած պետութիւնը Թիւրքահայաստանի բարենորոգումների հարցում: Հայերի խնդրանքի վրա՝ Ռուսաստանը ուզում է ստանձնել բարենորոգումների նախաձեռնութիւնը, բայց զբաղւել նա բնաւ չի ցանկանում նոր բախումներ առաջ բերել մեծ պետութիւնների երկու մեծ խմբերի միջեւ: Ընդհակառակը, նրա ցանկութիւնն է բարենորոգումներ մտցնել բոլոր պետութիւնների մասնակցութեամբ:

§ 4. Ռուս կառավարութեան պաշտօնակալ տեսակէտը հայկական խնդրի մասին երրեակ զինակցութեան պետութիւններին հաղորդւեց 1913 թ. յունիս 25 յուշագրով: Այս թղթով Պետերբուրգի կառավարութիւնը յայտարարում էր թէ «Ռուսաստանը հակառակ է Օսմանեան Կայսրութեան անդամահատութեան գաղափարին», բայց ուժգնօրէն պնդում է անդորրութիւն հաստատել Թիւրքահայկական նահանգներում, ուր չի կարող հանդուրժւել անկարգութեան եւ անխիստութեան վիճակը, որ կարող է խիստ վտանգաւոր անդրադարձում ունենալ Կովկասի սահմանակից շրջաններում: Ռուս կառավարութիւնը ցանկանում է, որ «պետութիւնները» անյապաղ ձեռք առնեն պահանջած բարենորոգումների իրականացումը» եւ յոյս է յայտնում, որ «միայն մի արագ եւ ըստ կարելոյն լիակատար համաձայնութիւն պետութիւնների միջեւ կարող է առաջն առնել այլապէս անհաւոր բարդութիւններով մօտալուտ վտանգը:»:

*) Livre Orange russe, № 31. Dépêche du 22 mai 1913.

§ 5. Գերմանիայի դիրքը ռուսական նախաձեռնութեան հանդէպ. Այս ծրագրերը մեծ կասկածների տեղիք տւեց գերմանական որոշ շրջանակներում եւ մասնաւորապէս Գերմանիայի Պոլսի դեսպան բարոն Վանդէնհայմի կողմից: «Grosse Politik»-ի էջերում մենք գտնում ենք նրա գրչի տակից դուրս եկած անհաւոր ամբաստանութիւններ ռուս կառավարութեան դէմ: Բարոն Վանդէնհայմը ասում է, թէ ինքը հաստատ համոզւած է, թէ ռուսների գործերը հայկական խնդրում ներշնչւած են միայն Օսմանեան Կայսրութեան անկումը փութացնելու բաղձանքով: Ռուսաստանն է, որ դրդում է հայերին դնել այնպիսի պահանջներ, որոնք չեն կարող ընդունել Թիւրքերի կողմից առանց Թիւրքիայի գոյութիւնը վտանգի ենթարկելու: Էջմիածնի կաթողիկոսի, Պոլսի Հայոց Պատրիարքի ու բազմաթիւ գործակալների օգնութեամբ եւ մեծամեծ գումարներ ծախսելով, տարիներից ի վեր, Ռուսաստանը սնուցանում է հայերի դժգոհութիւնը, իսկ միւս կողմից զէնք ու ռազմամթերք է մատակարարում քրդերին, որպէսզի սրանք շարունակեն իրենց աւազակութիւնները հայերի վերաբերմամբ: Հայկական շարժումը մի միջոց է սոսկ, որով Ռուսաստանը պահում է Թիւրքիան այնպիսի մի վիճակում, որ հնարաւորութիւն ունենայ ուղած վայրկեանին միջամտելու իրաւունք ունենալ, իբրեւ շահագրգռւած սահմանակից պետութիւն: «Հայկական հարցի օգնութեամբ Ռուսաստանը կամենում է իր առաջեւ բաց պահել Պոլսի ճանապարհը: Նա այն բանալին է, որ պիտի բանայ Նեղուցները...»: «Ոնդիրը, անկասկած, ոչ թէ ռուս քաղաքականութեան մի պատահական քայլի մասին է, այլ մեծ չափի ու խնամքով նախապատրաստւած մի գործողութեան վերջին հանգրւանի»: «Հետեւաբար, պ. Գիրսը ազդու միջոց ունի ձեռքը ձնշում գործ դնելու եւ պաշտօնեաների վրա, եթէ բանակցութիւնները չյառաջանան. ռուսների մի նշանով ամէն տեղ խոսովութիւններ կը ծագեն, եւ սահմանի մօտ պատահած առաջին կոտորածը պատրւակ կընծայէ Ռուսաստանին մտնելու համար Հայաստան»:*) Միւս կողմից, գերման դեսպանի կարծիքով, հայկական խնդրի որեէ արմատական լուծում անհնար է առանց Թիւրքիայի փլուզումն առաջ բերելու: «Եթէ հայկական բարենորոգումների բանակցութիւնները յաջողութեամբ չպսակեն, Ռուսաստանը իր պահանջները կը պտակերադարձնէ ուժբերով ու ջարդերով»: «Ընդհակառակը, եթէ հայերը գոհ մնան, սիւրիացիք եւ արաբները կը սկսին յուղւել»:

Սակայն բարոն Վանդէնհայմի կարծիքները ռուսական ձգտում-

*) Grosse Politik, Band 38, № 15334.

ների մասին 1913-ին չէին ընդունում ոչ Պետերբուրգի գերման դեսպան Կոմս Պուրտալէսի կողմից եւ ոչ էլ արտաքին գործոց նախարար Ֆոն Եագովի: Ճիշտ է, Կոմս Պուրտալէսը համամիտ էր բարոն Վանդէնհայմին Ռուսաստանի վերջնական նպատակի վերաբերմամբ. նրան էլ Հայաստանը պատկերանում էր որպէս ճանապարհ գէպի Պոլիս, Սեւ Ծովի հարաւային ափերի երկարութեամբ, բայց Պետերբուրգի գերման դեսպանը բնաւ չէր կարծում, թէ Ռուսաստանը ներկայ վայրկեանը կարող էր գտնել յարմար իր ծրագիրները իրագործման համար: Ընդհակառակը, արտաքին գործոց նախարար Բէթման - Հոլշտէդին ուղարկած իր տեղեկագրի մէջ, Կոմս Պուրտալէսը կարեւորութիւն է տալիս Սագոնովի այս նիւթի մասին արած կրկնակի յայտարարութիւններին: Ռուս արտաքին գործոց նախարարը յայտնել էր նրան, թէ Ռուսաստանը չի մտածում որեւէ ընդարձակման մասին Հայաստանում ի հաշիւ Թիւրքիայի, թէ նա մեծապէս շահադրողաւ է, որ իր սահմանների վրա որեւէ յեղափոխութիւն չծագի, որ կարող է տարածել եւ Ռուսական Հայաստանում, եւ թէ ուս կառավարութիւնը բարենորոգումների վրա պնդում է միայն այն պատճառով, որ պէտք չունենայ միջամտելու: Սագոնովի այս յայտարարութեան Կոմս Պուրտալէսը կատարեալ հաւատ է ընծայում: Պ. Սագոնովը, ասում է նա, ըստ իս բարեմիտ է, երբ յայտարարում է, թէ իր նպատակն է Ռուսաստանի համար ապահովել հանդիստ ու խաղաղ վարդապետան մի քանի տարիներ: Կոմս Պուրտալէսը հնարաւոր է գտնում ուս գործակալների մեքենայութիւնների գոյութիւնը Հայաստանում, բայց այդ գործակալները պատկանում են նոյն այն ոչ պաշտօնական ուս շրջաններին, որոնք այնքան մեծ դեր կատարեցին բալկանեան բոլոր ճգնաժամների ժամանակ եւ որոնք երբեմն պաշտպանութիւն էին գտնում նաեւ պաշտօնական մարմինների կողմից, բայց կոմսը չի հաւատում, թէ նրան մեքենայութիւնները կարող են վերադրել ուս ներկայ արտաքին քաղաքականութեան ղեկավարների ընդհանուր ծրագրին: Կարճ, Կոմս Պուրտալէսը վճռական կերպով յայտարարում է, թէ՛ «Ռուսաստանն այժմ նեղուցների հարցը բանալու ցանկութիւն չունի եւ է՛լ առաւել առիթ չի փնտրում հայկական նահանգները մտնելու համար»:^{*)}

Գերման արտաքին գործոց նախարար Ֆոն Եագովը համակարծիք է Կոմս Պուրտալէսին: Նա գրում է բարոն Վանդէնհայմին. «Նա համամիտ եմ Պուրտալէսին, որ թէ ինքը Սագոնովը եւ թէ

*) Grosse Politik, 38 Band, № 15333, 15339, 15373. 15449.

պաշտօնական ուս ղեկավարները բարեմիտ են, երբ յայտարարում են, թէ որոշ ժամանակի համար կամենում են պահել Թիւրքիայի ամբողջութիւնը»:^{*)}

§ 6. Բարոն Վանդէնհայմի ամբաստանութիւնները Ռուսաստանի Պոլսի դեսպանատան. Բարոն Վանդէնհայմը վերջացրեց նրանով, որ ընդունեց պ. Սագոնովի անձնական անկեղծութիւնը. բայց պնդում էր «ուս քաղաքականութեան դարաւոր աւանդութեան» վերաբերյալ: Ծաւարման միտումը, ասում է նա, խորապէս խարսխած է տակաւին կէս աստիճանապետական ուս պետութեան դադարի մէջ: Արդարեւ, կարելի է ընդունել, որ ոչ մի շօշափելի շահ Ռուսաստանին չէ մղում դրաւելու Հայաստանը, կամ կործանելու Թիւրքիան: Բայց եւ այնպէս, ուսական եւ ոչ մի քաղաքականութիւն չի կարող տեւականորէն հրաժարել «կիսով չափ կրօնական դրացումի բնոյթ կրող նպատակից», որ ընդհանրապէս ներկայացւում է իբրև Պետրոս Մեծի կտակ: Այս միտումը կենդանի է հանրային գիտակցութեան մէջ, դիւանագէտների, հիւպատոսների, ղինտրականների հողիներում, եւ նոյն իսկ մի կամակոր կայսր չի կարող նրան երկար ժամանակ հակառակել:

Այս արամադրութեան ամենէն փոսնդաւոր արտայայտիչը, ըստ բարոն Վանդէնհայմի, Ռուսաստանի Պոլսի դեսպանատունն է, որին նա խիստ արտայայտիչ խօսքով վերագրում է ինչ որ միտակ դեր: «Ռուսաստան ասածդ, ասում է նա, Արեւելեան խնդրում Պոլսի ուսական դեսպանատունն է: Սա է, որ միշտ դիտել է իբրև Պետրոս Մեծի վերջին կամքը իրականացնող մի հաստատութիւն եւ, որպէս այդպիսին, գործում է գրեթէ անկախ Պետերբուրգից»: Դեսպանատան բազմաթիւ պաշտօնեաների եւ դեսպանատնից բխող աշխարհական եւ կրօնական ուրիշ մարմինների ներկայացրած աւանդութիւնները եղել են միշտ աւելի դորաւոր, քան պաշտօնի գլուխ կանդնած դեսպանի ազդեցութիւնը: Ռուսաստանի պաշտօնական գործունէութիւնը Պոլսում դարգանում է «կրօնական ու քաղաքական մոլեռանդութեան միջնորդութեամբ, որի վրա սաւառնում է խորհրդաւորութեան մի ամպ»: Ռուս ամենէն աւելի խոհական դեսպանները այս միջավայրում իրենք էլ դառնում են մոլեռանդ. նրանք իրենց վրա նայում են իբրև սրբազան մի առաքելութեան կտակաւատարների եւ տանում են անձնական քաղաքականութիւն, որի վերջնական նը-

*) Grosse Politik, Bd. 38, № 15367, Fussnote, S. 114.
*) Grosse Politik, Bd. 38, № 15372, p.123.

պատահն է Օսմանեան տիրապետութեան անկումը: Նոյնն է եւ Գիրսի պարագան: Բարոն Վանդէնհայմը նոյն իսկ այնքան հետու է դընում, որ ենթադրում է, թէ՛ եթէ Հայաստանի բարենորոգումները ուսական ծրագիրը մերժելի, պ. Գիրսը կոտորածներ առաջ կը բերէ Հայաստանում:

Ահա, ըստ բարոն Վանդէնհայմի, այս մոլեռանդ, միատիկ, անհրնազանդ, յեղափոխական դեսպանատան վրա են կենտրոնանում Ռուսաստանի թիւրքահայաստանում կատարած քայքայիչ դաւերի դէմ եղած բոլոր մեղադրանքները: Բայց մենք ի զուր պիտի վնտըրէինք զերման դեսպանի հրատարակած տեղեկագրում որեւէ նոյն իսկ աննշան փաստ այս ծանր ամբաստանութեան համար: Ընդհակառակը, մենք այնտեղ գտնում ենք նոյն դեսպանի մի յայտարարութիւնը, թէ՛ քանի որ Թուրքիայի ուսական շահերի շրջանում, այսինքն՝ Հայաստանում զերման հիւպատոսական ներկայացուցիչներ չկան, խիստ դժուար է ըստ ամենայնի վստահելի տեղեկութիւններ ստանալ ուսական քարոզչութեան վերաբերմամբ կամ քննել, թէ որքան հիմնաւոր են այդ մասին շրջան անոց լուրերը:*) Որով, ուրեմն, բարոն Վանդէնհայմը ընդհանուր դատողութիւնների շրջանից դուրս չի գալիս: Այս պայմաններում ինձ էլ մնում է միայն մի քանի ընդհանուր խօսք ասել հերքելու համար եղած մեղադրանքները:**)

Նախ՝ թոյլ եմ տալիս ասելու, որ բոլոր երկրների դեսպաններն էլ որոշ ազատութիւն վայելում են. նրանք պարզ գործակալներ չեն: Նրանք կարող են ընդունել տալ իրենց տեսակէտները իրենց կառավարութեան, ինչպէս 1911-ին արաւ բարոն Մարշալը՝ հակառակելով նեղուցների բացման ուսական զինւորական նաւերի առաջ: Բայց դեսպանները երբեք չեն կարող անկախ քաղաքականութիւն վարել, որի մենաշնորհը բարոն Վանդէնհայմ այնպէս մեծահոգութեամբ վերագրում է Պոլսի ուս դեսպանատան: 1911 թ. պ. Չարիքովը՝ որ, ճիշտ թէ սխալ, մեղադրեց իր իրաւունքների սահմանն անցնելու համար, յետ կանչեց պ. Սաղոնովի կողմից:

Անցնելով բարոն Վանդէնհայմի անհիմն մեղադրանքներին ու-

*) Grosse Politik, Bd. 38, № 15294.

*) Այս մասին աւելի հանգամանորէն խօսած է իմ գերմաներէն հրատարակութեան մէջ: "Das Armenische Problem im Lichte des Volker- und Menschenrechts", 1913 (Heft 15, aus dem Institut für internationales Recht an der Universität Kiel).

սական դեսպանատան դէմ, որի մէկ անդամն էլ ես եմ եղել, ես, բնականաբար, չեմ կարող բերել հակառակ փաստեր որեւէ քարոզչութեան, կամ խոսվայոյզ սադրանքների բացակայութիւնը մեր կողմից: Բայց ուզում եմ այստեղ վճռականապէս յայտարարել, թէ այն 16 տարիների ընթացքին, որ ես պաշտօնավարել եմ Պոլսի ուս դեսպանատան մէջ, երբեք չեմ նկատել որեւէ ջնջին նշան իսկ, որ որեւէ պաշտօնական կամ անպաշտօն գրգռիչ քարոզչութիւն պատահած լինի թիւրքահայաստանում կամ այլուր, եւ որի մասին ես չէի կարող տեղեկ լինել: Այս հերքումը կիրառելի է մասնաւորապէս 1912-14 թւականների համար, որոնց մասին խօսում է բարոն Վանդէնհայմը, երբ ես ուս դեսպանատան առաջին թարգմանն էի եւ որպէս այդպիսին, բնական է որ տեղեկ էի վերջինիս բոլոր գործերին ու շարժումներին: Գերման դեսպանատունը, որի բարեմտութիւնը ես մի վայրկեան իսկ կասկածի տակ չեմ դնում, պարզապէս վստ իրազեկ էր եւ ծանրապէս սխալում է: Քրիստոնեայ. ժողովուրդների կոտորածի կազմակերպումը երբեք չի մտել ուսական ուղատութիւնը: Գրան հակառակ, յայտնի է, թէ հայկական իսկական կոտորածներ տեղի ունեցան 1915-ին, ուս դեսպանատան մեկնումից շատ յետոյ: Եւ բարոն Վանդէնհայմը, անշուշտ, այնժամանակ կարողացաւ համոզել, թէ այս խնդրում «Միութեան եւ Յաւատարմութեան կամիտէի» ասպետներ թալէաթները, էնվէրները, Նազիմները, Բէհհէյդի - Շաքիրները բնա՞ կարիք չունէին որեւէ գրգռումի, ինչ որ օտար գրգռումի:

§ 7. Ռուսական ծրագիրը եւ Ենի - Բէլոյի խորհրդածոյրը. Ստանձնելով բարենորոգումների նախաձեռնութիւնը՝ Ռուսաստանը, բնականաբար, հոգ պիտի տանէր կազմելու բարենորոգումների նախագիծը եւ ներկայացնելու միւս պետութիւնների ջննութեան: Ես իմ կառավարութիւնից հրահանգ ստացայ պատրաստել մի նախագիծ եւ այդ գործը կատարեցի հետեւելով պ. Գիրսի ընդհանուր ցուցմունքներին եւ յատկապէս յենելով պետութիւնների մշակած 1895 թ. Հայաստանի եւ 1880 թ. Արեւմտեան Թիւրքիայի բարենորոգումների ծրագիրների վրա: Չկարողանալով այստեղ մտնել մանրամասնութիւնների մէջ՝ ես պիտի սահմանափակեմ միայն այն նրկատումով, որ իմ նախագիծը երկու հիմնական գծերն էին՝ 1) թիւրքահայկական դաւառները միացնել մէկ նահանգի մէջ, եւ 2) այս նահանգի համար ընտրել մէկ ընդհանուր նահանգապետ՝ նշանակած սուլթանից եւ վաւերացած բոլոր մեծ պետութիւնների կողմից:

Ակներեւ է, որ այսպիսի մի նախագիծ Ռուսաստանին բացառիկ ազդեցութիւն չէր տալիս Հայաստանի ազազայի խնդրում :

Վաւերացած ուսու կառավարութիւնից եւ բացառութեամբ մի քանի երկրորդական ձեւափոխութիւնների, նաեւ Ֆրանսայի ու Անգլիայի դեսպանների կողմից, այս նախագիծը դրեց քննութեան մի յանձնաժողովում, որ բաղկացած էր վեց դեսպանատների ներկայացուցիչներից եւ որ գործեց Ենի-Քէոյում, 1913 թ. յուլիս 3-24-ին :*)

Այս յանձնաժողովի հաւաքելու նախօրեակին, Բ. Դուսը մի անգամ էլ դիմեց իր յաւիտենական գործելակերպին՝ պետութեան մէկ շրջանում բարենորոգումներ մտցնելու պարտաւորութիւնից խուսափելու համար ընդհանուր բարենորոգումներ ազդարարելով ամբողջ կայսրութեան համար : Եւ, յիշուի, նա հրատարակեց «Վերայէթների օրէնքի յաւելելու կէտերը» եւ «ընդհանուր քննիչների իշխանութեան եւ իրաւասութեան վերաբերեալ հրահանգները», որոնք բոլորովին անբաւարար էին ապահովելու կարգն ու անդորրութիւնը Թիւրքահայաստանում :

Պ. Սագոնովին քաշած 1913 թ. 19 յուն. 2 յուլիս հեռագրով Գիրսը հետեւեալ ձեւով էր ներկայացնում Բ. Դրան հրատարակած այս նոր վաւերագիրը. «Բոլոր այս վաւերագրերը վերաբերում են ընդհանուր բարենորոգումներին կայսրութեան մէջ, առանց յիշատակելու յատկապէս Հայաստանը : Երջարեակն հեռագիրը յայտարարում է, որ կայսրութիւնը բաժնւած է վեց հատւածների, որոնցից երկուսը կազմւած են արեւելեան վերայէթներից, առանց ցոյց տալու սահմանները : Կարելի է վախճալ, որ հայկական վերայէթները բաժնւին այս երկու հատւածների մէջ հայերին իրարից զատելու եւ մահմետական մեծամասնութեան մէջ լուծելու համար : Ծիշտ է, հատւածների գլխին դրւած են օտար ընդհանուր քննիչներ, բայց նրանք նշանակւում են նախարարների խորհրդից, վաւերացած սուլթանից, առանց պետութիւնների համաձայնութեան : Տարակարծութիւնները քննիչների եւ նախարարների միջև լուծուում են նախարարների խորհրդի կողմից : Հրահանգները չեն փոխում վերայէթների ներկայ կազմակերպութիւնը եւ քննիչներին տալիս են միայն հակազդի իրաւունք եւ կառավարութեան ներկայացնել տեղական օրէնքի ձեւափոխութեան, վաչկատուն ցեղերի տեղաւորման, հարկե-

*) Այս յանձնաժողովի արձանագրութիւնները կան «Նարնչագոյն Գրքում», յաւելւած № 5, այլեւ տես՝

A. Mandelstam, "Le Sort de l'Empire Ottoman", 1917, pp. 217 - 234.

րի բարեփոխութեան, ժանդարմրի եւայլնի վերաբերեալ նախազրծեր : Քննիչները իրաւունք ունեն հրատարակելու պաշտօնականներին, բայց ոչ նշանակելու :» «Ակներեւ է, որ Դրան ներկայացրած օրէնքները կազմում են մի թերի ծրագիր եւ բնաւ չեն զբաղւում դեսպանների կողմից. 1895-ին առաջարկւած եւ պ. Մանդէլշտամի նախազրծում զարգացած բարենորոգումներով :»*)

Հայկական Բարենորոգումների Յանձնաժողովը իրրեւ հիմք ընդունեց ուսուական նախագիծը : Երբեակ զինակցութեան ներկայացուցիչները պայքարեցին նրա բոլոր էական կէտերի դէմ : Այսպէս, նրանք հակառակեցին հայկական վեց վերայէթները մէկ մահանգի մէջ համախմբելու եւ մէկ ընդհանուր մահանգապետ նշանակելու առաջարկին : Ի դուր երբեակ համաձայնութեան ներկայացուցիչները առարկեւ էին, թէ «ընդհանուր նահանգապետի միասնական իշխանութիւնը անհրաժեշտ է ապահովելու համար բարենորոգումների միութիւնը», թէ «թէ հայաբնակ նահանգների ամբողջ պատմութիւնը ցոյց է տալիս, թէ մէկ ու միասնական կամքի բացակայութիւնը մեծ դեր է կատարել այն շարիքի մէջ, որից տառապում է իշխանութիւնը», թէ՛ «հարկաւոր է միասնական գործադիր մարմին, որ ունենայ գործելու ազատութիւն եւ հաշի շտանէ շատ մեծ պաշտօնականներին, ինչպէս են վալիները : Երբեակ զինակցութեան ներկայացուցիչները յայտարարեցին, թէ իրենք զերազատում են վերայէթների գոյութիւն ունեցող կազմակերպութիւնը՝ իրրեւ վարչութիւն վերահսկիչ ունենալով ընդհանուր քննիչներ :

Նմանապէս, Երբեակ զինակցութեան ներկայացուցիչների մօտ համակրանք չգտաւ եւ ուսուական նախագիծը երկրորդ յօդւածը, ըստ որի հայկական նահանգների ընդհանուր նահանգապետը նշանակւում էր սուլթանի կողմից պետութիւնների հաւանութեամբ : Հակառակ նախընթաց փորձերի, թէ՛ «իր անունին արժանի ոչ մի բարենորոգում թիւրքիայում երբեք չի գործադրել ստանց Եւրոպայի մասնակցութեան» : Հակառակ Արեւելեան Րումելիի, Կրետէի եւ Լիբանանի նախընթացներին, զերմանացիք եւ աւստրեւոնգարացիք գտնում էին, թէ ուսուական նախագիծը «զրկում է սուլթանին վեհապետական որոշ իրաւունքներից» եւ որ «նման մի ինքնավարութիւն անհրաժեշտօրէն կը տանէ զէջի Հայաստանի կատարելալ անջատումը Օսմանեան կայսրութիւնից :»

Տեսակէտների ծանր տարբերութիւն առաջ եկաւ նոյնպէս եւ ընդհանուր ժողովների ու վարչական խորհուրդների, սկզբունքի,

*) «Նարնչագոյն Գրք» № 54 :

ինչպէս եւ դատաւորների եւ պաշտօնեաների նշանակման հաւասարութեան կամ համեմատական սկզբունքի խնդրում: Մինչ Երրեակ համաձայնութեան ներկայացուցիչները դրւատուում էին հաւասարութեան սկզբունքը մահմեդականների եւ քրիստոնեաների միջեւ, Երրեակ զինակցութեան պատգամաւորները, եւ մանաւանդ գերման ներկայացուցիչները, արտայայտեցին ի նպատակ համեմատական սկզբունքի, որ խիստ վտանգաւոր էր հայկական փոքրամասնութեան համար: Գերման ներկայացուցիչը հակառակեց նոյն խոսքի յատուկ յանձնաժողովի կազմութեան՝ հողային խնդիրները կարգադրելու համար: Նա բաւարար էր գտնում գոյութիւն ունեցող թիւրքական օրէնքները այդ հարցի մասին. նա չընդունեց անգամ ուսուսական նախագծի այն յօդուածը, որով արդիւրում էր մահմեդական մուհաջիրների (գաղթականների) տեղաւորումը հայկական նահանգների հողի վրա, եւ այլն:

Ի վերջոյ, Երրեակ զինակցութեան պատգամաւորները մերժելով ուսուսական նախագծի առաջարկութիւնների մեծ մասը, յայտարարեցին, թէ՛ «աւելի նպատակաւարժար է հայարնակ նահանգներում մտցնելիք բարենորոգումները հիմնել գոյութիւն ունեցող օրէնքների ու ընդհանուր նահանգապետների համար հրատարակած հրահանգների եւ Բ. Գրան կողմից օսմանեան դեսպաններին տրւած եւ 1913 յուլ. 1 նոտով դեսպաններին հաղորդւած շրջաբերականի վրա»:

Այսպիսով, Ենի - Քէոյի Յանձնաժողովը Հայաստանում մտցրելիք բարենորոգումների խնդրում համաձայնութիւն չգոյացրեց Երրեակ համաձայնութեան եւ Երրեակ զինակցութեան միջեւ:

§ 8. Գերմանական հակառակութեան իմաստը. Բարոն Վանդէնհայմի իր կառավարութեան հետ ունեցած գիւտնադիտական թղթակցութեան մէջ է որ գտնում ենք Ենի-Քէոյի խորհրդաժողովի ընթացքում գերման դեսպանատան բարենորոգումների ուսուսական նախագծին ցոյց տւած հակառակութեան իսկական բացատրութիւնը:*)

Գերման դեսպանը այն կարծիքին է, որ վեց վիլայէթների միացումը մէկ մեծ նահանգի մէջ գործնական պատճառներով դժւար իրագործելի խնդիր է եւ կր լինի Թուրքիայի բաժանման առաջին քայլը, մի բան, որից բարոն Վանդէնհայմը, ինչպէս արդէն ասացինք, կամենում է որոշ ժամանակի համար խուսափել Գերմանիայի դեռ բաւականաչափ պատրաստ չլինելու պատճառով, թէեւ երբեք չի անտեսում նման հաւանականութիւն: Եւ այս տեսակէտից

*) Grosse Politik der europaischen Kabinette, Bd. 38.

է որ նա քննադատում է եւ ուսուսական նախագիծը: Գերման դեսպանը առարկում է եւ հայկական նահանգից մի քանի քրդական մեծամասնութիւն ունեցող զաւառներ (Հէքքեարի, Սղերտի հարաւային մասը, Բիշերիկ ու Մարաթիա եւ Սրվազի հիւսիս արեւմտեան մասը) դուրս հանելու դէմ: Այս առաջարկի մէջ նա տեսնում է ուսուսների կողմից Ռուսաստանի վրա յենւած հայկական մեծամասնութիւն ունեցող վարչական մի միութիւն ստեղծելու ձգտում: Միւս կողմից, նախագիծուող հայկական նահանգի հարաւային մասը, ըստ բարոն Վանդէնհայմի, գտնուում է գերմանական շահերի շրջաւնում. ուստի եթէ բարենորոգումները միայն այս նահանգում կիրառւեն, գերմանական շրջանից դուրս մնացած մասը կընկնի պակաս արտօնելու վիճակի մէջ եւ նրա բնակիչները կը յանգեն այն ճակատագրական եզրակացութեան, թէ Գերմանիան, Ռուսաստանի հետ համեմատած, ի վիճակի չէ բարելաւելու իր դրութիւնը՝ կանգնելով Թիւրքիայի պահպանութեան տեսակէտի վրա, գերման դեսպանը գտնում է, թէ բարենորոգումներ մտցնելը Թիւրքիայի միայն մի մասում, ուր ժողովուրդը միշտ աչքի է ընկնում իր յուզումնալից վիճակով, կարող է աւելի հանդարտ բնակչութեան երեւալ իբրեւ «հատուցում պետական իշխանութեան չենթարկելու» համար եւ ապստամբութեան դրդել նրան: Ահա թէ ինչու Գերմանիայի դեսպանը արտայայտուում է յօդուած թիւրքական ծրագրի, որ՝ նախատեսնում է ընդհանուր բարենորոգումներ ամբողջ կայսրութեան համար:

Պ. Ֆոն Եագովին ուղղւած 1913 թ. յուլ. 15 թւակիր նամակում գերման դեսպանը մեղադրում է ինձ, իբրեւ ուսուսական նախագծի հեղինակի, որ «ես հայկական մի շրջան ձեւել եմ յատուկ նպատակների համար»: Այն ինչ իրականում ես երբեք նման հրահանգ չեմ ստացել իմ գլխաւորներից: Ես չեմ ունեցել մաքիաւելական դիտաւորութիւն դիպչելու «գերմանական շահերի շրջանին», որի գոյութիւնն անգամ ինձ ծանօթ չէր: Մանաւանդ որ Հայկական մէկ նահանգ ստեղծելու գաղափարը նոր էլ չէր. դեռ ուսուս - թիւրքական պատերազմից առաջ, թիւրք կառավարութիւնն ինքը հայկական մի քանի շրջաններ միացրել էր մէկ նահանգի մէջ եւ 1915-ին Բ. Գուուր ինքը մէկ ընդհանուր կոմիսար նշանակեց հայկական վեց վիլայէթների համար: Միւս կողմից, վեց պետութիւնների 1880 թ. սեպտ. 7. հաւաքական ծանուցագիրը յայտարարում էր, թէ պատշաճ է ամենից առաջ «վարչականօրէն բաժանել» հայերին եւ քիւրդերին,

*) "Grosse Politik", Bd. 38, № 15347.

**) Նոյն տեղը, № 15361:

«նկտի ունենալով, որ բացարձակապէս անհնար է միեւնոյն ձեռով կառավարել նստակեաց ժողովուրդն ու վաչկատուն ցեղերը»։ նոյն նկատումով էր, որ սուսական նախագծով քրդական գաւառները դուրս ձգւեցին հայկական նահանգից։ Վերջապէս, մէկ քրիստոնեայ ընդհանուր նահանգապետի պաշտօնի ստեղծումը արդիւնք էր այն համոզման թէ կենտրոնական ուժեղ իշխանութեան բացակայութիւնն է եղել գլխաւոր պատճառը Հայաստանում ցարդ իշխող տիրուր կացութեան։ նոյն մտահոգութիւններով է բացատրուում եւ թիւրք վալիները պաշտօնի վերացումը, որոնք, անշուշտ, խափանարար դեր պիտի կատարէին քրիստոնեայ ընդհանուր նահանգապետի կարգադրութիւնների վերաբերմամբ։

Հետաքրքրական է նկատել, որ արտաքին գործոց նախարար Փոն Եագովը լրիւ կերպով համամիա չէր բարոն Վանդէնհայմի հակառակութեան ուսսական նախագծին։ Ճիշտ է, Փոն Եագովը, դեսպանատան հետ ունեցած իր գրագրութեան մէջ, նոյնպէս այն կարծիքն է յայտնում, իր բարենորոգումները պէտք է տարածել ամբողջ Փոքր - Ասիայի վրա, բայց կարծում է, թէ Գերմանիայի ազդեցութիւնը գերմանական աշխատանքի շրջանում (Arbeitszone) աւելի արդիւնաւէտ կերպով կարտայայտուի, եթէ լինի ընդհանուր նահանգապետ եւ ոչ բազմաթիւ ստորադաս պաշտօնեաներ։ Նախարարը բուարար չի գտնում եւ թիւրքական ծրագրում նախատեսուած քննիչի պաշտօնը։ Բարոն Վանդէնհայմը թերազուտ է, որ սուսական նախագծի մերժումից յետոյ, Երբեակ զինակցութիւնը ինք բաւանձնէ բարենորոգումների գործը։ Փոն Եագովը, սակայն, պատասխանում է, թէ՛ եթէ սուսական նախագիծը ընկնի Երբեակ զինակցութեան հակաճառութեան հետեւանքով, Երբեակ համաձայնութիւնն էլ իր հերթին արդեւ կր լինի Գերմանիայի եւ դաշակիցների գործունէութեան Ահա թէ ինչու գերման արտաքին գործոց նախարարը պնդում է թէ անհրաժեշտ է համաձայնութեան գալ հիմք ունենալով Մանդէլշտամի նախագիծը։ Գերմանիայի շահը, ահում է նա, հրամայում է ձեռնադաս մնալ խիստ սուր հակառակութիւնից սուսական նախագծին. պէտք է ջնջել միայն ամենէն վտանգաւոր կէտերը։ Սակայն, դեսպանը չի հրաժարուում իր հակառակութիւնից. նա ասում է, թէ Բ. Գուտտ ամենաբուռն կերպով կր զիմադրէ գերմանական ազդեցութեան 5 շրջանները մէկ նահանգի մէջ միացնելու մտքին. «այդ դէպքում անհրաժեշտ է, ամենից առաջ իբրև հատուցում Գերմանիայի Մանդէլշտամի նախագծին յարելուն համար, ապահովել Երբեակ համաձայնութեան պատկանող պետութիւնների հաւանութիւնը գերմանական նահանգի ստեղծման։ Սա-

կայն, այս պահանջով արդէն Գերմանիան միացած կը լինի այն պետութիւններին, որոնք աշխատում են Թիւրքիայի քայքայման ի նըպաստ, մինչդեռ բարոն Վանդէնհայմին թւում է, թէ Գերմանիայի համար դրա յարմար ժամանակը դեռ չի հասել։*) Ահա թէ ինչու դեսպանը պնդում է, որ առանց հրաժարելու սուսական ծրագրի վտանգաւոր կէտերին հակառակելուց, հարկաւոր է պնդել Թիւրքական ծրագրի իրագործման վրա։

§ 9. Ռուս - գերմանական բանակցութիւնները - Պէտք է վկայել, որ պ. Սագոնովը Փոն Եագովից ոչ պակաս համակաւած էր խաղաղասիրական տրամադրութիւններով։ Ենի-Քէոյի խորհրդաժողովի ձախողութիւնից յետոյ, սուս արտաքին գործոց նախարարը, շատ հետո բարոն Վանդէնհայմի մույլ գուշակութիւններից, բռնեց զիջումի ճանապարհը։ Արդէն յուլիս 25-ին նա հրահանգեց Բերլինի սուսական գործակատարին՝ պնդել, որ պետութիւնները մասնակցեն ընդհանուր նահանգապետի նշանակման՝ գտնելով, որ միայն այդ միջոցով կարելի է ապահովել բարենորոգումների իրագործումը, իսկ ինչ վերաբերում է հայկական մէկ նահանգի ստեղծման՝ Ռուսաստանը կամենալով ցրել որոշ պետութիւնների կասկածները, կարող է համաձայնել, որ բարենորոգումների շրջանը բաժնւի երկու հատուածի՝ մէկ ընդհանուր նահանգապետով իւրաքանչիւրի համար։ Պ. Սագոնովը այս զիջումը ընդունելի է համարում հետեւեալ երկու պայմանով. 1) որ ոչ մի նոր շրջան չմիացւի սուսական նախագծում որոշուած հողամասերին, 2) որ ընդհանուր նահանգապետները նշանակւեն պետութիւնների հաւանութեամբ եւ լինեն բոլորովին անկախ իրենց շրջանի պաշտօնեաների նշանակման եւ հրաժարեցման գործում։ **)

Սագոնովի այս առաջարկը Փոն Եագովին հաղորդեց 1913 թ. սեպտ. 1-ին։***)

Սագոնովի սոյն առաջարկութեան հիման վրա, անմիջապէս Պուսի գերման եւ սուս դեսպանատների կողմից սկսեցին բանակցութիւններ, որոնք տեղի ունեցան Գերմանիայի դեսպանատան երկրորդ թարգման գր. Շէոնբերգի եւ իմ միջեւ։ Այդ բանակցութիւններն էլ գոհացուցիչ ելքի չյանգեցին։ Համաձայն իմ ունեցած հրահանգների, ես պահանջեցի, որ հայկական շրջանը բաժնւի արեւելեան եւ արեւմտեան հատուածների, մինչդեռ գերմանական ներկայացուցիչը

*) Grosse Politik, Bnd. 38, № 15368, 15371.
 **) «Նարնչագոյն Գիրք» № 5:
 ***) Grosse Politik, Bnd. 38, № 15,382.

սինդուս էր, որ ստեղծւեն հիւսիսային եւ հարաւային հատւածներ: Բարոն Վանդէնհայմի Տ սեպտ. հաղորդագրութիւնից *) երեւում է, որ դերման դեսպանը այն գաղափարին էր, թէ բաժանման մեր նախագիծը նպատակ ունի արեւելեան հատւածը դնել ուսական ազդեցութեան տակ եւ դրանով Գերմանիան դուրս ձգել Տիւրքիքից: միւս կողմից, բարոն Վանդէնհայմը կարծում էր, թէ Ռուսաստանը երկու հատւածի բաժանումը կընդունի միայն այն պայմանով, որ երկուսն էլ կառավարեն ուսաների կամ ուսաներից կախած փոքրիկ պետութիւնների հպատակների կողմից: Այդ պատճառով Գերմանիայի դեսպանը չի թողնում իր անբարեացակամ վերաբերումը դէպի ուսական ծրագիրը: Միւս կողմից բարոն Վանդէնհայմը ընդունում է, որ ուսական նախաձեռնութեան հետեւանքով Գերմանիան դրւած է երկընտրանքի առջև՝ կամ ուսական նախագծին յարելով պաղեցնել Բ. Դուռը, կամ հայերին ներկայանալ իբրև ուսական ծրագիրներին հակառակող ոյժ: Այս անախորժ գրութիւնից դուրս դալու համար նա թելադրում է պատասխանել իր առաջարկած իմաստով, այսինքն՝ գործադրել բարենորոգումների քիւրֆական ծրագիրը դեսպանների հակակշռի տակ:**)

*) Նայն տեղը, № 15383.

**) Այս վայրը յաճախ է նշմարում բարոն Վանդէնհայմի գրաքութեան մէջ: Այսպէս, դեռ իր 1913 թ. յուլ. 3 տեղեկագրում նա արտայայտում է հետեւեալ պատկերարար խօսքերով: Մենք, իմ կարծիքով, խիստ մեծ շահ ունենք արգիլելու, որ Ռուսաստանը, բարենորոգումների իր նախագծի մերժումից յետոյ, հայ ազգին չներկայանայ իբրև նրա եռանդուն ազատարար քիւրֆական լծից, որ մամակաւորապէս արգիլքի է հանդիպած ուրիշ պետութեանց մեքենայութիւնների պատճառով: Այս դերը շատ հեշտութեամբ կարող է վերագրել Ռուսաստանին, իբրև հետեւանք հայերի կրած հիասթափութեան, որ՝ այն վայրկեանին, երբ համով երշիկը արդէն պարզւած էր իրենց, հեկն ա՛յն վայրկեանին, երբ պիտի բռնէին, երշիկը յետ ֆաշից: Այդ տպաւորութիւնը չէգոգացնելու համար գերման դեսպանը առաջարկում է բարենորոգումների այնպիսի մի ձեւ, որ, առանց քիւրֆիան վտանգի ենթարկելու, ցոյց տայ, թէ հայերը վայելում են Գերմանիայի մասնաւոր ուշադրութիւնը: Այս ձեւը հակակշռող յանձնաժողովի հաստատումն է Բ. Դրան մէջ, քիւրֆ նախագահի գլխաւորութեամբ եւ կէսը դեսպանների ներկայացուցիչներից բաղկացած: Այս յանձնաժողովը կը քննէ հայերի բոլոր գանգատները, հրահանգներ կը տայ վալիներին եւ կը հակակշռէ բարենորոգումների գործադրութիւնը:

Իր օգոստ. 4 տեղեկագրում էլ բարոն Վանդէնհայմը պնդում է Հայաստանի բարենորոգումների անհրաժեշտութեան վրա, բայց պահանջում է, որ Գերման-

Այսպիսով, բարոն Վանդէնհայմը անմիջապէս չգնահատեց Ռուսաստանի կողմից Գերմանիային արւած մեծ զիջումը: Ի մասնաւորի, նա հաշի չտուաւ, որ Հայաստանի բաժանումը արեւելեան եւ արեւմտեան երկու հատւածների արւում էր հայերին մեծամասնութիւն ապահովելու համար, մինչդեռ հիւսիսային եւ հարաւային երկու հատւածների բաժանման դէպքում մեծամասնութիւնը կանցնէր մահաճակատներին: Եթէ մեր ծրագիրը ներշնչւած լինէր զուտ ուսական շահերով, մենք պէտք է աւելի զերազատէինք մի հիւսիսային հատւած ստեղծել, որը ենթարկելով մեր աղբջեցութեան՝ դիւրացրած կը լինէինք մեր անցքը դէպի Պոլիս, ցամաքային ճանապարհով:

§ 10. Ռուս - գերմանական համաձայնութիւնը. - Ռուս կառավարութիւնը, սակայն, նորից ջանաց համաձայնութեան ելը գտնել Գերմանիայի հետ: Պ. Գիրսը հրահանգ է ստանում ուղղակի բանակցութիւնների մէջ մտնել բարոն Վանդէնհայմի հետ, եւ այս անգամ երկու դեսպանները յաջողեցին կազմել վեց կէտերից բաղկացած ուս - դերմանական ընդհանուր մի ծրագիր: Այս ծրագրով Բարձր Դուռը պիտի դիմէր պետութիւններին՝ խնդրելով յանձնարարել երկու ընդհանուր քննիչներ Արեւելեան Անատոլի երկու հատւածների համար եւ պիտի հրաւիրեր մեծ պետութիւնները հակակշռելու բարենորոգումների գործադրութիւնը:

Արտաքին գործերի նախարար Ֆոն Եագովը գտնում է, որ Գիրս - Վանդէնհայմ համաձայնութիւնը ընդունելի հիմք է շահագրգռւած բոլոր կողմերի համար, որովհետեւ մի կողմից նա պահում է Հայաստանի բաժանումը հատւածների եւ վիլայէթների, իսկ միւս կողմից հնարաւորութիւն է տալիս պետութիւններին մասնակցելու քննիչների նշանակման, մի հանդամանք, որ թւում է բանաւոր, եթէ կիրառուի քիւրֆիայի արժանապատուութեան համապատասխանող պայմաններում: Իր հերթին պ. Սազոնով նոյնպէս հաւանութիւն է տալիս ծրագրին: Բերլինը գտնւած ժամանակը, 1913 թ. հոկտեմբեր-

նիսն ինքը ստանձնէ նախաձեռնութիւնը, որպէսզի բոլոր չտրի, որ հայերի մէջ ստրանայ այն միտքը, թէ Գերմանիան Բ. Դրան բարեացակամութիւնը աւելի բարձր է դասում, քան հայերի շահը, մինչդեռ Ռուսաստանը նրանց անշահախնդիր փրկիչն է քիւրֆական լծից: Նման մի նախաձեռնութիւն բնաւ չի բուլցանի Բ. Դրան համակրանքները դէպի Գերմանիան, որովհետեւ Գերմանիան կարող է նրան հասկացնել, թէ նա պնդում է բարենորոգումների իր ծրագրի վրա այն պատճառով, որ արգիլք լինի Ռուսաստանին քիւրֆիայի գոյութեանը սպառնացող մի ուրիշ ծրագիր անցկացնելու:

րին, նա նոյն իսկ յայտարարում է, թէ հրահանգ կը տայ Գիրսին Բ. Դրան վրա աւելի ճնշում չբանեցնել, քան այդ անում է իր գերման պաշտօնակիրը: Միւս կողմից, Սազոնովը նորից հաւաստիացնում է Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան, որ Ռուսաստանը աչք չունի Թիւրքահայաստանի վրա, ուր նա կամենում է միայն բարենորոգումներ մտցնել ի շահ հէնց իրեն Թիւրքիայի եւ նրա հպատակ հայերի:*)

Ռուս - գերմանական ծրագրի հաստատումից յետոյ, բարձր վանդէնհայթը, տեղի տալով իր նախարարի հաշտարար քաղաքականութեան առջեւ, հրաժարւում է թշնամական դիրքից ուսս գեւապանատան նկատմամբ: Պէտք է ընդունել նոյն իսկ, որ գերման դեսպանը ուղղամտօրէն աջակցում է պ. Գիրսին Բ. Դրան հետ ունեցած յարաբերութիւնների ընթացքում: Հոկտ. 14-ին նա յայտարարում է մեծ վեղիր Սայիդ Հալիմ փաշային, թէ գերմանական միջամտութեան շնորհիւ Մանդէլշտամի ծրագիրը հասցւած է նւազագոյնի, բայց այս նւազագոյնի վրա բոլոր պետութիւնները համաձայն են, այնպէս որ Թիւրքիան այժմ գտնւում է միացեալ Եւրոպայի առջեւ: Մի ուրիշ խօսակցութեան միջոցին, գերման դեսպանը մեծ վեղիրին յայտարարում է նոյն իսկ, թէ հայկական հարցի միջազգայնացումը իրական բարեփոխութիւն է Թիւրքիայի համար, որովհետեւ Ռուսաստանը այս խնդրում այլեւս Թիւրքիայի նկատմամբ չի կարող դիմել բռնի միջոցների, առանց նախօրոք համաձայնելու միւս պետութիւնների հետ:

Երկու դեսպանների համերաշխ քայլերը Բարձր Դրան մօտ շարունակւում են որոշ ժամանակ եւ գեկտ. 25-ին յանգում են համաձայնութեան ծրագրի ընդհանուր գծերի վերաբերմամբ: Մանրամասնութիւնները յետոյ կարգաւորւեցին մեծ վեղիրի, պ. Գիրսի եւ, վերջինիս արձակուրդով մեկնելուց յետոյ, գործակատար պ. Գուլկելիչի միջոցով: Գերմանական դեսպանատունը աշխատեց մեղմացնել ուսանների պահանջներից մի քանիսը:

§ 11. Ռուս - քիւրճական համաձայնութիւնը. Հայկական բարենորոգումների աշխատանքները, ի վերջոյ, պսակւեցին 1914 թ. փետր. 8 (26 յունւար) համաձայնագրով, որ ստորագրւեց մեծ վեղիր Սայիդ Հալիմ փաշայի եւ, ի բացակայութեան պ. Գիրսի, գործակատար պ. Կոստանդին Գուլկելիչի կողմից:

*) Grosse Politik, Bnd. 38, № 15,400.
**) Բարոն Վանգէնհայմի 14 հոկտ. 1913 թ. հեռագիրը արտաքին գործոց նախարարութեան. Grosse Politik, Bnd. 38, № 15,396.

Այս համաձայնագրով ընդունւում է, որ «Արեւելեան Անատոլի երկու հատածների գլուխը դրւելիք երկու ընդհանուր քննիչների նշանակման հետ միաժամանակ, Բարձր Դուռը մեծ պետութիւններին կուղղէ» մի ծանուցագիր, որի բովանդակութիւնը որոշւած է հէնց նոյն համաձայնագրով:

Այդ ծանուցագիրը սկսւում է մի յայտարարութեամբ, թէ «Երկու օտար քննիչները դրւելու են Արեւելեան Անատոլի երկու հատածների գլխին»: Այսպիսով, Թիւրքիայի ինքնասիրութիւնը յարգած լինելու համար, անպատճառ պայմանաւորւած չէ, որ առաջին քննիչները պիտի նշանակւեն պետութիւնների յանձնարարութեամբ, բայց քանի որ Բ. Դուռը այդ մասին ստանձնել է բաւաւար յանձնարարութիւն, ուղղամտօրէն համակերպւում է: Միւս ինչ վերաբերւում է առաջին քննիչների հաւանական յաջորդներին, համաձայնագրի մի ուրիշ յօդւած ճշտորոշում է, թէ՛ «այն դէպքում, երբ տասը տարւայ ժամանակամիջոցին ընդհանուր քննիչների պաշտօնը մնաց պարապ, Բ. Դուռը յիշեալ ընդհանուր քննիչների ընտրութեան համար յոյս է դնում (Compte) մեծ պետութեանց բարեացակամ աջակցութեան վրա:

Ծանուցագրի միւս տրամադրութիւնները կարելի է ամփոփել հետեւեալ ձեւով.

Ընդհանուր քննիչները «հակազուրու են իրենց հատածների վարչութիւնը, արդարագատութիւնը, ոստիկանութիւնը եւ ժանդարմըրին»: Նրանց պահանջով նրանց տրամադրութեան տակ պէտք է դրւեն զինուորական ուժեր: Ընդհանուր քննիչները իրաւունք ունեն ստորագաս պաշտօնեաներ նշանակելու, իսկ բարձրագոյն պաշտօնեաների համար թեկնածուներ առաջարկել կառավարութեան: Բացի վալիներից, նրանք կարող են հրաժարեցնել բոլոր պաշտօնեաներին, որոնց անկարողութիւնը կամ վատ վարքը իրենք նկատել են, միայն այդ կարգադրութեան մասին պէտք է տեղեկութիւն տան իրաւաւոր նախարարութեան. ծանր դէպքում, նրանք կարող են նոյն իսկ անմիջապէս կախակայել դատական պաշտօնեաներին, պայմանով որ այդ մասին անմիջապէս հաղորդեն արդարագատութեան նախարարութեան: Այն դէպքում, երբ վալիների կողմից նկատւեն այնպիսի արարքներ, որոնք պէտք են դարձնում անմիջական կարգադրութիւններ, քննիչները հեռագրով տեղեկացնում են ներքին գործոց նախարարութեան, սա էլ խմացնում է նախարարների խորհրդին, որը շորս օրւայ ընթացքում որոշում է տալիս:

Հողային վեճերը պէտք է լուծւեն ընդհանուր քննիչների անմիջական հսկողութեան տակ: Իրբեւ ընդհանուր օրէնք, բոլոր օսման.

ցիները իրենց ղինւորական սլարտականութիւնը կը կատարեն իրենց բնակութեան շրջանում: Քրդական անկանոն հեծելազօրը, որից այնքան տառապել են հայերը, վերածւում է պահեստի հեծելազօրի, որին միայն զօրաշարժի կամ զօրախաղերի ժամանակ ղէնք պիտի տրւի: Ազգային բոլոր տարրերի մասը իւրաքանչիւր վիլայէթի կթական բիւզընում որոշուում է հանրային կրթութեան համար վըճարած տուրքի քանակի համեմատ: Օրէնքները, հրամանագրերն ու պաշտօնական ազդերը պէտք է հրատարակեն տեղական լեզուներով: Դատական որոշումները գրւում են թիւրքերէն, բայց, ըստ կարելոյն, արւում է եւ թարգմանութիւնը դատուող կողմերի լեզուով: Ընդհանուր քննիչը կարող է արտօնել գործածելու մայրենի լեզուն դատական եւ վարչական հաստատութիւններին մէջ: «Եթէ ընդհանուր քննիչները անպատեհ չզտնեն, երբ երկու հատուածներում էլ ոստիկանութեան եւ ժանդարմերի մէջ բացեն ազատ տեղեր, մահմետականները եւ ոչ-մահմետականները միջեւ կը կիրաւուի հաւասարութեան սկզբունքը: Հաւասարութեան նոյն սկզբունքը, կարելիութեան սահմաններում, կը գործադրուի եւ բոլոր միւս հանրային պաշտօնեաների բաշխման պարագային»: Մինչեւ վերջնական մարդահամարի կազմակերպումը, որ պիտի կատարուի ամենակարճ ժամանակամիջոցում ընդհանուր քննիչների հսկողութեան ներքոյ, որոշ վիլայէթներին նահանգային ժողովներին անդամները կընտրեն հաւասարութեան հիման վրա. ուրիշ վիլայէթներում այդ անդամները հէնց այժմեանից կընտրեն համեմատական սկզբունքով:

1914 թ. փետր. 8 համաձայնագրի գլխաւոր տրամադրութիւնների սոյն ամփոփումից երեւում է, որ Բ. Դրան ընդունած բարենորոգումները թէեւ այնքան հեռու չէին գնում, որքան ուսական նախագիծը, բայց բաւական լուրջ էին: Այդ համաձայնագրով մեծ իշխանութիւն էր տրւած ընդհանուր քննիչներին, որոնք շատ տեսակէտներից աւելի վարիչներ էին քան քննիչներ:

Շատ հետաքրքրական է իրար հետ համեմատել այն դնահատուութիւնը, որ 1914 թ. փետր. 8 համաձայնագրին տալիս են ուսու եւ գերման գործակատարներ Գուլկելիչն ու Ֆոն Մուտիուսը:

Պ. Գուլկելիչը Սազոնովին տւած իր 1914 թ. յունւ. 27 հետազոտով յայտնում է այն տեսակէտը, թէ փետր. 8 համաձայնագիրը խորհրդանշում է մի նոր դարաշրջանի սկիզբ հայ ժողովրդի պատմութեան մէջ: Իր քաղաքական կարեւորութեան տեսակէտից այս համաձայնագիրը կարող է համեմատուել 1870 թ. Ֆրեմանի հետ բուլղարական էկզարխատի ստեղծման մասին: Հայոց Պատրիարքարանի կողմից արտայայտւած ջերմ երախտագիտութիւնը Յարին,

պ. Սազոնովին եւ պ. Գիրսին ցոյց են տալիս, որ հայերն ըմբռնում են, թէ արւած է իրենց թիւրքական լծից ազատագրելու առաջին քայլը:

Բայց, շարունակում է ուսու գործակատարը, փետր. 8 համաձայնագիրը մեծ կարեւորութիւն ունի եւ Ռուսաստանի միջազգային դիրքի համար: Կնքւած մեծ վեզիբի եւ ուսական ներկայացուցչի միջեւ՝ նա ընդգծում է Ռուսաստանի գերակշիռ դերը եւ, այսպէս ասած, հաստատում է Սան Սթէֆանոյի դաշնագրի 16-րդ յօդւածը: Այս պարագան, բնականաբար, չի կարող նպաստաւոր կերպով չանդրադառնալ Ռուսաստանի միջազգային վարկի վրա եւ իր վեհապետին կը պատէ մի նոր լուսապսակով Մերձաւոր Արեւելքի ժողովուրդների սրտում: Միւս կողմից, Գուլկելիչը յոյս է յայտնում, որ Ռուսաստանի կատարած դերը կայսերական կառավարութեան կողմը կը գրաւէ եւ ուսահայերի համակրանք եւ նրանց կը հեռացնէ Կայսրութեան ծայրայեղ կուսակցութիւններից:

Գերմանիայի հայկական խնդրում կատարած դերի մասին պ. Գուլկելիչը արտայայտւում է հետեւեալ կերպով. «Ինչ վերաբերում է Գերմանիային, նա հայկական խնդրում մեզ հետ համաձայնեց երկու նպատակով. նախ՝ որպէսզի հնար ունենայ ասելու Բ. Դրան, թէ ինքը չափաւոր, Թիւրքիայի համար վտանգ չներկայացնող բարենորոգումների գնով կարողացաւ յետ կեցնել ուսներին ընդարձակ բարենորոգումներից. երկրորդ՝ ապահովելու համար բարեացակամութիւնը հայերի, որոնց Գերմանիան կարեւորութիւն է ընծայում շնորհիւ նրանց գերակայութեան Կիլիկիայում, որը գերմանացիք դասում են իրենց ազդեցութեան շրջանում: Ահա թէ ինչու ամբողջ այս ժամանակ Գերմանիայի ընթացքը աչքի էր զարնում անկեղծութեան բացակայութեամբ եւ նրա համամտութիւնը զուտ ցուցական բնոյթ էր կրում. իրապէս, բարոն Վանգէնհայմը եւ աւելի եւս պ. Ֆոն Մուտիուսը թիւրքերի հաւատարիմ խորհրդատուներն էին...»*)

Ահա, միւս կողմից, թէ 1914 թ. փետր. 8 համաձայնագիրը ինչպէս է դնահատում գերման գործակատար Ֆոն Մուտիուսը: Իր 1914 թ. փետր. 9 տեղեկագրում նա կարծում է, թէ այս վաւերագիրը գործնական այնքան մեծ կարեւորութիւն չունի, որքան կարելի է

*) Les relations Internationales pendant l'époque de l'Impérialisme'. Ed. du Gouvern. Sovietique, Serie III., t. L, 1931, № 210.

ենթադրել բանակցութիւններէ ընթացքում ուսանելի չե թիւրքերի կողմից թափուած ջանքերից: Ըստ ձեւի, համաձայնագիրը յաճախ բաղձանքներ է արտայայտում, փոխնակ պարտաւորութիւնների, այլեւ կարելի է կասկածել, թէ հնարաւոր կը լինի գործադրել բոլոր նշանակուած կէտերը: Էականը երկու եւրոպացի ընդհանուր քննիչներին նշանակումն է հակակշռի եւ վարչութեան լուրջ իրաւասութիւններով: Համաձայնագրի տրամադրութեանց մանրամասնութիւնների մէջ թիւրք բանազնացները յաջողացրին հեռացնել կամ գէթ մեղմացնել ամենէն վտանգաւոր կէտերը:

«Եթէ համեմատել պահանջատէր Ռուսաստանի ոյժը ներկայ թիւրքի տկարութեան եւ միւս կողմից՝ Մանդէլշտամի նախադիժը ստացուած արդիւնքի հետ, պէտք է ընդունել, որ Բ. Գուռը ունեցաւ դիւանագիտական մի փայլուն յաջողութիւն, որը արժանի է Եւրոպայում ամէն տեղ վերագրելու ներկայ սեփմին: Էլ աւելի, քան Բ. Գրան անյողողղ կեցածքը հանդէպ Ռուսաստանի, պէտք է գնահատել նրա խոհեմութիւնը, որ երեւան բերեց այս հարցում: Ի նկատի ունենալով թիւրքերի տածած անսահման անվստահութիւնը դէպի Ռուսաստանը եւ թիւրք կառավարութեան ներքին սպառնացեալ վիճակը, պէտք է համարել փայլուն յաջողութիւն, որ կարելի եղաւ բանակցութիւնները բերել այսպիսի հաշտարար վարձանի:»

Պ. Ֆոն Մուտիուսը կարծում է, թէ այս արդիւնքը չէր ստացւի, եթէ չլինէր Գերմանիայի միջնորդութիւնը: Այն վստահութիւնը, որ բարոն Վանդէնհայմը ձեռք է բերել Բ. Գրան մօտ, հնարաւորութիւն տւեց նրան թիւրքական քաղաքականութեան տալ այնպիսի ընթացք, որից միաժամանակ պիտի օգուեն թիւրքի այլ լաւ հասկացուած շահերը, Գերմանիան եւ ուրս - գերմանական յարաբերութիւնները: Յիրաւի, թիւրքիան իր կնճոտ վիճակից դուրս եկաւ քաղաքական եւ բարոյական որոշ յաջողութեամբ: Միւս կողմից, բարելաւում ձեռք բերեց հայերի գոյութեան պայմանների համար, հայերի, որոնք այնքան կարեւոր տարր են գերմանական աշխատանքի շրջանի համար: Վերջապէս, թիւրքիայի անկայուն ապագայի հանդէպ կարելի է միայն որպէս ուրախալի նշան դիտել եւ բաղձալի նախնիաց նկատել այն փաստը, որ Արեւելքի քաղաքականութեան պէս մի կարեւոր հարցում ուրս - գերմանական գործակցութիւնը ունեցաւ գլխական հետեւանք:

«Այնուամենայնիւ, ինձ թւում է կասկածելի, եզրակացնում է Ֆոն Մուտիուսը, թէ ուսանելի կողմից զգացւում է որեւէ երախ-

տագիտութիւն մեր գործակցութեան համար: Բայց եւ այնպէս, ուսական տեսակէտից էլ, համաձայնութիւնը թիւրքիայի հետ կարող է դիտուել որպէս յաջողութիւն: Այս նշանակում է, որ երբ լաւ գործ է կատարուում, դրանից ամենքն էլ կարող են քաղել իրենց օգուտը:»*)

Մեզ թւում է, որ Ֆոն Մուտիուսը մի քիչ նւագեցնում է 1914 թ. փետր. 8 համաձայնագրի մէջ պարունակուած բարենորոգումների արժէքը եւ որ պ. Գուրկելիչը աւելի ճիշտ է բնութենել այդ համաձայնագրի ամբողջ տարողութիւնը թիւրքահայերի համար: Անշուշտ, ուսանելի սկզբնական նախադիժը ենթարկեց բազմաթիւ կարեւոր ձեւափոխութիւնների, ինչպէս, օրինակ, հայկական հողամասերի բաժանումը երկու հատուածի: Էականը, սակայն, այն է, որ Հայաստանի թիւրքական վարչութիւնը գրեց միջազգային հակակշռի տակ, որով հայերը ստանում էին մարդկային գոյութեան երաշխիքներ: Եթէ համաձայնագիրը գործադրութեան դրէր, հաւաքական թէ անհատական ջարդեր, աւարառութիւններ, կանանց առեւանդումներ, հողի բռնագրաւումներ ու թիւրքական հին սեփմը բնորոշող ուրիշ համանման գէպքեր անմիջապէս կանհետանային եւ կը հաստատուէր աւելի քաղաքակիրթ մի վարչաձեւ:

Գժբախտարար, ճակատագիրը այլ կերպ տնօրինեց... Ռուս - թիւրքական համաձայնագրով նախատեսուած ընդհանուր քննիչները նշանակեցին ու, մեծ պատերազմից առաջ, կարողացան հասնել թիւրքիա, եւ դրանք ուսուներ չէին, ինչպէս վախենում էր բարոն Վանդէնհայմը, այլ մէկը հոլանդացի (Վեստենենդ), միւսը նորվեգացի (Հոֆ): Նրանք, սակայն, ստիպուած եղան կարուկ կերպով փոխել իրենց ճանապարհը, եւ... մեծ պատերազմը այլեւս աւելորդ գարծրեց թիւրքահայաստանի բարենորոգումների բոլոր ծրագիրները:

Փարիզ. (Վերջը յաջորդ ակգամ)



*) Grosse Politik, Bnd. 38, № 58.

ՇԱԽԱՐՇ ՆԱՐԿՈՒՆԻ

ՆՊԱՍՏ ՄԸ

ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐԻՔ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Բ. ՄԱՍ

Թէ հայ աշուղական արւեստը կը դանւի թուրք աշուղական արւեստին ազդեցութեան տակ, յաւանդութիւն մըն է, որ կը մասնէ ազգային եսի դերաճում մը (hypertrophie du moi national) թուրքերուն մէջ *) ինչպէս եւ շփոթութիւն մը:

Մենք պիտի զբաղինք միայն այդ շփոթութեան ըննութեամբ:

Թուրքերուն շփոթութիւնը կը ծագի նախ անկէց, որ աշուղ կը կոչւին հայ ժողովրդական կարգ մը երգիչներ: Արդ, սովորութիւն է ըսել, որ աշուղ բառը հայացած ձեւն է աշըք արարերէն բառին:

Լա՛ւ, ուրեմն արարերէնի մէջ պէտք է որ աշըք նշանակէ ինչ որ կը նշանակէ աշուղ բառը մեր մէջ:

Տեսնենք:

Ահա Սըր ձէյմա Ու.Րէզհասուղի բառարանը, (Turkish and English Lexicon), ասյ. Պոլիս, 1890 :

ԱՇԸՔ - Արարերէն՝ սիրահար, թուրքերէն՝ Թափառական երգիչ:

Ահա Էօմէր Ֆայիբի բառարանը, Deutsch - Turkisches Worterbuch, (ասյ. Պոլիս, 1898) :

*) Այս երեւոյթին իբրև փաստ կարելի է յիշել թուրք ազգային նոր քայլերը, ուր դարձապէս կը յայտարարուի թէ թուրքերը պիտի ապրին պատմութեան մէջ, ինչպէս ապրել են ... պատմութեան առաջ: Նոյնքան յանձնապատան, բայց աւելի հետաքրքրական է փրոֆ. Եուսոֆ Ջիպի գիրքը, - Եունանտան էվէլէթի թուրք մէտէիէթի: Այս գիրքին մէջ ի գուր փնտռեցի ժողովրդային բանահաւանութեան պատահիկ մը, որ աւելի հին ըլլար քան մեր գոյրան երգերուն արձագանգները:

ԱՇԸՔ - Արարերէն՝ սիրահար, թուրքերէն՝ երգիչ:
Ահա Քէլէկեանի բառարանը, Dictionnaire Turc - Francais, (ասյ. Պոլիս, 1911) :

ԱՇԸՔ - Արարերէն՝ սիրահար, թուրքերէն ժողովրդական երգիչ, երաժիշտ: Քէլէկեան կաւելցնէ նաեւ adorateur mystique, կարևոր է բառին տրւած այս նշանակութիւնը:

Ահա Շէմսէյտտին Սամիի բառարանը, Բամուսը Թիւրք (ասյ. Պոլիս, 1901) :

ԱՇԸՔ - Արարերէն՝ սիրահար, թուրք ժողովրդական լեզու՝ ասյ եւ դափ նազոզ սրճարանի բանաստեղծ:

Ինչպէս կը տեսնուի, Արարները աշըք անունը չեն տար ժողովրդական երգիչներուն, գէթ իրենց բառարաններուն մէջ չկայ այդպիսի յիշատակութիւն: Թուրքերն են, որ այդ բառին կուտան, իբրև թէ իրենց ժողովուրդէն անելով, նշանակութիւն մը որ երբեք կապ չունի արարերէն բառին ստուգարանութեան հետ, - «ասյ եւ դափ նազոզ սրճարանի բանաստեղծ»:

Պէտք չէ՞ հարցնել, - եթէ թուրքերն են որ այդ նշանակութիւնը կուտան արարերէն բառին, որ դուրկ է այդ նշանակութեան, ի՞նչպէս կըլլայ որ չունէին թուրքերէն բառ մը այդ իսկ նշանակութեամբ: Եթէ թուրքերը ունէին «ասյ եւ դափ նազոզ սրճարանի բանաստեղծներ», ապահովաբար ունէին նաեւ բառ մը, որ անոնց կը տրւէր իբրև անուն: Այն ատեն ի՞նչ հարկ իւրացնելու եւ ազգայնացնելու արարերէն բառ մը, որ օտար կը մնայ իրեն տրւած իմաստին: Այսպէս, երբ Հայը կիւրացնէ եւ կազգայնացնէ խամուք բառը, զայն կը զօրծածէ այն իմաստով, զոր կուտային Հրեաները՝ իբրև տէրը այդ բառին:

Ահա թէ ինչո՛ւ պէտք է հետեցնել, որ աշուղ, արարերէնի մէջ արդէն անձանօթ, օտար է նաեւ թուրքերէնի: Այսքանը ընդունելէ վերջ, աւելորդ է պնդել թէ թուրքերը, վարպետ աշուղներ, Հայոց ընծայ բերեն աշուղական արւեստը: Չենք ուրանար, սակայն, որ թուրքերը եւս ունէին իրենց հին աշուղները: Թուրքերու Պատմութեան Քննական Յանձնախումբը, իր պրպտումներուն կարգին, խօսելով թուրք լեզուին եւ զրականութեան սելճուկեան շրջանի մասին, կը գրէ *) թէ բանահներու եւ եւ ընկերային հաւաքոյթներու մէջ երեւան կուգային ժողովրդական բանաստեղծներ, որոնք քուպուգ**) կը նազէին եւ տէսքաններ կերգէին, - ասոնք կը կոչ-

*) Թուրք թարիխի թէթիբէ ճէմիէթի, Թարիխ, Բ. հատոր, էջ 285:
**) Մէկ աղելարով նազարան մը:

ւէին օգան: Արդ, եթէ թուրքերն էին, որ Հայոց սորվեցուցին աշուղական արւեստը ինչու օգան չկոչեցան *) Հայ ժողովրդական երգիչներ եւ առին այլ անուն մը (աշուղ):

Մերժելով թուրքերու միջնորդութիւնը աշուղներու աւանդութեան տարածման մէջ, մեզի կը մնայ երկու ենթադրութիւն:

1 - Աշուղ կը ծագի արաբերէն աշրֆ բառէն:

Այս պարագային, աշուղականութիւնը կրօնական գոյն ունի: Վասնզի արաբերէնի մէջ աշֆ կը նշանակէ միտտիսիզմ, եւ աշրֆ՝ միսթիք: Արդարեւ, ինչպէս նախորդ յօդուածով յիշատակեցինք, բոլոր իսլամ աշրֆները, որ, Հնդկաստանէն մինչեւ Միջագետք, կը ճամբորդէին արքունիքէ արքունիք, միսթիք ասուածապաշտութեան մը նւիրեալ, արւեստագէտի շնորհներով օժտուած, կրօնական գինովութեամբ մը տարւած տաղանդներ էին եւ ուրիշ ոչինչ: Ասոնք, սաֆիներ, պէֆաշիներ, մէվլիվիներ, որեւէ կապ չունին աշխարհիկ բանաստեղծութեան հետ: Ասուածային յափշտակութեան մը մէջ ինկած, կիսովին ուշաբարձ՝ անոնք կը խօսէին Աստուծոյ հետ կամ կը պատմէին իրենց տեսիլքները: Չեւով մը կը նմանէին երբայական մարգարէներուն, որոնք յաճախ ենթակայ էին ներքին տարօրինակ զգայազուլութիւններու (hallucination): Եւ ժամանակ մը աշրֆ կը նշանակէր ոչ միայն միսթիք, այլ եւ երազատես, եթէ ոչ բանդազուլանքներու ենթակայ: Հետաքրքրական է այս տեսակետով, Աշրք էմինէ հանրմի պատմութիւնը: Տեսէք թէ ինչպէս կը պտմէ իր աշուղ դառնալը:

«Տասներկու տարեկան էի: Իրիկուն մը, աղօթքս վերջացնելէ վերջ, երկնցայ անկողինիս վրա: Քունս տարեր է: Երազիս մէջ տեսայ որ քանի մը հոգի մօտեցան ինձի, իրենց ձեռքին մէջ բաժակներ, որոնք լեցւած էին օշարակով: Ուղեցի առնել եւ խմել: Երկուքը տւին, միւսը չտւին: Վերջը հասկցայ որ այդ բաժակները լեցւած էին աշֆի օշարակով: Արթննայէս վերջ, զգացի որ ներսս մեծ փոփոխութիւններ տեղի ունեցան: Տեսակ տեսակ բանաստեղծութիւններ կարտասանէի: Հայրս ու մայրս շարեցան՝ տեսնելով այս

*) Եթէ բառերը պիտի առջնորդեն մեզ՝ Թուրքերուն ձեռով, այն ատեն կարելի է վեճ ստեղծել վարձակ եւ վարսակ բառերուն հետ: Թուրքերը ունին վարսակ կամ վարսաղի անունով ժողովրդական եղանակներու արւեստ մը, որ շատ տարածուած է, կրսն, Գարամանի վաչկատուն ցեղերուն մէջ, իրենք եւս «վարսակ» կոչուած: Այդ «վարսակ»-ները չե՞ն յիշեցնէր միթէ մեր վարձակները, հին պարսիկները, որոնք իրենց շնորհը ցոյց կուտային երգի եւ նւագարանի ընկերակցութեամբ՝ իշխանական եւ արքանական հանդէսութիւններու մէջ:

վիճակս: Մեծ հայրս ըսեր է որ իմ սերունդէս պիտի ելլէ աշրֆ մը, սպասու որ կին մը պիտի ըլլայ այդ: Ժամանակ անցնելէ վերջ՝ հայրս ալ հասկցաւ որ աշրֆ եմ, եւ ինձի սազ մը նւիրեց: Այնուհետեւ կերթայի ամայի վայրեր կամ գերեզմանները եւ սազ կը նւրւագէի: Սաստէտտին Նիւզէթ կաւելցնէ որ Աշրք էմինէ հանրմ յօրինած է բազմաթիւ քիւրֆիւներ եւ տէսքաններ, բայց ոչ ոք գրի տներ է, որովհետեւ բանդազուլանք կարծեր են:*)

Արեւելեան միսթիսիզմով թաթաւուն չէր որ օրինակ պիտի ծասայէր հայ աշուղներուն: Եթէ թրքարան քանի մը հայ աշուղներ, պէթաշեան իրենց արտայայտութիւններով, սազ են առեր եւ ստանաւորներ յօրիներ, անոնք եւս ոչ մէկ կապ ունին հայ աշուղական մեր հարստութեանց հետ:

Վարդապետական այս հսկայ տարբերութենէն դատ, գիտելի է նաեւ ուրիշ պարագայ մը, - մեր աշուղները, որ երբեք միսթիք չեն արաբերէն բառին նշանակութեամբ, ընդունելով որ փոխ առած են աշրֆ բառը Արաբներէն, ի՞նչպէս կը ձեւափոխեն զայն արեւելեան թուրքերէնի ձեւով: Արդարեւ աշուղ ձեւը եւս քննութեան կարօտ է՝ իր անհասկնալի արեւելացուծով կամ թաթարացուծով:

Եւ անմիջապէս կը տարւինք երկրորդ եզրակացութեան:

2 - Աշուղ աղաւաղումն է հայկական բառի մը, աստղ:

Հին հայերէնի մէջ աստղ, աստղիկ կը նշանակէ երաժիշտ, երգիչ: Պէտք է խոստովանիլ, որ չունինք վկայութիւններ թէ Հայոց մէջ կային դասակարգ մը երգիչներ, որոնք ծանօթ ըլլային աստղիկ անունով: Աստղիկ գործածուած է իբրեւ միայն տիտղոս: Բայց բառին իմաստը ենթադրել կուտայ, որ մեր պատմութեան մէջ եղեր են անհատներ՝ ծանօթ իրենց ասմունքներով, - երբ մեր երգիչները կրէին հայերէն ասել, կահնարկէին հայեցի տաղաչափութեան եւ երաժշտութեան:*) Դժուար չէ ենթադրել, որ հայերէն աստղ բառը թաթարացւած է՝ թերեւս չիոթութեամբ մը արաբ միսթիքներու անունին հետ (աշրֆ):

Բառին մասի այսքան քննութենէ վերջ, յաջորդով կը ներկայացնենք աշուղին դիմագիծը արւեստագէտի իր բոլոր ստորագիծներով, համեմատութեամբ մը հայ, թուրք եւ ֆրանսացի աշուղներուն եւ իրենց ստեղծագործութիւններուն:

(Շարունակելի)

*) Հաւր Շայրէլէրի, Սաստէտտին Նիւզէթ, հատոր Ա. էջ 30:
**) Քուչակի հայերէն կամ հայրէն «ասել» բացատրութիւնը կը նշանակէ թէ «այդ երգերը յղացուած էին հայկական ոճով եւ հայկական երաժշտութեամբ», - Նահապետ Քուչակի Դիւանը, Ա. Զօգանեան, տղ. Փարիզ, 1902, էջ 20:

ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԹՈՒՐԻՔԻ ՄԸ ԳՐԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԸ

Թուրք մտաւորականները վերջին տարիները զանազան առիթներով ուշադրութեան առարկայ կը դարձնեն եւ հայ ժողովրդի անցեալը, մեծ մասամբ, նսեմացնելու համար անոր արժէքը՝ համեմատած թրքական անցեալի հետ: Այդ ուղղութեամբ կազմուած աշխատութիւն մըն ալ Երզնկայի կուսակալ Ալի Քէմալի պէյի հատորն է,*) որուն անհրաժեշտ կը նկատենք նւիրել քանի մը տող:

Այս հաստատիր հատորը, պատմական, ազգագրական եւ տեղագրական ուսումնասիրութիւն մըն է: Հեղինակը ոչինչ խնայած է զայն հետաքրքրական դարձնելու համար: Նկարներ, թիւեր, ժողովրդական երգեր արձանագրութիւններ, քարտէսներ քով-քովի, իրար վրա դիզած: Մէկ խօսքով, պատկերազարդ «շահեկան» պատմութիւն մը: Ո՞ր հայը չպիտի ուզէր կարգալ այս գիրքը, քանի որ պատմագիրը թուրք մըն է, իսկ ուսումնասիրութեան առարկան՝ ի սկզբանէ անտի հայկական: Ի՞նչպէս են հաշուած թրքութիւնն ու հայութիւնը, իրականութեան առջեւ, թուրք պատմագրի մը գրչին տակ: Ալի Քէմալի՝ ինքն ալ կը խոստովանի այդ դժարութիւնները. «վայրի մը պատմութիւնը գրելը աւելի դժար է, քան զայն գրաւելը», կըսէ ան:

Հեղինակը Երզնկայի պատմութիւնը գրելու ատեն, դէժ ըստ իր գրացուցակին, ձեռքի տակ է ունեցեր Սանտալճեանի, Մասպէրոյի, Տը Մօրկընի եւ ուրիշ բազմաթիւ օտար ու թուրք հեղինակներու գործերը: Ատկէ դատ, լսե՛ր է, որ Լինչ անունով մէկն ալ գիրք է գրեր Հայաստանի մասին, եւ դիմեր է Փարիզի դեսպան Միւնիթի փաշային, ան ալ հրահանգեր է Վէտաս Ձէքի պէյին, որ պէսպիսի պրպտէ, քննէ Լինչի Հայոց վերաբերեալ հատուածները եւ գրկէ իրեն՝ Երզնկա: Կատարելը է այդ աշխատանքը, սակայն Ալի Քէմալին «անարժէք է» նկատեր Լինչի գործը...:

*) Ալի Քէմալի պէյ, «Երզնկեան», էջ 450, տպ. Պոլիս, 1932 (Թուրքերէն):

Անշուշտ, այսքան աղբիւրներու հետ գործ ունեցող «պատմագիր» մը, դէժ ծանօթ եւ ընդունելի ճշմարտութիւններ, իրողութիւններ գրի պէտք է առնէր եւ սորվեցնէր առաջ, սովորէր իրական պատմութիւնը: Սակայն, ի՞նչ փոյթ իրական պատմութիւնը, քանի կայ անիրականը, հեքիասականը՝ թրքականը: Ասկէ քանի մը տարի առաջ, Պոլիս դումարուած պատմա-լեզուագիտական համադումարի մը ատեն ամէն ինչ, - մշակոյթ, պատմութիւն ու լեզու չի հռչակեցա՞ն, ի բնէ եւ ի ծնէ թրքական: Ալի Քէմալին ինչո՞ւ պիտի չեղէր քէմալական ազգանշանէն:

Եւ գրիչը ձեռք առած՝ իր պատմութիւնը կը գրէ այսպէս. - «Հիթիթիները թուրանական ծագում ունին, իսկ Սուսմէքները եւ Ուրարտացիները՝ թրքական: Հայերը խառնուած չեն Ուրարտացիներու եւ Պարսերու հետ...»: Ամբողջ Անատոլուն թուրք ցուցնելու բացայայտ ճիգով, իրար կը խառնէ ցեղերն ու քաղաքները, անուններն ու թագաւորները, ժամանակներն ու թւականները եւ կը ըստեղծէ պատմական իրողութիւններու քառս մը, որու մէջէն դժար թէ մարդ կարենայ դուրս գալ:

Անթիւ սխալներու մէջէն օրինակ մը միայն. - «Արտաշէս Ա. երբ թագաւոր դարձաւ, Պոնտոսի թագաւոր Մեծն Միհրդատի հետ զաշնակցելով՝ աղջիկը անոր տուաւ, եւ Պոնտոսի թագաւորին հաշուին Արիսարգանը վտարեց Կապադովկիայէն» (էջ 15): Ալի Քէմալին, աղբիւրները ձեռքին տակ, կը չփոթէ Մեծն Տիգրանը եւ Արտաշէսը: Քանի մը տող վարը կաւելցնէ «պոնտան սօնրա Տիգրան Բ. թագաւոր եղաւ եւ միացաւ Միհրդատին»: էջ 21-ին վրա Տիգրան Բ.-ը նորէն կոչուի կը հանէ Շապուհի դէմ(?) եւ այսպէս շարունակ:

Գրքի 109-էն 116 էջերը նւիրած են Երզնկայի հայութեան: Ըստ Ալի Քէմալի «Հայերը արհեստաւոր, վաճառական եւ հողագործ էին: Լաւ գրամ կը շահէին, որովհետեւ զինուոր չէին տար: Աշխատասէր էին: Բայց հարստանալով փոխեցին իրենց իդէալը: Նոր Հայաստան ուղեցին: Հայերը ամէն բանի մէջ փառաւորուիլ կը սիրեն, կը պարծենան հին քաղաքակրթութեամբ: Եւրոպան կը թունաւորէր զանոնք: Պորհրդաւոր ջանքերու ցանած սերմերով նոր սերունդ մը հասաւ եւ սկսաւ քարոզել թէ հայ ժողովուրդը զուլումի կենթարկել: Ռուսական համալսարաններէն մինչեւ Վան, Պիթլիս եւ այլուր յեղափոխական սերմերը ուռճացան: Կլատրսթընի եւ արեւմրտեան գիւանադիտութիւնը ոյժ կուտար եւ կը քաջայերէր կոմիթէճիները: Երզնկայի Հայերը ամենէն աւելի հոծ կապրէին Արմրտանի մէջ: Այս Արմտանցիները «ազգի ազատարար» տիտղոսը կը

կրէին: Ահարոնի սպանութիւնէն վերջ (Իլլիւս օղուլարիներու ձեռքով), 1891-ին Քուրուչայի դայմագամը Ահմէտ պէյ, միւշիւր Չէքի փաշային եղբայրը, պաշտօն կուսայ Մեծ Արմատանցի Ուուշիկ օղլու Էօմէրի, որ լուր քաղէ հայ դաղտնի կազմակերպութեան մասին, բայց Աղէկ օղլու (Աղէկեան) Գարրիէլ իր տունը կը հրաւիրէ դայն եւ կը խեղդէ: Գիտին ալ քարխղով կայրէ»:

Ապա ընդհանուր ակնարկ մը կը ձգէ Սըվազի, Եոզկատի եւ այլ վայրերու հայկական շարժումներու վրա եւ դարձեալ կանգրադատնայ Երզնկայի դէպքերուն. «Երզնկայի մէջ Հայերը կը կասկածէին, որ Ազապլար օղլու Արմէն կը մասնէ, ուստի կահաբեկեն, բայց չի մեռնիր: Ռուբէն անունով Փիտայի մը*) երեւան կելլէ եւ Քեմախի Գարնի դիւղին վերեւի լեռան վրա Չանլը - Մանասթրի մէջ բանակատեղի ընտրած կը կուի թուրքերուն դէմ: 1894-ին Մալաթիա դայող դայմագամ Բէշիտ պէյը կը բռնեն, լեռ կը տանին, կը չարչարեն: Կառավարութիւնը կը պաշարէ Չանլը - Մանասթրը եւ կը բռնէ Քեմախի խումբը: Կը բռնեն զէնքեր ու զէնք շինելու դործիքներըն ալ: Ռուբէն կը կախուի 1903 Յունիս 10-ին, 30 տարեկան հասակին մէջ: Գայմագամ Բէշիտ պէյի ընկերներէն Ազա թուրքը, որ մատնածէր խումբը, Հայերու կողմէ կը խեղդուի եւ դիակը կը թաղուի աղբանոցի մը մէջ»:

Արմատանցի Արխանեան Հաճի Գալուստը, Ռուբէնի վրէժը կը լուծէ եւ կը սպաննէ Շ. Գարահիսարի թուրք ընդհ. դատախազը: Երզնկայի մէջ խուզարկութիւններ եւ հետապնդումներ կը լլան: Արխանեան Գալուստի տունը կը խուզարկուի: Կը գտնուին զէնք, վատօղ եւ զինուորական զգեստներ: Եւ Ալի Քէմալին կեղբակացնէ.

«Այլեւս որոշ էր որ Հայերը կը պատրասուէին: Արդէն բացայայտ նշաններ կային Սասունի դէպքերէն ի վեր: Շաքիր փաշա, որուն կինը Ռուս էր, Երզնկա կուզայ քննութեան: Պոլիս, Վան, Ուրֆա կը պատահին դէպքեր ու կոխներ: 1895 Հոկտ. 9-ին, Երզնկայի տօնապաճառ Պուզտա Մէյրամանի մէջ, զէնք կը պայթի: Ուուճապ ու ջարդ: ՄիւթէսարիՓ Նամըր պէյ զինուորական ուժով կարգիլէ իսլամները, որ Հայոց թաղերը չերթան: Ասով մեծ ջարդի մը առջեւը կանուի»:

Հոս, Ալի Քէմալի դարձեալ պատմութեան դէմ կը դործէ: Ընդհակառակն կատաղի թուրք խուժանը կը յարձակի Հայոց վրա, ջարդեր կը կազմակերպէ եւ արիւնը կը հոսի Երզնկայի մէջ...:

*) Կակնարկէ Տէրսիսի Քեմալին՝ Ռուբէն Շիշմանեանի, որուն փոքրաբուխումըն մէջ էին Կայծակ Աաֆել, Կիւմիւշիանցի Աւօ եւ ուրիշներ: Վ. Հ.

Թուրք «պատմագիրը» կը ծածկուի հետեւեալ չքմեղանքին տակ. - «Հայերը թէեւ այս ջարդը կը վերագրեն թուրքերուն, բայց չեն կրնար փոխել պատմութիւնը: Թող որքան կուզեն վայրենութիւն վերագրեն թուրքերուն, ամէն տեղ ջարդերուն պատճառը Հայերն են եղած» (էջ 114):

Ապա շարունակելով իր «մասալ»ները, կը հասնի մինչեւ սահմանադրութիւն (1908), կը խօսի «Դաշնակ» եւ «Հնչակ» կոմիտէներու դործունէութեան մասին, անշուշտ բազմաթիւ սայթաքումներով ու սխալներով: Կը հասնի, վերջապէս, 1914 թւականը, երբ կը պայթի ընդհ. պատերազմը:

Հոս կուզեմ հատուած մըն ալ քաղել, ամբողջացնելու համար հեղինակի խորհրդածութիւնները Հայոց մասին. -

«Ընդհ. պատերազմին Երզնկայի Հայերու երեք - չորրորդը ոուս - պարսկական սահմանն անցան: Ճամբուն վրա թուրք հիւանդ զինուորներն սպաննեցին: 1914-ին Չանլը վանքին մէջ ապստամբութեան դրօշ պարզեցին: Առաջնորդարանի եւ տուներու մէջ 1000-է աւելի դասալիք զինուորներ պահեցին: Հայերը, խուզարկութեան ատեն, իրենց զէնքերուն մեծ մասը Եփրատ դետը նետեցին: Քէմալի առաջնորդը, կատաղի կոմիթէճի մը, Չանլը վանքի ընդհարումի ժամանակ սպաննուեցաւ: Երզնկացի Տիգրան Փափագեան կը ձերբակալուի եւ կը խոստովանի որ երեք - չորս օր վերջ, որոշած էին կրակի տալ ամբողջ Երզնկան: 1915-ին կառավարութիւնը պատերազմով դբադած էր: Ափուշթայի մէջ, օր մը, Բինկեանի կոմիթէճիներէն Քիւլէկէր օղլու Կիրակոսի կողմէ ժանտարմա մը կը սպաննուի: Կոմիթէճին կը ձերբակալուի եւ գրպանէն թուղթ մը կը գտնուի, զոր Քուրուչայի դատաւորներէն Մ'կրտիչ կը թարգմանէ: Այլ թուղթը կըսէր. - «Է՛յ, Արմատանցիներ, ըստ մեր խոստման, կատարեցինք մեր հայրենասիրական պարտականութիւնը: Պղտիկ չէթայով մը Ափուշթայի մէջ ձեզի սպասեցինք, չեկաք: Անիճեալնե՛ր, չարթնցա՞ք տակաւին: Կոմիտէին ձեր տւած երդումը, ժամուն մէջ կատարած ձեր երդումը կատարեցէք: Եթէ ոչ՝ ձեր վախճանը մահ է»:

Մէջ բերելով այս յայտարարութիւնը՝ Ալի Քէմալի կըսէ. «Թուրքերու դէմ դուրումի պատրաստութեան փաստ մըն էր ասիկա եւ ատոր համար պէտք էր Հայոց պատժելը»: Պատժի մասին չի խօսիր, բայց մենք գիտենք ի՞նչ կը նշանակէ թրքական «պատիժ»-ը:

Հետաքրքրական է Ալի Քէմալի գրքի «Երզնկա ուսական տիրապետութեան տակ» գլուխը, որ պատմութիւնն է Թուրքիոյ ջախջախիչ պարտութեան: 14 փետր. 1916-ին Էրզրումի անկումէն վերջ, ոուս բանակը սրբաշաւ կը յառաջանար դէպի Անատոլուի խոթերը:

Մարտի սկիզբը ուսանողները հասեր էին Մամախաթունի արեւմտեան, Բաբերդի արեւելեան եւ Տրապիզոնի արեւմտեան դիմերուն: Գ. Զօրաբանակի թուրք հրամանատարը կը հրաժարի եւ տեղը կանցնի Վէհիպ փաշան, որ կը ծրագրէ հակադարձակողմով ետ առնել Տրապիզոնը: Կռիւր կը սկսի 17 Յունիս 1917-ին: Ռուսները կը դիմեն փոխ-յարձակման եւ կը ճեղքեն ճակատը: Թուրքերը կը նահանջեն: Յուլիս ամսան Երզնկան ալ կիյնայ եւ ուսանողները կը մտնեն ներս: «Ռուսները, կըսէ հեղինակը, արշալոյսէն մինչեւ իրիկուն աւարի տըւին քաղաքը: Բայց Հայերն ու հայ կոմիթէիները կը ղերազանցէին Ռուսները: Գրաւումէն վերջ, ուսու հրամանատարը յայտարարութեամբ մը կը հաղորդէր թէ կազմուած է առժամեայ խառն կառավարութիւն մը եւ ամէն վէճ ու դատ պիտի կարգադրուի համաձայն ցեղերու օրէնքներուն: Իսկ բոլոր անոնք, որ հայ մասնակիներ պահած են իրենց մօտ, պէտք է յանձնեն մասնաւոր կոմիտէի մը: Գրաւման հինգերորդ օրը Ռուսները երկու թուրք կախիցին, այն ամբաստանութեամբ թէ աւար կատարող ուսու զինուոր մը սպաննած են: Հայերը զէնք եւ երեսայ փնտուելու պատրուակին տակ, տունները կը մտնէին եւ թուրքերը կը նեղէին: Տիգրան կոմիթէիները*) կը զբոսնէր Ռուսները: Այդ շրջանին ուսու ներքին յեղափոխութեան պատճառով, ուսու հրամանատար Զօր. Կալեպինի տեղ կը զբոսնէր Զօր. Լեւաթով, որ ամէն ազատութիւն կուտայ հայերուն»: Այլ Բէմալի յետոյ կը սկսի իր յարձակումները Հայոց դէմ, երբ քաղաքի իշխանութիւնը կը փոխանցի Մուրատին: Ժամանակադրական կարգով կը ներկայացնէ զինադադարը, Մուրատի սպանակիցները, հայկական նահանջըն ու «անմեղ թուրքերու» ջարդը եւ կը յարէ. «Տակաւին մինչեւ այսօր, Երզնկան բուժուած չէ Հայերու թողուցած վէրքերէն»:

Այնուհետեւ Այլի Բէմալի կը խօսի Տէրսիմի Բիւրաերու մասին: Կուտայ անոնց սովորութիւնները, ժողովրդական երգերը, հաւատալիքները, ցեղային բաժանումները եւ վիճակագրական պատկերը:

Բէմալական իշխանութենէն վերջ, Երզնկան կը վերածուի առանձին կուսակալութեան հետեւեալ սանճագներով. Երզնկա, Ռիֆայիէ, Բէմալ, Բուրուչայ, Փլիւմէր եւ Քղի: Համաձայն վարչական այս նոր բաժանման, Երզնկայի կուսակալութիւնն ունի 13,476 քառ. քիլ. տարածութիւն 144,919 ազգաբնակչութեամբ: Ուրեմն իւրաքանչիւր քառ. քիլոմետրի վրայ կիյնա 1.07 մարդ... Նահանգի քրտական բնակչութեան թիւն է 66,635, որմէ 33,122 կին, 33,513 այր:

*) Տիգրան Դեւոյեան, որ կը պաշտօնավարէր ուսու հետախուզական բաժնի մէջ: Վ. Հ.

Թուրքերու թիւն է 78,090, որմէ 40,439 կին, 37,651 այր: Կան նաև աննշան թիւով Զէրքէզներ: Զմտոնանք ըսելու, որ թուրք կինը տակաւին նետած չէ չարշափը...:

Այլի Բէմալի քիւրդերը կը բաժնէ երեք ցեղապետութեան, - Տէրսիմիցիներ, Շէյխ-Հասանցիներ եւ Շէյթանցիներ: Ասոնք ալ իրենց կարգին կը բաժնէ զանազան ցեղերու, որոնց թիւը կը հասնի 61-ի: Ունին բացառապէս հոգեւոր պաշտօն կատարող ցեղեր, - սէյիդներ եւ տէպէներ - որոնց թիւը կը հասնի 29-ի:

Այնուհետեւ կը խօսի քիւրդերու ծագման եւ լեզուի մասին: Քիւրդ լեզուի մասին եղած ուսումնասիրութիւնները տակաւին համոզիչ եզրակացութեան մը հասած չեն: Նոյն իսկ քիւրդ բառին իմասն ու ծագումը անձանօթ կը մնայ:

Փեթերպուրկի Ակադեմիային հրատարակած Բիւրդերէն - ուսու սերէն - գերմաներէն բառարանին մէջ քիւրդ լեզուի բառակազմութեան մասին վիճակագրութիւն մը կայ, որ ցոյց կուտայ թէ քիւրդերէնը ենթարկուած է զանազան լեզուներու ազդեցութեանց եւ տեսակ մը խառնուրդ է: Արդ, ըստ Տօքթ. Յրիճի քիւրդերէնի մէջ կան 3080 թուրքերէն կամ հին թիւրքմէններէն, 2000 նոր արաբերէն, 1240 զէնտերէն, 1030 նոր պարսկերէն, 370 հին պահլաւերէն, 300 քիւրդերէն, 220 հայերէն, 108 կելտաներէն, 20 վրացերէն եւ 60 չէրքէզերէն բառեր: Որով քիւրդերէնը ընդամենը 8428 բառ ունի: Այստեղ ուշադրաւ երեւոյթ մը: Որ հայերէն բառերը գրեթէ կը հաւասարին քիւրդերէն բառերուն: Եւ այդ այն պատճառով որ Տէրսիմի քիւրդերուն մէջ կան նաեւ հայ ցեղեր, ինչպէս Միրադեանները եւ Տանցիկի պօզուֆանցիները, որ քէչէլ - ուշադիներու ցեղին կը պատկանին: Ո՞րն է քրդերու ազգային լեզուն: Իրականութեան մէջ անոնք ազգային լեզու չունին: Կը խօսին զաւտաբարբառներով եւ երբ չհասկցին, կը խօսին տրմիւրէն, որ առհասարակ բոլորը դիտեն իբրեւ ընդհանուր լեզու: Շէրէֆնամէի քիւրդ հեղինակը՝ Շէրիֆ Շէմսէտտին չէ կրցած քիւրդերէնով գրել, որովհետեւ այրենարան չունին, եւ դիմած է պարսկերէնի:

Ընդհանուր պատերազմի ստեն ի՞նչ դիրք բռնեցին Տէրսիմի քիւրդերը: Այլի Բէմալի կը վկայէ թէ արեւմտեան Տէրսիմը կարեւոր ազատամբութիւն մը չկատարեց: Իսկ արեւելեան Տէրսիմը Նազըմիէի եւ Քըզըլ - Բիլիսէի շրջանին մէջ, 27 մարտ 1916-ին, 2 - 3 հազար զինեալ ուժերով ազատամբեցաւ եւ այրեց Մեծկերտի Նազըմիէի կառավարչատունները, Զարսանճաղի եւ Փէրթէքի բազմաթիւ դիւղերն ու հիմնարկութիւնները եւ պետական պաշտօնա-

տարներ ծեծւեցան ու բանտարկւեցան: Ամբողջ շրջանը քիւրդերն առին իրենց տիրապետութեան տակ եւ սկսան յառաջանալ դէպի էլ-Ազիզ: Գ. Չօրարանակի հրամանատարութիւնը հրահանգ տուաւ Պալաթալը Շէֆքէթ պէյի, պահեստի 13-րդ զօրաբաժնի միջոցով, ապա-տամբութիւնը զսպել: 23 ապրիլ 1916-ին հարուէն եւ հիւսիսէն սա-չարելով՝ զօրքերը դրուեցին արեւելեան Տէրսիմը, եւ Բուրէշանի, Շէյխանի, Բարսանի, Հայդարանի, Ալանի, Նուսուֆայի աշիրէթները հպատակութիւն յայանեցին: Մինչեւ ոռւսերու դրաւումը այլեւս բան մը չպատահեցաւ: Հեղինակը չի մոռնար նաեւ Հոյբունի մա-սին քանի մը խօսք սահեցնել, ըսելով թէ քիւրդերու անկախութեան ձգտող այս կոմիտէն ցնորքներու փարած է, որովհետեւ քիւրդերը ոչ մշակոյթ ունին եւ ոչ ալ լեզու, իրենց ազգային բազմաւնջներուն յենարան դարձնելու համար:

Այնուհետեւ «Երզնիս»-ի հեղինակը մանրամասնօրէն կը խօսի սելճուկներու, թուրքերու, պատմական վայրերու, հայկական վանքերու, դանազան ցեղերու կրօնական հաւատալիքներու, թուրք եւ քիւրդ ժողովրդական երգերու, տարազներու, հին դրամներու եւ արձանագրութիւններու մասին: Խիստ հետաքրքիր գլուխներ ունի յատկապէս թուրքերու մասին: 450 լայն էջերու մէջ հանդամանօ-րէն աշխատած է ներկայացնել Երզնիայի պատմութիւնը, դիտելով, անշուշտ, միմիայն քէմալական ակնոցով: Այստեղ ալ անթիւ ու ան-համար են աղաղակող սխալներն ու սայթաքումները: Իբրեւ վերջին նմոյշ յիշենք հազարէն մէկը միայն: Այլ Բէմալի Աէն - Մարթէնի դիրքէն քաղելով՝ կը ներկայացնէ Երզնայի հեթանոս մեհեաններու աւերումը եւ քրիստոնէութեան տարածումը Գրիգոր Լուսաւորչի ձեռքով եւ իսկոյն կաւելցնէ, թէ Գրիգոր Լուսաւորչի մասին «Քիւրժիմիշ տէյէկէր վար» (թուրք է եղեր ըսողներ կան)... Ո՞րքէ ուր եւ ինչո՞ւ համար եւ կամ ովքե՞ր են այդ «ըսողներ»-ը...

Ահա «Երզնիս»-ը իր հիմնական գծերուն մէջ: Աւելի խօսեցուցինք քան խօսեցանք, ցուցադրելու համար թուրք «պատմագիրը»:

Այս ձեւի աշխատութիւնները սրբան ալ թերի եւ անկատար, եւ որքան եւ սխալ ու յերիւրածոյ, թուրք մտաւորականութեան կրնան մէկ նպատակ բերել, որ անոնք հարկադրւած կըլլան ետ նայելու, դիտելու անցեալն ու պատմութիւնը, եւ նաեւ վերադնահատելու դա-րերու իրենց արիւնոտ ճամբան: Դժբախտաբար, ցարդ ապացոյց չկայ, թէ այդ վերադնահատութիւնը ոեւէ չափով ազգած ըլլայ թուրք մտայնութեան վրա:

Փարիզ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏԱՍՆԸ ԵՐԵՒԵՐՈՐԴ ԵՒ ՍՏ

(17 Մեպո. 1918)

Նախագահ՝ Ա. Սահակեան

Օրակարգն է. — 1) Դիլիջանում բացւելիք դանձարանի օրինագի-ծը. 2) Օրինագիծ քրէական դատաւարութեան մի քանի կէտերի փո-փոխութեան մասին. 3) Պատգամաւորների օրապահիկի լնդիր. 4) Օրինագիծ օրէնքների հրատարակութեան մասին. 5) Կառավա-րութեան պատասխանը Փրակցիաների հարցումներին. 6) Ընթացիկ դործեր:

Ս. Տէր-Մարտիրոսեան. — Ֆինանսական յանձնաժողովի կողմից դեկուցանում է Դիլիջանում բացւելիք դանձարանի մասին: Յանձնա-ժողովը ստացել է կառավարութիւնից Դիլիջանում բացւելիք դան-ձարանի օրինագիծը եւ քննելով դտել է, որ ծառայողների կազմը բաւական լայն է մշակւած. անհրաժեշտ է կրճատել:

Յ. Բուդաղեան. — Հ. Յ. Դաշնակցութեան Փրակցիայի կողմից յայտնում է հետեւեալը: Դիլիջանի շրջանը կազմւած է Աղեքսանդ-րապոլի եւ Ղաղախի գաւառներից եւ Ջալալ - Օղլիի շրջանից: Ելա-կէտ ունենալով սոյն հանդամանքը՝ Փրակցիան կենտրոն է համա-րում ոչ թէ Դիլիջանը, այլ Ղարաքիլիսէն, որտեղ պէտք է բանալ դանձարանը: Պէտք է ի նկատի ունենալ նաեւ այն հանգամանքը, որ ձմեռայ ամիսներին Դիլիջան - Ելեկովկա գիծը փակւում է, իսկ Ղարաքիլիսէ - Բարանասար գիծը աշխատում է: Գանձարանը Ղարաքիլիսէում հիմնելով միայն կարող են անարգել զարգանալ այն բոլոր ֆինանսական օպերացիաները, որոնք ի նկատի ունենալով՝ կառավարութիւնը ներկայացրել է այդ օրինագիծը: Սակայն Ղա-րաքիլիսէն մեր ձեռքում չգտնւելու պատճառով՝ ժամանակաւորա-պէս դանձարանը պէտք է բացւի Դիլիջանում:

Ա. Խոնդկարեան .- Սոց .- յեղափ. Փրակցիայի կողմից յայտարարուած է, որ Դիլիջանում գանձարան բաց անելու անհրաժեշտութեան մասին Փրակցիան առաջարկութիւն չունի: Գանձարանը Ղարաքիլիսէ բաց անելու առաջարկը վազաժամ է եւ Ղարաքիլիսէն յետ անելու դէպքում էլ՝ թէական՝ նկատի ունենալով նրա քայքայած տնտեսութիւնը տաճիկ կառավարութեան ձեռքով: Իսկ ինչ վերաբերեալ է Ֆինանսական նախարարի ներկայացրած օրինագծի մէջ յանձնաժողովի արած կրճատումներին՝ Սոց .- յեղ. Փրակցիան համաձայն է դրան:

Ս. Տէր-Մարտիրոսեան .- Նկատի ունենալով, որ մեր բոլոր անլիքները ժամանակաւոր են եւ կենտրոնն էլ, աւելի շուտ, Դիլիջանն է, համաձայն է, որ գանձարանը առայժմս հիմնելի Դիլիջանի Ազատեան .- Յայտնում է, որ Սոց .- դէմ. Փրակցիան եւս այն կարծիքին է, որ Ղարաքիլիսէն է կենտրոնը, բայց ի նկատի ունենալով ներկայ պայմանները, առայժմս գանձարանը պէտք է բանալ Դիլիջանում:

ԲԺ. Ա. Ղազարեան .- Յայտնում է, որ դաշնակցական Փրակցիան վայրի խնդրի վրա չի սինգում, քանի որ Ղարաքիլիսէն դեռ մեր ձեռքը չէ:

Ընդհանուր վիճարանութիւնը սպառած յայտարարելով՝ նախագահը զնում է օրինագիծը քննութեան կէտ առ կէտ: Առաջին յօդուածը ընդունում է միաձայն: Երկրորդ յօդուածը անցնում է 29 ձայնով:

Ս. Տ. Մարտիրոսեան .- Յանձնաժողովի կողմից առաջարկում է երրորդ յօդուածը հանել եւ փոխարինել յանձնաժողովի երկու յօդուածներով. ընդունում է այս առաջարկը:

Ապա Խորհուրդը անցնում է օրինագծի երրորդ ընթերցանութեան յօդուած առ յօդուած եւ կէտ առ կէտ քեչարկութեամբ ընդունում է:

Յետոյ կատարում է ամբողջ օրինագծի քեչարկութիւնը՝ ուղղումներով եւ յաւելումներով եւ ընդունելով՝ յանձնում է խմբագրական յանձնաժողովին:

Խորհուրդը անցնում է օրակարգի երկրորդ կէտին:

Ս. Տիգրանեան, օրէնսդրական յանձնաժողովի ղեկուցարէր .- Արդարադատութեան նախարարի օրինագիծը օրէնսդրական յանձնաժողովը քննեց նախարարի ներկայութեամբ, եւ նախարարը համաձայնեց փոխել մի քանի յօդուածները: Միւս կէտերը յանձնաժողովի անդամների մի մասն էր միայն պաշտպանում: Կառավարութիւնը քեչական դատավարութեան մի քանի օրէնքների փո-

փոխութիւնը մտցրել է ոչ թէ նրա համար, որ այդ օրէնքները թերի են, այլ այն պատճառով, որ մեր երկրում գոյութիւն ունեն այնպիսի կարգեր, որոնք խոչընդոտ են հանդիսանում օրէնքի կատարել կիրառման:

Յ. Բուդաղեան .- Առաջարկում է օրինագծի քննութիւնը սկսել 626-րդ յօդուածից՝ ընդունելով այն, որպէս կենտրոնական յօդուած:

Ս. Տիգրանեան .- Կարդում է 626-րդ յօդուածը փոփոխած:

Դ. Զուրեան .- Սոց .- յեղ. Փրակցիայի կողմից յայտարարում է անընդունելի նախարարի արած այդ փոփոխութիւնը, որովհետեւ դա օրէնքին գործնական տեսակէտից ոչինչ չի աւելացնում. արդարադատութեան գիտակցութիւնն էլ չի բարձրանում:

Յ. Բուդաղեան .- Ընդդէմ արտայայտելով 626-րդ յօդուածի փոփոխութեան՝ ասում է, թէ առաջարկած նոր կարգերը ոչ մի գըրաւական չեն տալիս արդարադատութեան: Առաջարկում է չընդունել 626-րդ յօդուածի փոփոխութիւնը, որովհետեւ դա կը մեռցնէ արդարադատութիւնը:

Գ. Ենգիբարեան .- Դէմ է 626-րդ յօդուածի փոփոխութեան, որով ոչնչացւում է դատարանի կոլեգիալութիւնը եւ դատարանը դառնում է ոչ թէ արդարադատութիւն փնտրող մի մարմին, այլ սոսկ գործիք: Ապա շեշտում է, որ չնայած դատարանը պէտք է ազգայնացւի, բայց նախարարը մինչեւ այժմս էլ հայերէն չիմացողներին է նշանակել պաշտօններում:

Ա. Մալխասեան .- Այս օրինագիծը մտցնելու միակ արդարացումը նախարարը գտնում է մեր երկրի առանձնայատուկ պայմաններին մէջ, բայց այդ ի նկատի ունենալով չպէտք է քաջալերել ժողովրդի վատ ցանկութիւնները՝ դատարանից խուսափելու՝ ի նկատի ունենալով, որ այդ փոփոխութիւնները առաջ պիտի բերեն ժողովրդի մէջ պետութեան եւ դատավարութեան հեղինակութեան անկում, չպէտք է այդ յօդուածը փոփոխել:

Ս. Խաչատրեան .- Մենք բոլորս էլ կանգնած ենք ձեւական հողի վրա. գործնականը մեզ թելադրում է, որ այդպիսի փոփոխութիւն պէտք է մտցնել օրէնքի մէջ, որովհետեւ հակառակ դէպքում դատարանը կանգնում է եւ դատավարութիւնները տեղի չեն ունենում: Առաջարկում եմ ընդունել օրինագիծը:

Արդարադատութեան նախարար .- Պատասխանելով պատգ. Ենգիբարեանի վերջին յայտարարութեան՝ ասում է .- Այն յոյսը, որ ունէինք մեր երիտասարդութեան վրա, չարդարացաւ. նրանք բոլորն էլ նախարար դառնալու ցանկութիւն ունեն եւ ոչ թէ ժողովրդական գործիչներ: Ենգիբարեանը լինելով յեղափոխական տրիբուն-

նալի նախագահ՝ այժմ ինչո՞ւ է դէմ առաջարկած փոփոխութիւններին: Յեղափոխական տրիբունալը յետ մղեց պետական դատարանը, որովհետեւ երկրի պայմաններն այդպէս էին թելադրում: Նոյնպէս եւ այժմ. ի սէր երկրի կառավարութեան եւ ի սէր դործի արագ ընթանալուն նախարարութիւնը ձեռնարկել է այս փոփոխութիւններին:

Ա. Մալխասեան.- Տեսականապէս դատախազը պիտի պաշտպանի, սակայն գործնականում նա մեղադրողի դեր է ստանձնում, որպէսզի արդարադատութիւնը երեւան հանի: Եթէ ընդունենք այդ փոփոխութիւնները, ճիշտ է, դատաւորները կարող են դատել, սակայն զրկում են հնարաւորութիւնից պաշտպաններին պաշտպանելուց, որից շատ է կախած արդարութեան երեւան գալը: Թէ Ս. Սաւաթեանը եւ թէ արդարադատութեան նախարարը չեն առաջնորդում իրական փաստերով:

Գ. Ենգիբարեան.- Պատասխանելով արդարադատութեան նախարարին՝ ասում է.- Յեղափոխական տրիբունալը հնարել են այն ժամանակ, երբ կառավարութիւն չկար, իսկ այժմ կառավարութիւն ունենք եւ այդպիսի տրիբունալի կարիք չենք զգում, ուրեմն, եւ նախարարի պատճառարանութիւնը անտեղի է: Ինչ վերաբերում է դատարանի ազգայնացման դանդաղ ընթանալու առթիւ նախարարի տւած բացատրութեան, հարց եմ տալիս. ինչո՞ւ են նշանակել պատասխանատու պաշտօնները մէջ այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ոչ միայն հայերէն չգիտեն, այլեւ կրթական ցենզ չունեն, ինչպէս, օրինակ, Իւսակով, Էլօ եւայլն:

Յ. Բուդաղեան.- Նախարարը ոչինչ չսասց եւ այդ ցոյց է տալիս, որ նա այս փոփոխութիւնը մտցրել է ոչ թէ երկրի յառաջագիծութիւնն ու կառավարութեան վարկը բարձրացնելու համար, այլ հէնց այնպէս:

Նախագահը յայտարարում է 15 րոպէ ընդմիջում:

Ընդմիջումից յետոյ, քէարկութեան է դրւում 626 յօդւածը փոփոխւած ձեւով. թեր ձայն են տալիս երեք հոգի:

Ս. Տիգրանեան.- Կարդում է 438-րդ յօդւածը եւ փոփոխութիւնը:

Յ. Բուդաղեան.- Վկային երկրորդ անգամ հարկադրական ձեռք բերելը անարդարացի է, անօրինական: Դէմ է 438-րդ յօդւածի փոփոխութեան:

Ս. Խաչատրեան.- Հին օրէնքը պաշտպանում է անձի անձեռնմըխելիութիւնը. օրէնքի այս փոփոխութիւնը խախտում է անձի անձեռնմխելիութիւնը, որի դէմ բողոքում եմ:

Գ. Ենգիբարեան.- Դէմ է արտայայտում օրէնքի փոփոխութեան: Բացի պատգ. Սաւաթեանի յիշատակած փաստից, վկայի ցուցմունքը հասարակական եւ սոցիալական պարտականութիւն է: Մեր ժողովրդի սոցիալական ինստիտուտները այնքան էլ զարգացած չեն, ուստի օրէնքի այդ փոփոխութիւնը աւելի կը նպաստի դրան:

Արդարադատութեան նախարար.- Պաշտպանում է օրէնքի փոփոխութիւնը եւ աւելացնում, որ գործնական տեսակէտից մօտենալով ինդրին՝ պէտք է պատիժը նշանակել վկայի առաջին անգամ չզգալուց յետոյ:

Քէարկւում է 437 յօդւածի փոփոխութիւնը. ձայն են տալիս 18 հոգի դէմ եւ 9 թեր:

Ս. Տիգրանեան.- Կարդում է 576 յօդւածը եւ փոփոխութիւնը:

Յ. Բուդաղեան եւ Գ. Ենգիբարեան.- Դէմ են արտայայտում եւ անընդունելի են համարում այս յօդւածի փոփոխութիւնը:

Արդարադատութեան նախարար.- Պաշտպանում է:

Քէարկութիւն. 10 թեր, 16 դէմ:

Ս. Տիգրանեան.- Կարդում է 714, 713 յօդւածները եւ փոփոխութիւնը:

Գ. Զուբեան.- Սոց.-յեղ. Փրակցիայի կողմից յայտարարում է, որ փոփոխութեան կարիք զգացւում է ոչ թէ 714 յօդւածի մէջ, այլ 711-րդի: Երկրորդ՝ բոլոր վկաները պէտք է ըստ իրենց դասանանքի երգւեն, սակայն այն մարդիկ, որոնք համոզմունքով ոչ մի դասանանք չունեն, չեն ենթարկւում երդման:

Գ. Ենգիբարեան.- Նոր փոփոխութիւններ մտցնելը թիւրիմացութիւն է, որովհետեւ ժամանակաւոր կառավարութիւնը արդէն իսկ փոխել է այդ յօդւածները՝ վերացնելով կրօնական երդումը:

Գ. Զուբեան.- Գ. Ենգիբարեանի ասածը ճիշտ է, սակայն Երեւանում այդ փոփոխութեան մասին տեղեկութիւն չունեն: Առաջարկում է 714 յօդւածը դուրս ձգել եւ 711 յօդւածը փոփոխել: Առաջարկը քէարկւում եւ ընդունւում է:

Ս. Տիգրանեան.- Կարդում է 793-րդ յօդւածը, որ ընդունւում է միաձայնութեամբ:

Այս Խորհուրդը անցնում է օրակարգի երրորդ հարցի քննութեան - կառավարութեան պատասխանները Փրակցիաների հարցումներին: Կարդացւում են նախարարներին ուղղւած հարցումները:

Վարչապետ Քաջագնուհի.- Յայտնում է, որ մինչեւ հիմա արտաք. գործ. նախարարութեան մէջ այնպիսի դէպքեր տեղի չեն ունեցել, որոնք դձկու ցանկէն Խորհրդարանում: Արտաքին յարաբերութիւնները ճիշտ այն զրութեան մէջ են, ինչ որ յայտնւած է կառա-

վարութեան յայտագրի մէջ: Մի քանի օրից յետոյ կը ներկայացուի արտաքին գործոց նախարարութեան նախահաշիւը, որի քննութեան ժամանակ պատգամաւորները այս կամ այն խնդրի մասին կարտա-
յայտեն: Ինչ վերաբերում է Սալիլ փաշայի հետ ունեցած բանակ-
ցութիւններին, պէտք է ասել, որ բանակցութիւնները քաղաքական
նկատումներով տեղի չեն ունեցել: Նրա երեւան ժամանելը զուտ
քաղաքայարական ակտ էր:

Անցնելով Թիֆլիսում դանուղ հայկական զօրամասերի լիկւիդա-
ցիայի խնդրին՝ վարչապետը նկատում է, որ լիկւիդացիան արագ չի
կատարում հետեւեալ պատճառներով. նախ՝ մեր բոլոր գործերը
արագ եւ կանոնաւոր չեն ընթանում շնորհիւ պետական մեխանիզմի
բացակայութեան. երկրորդ՝ ղինւորական գործերի գործավարու-
թիւնը բարդ է: Ինչ վերաբերում է 20,000 ռուբլի ծախքին, այդ
սխալ է. ընդամենը Թիֆլիսում մենք ունենք 350 ղինւոր՝ օրական
5 ու 50 կ. ծախսելով իւրաքանչիւրի համար՝ ընդամենը ծախսուում
է 2000 - 2500 ու.: Լիկւիդացիայի եւ ենթարկել մօտ 1250 սպաներ:
Լիկւիդացիայի գործը դժարանում է, որովհետեւ փաստաթղթեր
չկան:

Արամ, ներքին գործոց նախարար.՝ Երեք հարցում կայ. ա) պա-
րենաւորման, բ) առեւտրի անսպասովութեան եւ գ) քոլերայի դէմ
կուռղ մարմնի թուուցիկները հայերէն չտպելու մասին: Ամեն տեղ
հեռագիրներ են տրւած, որպէսզի ուսանական դրամի շահագործման
դէպքեր չլինին եւ շահագործողները պատասխանատուութեան են-
թարկեն: Լիազօրները գործունէութեան մասին քննութիւն է կա-
տարում. արդիւնքը կը հաղորդուի Սորհրդարանին:

Անցնելով երկրորդ հարցումին՝ նախարարը ասում է, թէ ար-
տահանութիւնը եւ թէ ներմուծումը Դիլիջանի կողմից է, որի հա-
մար այնտեղ հիմնել է մաքսատուն: Ինչ վերաբերում է խուզար-
կութիւններին, դրանք փաստ են, որի առաջը հնարաւորութիւն
չկայ առնելու: Հայերից մէկ ու կէս ամսուայ ընթացքում բողոքներ
չեն եղել. ինչ որ խմացել եմ՝ եղել է կամ մամուլից կամ պատգա-
մաւորներից եւ կամ մասնաւոր մարդկանցից: Թուրքերի կողմից միշտ
էլ լինում են նման բողոքներ:

Վաղարշապատի եւ Օշականի դէպքերի համար պաշտօնական
քննութիւն է կատարել, սակայն միանգամայն հակառակ եղբակա-
ցութիւն է ստացել: Քննիչի ղեկուցման համաձայն այդ դէպքերը
կուսակցական բնոյթ են կրում:

Քոլերայի դէմ մաքսուող յանձնաժողովի յայտարարութիւնները

ուսերէն են տպւած, որովհետեւ թարգման եւ գրաշար չէ եղել.
բացի այդ, շատ շտապողական է եղել:

Ֆինանսների նախարար.՝ Առաջին հարցը ընդհանուր ձեւով է
եւ իր ծաւալով շատ խոշոր: Թէ ի՞նչ վիճակի մէջ է մեր Ֆինանսնե-
րի գործը, այս հարցին չէի ուզի կցկտուր պատասխան տալ եւ կը
խնդրէի, որ թոյլատրել ինձ բացատրութիւնը թողնել պետական
բիւրօնին ներկայացնելու ժամանակ: Կայ այդ հարցի մէջ եւ մասնա-
կի խնդիր, այն, թէ ինչքա՞ն է ծախսել 80 միլիոն ռուբլուց եւ
ի՞նչ կայ այժմ: Այդ մասին եւս կը խնդրէի թոյլատրել բացատրե-
լու Ֆինանսների յանձնաժողովին: Նախարարութիւնը ձեռնարկել է
ձեւակերպելու հարկերի սիստեմ. հին հարկերի վերացման եւ նորի
մուծման մասին կը ներկայացուի օրինագիծ: Մեր հարկերի հիմը
կազմում է եկամտային տուրքը, որ այժմ կիրառել անյարմար է,
որովհետեւ եկամտային ազբիւրների քննութիւնը կատարւած է 1910
թւին. հիմնել այդ քննութեան վրա եւ նշանակել տուրքեր՝ շատ
աննշան հասոյթ կը բերի: Բացի այդ, 1910 թւի տուրքերի չափերը
այժմ ընդունելի չեն պատերազմի եւ այլ հասարակական
պայմանների շնորհիւ: Բայց որովհետեւ սա է միակ միջոցը պետա-
կան դանձարանի հարստացման, ուստի եւ նախարարութիւնը յար-
մար դուռ հարկերի դանձումը յետաձգել մինչև նոր քննութիւն եւ
եկամտային տուրքերը հաւաքել դրանից յետոյ: Այս քննութիւնը
յանձնուած է մեր հարկային տեսուչներին եւ ժամանակը նշանակւած
է մինչև նոյեմբեր 15: Մեր հարկերի դանձումը նորմալ է եւ յոյս
կայ, որ սպաղապում աւելի կը կանոնաւորուի:

Զօրական նախարար.՝ Էջմիածնում կոմենդանտի միջոցով հաւաք-
ւած գրամով, որի գումարն է 1,500 ու. թաղւած են գողթական-
ներ. մնացած գումարը կը մտցուի դանձարան: Ոչ-գինւորականների
գինւորական հագուստ կրելու դէմ շուտով կը լինի հրաման:

Դ. Զուրեան.՝ Ինչո՞ւ Վաղարշապատում տուգանքները կոմեն-
դանտն է հարկադրւած հաւաքելու եւ ինչո՞ւ կան գումարներ, որոնց
համար ստացականներ չեն տրւած:

Զօրական նախարար.՝ Կոմենդանտը իմ ժամանակ տուգանք չէ
նշանակել: Ինչ վերաբերում է ստացականներին՝ ենթադրում եմ,
որ անպայման պիտի տրւեն:

Ա. Մալխասեան.՝ Անցեալ անգամ սոց. դէմոկրատները հարցա-
պընդում մտցրին Վաղարշապատի դէպքերի մասին, եւ Սորհրդա-
րանը հակառակ մեզ, անցկացրեց Հ. Յ. Դաշնակցութեան առաջար-
կութիւնը, որով պարտաւորեցւում էր ղինւորական նախարարին մի-


ջոցներ ձեռք առնել՝ անկարգութիւնների առաջն առնելու համար
այնտեղ: Սակայն այդ ուղղութեամբ նախարարի կողմից քայլեր չեն
առնուել:

Հ. Սարգսեան.— Տուգանքներ պիտի վերցնի ոչ թէ կոմենդանտը,
այլ կոմիսարը. կոմենդանտը ինքնագլուխ մտնում է տները,
գուհիկ է վարում եւ զինւորների միջոցով նեղում է բնակիչներին:

Զօրական նախարար.— Յայտնում է, որ Վաղարշապատում, որ
պէս պատերազմական շրջանում, կոմենդանտը իրաւունք ունի սու-
ղանքներ դնելու:

Նիստը փակուում է գիշերուայ ժամը 2-ին:

«Հորիզոն», 5 հոկտ.



ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

ԵՐԿՈՒ ՎԱԿԵՐԱԳԻՐ

Ստորեւ տալիս եմք երկու հետաքրքրական վաւերագիր, որ
որոշ չափով բնորոշում է 90-ական քաղաքների սկզբին Սալմաստի
շրջանում տիրող պայմանները: Սալմաստ, ինչպէս յայտնի է յիստ
կարեւոր դեր է կատարել մեր յեղափոխական շարժման մէջ, մանա-
ւանդ առաջին տարիներին, իբրեւ միջնորդ — կայան Վասպուրական-
Տարօնի եւ Կովկասի միջեւ:

Առաջին վաւերագիրը վերաբերում է Դերիկի վանքին, որ աչքի
բնկնող տեղ գրաւեց գէնէի եւ մարտիկների փոխադրութեան գոր-
ծում: Միսիքարեան եպ.՝ ինքնագիր նամակն է, որով վանքի կա-
ռավարիչ է նշանակուում «Մովսէս անձը», որով հետագային շատ
եմ գրաւել Բագրատ վարդ. Թաւափայեան — Զաֆֆին եւ դաշնակ-
ցական գործիչները: Միսիքարեան եպ.՝ ի գրութիւնը տալիս եմք
անփոփոփ, բնագրի ուղղագրութեամբ, ինչպէս առհասարակ վար-
ւում եմք բոլոր վաւերագրերի նկատմամբ:

Երկրորդ թուղթը՝ պայմանագրութիւն է Սարա գիւղը ուսու-
ցիչ հրաւիրելու մասին: Հետաքրքրական է նախ ուսուցչի անձը.
Բարսեղ Գրիգորեան Հ. Յ. Դաշնակցութեան առաջին շրջանի աչքի
գարնող դէմքերից էր, որ Աբամելիք անունով մտել էր Երկիր, յե-
ղափոխական աշխատանք կատարել այնտեղ եւ այժմ հաստատուում
էր Սարայում, իբրեւ ուսուցիչ, շարունակելու համար յեղափոխա-
կան գործը:

«Իշխանաւոր» Մահտեսի Մկրտիչ Մարգ. Յօնանեանցի փոխա-
րէն ստորագրող Ն. Տէր — Յովհաննիսեանը մեր ապագայ Նիկոլ —
Դումանն է, որ 1892 եւ 93 քաղաքներին ուսուցիչ էր Թարիզում
եւ 1892 թ. ամառը Յովսէփ Արդուքեանի հետ գտնուում էր Սալ-
մաստում:

Թուղթերի բնագիրները գտնուում են Հ. Յ. Դ. Կեմուր. Դիւա-
նում: ԽՄԲ.

I

Արժանապատիւ Տր. Յովհաննէս.

Էսելով, որ Դերիկու Սուրբ Աստուածածին վանուց տնտեսական կառավարչութիւն, նոյն եւ իսկ վանքն գրեթէ անխնամ դրութեան մէջ է, վասնզի վանահայր քահանայն միշտ բացակայ կը գտնուի վանքէն եւ իւր բնակութիւնից չ'յօժարիլ իսպառ հեռանալ, ինչպէս դուք գրած էիք այդ մասին:

Որովհետեւ վանքն անպաշտպան եւ անխնամ անկարելի է թողուլ, որ կարող է մեծ վնաս լինել տնտեսական կառավարչութեանն եւ քայքայումն պատճառել վանուց ի գայթակղութիւն բարեպաշտ մեր ազգայնոց: Ուստի բարեք է Ձեր այն առաջարկեալ Ձեզ ծանօթ Մովսէս անձն կարող էք կարգադրել զիտութեամբ պրն Գասպարին, որ դնայ բնակի վանքումն իբր տեսուչ եւ կառավարիչ վանուցն եթէ կը յօժարի նա, որոյ հսկողութեան յանձնել վանքի ամենայն եղածներն հաշուով եւ ցուցակաւ եւ ստորագրութեամբ: Իսկ վանահայր քահանայն իբր անկարող է իւր ընտանիքէն բաժանիլ եւ բնակիլ ի վանս, ուրեմն ի դէպս կարեւորութեան դարձեալ նոյն քահանայն դալու եւ հոգալու է ուխտաւորաց ամենայն հոգեւոր պէտքերն մ'իայն:

Առաջնորդ վիճակի
ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՊ. ՄԵԻԹԱՐԵԱՆ.

10 Հոկ. 1890
Դավրէժ.

II

Նորին Բարձր Սրբազնութեան վիճակաւոր Առաջնորդի թեմին Հայոց Ատրպատականի Տոն Ստեփաննոս Արքեպիսկոպոսի Մխիթարեանց

Սարմատի Սաւրա գիւղի հայ հասարակութիւնից
Ամենախոնարհ խնդիր.

Ինչպէս ձերդ բարձր Սրբազնութեանն էլ արդէն յայտնի է, Սաւրա գիւղում վաղուց ուսումնարան կայ, բայց մինչեւ ց'այսօր այդ ուսումնարանը ոչ մի արդիւնք չէ տուած մեր հասարակութեանը բարեխիղճ հմուտ եւ ժողովրդեան կարիքը հասկացող ուսուցիչ չունենալու պատճառով: Յանկանալով մեր ուսումնարանն դնել բարեք վիճակի մէջ, լաւ ուսուցիչ վարձեցինք, որը որ է պ. Պար-

սեղ Գրիգորեանց, տարեկան երեսուն հինգ թումանով: Ուստի խոնարհաբար խնդրում ենք ձերդ բարձր Սրբազնութեան, որ նորան հաստատէք իւր պաշտօնին մէջ: Տնյուլիսի 1892 թիւ ի Սաւրի գիւղ: Ի դիմաց հասարակութեան'

Գործակալ Յովհաննէս Աւագ քահանայ Տէր Գէորգեան. Իշխանաւորք՝ Մահեստի Մկրտիչ Մարգարեանց Յօնանեանց, վասն անգրագիտութեան եւ ըստ խնդրանաց նորա ի տեղի նորա ստորագրեցի Ն. Տէր - Յովհաննիսեան.

Երեսիօրան Սահակ Ասլանեան ըստ խնդրանօք նորա ստորագրեցի կարապետ Սահակեան Ասլանեանց:

Ֆրանկ Բօշարով.
Ռօստամ Մհ. Արմաղանեան.
Արմաղան Մհ. Վարքանեան.
Մեսի Մկրտիչ Ստեփանով.
Մեսի Ռուստամ Զաֆարեան եւ ըստ խնդրանօք նորա գրեցի Գէորգ Տ. Յովհաննիսեան.

Մարգար Աւագեան.
Շահմ Շահմեան.
Աւագ Ալիսաքեան.
Ստեփան Շահպագեան, յօժարիմք:

Ընդ այս առաջարկութիւն ժողովրդոց մերոց Սաւրայ գեղջ ի մասին վարձելոյ ի պաշտօն ուսուցչութեան զՊրն Բարսեղն Գրիգորեանց, հաճ եւ հաւան դտեալ հաստատեմ զայն դաշն պայմանաց ստորագրութեամբ իմով եւ զրոշմամբ անուանական կնքոյս: Ի 20ն Յուլիսի, 1892 ամի ի Դավրէժ:

Առաջնորդ վիճակին Հայոց Ատրպատականի
(Կնիք)
ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՊՍ ՄԵԻԹԱՐԵԱՆՑ
Այս պայմանագրի զրամը լիովին ստացայ - Բարսեղ Գրիգորեանց:

III

Ա. ԳՐԻԲՈՅԷԴՈՎԻ ՍՊԱՆՈՒԹԻԻՆԸ

Փարիզի Նուպարեան Մատենադարանի ձեռագիրների բաժնում, Օրմանեանի դիւանից դուրս եկած վաւերագրերի № 60 հաւաքածայի մէջ գտնուում է ստորեւ բերուող գրութիւնը ուս նշանաւոր բանաստեղծ, Թեհրանի դեսպան Ա. Գրիբոյէտովի սպանութեան պարագաների մասին: Հեղինակը անծանօք է, յայտնի չէ եւ գրութեան ժա.

մանակը: Սակայն դէպքը ներկայացած է այնպիսի նշուփեամբ, որ պէտք է ենթադրել, թէ գրողը ժամանակակից մէկն է:


Պատմութիւնից յայտնի է, որ Թուրքմէնչայի դաշնագրով, 1828 թ., շահի կառավարութիւնը պարտաւարել էր բռնութեամբ Պարսկաստանում պահուող բոլոր քրիստոնեաներին իրաւունք տալ վերադառնալու իրենց տները: Թեհրան դեսպան ուղարկւած Ա. Գրիբոյէ-դովին յանձնարարւած էր եւ քրիստոնեաների վերադարձի խնդիրը կարգադրել: Ռուս դեսպանին դիմող բազմաթիւ հայերի շարքին էր եւ շահի կանանցի պետերից Խոջա աղա Եաղուբը, որ, ինչպէս եւ միւս հայ ներքինապետներ Մանուշար եւ Խոսրով խաները, բռնի իսլամացւած էր եւ այժմ ուզում էր օգտուել առիթից՝ վերադառնալու համար հայրենիք: Ահա այս հողի վրա զարգացած դէպքերի հետեւանքով տեղի ունեցաւ Գրիբոյէդովի սպանութիւնը: Այս դէպքը, ի միջի այլոց, շատ գունագեղ կերպով նկարագրւած է ռուս յայտնի գրող Տրնետնովի մի քանի տարի առաջ Մոսկւայում լոյս տեսած «Վազիր Մուխթարի Մահը» գեղեցիկ պատմական վէպի մէջ: ԽՄԲ.

IV

ՊԱՏՃԱՌ ՄԱՀՈՒԱՆ ՂՐԻԲԱՅԵԱԴՈՎԻ

Շահի հարածխանից մին հայտնի Խոջայ աղայ Եաղուբ, գնացեալ առ Ղրիբայեազովն խնդրէ ի նմանէ բերել զինքն ի Տփլիս. շահն լսելով զայն՝ պահանջէ ի Ղրիբայեազովէ նիւթքն ունեցեալքն յիշեալ Եաղուբ աղային եւ պատկանեցեալ շահին յետս դարձուցանել առ շահն. բայց այնու Եաղուբ աղայն ոչինչ դարձուցանէ. յետոյ շահն կամի տեսանել զԵաղուբ աղայն, եւ հրամանաւ Ղրիբայեազովին հանդերձ միրզա Նարիմանին զան նոքա առ շահին, եւ ի տեսանել շահին հարցանէ Եաղուբ աղային. դու հա՞յ ես դարձել. նա պատասխանէ շահին. շատ ժամանակ է. չէ թէ միայն ես, այլ Մանուշար եւ Խոսրով խանքն հայք են, եւ երկուքն էլ իւրեանց տանքն ուին շինեալ զեկեղեցիս. շահն հրամայէ նմա ի վերայ Մանուշար խանին չխօսել. եւ յայնժամ դատնայ Եաղուբ աղայն առ Ղրիբայեազովն, որով ասացեալ է շահին թէ իբր նա Մանուշար խանի խորհրդեամբ եւ զիտութեամբ գնացեալ լինի առ Ղրիբայեազովն. ընդ այսմ բանիս Մանուշար խանն շատ նեղանայ. միւս աւուր նոցա կարգացող մեծ միրզայ մէյթին քարոզէ ի մէջ մէջիթին այսպէս. Գեաւուրքն եկեալ են իւրեանց հաւատի մարդկանց տանին եւ դարձուցանեն ընդ իւրեանս քրիստոնեայ. վաղն պարտ է ժողովումն

լինել, զի երթայց սպանցից զնոսա. առ այս խորհուրդ մուլային միւս աւուր հաւախօսին՝ ժողովին զմարդիկս ձայնելով. Մանուշար խանն իմանալով զայս. Յովսէփ Նազվալի որդի Կնեազ Սոլումոնին Մելիքեանց գնացելոյն ի տեսութիւն մօրն իւրոյ Ոսկումին, ուղարկէ առ Ղրիբայեազովն եւ աղղէ նմա զամենայն խորհուրդս պարսից, իցէ թէ խոջայ աղայ Եաղուբին դուրս հանէ ի տանէ եւ ինքն զգուշանայ ըստ ամենայնի. բայց մինչ Կնեազ Սոլումոնն Մելիքեանց գրնացեալ աղաքարեալ եւ զգուշացուցեալ էր նոցա եւ կամեցեալ էր յետս դառնալ, յանկարծ չըջապատեն անօրէն պարսիկքն զՂրիբայեազովին, Կնեազ Սոլումոնին, միրզա Նարիմանին, Գաղաշովին եւ մինչեւ յիսուն եւ չորս հօգի հայ մարդիկ ի միասին կոտորեն. թէպէտ Ղրիբայեազովն թանգազին հանդերձ իւր զգինու մտածելով՝ իցէ թէ պատուեն եւ աղատի ի փորձանաց, բայց այնու եւս ոչինչ օգտի. Կնեազ Սոլումոնի մահն իմանալով Մանուշար խանի մայրն, յանկարծ դամբայ ականի եւ մեռանի. զնա հանդերձ Սոլումոնի - տարեալ թաղեցին ի սբ. էջմիածին, այլ զՂրիբայազովն տարին ի Թիֆլիզ:



ԱՆՑԵԱԼՔ

I

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ

Մարտ 3-ին, Նոր - Զուղայում, վախճանեց Իրանահայ ականաւոր գործիչ Յարութիւն Յորդանանեանը: Հանդուցեալը ծնել էր 1863 թւին, Կարապետ քահ. Յորդանանեանի ընտանիքում: Նախնական կրթութիւնը ստանալով տեղական ազգային դպրոցում եւ կատարելագործելով անգլիական կոլէջում, հօր մահուանից յետոյ, 1880-82 թւականներին ուսուցչութիւն է անում Դաւրէժ թաղի Մարիամ Խաթունի աղջկանց դպրոցում: Ապա կոչուում է հեռագրական պաշտօնի, ուր ծառայում է մինչեւ 1885 թ., երբ ստանձնում է կաթողիկոսների վանքի զբաղման եւ թարգմանի պաշտօնը: 1888 թ. ամուսնանում է եւ տեղափոխուում Թեհրան, ուր նախ պաշտօնավարում է պարսից հեռագրատան մէջ, իսկ 1889-ին պաշտօնի է կոչուում անգլիական Իմպերիալ բանկում, ուր լինում է առաջին հայ պաշտօնեան: 1890-ին փոխադրուում է Սպահան եւ բաց է անում Իմպերիալ բանկի ճիւղը, որի մէջ պաշտօնավարում է մինչեւ 1905 թւականը: 1906 թ. նշանակուում է Դիկինս մեծ առեւտրական տան կառավարչի օգնական, իսկ 1910-23 թ. մինչեւ այդ տան փակելը, վարում է կառավարչի պաշտօնը:

Իր մասնաւոր պաշտօնների հետ միաժամանակ Յ. Յորդանանեանը կատարում է եւ բազմաթիւ ու պատասխանատու հանրային պարտականութիւններ: 1889-ին նա ոտք է դնում հասարակական գործունէութեան ասպարէզ եւ մինչեւ մահ այլեւս չի հեռանում այնտեղից՝ միշտ աչքի ընկնելով իր նկարագրի ազնուութեամբ, բարեխղճութեամբ եւ արտակարգ աշխատունակութեամբ:

«Վերջին յիսնամեակի ընթացքում, գրում է նրա մասին «Ալիք»-ում (7 մայիս) Ե. Հայրապետեանը, Նոր - Զուղայի հանրային, դպրոցական, որբանոցային, թատերական կամ բարեգործական կեանքին վերաբերող որեւէ ձեռնարկ չի եղեր, որոնց իր քրտնաջան մասնակցութիւնը բերած չլինէր թէ իբրեւ նախագահ ու անդամ հոգաբարձական ու համայնական մարմինների, թէ իբրեւ հիմնադիր

ու աշխատող վերոյիշեալ մշակութային, բարեգործական ձեռնարկութիւնների ու հիմնարկութիւնների: Եւ ամէն տեղ միշտ առաջին շարքերում, միշտ հրահանգող ու ղեկավարի դերում »:

Յ. Յորդանանեան երկար տարիներ եղել է Նոր - Զուղայի դպրոցների եւ հոգաբարձութեան անդամ կամ նախագահ, Համայնական վարչութեան նախագահ, բազմաթիւ ազգային - մշակութային ձեռնարկների հեղինակ, աջակցող կամ խրախուսող: 1929 թ. նա յանձն է առնում մի յոգնեցուցիչ ճանապարհորդութիւն դէպի Հնդկաստան՝ ազատութեւն համար իր ծննդավայրի կրթական գործը եւ յաջողում է Բաթալիայի ազգային վարչութիւնից ստանալ տարեկան 10,000 թուման նպաստ Նոր - Զուղայի ազգային դպրոցի համար:

Համաշխարհային պատերազմի տագնապալից օրերին, երբ Իրանահայ զաղութը դարձել էր սադրանքի առարկայ թիւրք-գերման գործակալների կողմից, Յ. Յորդանանեանը հրապարակ եկաւ Իրանի մամուլում եւ մի շարք յօդածներով ձեռնհասօրէն պաշտպանեց իր ազգակիցներին յաշտ իրանական հանրային կարծիքի ու կառավարութեան:

Յ. Յորդանանեանը իրանահայերի ընդհանուր յարգանքը վայելող դէմք էր: Մէկից աւելի անգամներ առաջ է քաշել նրա թեկնածութիւնը Մէլլիսի անդամութեան համար, բայց նա միշտ հրաժարել է: Նրա դրեթէ կէս դար տեւող հասարակական գործունէութիւնը մեծ օգուտներ է բերել իրանահայութեան, յատկապէս իրանահայ մշակութային գործին: Եւ բնական է այն անկեղծ ցաւը, որ պատճառեց նրա մահը անխտիր հասարակութեան բոլոր խաւերին:

II

ՄԻՀՐԱՆ ՍՎԱԶԼԻ

Յունիս 19-ին, Նիւ Եորքում, 73 տարեկան հասակում մեռել է հին հնչակեան, վերջը Ռամկավար - Ազատական, Կուսակցութեան աչքի ընկնող անդամ Միհրան Սվազլին: Հանգուցեալը Իզմիրցի էր: Իր ուսումը ստացել էր տեղական անգլիական դպրոցում, ապա՝ Փարիզում: Մասնագիտութեամբ իրաւաբան էր: Երիտասարդ հասակից մտել էր Հնչակեան Կուսակցութեան շարքերը՝ ներկելով գլխաւորապէս հայկական հարցի արտաքին պրոպագանդին: Հնչակեան Կուսակցութեան պատակաման օրերին, հակառակարբէզական բանակում էր: Յայտնի է նրա դատը անգլիական դատարանում «Հընչակ»-ի իրաւունքի համար, որից շահաւոր դուրս եկան Նազարբէգեան ամուսինները:

Երբ կազմեցաւ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը, Սվազլին եղաւ նրա գործօն ղեկավարներից մէկը, Արփիարեանի, Տամատեանի եւ ուրիշների հետ միասին: Իր քաղաքական ծանօթութեան եւ նախասիրութեան կենտրոնը Կիլիկիան էր: Սվազլիի գէնքը գլխաւորապէս խօսքն էր եւ գրիչը. գաղափարներ տարածող էր, բայց ոչ գործադրող: Ունի բազմաթիւ յօդւածներ հայերէն, յունարէն, ֆրանսերէն եւ անգլիերէն: Սմբադրել է «Armenian Herald» թերթը Ամերիկայում, եւ եղել է Հայ Ազգային Միութեան նախագահը եւ մասնակցել է ազգային - քաղաքական շատ ձեռնարկների:

Երբ Վեր. Հնչ. Կուսակցութիւնը ձուլեցաւ Սահմանադիր - Ռամկավար Կուսակցութեան հետ եւ ծնունդ առաւ Ռամկավար - Ազտական Կուսակցութիւնը, Սվազլին դարձաւ այս վերջինիս կարեւոր ղեմաբերից մէկը, թէեւ ազատ էր ռամկավարների յատուկ թթու մոլեռանդութիւնից: Մտքի որոշ մշակոյթ ունեցող գործիչ էր, բնաւորութեամբ մեղմ, տեսակէտներով ոչ կայուն: Գաղութային իմաստով հայրենասէր էր՝ նման մեր բոլոր այն գործիչների, որոնք հայրենիքը սիրում են պատկառելի հեռաւորութիւնից:

III

ՅՈՎՍԷՓ ՄԻՐՉԱՅԵԱՆՅ

Յունիս 12-ին, Թեհրանում, յանկարծամահ է եղել իրանահայ յայտնի գործիչ, Իրանի խորհրդարանի պատգամաւոր Յովսէփ Միրզայեանը: Հանգուցեալը ոչ միայն նշանաւոր պետական եւ հայ ազգային գործիչ էր Իրանում, այլեւ աչքի ընկնող գրական ղեմաք: Նա մէկն էր առաջնակարգ հայ իրանագէտներից, որ տւել է ընտիր թարգմանութիւններ Ֆէրդուսիից, Սայեամից, Սաադիից եւ այլ դասական հեղինակներից: Միրզայեանը կարեւոր դեր է խաղացել նաեւ Հ. Յ. Գաշնակցութեան կեանքում, մանաւանդ Կուսակցութեան գործունէութեան առաջին շրջանում: «Վէմ»-ը դեռ առիթ կուենենայ խօսելու անհետացող այս ականաւոր մտաւորականի կեանքի եւ գործի մասին:

IV

ՏԻԳՐԱՆ ՄՈՒՇԵՂԵԱՆ

Ապրիլ 23-ին վախճանւել է Երեւանում Պետ. Համալսարանի տեսուչ Տիգրան Մուշեղեանը: Լինելով մէկն այն հայ մտաւորականներից, որոնք հանրային գործունէութեան ասպարէզ են մտել, որպէս շատագուց ու պաշտպան ժողովրդավար սկզբունքների, հան-

դուցեալը հեռանում է մեզանից կոմունիստական կուսակցութեան՝ ազատութեան այդ ամենատխերիմ թշնամի կազմակերպութեան՝ անդամական տոմար դրպանում: Հայաստանում գործող ներկայ մըտաւորականներից շատերն են անցել այս ճանապարհով եւ արտասահմանի աչքում այդ ուղին վատ համբաւ է ձեռք բերել: Տիգրան Մուշեղեանի պարագան տարբերում է, սակայն, այն քարիերիստների պարագայից, որոնք իրենց դիմադարձութիւնը գէպի համայնավարութիւն կատարել ու կատարում են շահադիտական մղումներից տարւած, եւ, այդ պատճառով էլ, նա պէտք ունի անաչառ լուսարանութեան:

Տիգրան Մուշեղեանը ծնւել է կովկասահայ բնաշխարհի կենտրոնում՝ Վաղարշապատում 1886 թւին: Այս հանգամանքը բախորտոշ դեր է կատարել հանգուցեալի կեանքում, կապելով նրան, որպէս հասարակական գործիչ, հայ իրականութեան հետ: Երեւանի ուսական գիմնազեան, որտեղ Մուշեղեանը ստացել է իր սկզբնական ու միջնակարգ կրթութիւնը, որեւէ ձեւով չի կարողացել թուլացնել այդ կապերը: Աւարտելով բարձրագոյն ուսումը Պետերբուրգի համալսարանի բնադիտական բաժնում, 1912 թւին, նա նւիրւել է մանկավարժական գործունէութեան, ընտրելով ասպարէզ հայ դպրոցները:

Մեր կեանքի իւրայատուկ պայմանները այս գերազանցապէս մշակութային գործիչին ստիպել են զբաղւել նաեւ քաղաքականութեամբ: Եւ ահա այս ասպարէզում է, որ նա կտրել անցել է մի ուղի, որ դրսից դիտողի աչքին կարող է երեւալ ոչ այնքան ուղղագիծ ու ոչ այնքան հարթ: Լինելով մէկը հանգուցեալի նախկին ընկերներից, ես պարտք եմ համարում ներկայացնել այդ ուղին իւր իսկական կերպարանքով, համոզւած, որ դրանից կը շահի նրա յիշատակը:

Տիգրան Մուշեղեանի աշակերտական վերջին տարիները զուգադիպում են Ռուսաստանի 1905 - 1906 թ. թ. յեղափոխութեան եւ հէնց այդ ժամանակ էլ նա բերում է իր մասնակցութիւնը յեղափոխական շարժումներին: Երեւանի գիմնադիւլում գոյութիւն ունեցող խմբակցութիւններից նա յարում է սոց. - յեղափոխականներին եւ այդ կուսակցութեան շարքերում էլ գործում է մինչեւ 1923 - 24 թ., երբ անդամազրւում է Հայաստանի կոմկուսին:

Պետերբուրգում, ուսանողութեան շրջանին, եւ, դրանից յետոյ, Թիֆլիզում ու Երեւանում նա կապ է պահում սոց. - յեղափոխականների հետ, բերելով իր եռանդուն մասնակցութիւնը այդ կազմակերպութեան կատարած աշխատանքներին: Հակառակ բոլշեւիկ-

ների պնդումներին, Մուշեղեանը այդ ժամանակամիջոցին ծայրայեղ գործելակերպի չի հետեւել եւ նրա պայքարը հայ միւս կուսակցութիւններէ դէմ կրել է չափաւոր բնոյթ: Աւելին՝ շարժումներէց յետ մնալու անցանկալի հեռանկարը նրան ստիպել է դառնել աշխարհի ընթացքի մէջ, որ դէմ էր գնում իր պատկանած կուսակցութեան որդեգրած գծին: Այսպէս, օրինակ, պատերազմի սկզբի շրջանում զբաղւած լինելով գաղթականների նպաստի ու տեղաւորման գործով, նա իր օժանդակութիւնն է բերել նաեւ կամաւորական շարժման, հակառակ նրան, որ սոց. - յեղափոխականները բացասական վերաբերմունք ունէին այդ շարժման հանդէպ:

1917 թւի յեղափոխութեամբ սկսուած է Տիգր. Մուշեղեանի քաղաքական գործունէութեան ամենակարեւոր շրջանը: Առաջին մէկ օրից նա նեւուած է հրապարակ ու դառնում Թիֆլիզի մեր կազմակերպութեան ամենաեռանդուն գործիչներից մէկը: Նա իր վրա է վերցնում կազմակերպական սեւ աշխատանքը եւ խուսափում է յեղափոխական հոշակ ու դիրք ստեղծող բոլոր պաշտօններից ու գործերից: Միշտ կապւած հայ իրականութեան, նա մէկն է լինում մեր միջազգայնական կազմակերպութեան այն հայ անդամներից, որոնք անհրաժեշտ էին համարում աշխատանքներ տանել նաեւ ազգային միջավայրում: Եւ երբ 1917 թւի աշնանը Անդրկովկասում սկսեց յեղափոխութեան ազգայնացման պրոցեսը, Տիգր. Մուշեղեանը, իր մի շարք հայ ընկերների հետ միասին, իր գործունէութեան ծանրութեան կենտրոնը փոխարքայի պալատից (յեղափոխական խորհուրդներ) փոխադրեց Արամեանցի տունը (Հայոց Ազգ. Խորհուրդ), իսկ հետեւեալ (1918 թ.) տարւայ ամառը մեկնեց Երեւան, որպէս Հայաստանի Խորհրդի էս - էռական հատուածի անդամ: Համոզւած ընկերվարական, դադափարապաշտ ու անձնէր, նա իր գործելակերպով հեռու մնաց քաղաքական գաղթակցութիւններից եւ լծելով օրգանական աշխատանքի Խորհրդի յանձնաժողովներում ու ընդհանուր նիստերում, միշտ սգեւորեց կենդանի գործով, թողնելով, որ իր միւս ընկերները զբաղւեն սկզբունքային բնոյթ կրող ելոյթներով:

1919 թւի ընտրութիւնների հետեւանքով Մուշեղեանը դուրս մընաց Հայաստանի Խորհրդարանից (Պարլամէնտ) եւ անցաւ նորից մանկավարժական գործունէութեան, դառնալով Երեւանի առաջին հայկական գիմնադիպի վերատեսուչ: Բայց նա բոլորովին չձգեց քաղաքական գործունէութիւնը եւ, որպէս սոց. - յեղափոխականների կազմակերպութեան Հայաստանի կոմիտէի անդամ, զբաղւեց կուսակցական աշխատանքներով, ղեկավարելով Երեւանի մեր ուսանո-

դական ու երիտասարդական խմբակը եւ միաժամանակ գործօն մասնակցութիւն ցոյց տալով արհեստակցական շարժման մէջ, որպէս այդ միութիւնների նախագահութեան անդամներից մէկը: 1920 թւի մայիս մէկի ցոյցերի ժամանակ, որ տեղի ունեցաւ ամենուրեք Հայաստանում կառավարութեան թոյլտուութեամբ ու Դաշնակցութեան մասնակցութեամբ, Արհեստակցական միութիւնների նախագահութիւնը, որի մէջ մտնում էին նաեւ Դաշնակցութեան պաշտօնական ներկայացուցիչները, հանդէս եկաւ ձախ կարգախօսներով ու իրեն յայտարարեց կողմնակից երբորդ Միջազգայնականի: Այդ ուղղութեամբ ելոյթներ ունեցան նրա անդամները, որոնց թըւում նաեւ Տիգր. Մուշեղեանը: Մի քանի օր յետոյ, երբ Աղեքսանդրապոլում ծագած բուլշեւիկեան ապստամբութեան հետեւանքով, կառավարութիւնն ու Դաշնակցութիւնն շտկեցին իրենց ուղեգիծը ու բաց կուր դուրս եկան համայնավարների դէմ, կասկածի տակ առնեցան նաեւ մայիսիցիւն ցոյցերին մասնակցողները, ինչպէս նաեւ սոց. - յեղափոխական ու սոց. - դէմոկրատ կազմակերպութիւնների անդամները: Տիգրան Մուշեղեանը մեր շարքերից ամենաաչքառու գոհը դարձաւ այդ քաղաքականութեան: Նա բանտարկւեց ու յանձնեց արտակարգ դատարանին եւ հակառակ մեր կուսակցական պաշտօնական ներկայացուցիչների հաւաստիացումներին, որ նա որեւէ կապ չունի ապստամբութեան հետ, որ նրա նկատմամբ եղած կասկածները արդիւնք են միայն Հայաստանի քաղաքական ստիկանութեան ցուցահանած չափազանց եռանդի, Մուշեղեանը դատարանի վճռով աքսորեց Հայաստանից: 1920 թւի աշնանը գընաց Թիֆլիզ եւ վերադարձաւ Հայաստան միայն խորհրդայնացումից յետոյ:

Բուլշեւիկները, որ այդ շրջանին մասնաւորապէս տառապում էին կադրերի (գործիչների) պակասից, անմիջապէս նկատեցին «հին ուսուցիչի զոհին» ու Տիգրան Մուշեղեանին առաջարկեցին բարձր պաշտօն իրենց նորակազմ կրթական տնօրինութեան մէջ: Մուշեղեանը դնաց ծառայելու նոր ուսուցիչին, ինչպէս եւ մենք բոլորս: Սակայն, դատն ու աքսորը անհետեւանք չէին անցել նրա համար եւ այս շըրջանում արդէն նկատուած էր որոշ տարբերութիւն նրա ու մեր տեսակէաների մէջ մի շարք ինդիւնների շուրջ: Նա, ի հարկէ, կոմունիստ չէր, բայց այնքան ձախ էր, որ հազիւ կարողանում էր տեղ դառնել մեր կազմակերպութեան ծայրայեղ ձախակողմում: Պէտք է այստեղ աւելացնեմ նաեւ այն, որ բուլշեւիկների գալով լուծեցան Հայաստանում բոլոր կուսակցութիւնները եւ վերացաւ դադափարական շփման ու փոխադրեցութեան հնարաւորութիւնը նաեւ մեր

կազմակերպութեան անդամները մէջ: Այդ էր մասամբ պատճառը, որ Տիգրան Մուշեղեանը չկարողացաւ ստոյգ զաղափար կազմել փետրաբին ծագած ապստամբութեան բնոյթի մասին եւ ընդհանուր շփոթութեան ու հապճէպ փախուստի ժամանակ մեկնեց Երեւանից ուսւ զօրքի, պետական մի շարք պաշտօնեաների եւ բուլղերիկեան կուսակցութեան անդամները հետ միասին: Բայց երբ երկրորդ թէ երրորդ օրը բուլղերիկները զինակոչի են ենթարկում նաեւ նրան ու ստիպում մասնակցել քաղաքացիական կռիւներին, Մուշեղեանը որոշում է խոյս տալ այդ ճակատագրից ու կոմունիստները նահանջի ժամանակ չի հետեւում նրանց եւ, պահելով թաղաքիցը, յանձնուում է հակաբուլղերիկեան ուժերին, որոնք բերում են «գերի բռնած կոմունիստին» Երեւան ու բանտարկում: Հետեւեալ օրը թիւրքիմացութիւնը պարզում է, եւ Մուշեղեանը ազատ է արձակւում:*)

Փետրաբեան ապստամբութիւնից յետոյ Տ. Մուշեղեանը մընում է Երեւան եւ շարունակում իր պաշտօնավարութիւնը լուսժողկոմատում, գրաւելով հետզհետէ սոցդատվարի, գլխարկվարչութեան պետի եւ լուսժողկոմի տեղակալի պաշտօնները: Հետագայում նա նշանակւում է մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի բնագիտական բաժնի նախագահ, բարձրագոյն մի շարք դպրոցների դասախօս, գիտական հիմնարկութիւնների անդամ եւ 1933 թւից՝ Պետական Համալսարանի վարիչ:

1923 թի 24 թւերին Մուշեղեանը մտնում է կոմ. կուսակցութեան մէջ, սակայն այս աստիճանում որեւէ նշանակալից գործունէութիւն չի ցոյց տալիս: Պետական ծառայութեան գծով գրաւելով ամենաբարձր պաշտօններ, Մուշեղեանը մինչեւ իր մահը մնում է կուսակցութեան շարքային անդամի գիրքի մէջ: Իմ խորին համո-


*) Գաղափար տարւ համար այս մասին, քէ ինչպէս են վերաբերում հայ բուլղերիկները դէպի պատմական անցուդարձերը, բերեմք վերոյիշեալ դէպքի բուլղերիկեան տարբերակը, առնելով «Խ. Հ.»-ից (թիւ 95): «1921 թւի փետրաբեան Գաշնակցութեան արտադրիայի ժամանակ, ընկ. Մուշեղեան անցնում է Ղազարլուի ֆրոնտը եւ որպէս կարմիր պարտիզան կաւում է դաշնակ բանդաների դէմ: Քաղաքացիական կռիւների ընթացքում դաշնակները բռնում են ընկեր Մուշեղեանին եւ յանձնում արտակարգ դատաբանին»:

Այս ամենը, ի հարկէ, սուտ է եւ մանաւանդ արտակարգ դատաբանի գրոյցը: Չճարտութիւնն այն է, որ տեղեկանալով Մուշեղեանի «գերութեան» մասին, ես այցելեցի նրան բանտի մէջ եւ հետեւեալ օրը աճամբ ազատ արձակեցի նրան, առնելով կանխապէս ֆրոնտեան կոմիտէի նախագահ Ս.Վրացեանի համաբերումը: Ա. Խ.

զումով այս կատարւում է ոչ միայն կենտկոմի հրահանգներով, այլեւ իր իսկ՝ Մուշեղեանի ցանկութեամբ կամ աւելի ճիշտը՝ որովհետեւ Մուշեղեանը գերադասում է լինել միայն շարքային կոմունիստ, այդ պատճառով էլ «սուղ չի քաշւում» կուսակցական գծով:

Այստեղից պարզւում է, որ կուսակցական տոմար Մուշեղեանին պէտք է եղել ոչ թէ անձնական նպատակների համար, այլ որպէս մի անհրաժեշտ միջոց լայնօրէն ու ազատութեամբ նւիրելու իր սիրած գործին՝ հայ մատաղ սերնդի դատարարութեան: Մուշեղեանի եւ կոմկուսի «համաձայնութիւնից» շահեց միայն այս վերջինը եւ այդ պատճառով էլ այդ «համաձայնութիւնը» որեւէ սուեր չի կարող ձգել անկաշառ ու անձնէր գործչի անբիծ յիշատակի վրա:

Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ



ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ԳԱՐՉԵԱԼ ԱԶԳԱՅԻՆ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մեր մամուլը, կլանած առօրեայ հարցերով ու կուսակցական վեճերով, հակառակ «ՎԷՄ»-ի կրկնակի յիշեցումներին,*) ոչ մի ուշադրութիւն չդարձրէր էջմիածնի, այսպէս կոչւած, Ազգային - Եկեղեցական ժողովի մշակած Հայոց Եկեղեցու Սահմանադրութեան նախագծի վրա, այն ինչ այդ նախագիծը, օրէնք դառնալու պարագային, շատ կարեւոր դեր է խաղալու մասնաւորապէս արտասահմանի հայութեան կեանքում: Ինչպէս արդէն գրել ենք «ՎԷՄ»-ում, այդ նախագիծը «Գեր-Հոգ. հորհրդի վերջնական խմբագրութեան եւ Կիլիկիոյ Տան Կաթողիկոսի ու Երուսաղէմի եւ Կ. Պոլսի պատրիարքների հաւանութեան հեթարկելուց յետոյ պէտք է հաստատի կաթողիկոսի կողմից եւ դրի գործադրութեան՝ հետագային Ազգային - Եկեղեցական ժողովի վերջնական քննութեան եւ հաստատութեան ներկայացնելու պայմանով»:

Ամենայն հաւանականութեամբ, այդ «Ազգ.-Եկեղեցական ժողովը» կը գումարի ծագատկին եւ գումարելու դէպքում էլ, անշուշտ, աւելի լրիւ ու կատարեալ չի լինի, քան այն Ազգ.-Եկեղեցական կոչւած ժողովը, որ գումարեց հորէն Կաթողիկոսի ընտրութեան առթիւ: Իսկ մինչ այդ, երկու կաթողիկոսի եւ երկու պատրիարքի կողմից մշակած սահմանադրութիւնը կը

մտնի իր ոյժի մէջ եւ կը դառնայ գաղութահայ կեանքը կարգաւորող - կամ անկարգութեան մատնող - օրէնքներից մէկը: Հասկանալի է, թէ ինչու այդ օրէնքի վրայից կարելի չէ անցնել այնպէս քեթեւ սրտով, ինչպէս անում է մեր մամուլն ու հանրային կարծիքը:

Թէեւ ցարդ ոչինչ ասած չէ, բայց, ամենայն հաւանականութեամբ, կաթողիկոսական պատրիարկ Գարեգին Արքեպ. Յովսէփեանը, այս կամ այն ձեւով, կը գրադրի եւ Սահմանադրութեան նախագծի խնդրով ու կը ջանայ, համաձայնութեան գալով Կիլիկիայի կաթողիկոսի եւ Երուսաղէմի պատրիարքի հետ, փութացնել Սահմանադրութեան վաւերացումը: Մենք հիմքեր ունենք ենթադրելու, որ այդ ուղղութեամբ արդէն կատարւում են որոշ աշխատանքներ, որ խնդրոյ առարկայ նախագիծը քննութեան նիւթ է Երուսաղէմում ու Անթիլասում, եւ զարմանալի չի լինի, եթէ մի գեղեցիկ օր էլ հրապարակ գայ նախագիծը օրէնք հրչակող կողմից: Այն ժամանակ, անշուշտ, մեր մամուլը աղմուկ կը բարձրացնէ, բայց արդէն ուշ կը լինի:

Աւելորդ չենք համարում մի անգամ էլ առաջ բերել էջմիածնում մշակւած Սահմանադրութեան նախագծի բովանդակութեան 15 կէտերը.-

1. Հիմնական կանոններ:
2. Ազգային - Եկեղեցական ժողով:
3. Ամենայն Հայոց Կաթողիկոս:
4. Կիլիկիոյ Տան Կաթողիկոսութիւն,

*) Տե՛ս «ՎԷՄ» 1934, թիւ 5 եւ 1935 թիւ 1:

Երուսաղէմի եւ Պոլսի պատրիարքութիւններ:

5. Տեղապահ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:
6. Գերագոյն Հոգեւոր հորհուրդ:
7. Թեմական Պատգամաւորական Ժողով:
8. Թեմական առաջնորդ:
9. Թեմական կամ վիճակային խորհուրդ:
10. Ծխական Ժողով:
11. Ծխական խորհուրդ:

12. Եկեղեցու պահպանութեան աղբիւրներ:

13. Կրթական եւ բարեգործական հաստատութիւններ:

14. Կառավարութիւն Եկեղեցական գոյեքի եւ հաստատութիւնների:

15. Քահանաների եւ սրանց որբերի եւ այրիների պահպանութիւն:*)

Ինչպէս տեսնում է ընթերցողը, այս նոր օրէնքը փոխարինելու է ոչ միայն 1836 թ. Պոլսեանի ն ու ռուսական կառավարութեան կողմից հաստատւած հետագայ օրինական տրամադրութիւնները, այլեւ Թիւրքիոյ Հայոց Ազգային Սահմանադրութիւնը: Էջմիածինը ուզում է մէկ ու միասնական օրէնքի ենթարկել բովանդակ Հայոց ազգային Եկեղեցական կեանքը:

Երկրորդ, նախագիծը ընդգրկում է ոչ միայն գուտ կրօնական - Եկեղեցական խնդիրներ, այլ դուրս գալով հաստատեալների սահմանափակ շրջանակից, կամենում է իրեն ենթարկել եւ հայ ժողովրդի ազգային - վարչական ու մշակութային կեանքը:

Այս վերջին պատճառով մշակելիք սահմանադրական օրէնքը ստանում է համազգային կարեւորութիւն եւ չի կարող սնօրհեւել միայն հոգեւորականներին ներք շրջանակում: Անցել են արդէն

այն օրերը, երբ Եկեղեցին ու հոգեւորականութիւնը ամէն ինչ էին մեր ժողովրդի կեանքում. այսօր ժողովուրդն է ամէն ինչ, իսկ Եկեղեցին ու հոգեւորականութիւնը՝ սոսկ ենթակայ ու ըստպատուր ժողովրդին: Էջմիածինը, Անթիլասն ու Երուսաղէմը ոչ ձեւական, ոչ էլ բարոյական իրաւունք ունին ինքնագույլս, առանց ժողովրդի լիազօրութիւն ստանալու հանրային կեանքի մասին օրէնքներ հրատարակելու:

Նախ քան որեւէ որոշում տալը, էջմիածինը պարտաւոր է մամուլի միջոցով հանրութեան սեփականութիւն դարձնել «Ազգ.-Եկեղ. Ժողով»-ի մշակած նախագիծը: Մամուլի քննութիւնը կը դիւրացնէ ժողովրդական կամքի արտայայտութիւնը:

Երկրորդ, ինչպէս մի անգամ էլ ասել ենք, նախագիծը «պէտք է դրի համա-ժողովրդական քննութեան եւ մշակելու վաւերացւի իսկական ազգային նշակաւորութեան», այսինքն՝ ժողովրդի քեզով հնարաւոր կատարելութեամբ ընտրւած Ազգային ժողովի կողմից: Այդպիսի մի ժողով ներկայ պայմաններում հնարաւոր է միայն արտասահմանում: Խորհրդային սահմաններում հրաւիրւած ազգային - Եկեղեցական ռեւէ ժողով չի կարող լինել աւելի լաւ, քան կաթողիկոսական ընտրութեան ժամանակ գումարւածը, այսինքն՝ ազգային ժողովի ժողովակար:

Հակառակ որ նախագծի մշակումից անցել է աւելի քան մէկ տարի, չնայած որ նախագիծը վաղուց ուղարկւած է Պոլս, Անթիլաս ու Երուսաղէմի քննութիւն, այսօր էլ դեռ մամուլին ոչ չինչ չի հաղորդւած ո՛չ նախագծի էութեան, ոչ էլ քննութեան ընթացքի եւ արդիւնքների մասին: Վիճակը անհանդուրժելի է: Միջնադարեան կղերապետական կարգերում չենք սպրում: Անհանդուրժելի է եւ մեր հանրային կարծիքի արտայայտիչը լինելու կոչումն ունեցող մամուլի անտարբերութիւնը:

Տե՛ս, «Միւռն», 1934, թիւ 10:

ՆՐԻ. ՏԵՐ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Յունիս 1-ին, Փարիզում, հանդիսա-
ւոր կերպով տօնւեց վաստակաւոր ու-
սուցիչ ու գրական - հանրային գործիչ
Երւանդ Տէր - Անդրէասեանի գործու-
նէութեան յիսնամեակը:

Երւանդ Տէր - Անդրէասեան Պարտի-
զակցի է, ծնած 1855 թ.: Իր ունումը
ստանալով հայրենի գիւղում, հանգուց-
եալ Եղիշէ Դուրեան սրբազանի շնչի
տակ, 1882-ին, 17 տարեկան պատանի
Երւանդը նւիրում է ուսուցչութեան,
որ այնուհետեւ դառնում է նրա բնա-
կան կոչումը: Մինչեւ 1890 թ. պաշ-
տօնավարում է Պարտիզակում, ապա,
յաջորդաւար, Նիկոմիդիայում եւ Ար-
մաշի Դպրեվանճում: 1895 թ. տեղա-
փոխւում է Պոլիս, Սկիւտար, ուր, 11
տարի պաշտօնավարում է Պէրպլէրեան
կրթարանում, փայլուն արդիւնքների
հասնելով մասնաւորապէս հայերէնի
դասաւանդութեան մէջ: Նա հմուտ հա-
յերէնագէտ է, խորին պաշտամունք ու-
նի դէպի հայոց լեզուն, որի հարուստ
գանձերին կատարելապէս տիրում է:

Պէրպլէրեանի գուզընթաց Ե. Տէր -
Անդրէասեանը, մինչեւ համաշխարհա-
յին պատերազմ, պաշտօնավարեց եւ
Ղալաթիայի կեդրոնական, Սկիւտարի
Ս. Խաչի եւ Գատը գիւղի ազգային դըպ-
րոցներում, աւելն տեղ էլ յայտնաբերե-
լով մանկավարժական փայլուն ձիրք եւ
անկաշառ սէր դէպի հայ նորահաս սե-
րունդը: Իբրեւ կրթական գործիչ, պ.
Տէր - Անդրէասեանը ներկայացնում է
հին, տարաբախտաբար, այժմ արդէն
գրեթէ անհետացած, գաղափարական
հայ ուսուցչի տիպարը, որի համար
դպրոցը սրբավայր էր եւ ուսուցչական
ասպարէզը՝ մի տեսակ պաշտամունքի
եւ նւիրումի վայր, ուր կարելի էր մըտ-
նել միայն մաքուր սրտով եւ անաղարտ
խորհուրդներով: Դրանով է բացատր-

ւում, որ նրա ձեռքից դուրս եկած ա-
շակերտների մէջ այնքան աչքառու տեղ
են գրաւում հանրային բնագոյի տէր,
անձնագոհութեամբ ժողովրդին ծառա-
յելու պատրաստակամ մտաւորականներ:

Միայն դպրոցական ասպարէզով չսահ-
մանափակւեց Ե. Տէր - Անդրէասեանի
գործունէութիւնը: Նա եռանդուն մաս-
նակցութիւն ունեցաւ եւ ազգային-հա-
սարակական գործերին: Աչքի ընկնող է
նրա կատարած աշխատանքը եւ գրակա-
նութեան բնագաւառում: Հէնց 80-ական
բնականների սկզբից նա սկսում է աշ-
խատակցել Ս. Գարամանեանի «Ընտա-
նիք»-ին, Ե. Տէրմիրնիպաշեանի «Երկրա-
գունդ»-ին, Ալանանեանի «Փունջ»-ին,
ինչպէս եւ «Արեւելք» լրագրին: Պոլիս
տեղափոխելուց յետոյ, նրա գրական
գործունէութիւնը ստանում է աւելի ու-
ժեղ քափ. նա գրում է գրեթէ հայերէն
բոլոր բերքերում եւ պարբերականնե-
րում, բայց, մանաւանդ, «Մասիս»-ում,
«Արեւելք»-ում, «Բիւզանդիոն»-ում,
«Մաղիկ»-ում, «Մանգունէի էփեփար»-
ում: Զինադադարի օրերին, մօտ մի
տարի, հրատարակեց «Նոր կեանք»
օրաթերթը, մասնաւորապէս լայն տեղ
տալով տեղահանութեանց ու ջարդերի
սհաւոր նկրտքի:

Ե. Տէր - Անդրէասեանի գրչի տակից
դուրս են եկել բազմաթիւ ինքնուրոյն
եւ քարգմանական աշխատութիւններ:
Վերջին գործը Յ. Վերֆէլի «Մուսա Լե-
բան քառասուն օրերը» մեծածաւալ վե-
պի թարգմանութիւնն է, որ պրակ առ
պրակ լոյս է տեսնում Սոփիայի «Մա-
սիս» հրատարակչականի ջանքերով: Հա-
կատակ իր յառաջացած տարիքին, Ե.
Տէր - Անդրէասեանը մարմնով ու մըտ-
քով դեռ կարավի է եւ պատանեկան
խանդավատութեամբ շարունակում է
ծառայել Հայ Մշակոյթին:



Ե. Տէր - Անդրէասեանի յորելեանի
տոթիւ «Վէմ»-ի խմբագրութիւնը Հե-
տեւեալ շնորհաւորագիրը ուղարկեց Յու-
րելեանական Յանձնաժողովին:—

Մեծարգոյ Պարոններ,

Այսու «Վէմ» հանդէսի խմբագրու-
թիւնը գալիս է միանալու հրապարա-
կային այն մեծարանքին, որ հայ հաս-
րակութիւնը ցոյց է տալիս վաստակա-
ւոր գործիչ պ. Երւանդ Տէր - Անդրէ-
ասեանին իր գործունէութեան յիսնա-
մեակի առթիւ: Ողջունում ենք ի սրտէ

ՏԻԿ. Ե. ԶՕՐԵԱՆԻ ՅՈՒՆԵԼԵԱՆԸ

Յուլիս 6-ին, Փարիզում, կատարեց
Տիկ. Ե. Զօրեանի մանկավարժական 40
ամեայ գործունէութեան յորելեանը,
Այդ առթիւ «Վէմ»-ի խմբագրութիւնը
հետեւեալ նամակը ուղղեց Յորելեարին.

Շատ Յարգելի Տիկին Լիզա,

Թոյլ տւէ՛ք այսպէս դիմել Ձեզ - Տի-
կին Լիզա, ինչպէս անւանում էր Ձեզ
Ձեր կեանքի ընկերը՝ մեր մեծանուն ու-
սուցիչ Ռոստոմը:

Ձեր կեանքի հանդիսաւոր այս վայր-
կեանքին, «Վէմ»-ի խմբագրութիւնն եւս
բերում է իր համեստ շնորհաւորանքն
ու երախտագիտական ջերմ զգացմունք-
ներն այն անսահման նւիրումի եւ անձ-
նագոհութեան համար, որով Դուք քա-
ռասուն տարի անյոգում Հայ ժողո-
վուրդին ընծայեցիք Ձեր իմացական
բարձր կարողութիւնները եւ Ձեր անձն
ու կեանքը բովանդակ: Անշահատէր
սրտով ծառայեցիք Հայ Մշակոյթին.

ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ

Հ. Բ. Ը. Միութեան Նուպարեան
Մատենադարանը այսօր արտասահմանի
հայ մշակութային կարեւոր ակութե-

հայ գրքի ու գրչի արժանաւոր մշակին.
հմուտ ուսուցչին ու հրապարակագրին.
հայոց լեզուի նարտար վարպետին, ազ-
նիւ մարդուն եւ քաղաքացուն իր տօնի
առթիւ: Խոնարհում ենք իր նւիրումի
եւ կամքի առջեւ, որ, գլուխը բարձր,
յիսուն տարի անընդհատ անյոգում եւ
անշեղ փայլել է մեր հանրային կեան-
քի տառապալից ուղիներով: Մազբում
ենք երկար կեանք եւ տակունութիւն՝
չարունակելու համար սիրած գործը
հայ մշակոյթի տատակաւոր անդաստա-
նում:

հայ սերունդների լուսաւորութեան գոր-
ծին, հայ կնոջ մտաւոր ու բարոյական
զաստիարակութեան եւ մարդկային ու
քաղաքացիական վերելքին:

Թոյլ տւէ՛ք ասելու, Շատ Յարգելի
Տիկին Լիզա, որ Ձեր նւիրումն ու քա-
ված ջանքերը ի գուր չեն անցել: Ապա-
ցոյց՝ Ձեր բազմաթիւ աշակերտ - աշա-
կերտուհիները, որոնք Ձեր շնորհիւ
դարձել են պարկեշտ անհատներ, լաւ
հայ քաղաքացիներ, արժանաւոր հանրա-
յին գործիչներ: Ապացոյց՝ այսօրւայ
հանդէսը: Ապացոյց՝ այն Մեծ Գործը,
որի զլխաւոր ստեղծիչներից եղաւ Ձեր
Ամուսինը՝ Ձեր գործօն ու բարոյական
ֆաշայերանճովը: Մենք՝ այս Գործի
համեստ մշակներս բախտաւոր ենք ու
հպարտ ողջունելու Ռոստոմի կեանքի
Ընկերոջ, Հայ Մշակոյթի վաստակաւոր
Մշակի եւ Հայ իգական սեռի փայլուն
ներկայացուցչի Յորելեանը:

Շատ օրեր Ձեզ, հանգիստ ու երջանիկ
կեանք Ձեզ, Շատ Յարգելի Տիկին Լիզա:

րէն մէկն է: Անոր մէջ ամփոփած են
ու հետզհետէ կը հաւաքուին հայագիտու-
թեան վերաբերող բազմաթիւ հրատա-

րակութիւններ ու պատմական վաւերագրեր, որոնք անփոխարինելի նիւթ են հայոց պատմութեան ու մշակոյթի ուսումնասիրութեան համար: Շնորհիւ վերատեսչութեան - հանգուցեալ Գ. Սինապեանի եւ այժմ պ. Լ. Կիւմիւշկերտանի - լուսամիտ ղեկավարութեան եւ մամուլանոց հմուտ եւ անձուկեր գրադարանապետ պ. Արամ Անտոնեանի քափած ջանքերու, Մատենադարանը արագ կերպով կը նոյնանայ եւ արդէն սկսած է գործնական շօշափելի դեր կատարել: Եթէ աւելի կանոնաւոր հիմքերու վրա դրին Մատենադարանէն օգուելու պայմանները, անոր դուռները աւելի լայն բացուին մտաւոր աշխատանքով գրադարաններու առջեւ, անկասկած, ստացելիք օգուտը կը լինի աւելի մեծ:

Ն. Բ. Ը. Միութեան 15 Մայիս գեղայնով ներկայացած են Նուպարեան Մատենադարանի արդի վիճակը: Ըստ այդ գեղարվեստի, Մատենադարանի կորիզը կազմուած է 1925 թ.ին, հայ կաթոլիկ յայտնի գրասէր Վիչէն Հոլասի ժառանգներու ներքաճ գիրքերու նոյն հաւաքածոյէն: Պօղոս Նուպար փաշա, որու անունով կոչուած է Մատենադարանը, 1927-ին, ներքաճ է յարկարածին մը. Փարիզի Սգուար Ալլամիի վրա, ուր եւ կը գտնուի այժմ Մատենադարանը:

«Պօղոս փաշա, - կը կարգանք գեղայնի մէջ, - իր գնած յարկարածինը կը տակեց Միութեան, իբր Մատենադարան մնալու պայմանաւ, ինք հոգաց դարակներու եւ կահաւորման բոլոր ծախքերը, եւ անոր հաւաքածոները նոյնացնելու համար ալ ներքեց իր մեծամուն հօրը՝ Նուպար փաշայի նոյն Մատենադարանը, որ Եգիպտոս կը գտնուէր եւ որ իր ծախքով փոխադրուցեալ Փարիզ: Կարգադրութիւններ ըրաւ եւ հիմնադրամ մը բողոք նաեւ Մատենադարանին տնտեսութեան ծախքերուն քեթեւացման համար: Իր ըրած կարգադրութեանց շնորհիւ, որոշ ժամանակէ մը ետք, Մա-

տենադարանը պիտի ունենայ հասոյթի նոր ադրիւրներ, որոնց շնորհիւ պիտի կրնայ նոյն իսկ Հրատարակչականի մը դերը ստանձնել:

«Այս առթիւ ստացուցեալ նաեւ հանգուցեալ Միքայէլ Փոքրուզալ փաշայի Մատենադարանէն մաս մը, Փարիզ փոխադրուցեան Միութեան Գահիրէի Մատենադարանին գիրքերէն կարեւորները, եւ հանգուցեալ Մատթէոս Կերեանի գիրքերը, որ Խոտայի մէջ ձեռք էր յիւսուցեալ Մատթէոս Կերեանի կամ նաեւ կարեւոր նշանակութիւններ, այնպէս որ պէտք էր դարակներով ծածկել ոչ միայն յարկարածինն հինգ սրահներուն պատերը, այլ նաեւ բոլոր ներքանցներն ու տրամադրելի անկիւնները, ու դարձեալ շէնքը նեղ եկաւ գիրքերուն համար: Հիմնադիրը, Պօղոս Նուպար փաշա, այս պարագան նախատեսած էր արդէն եւ միջոց մը աշխատած էր գնելու նաեւ Մատենադարանին կից յարկարածինը, բայց այն ատեն կարելի չեղաւ համաձայնի սեփականատիրոջ հետ:

«Իր հիմնադրին կտակին համաձայն, Միութեան Նուպարեան Մատենադարանը ստեղծուած է առաւելագոյն հայագիտական ուսումնասիրութեանց, հայագիտութիւնը առնելով իր ընդարձակագոյն նշանակութեամբ, եւ կը պարունակէ ոչ միայն հայ ժողովուրդին, այլ նաեւ անոր դրացի կամ անոր հետ յարաբերութիւն ունեցած բոլոր ժողովուրդներուն պատմութեան եւ ընդհանուր մշակոյթին ներքաճ կարեւոր աշխատութիւններ, գանձանք լեզուներով: Այս նիւղը միշտ կը նոյնանայ թէ՛ նոր եւ թէ՛ նախապէս հրատարակուած, բայց Մատենադարանին մէջ գոյութիւն չունեցող հրատարակութեանց գնումը, եւ անոր վերաբերող գործերը կը կազմեն հարստագոյն մասը հիմնարկութեան ընդհանուր գիրքերուն, որոնց թիւը 25000ը կանցնի այսօր:

«Իր հաստատման քաւակին, Նուպարեան Մատենադարանին մէջ կը

պակուէին մամուլանոց հայերէն հրատարակութիւններ: Այս մարզին մէջ առաջին կորիզը կազմեց ողբ. Մատթէոս Կերեանի գիրքերուն հաւաքածոն: Բայց սակաւ, թէ՛ ներատարածանց միջոցաւ եւ թէ՛ ծանր գոհողութիւններով ձեռք բերուցան շարք մը անհատական հաւաքածոներ, որոնցմէ կարծէ յիշել մամուլանոց Ս. Աստուածատուր Հարեմցի, հանգուցեալ Օրմանեան Սրբազանի, Յովհաննէս Խան Մասեհեանի, Հրանտ Ասատուրի, եւն. գիրքերը: Այսօր, Նուպարեան Մատենադարանի հայերէն հրատարակութեանց նիւղը կը կազմէ ամենէն կարեւոր եւ ամենէն արժեքաւոր հաւաքածոն որ երբեք գոյացած ըլլայ Թրքահայոց մէջ, ի հարկէ, բացառութիւն ըլլալով Վենետիկի եւ Վիեննայի Միտիքարաններուն դարաւոր Մատենադարանները:

«Նուպարեան Մատենադարանը գուրկ էր մամուլանոց հայերէն պարբերական հրատարակութիւններէ: Նոյնպէս ներատարածանց եւ ներքաճ գոհողութեանց շնորհիւ, այսօր կազմուած են շատ հազարաւոր օրաքերթերու եւ պարբերականներու ամբողջական հաւաքածոներ, որ 1840էն մինչեւ մեր օրերը հասնող ժամանակամիջոցը կընդգրկեն եւ կրնան ծառայել մեր ժողովուրդին այդ շրջանի ազգային, գրական ու քաղաքական կեանքին ուսումնասիրութեան: Մատենադարանը այսօր ի վիճակի է իր ընթերցողներուն տրամադրելու «Մասիս», «Կոմունիստ», «Արեւիկ», «Հայրենիք», «Բիւզանդիան», «Մուրթ», «Բազմավեպ», «Բանասէր», «Հանդէս Ամսօրեայ», «Ազգագրական Հանդէս», «Արաքս» եւ ոչ նաեւ կարեւոր ուրիշ պարբերականներու ամբողջական հաւաքածոներ: Մատենադարանը ունի նաեւ փրանսերէն կարեւոր պարբերականներու ամբողջական շարքեր, որոնցմէ կը յիշենք լոկ «Ժուռնալ Ազգաբնիկ», այնքան կարեւոր եւ անհրաժեշտ հայագիտական ուսումնասիրութեանց համար:

«Նուպարեան Մատենադարանին առաջին վերատեսուչ Ս. Գրիգոր Սինապեանի մահուանը հետեւանալով, Ս. Լեւոն Կիւմիւշկերտանի պատուակալ վերատեսչութեան կոչուելէն ի վեր, Նուպարեան Մատենադարանին եւ հորեղբայրին Հայաստանի պետական հիմնարկութեանց հետ յարաբերութիւնները բոլորովին սերտ հանգամանք մը ստացած են, եւ արդէն իսկ համաձայնութիւն գոյացած է փոխանակութեան դրութեամբ իրարու նուպարեան համար: Նուպարեան Մատենադարանը իր միջոցներուն ներքաճ չափով կ'օժանդակէ Հայաստանի թէ՛ Պետական Կուլտուր-Պատմական Թանգարանին եւ թէ՛ Գրապալատին: Կնւած համաձայնութեան համեմատ, այս վերջինը պարտադիր կարգով Նուպարեան Մատենադարանին պիտի դրկէ Հայաստանի մէջ լոյս տեսնող գրական, պատմական, բանասիրական եւ գեղարվեստական բոլոր հրատարակութիւնները, եւ միւս կողմէ, կարելի եղած չափով, պիտի ջանայ լրացնել Նուպարեան Մատենադարանի առաւելագոյն պարբերական հրատարակութեանց պակասները, ինչպէս «Արարատ», «Մշակ», «Արձագանք» եւն.:

«Բացի գիրքերէ եւ պարբերական հրատարակութիւններէ, Նուպարեան Մատենադարանը ունի նաեւ հարուստ հաւաքածոներ պատկերներու, քարտեզներու եւ հայ ազգին պատմական, քաղաքական ու իմացական կեանքին հետ առնչութիւն ունեցող վաւերագրերու, հայ գրողներու ինքնագիր աշխատութեանց եւ նամակներու եւն., եւ այս հաւաքածոներն ալ կը նոյնանան տարւէ տարի, նոյն իսկ աւելի մեծ չափով քան գիրքերն ու պարբերականները: Իր մօտ կեդրոնացած են Հրանտ Ասատուրի, Խաչատուր Միսաքեանի, Խաչիկ Ուղարիկեանի, Օրմանեան եւ Մանկունի Սրբազաններու, Տիգրան Երկաթի, Եղապար Արթին փաշայի եւ ուրիշ գրողներու ձեռագիր գործերը, ամբողջովին կամ

նիւթական տոմարները գոհացուցիչ են եւ հնարաւոր է գործադրել բժշկութեան համար գիտութեան պահանջած բոլոր միջոցները:

Գաղափար տալու համար Ա. Ահարոն-

եանի արտաքին վիճակի մասին, առաջ ենք բերում նրա լուսանկարը, քաշած 1934 թ. սեպտեմբերին: Նոյնն է նրա եւ այսօրայ պատկերը:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԻ Ի ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐԸ

«Խորհրդ. Արեւստ»-ը (յունիս) հարդում է, որ Պոլսում Թ. Ազատեանը յայտնագործել է կոմիտաս վարդի հետեւեալ անտիպ աշխատութիւնները.

1) 230 ժողովրդական երգ Շիրակի, վանի, Իգդիրի եւ Սարդարաբադի շրջաններէց:

2) Յ. Պարոնեանի գործերի մի մասի ձայնաւորումը, 17 մեծադիր էջ:

3) Հայկական ձայնակիշերով ձայնագրւած 17 ազգային, գեղջկական - ժողովրդական երգեր եւ պարերգեր:

4) 200 էջոց հայերէն եւ փրանսերէն մի ուսումնասիրութիւն հայ ժողովրդական երաժշտութեան մասին:

5) Նամակներ, բազմաթիւ ձեռագիրներ, նկարներ եւ այլն:

Այս նիւթերի մի մասը յանձնւած է կոմիտասի կնամատար Յանձնաժողովին. Փարիզում, իսկ մի քանի աշխատութիւններ ուղարկւած են երաժշտական բնագաւառ Թ. Թերլեմէզեանի, Երեւան:

Մեր կողմից աւելորդ չենք համարում աւելացնել, որ դեռ Գէորգեան ձեւաբանում ուսուցիչ եղած ժամանակ կոմիտաս վարդ. ձայնաւորել էր Յ. Պարոնեանի «Քաղաքավարութեան վնասները» գրքից մի քանի ծիծաղաշարժ կրտորներ, որոնք կոմիտասի անմիջական զեկավարութեան տակ ներկայացուցին ձեւաբանի աշակերտական բեմի վրա: Թերեւս այդ կտորներն են Թ. Ազատեանի յայտնագործածը:

ՐԱՓՓԻԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻԻ ՐԱՄ ԵԱԿԸ

Ինչպէս յայտնի է, այս տարի պատրաստութիւն է տեսնում տօնելու Րաֆֆիի ծննդեան հարիւրամեակը: Այդ առթիւ ծրագրում են յարելեանական հանդէսներ ու տօնական այլ կարգի ձեռնարկներ: Այժմ «Համագգային»-ի Ֆրանս. Կեդր. Մարմինը, «Յառաջ»-ում հրատարակած մի գեկոյցով, առաջարկում է հանդիսութիւնները յետաձգել երկու տարով, այն ատարկութեամբ, թէ Րաֆֆին ծնւել է 1837-ին եւ ոչ 1835-ին, ինչպէս ընդունւած է հայ գրականութեան պատմութեան մէջ: Առաջարկութեան հեղինակները հետեւեալ ձեւով են հիմնաւորում իրենց միտքը. «Րաֆֆիի մահէն անմիջապէս յետոյ,

1888 թւականէն սկսեալ, քսան տարի շարունակ, տիրոջ կարծիքը այն է եղեր, թէ մեծատաղանտ գրագէտը ծնւած է 1835-ին: Այս սխալը սեփականացնելով, յաջորդաբար մէկ-մէկու են փոխանցել «Մշակ», «Նոր Դար», «Տարազ», «Մուրն» թերթերն ու պարբերականները: Իսկ աւելի վերջ, այս սխալը մուտք է գործեր նոյնպէս հատորներում մէջ: Այսպէս, Լ. Մանւելեան, իր «Ռուսահայ գրականութիւն»-ը, եւ Գաբամանեան՝ իր «Րաֆֆիի կենսագրութիւնը» գրքով ին մէջ ցոյց կուտան 1835 թւականը:

Առաջին նշտումը կատարեց այրի տիկին Աննա Րաֆֆի, 1913-ի սկիզբը: Իր


հարազատները ձեռնարկած էին հրատարակել Բաֆֆիի ամբողջական գործին լրիւ հաւաքածոն: Այդ հատորներէն մէկուն՝ «Տանկահայֆ»-ին սկիզբը գետնդրած Բաֆֆիի լուսանկարին վերեւ գրած է.-

«Ապրիլ 24, 1913 քաղաքին լրանում է Բաֆֆիի մահուան 25 ամեայ տարեդարձը: Բաֆֆին ծնած է 1837 թւին եւ մեռած 1888 թւին»: (Տեսնել Վիեննայի Միսիոնարեան տպարանի հրատարակութիւնը, տիկ. Աննա Բաֆֆի, 1913-ին)...

Հանդիսութիւններու քաղաքին միօրինակութեան համար, հրապարակուող կուղղեմք մեր բոլոր մասնահիղերուն եւ մեզի բարեկամ այլ մշակութային միութիւններուն որպէսզի Բաֆֆիի ծննդեան հարիւրամեակը տօնելու իրենց պատրաստութիւնները յետաձգեն

1937 զարման:»

Թէ «Համագայիւն»-ի անարկութիւնը որքան է հիմնաւոր, դժուար է ասել. առաջ բերած փաստը բաւական չէ Բաֆֆիի ծննդեան ընդունած քաղաքը փոխելու համար: Իրա համար պէտք է բերելին աւելի լուրջ հիմքեր, կամ փաստական ուրիշ վաւերագիր: «Տանկահայֆ»-ի գրութիւնը կարող է սխալ լինել, մանաւանդ որ Տիկ. Աննա Բաֆֆին ուրիշ փաստ չէ ցոյց տւած մինչեւ այդ ընդունած քաղաքը ուրիշով փոխարինելու համար: Ամէն պարագայի տակ, «Համագայիւն»-ի Ֆրանս Կեդր. Մարմինը իր ձախորդ ելոյթով միայն կարող է խանգարում մտցնել մեր Մեծ Վիպասանի ծննդեան հարիւրամեակը պատշաճ հանդիսարարութեամբ տօնելու գործում:



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Տրապիզոնի առջեւ նախ վրա, 1912 թ.

ԳԻՐԿ ԵՒ ՄԱՄՈՒԼ

«ՅՈՒՍԱՐԵՐ»-Ի ԲԱՅԱՌԻԿ ԹԻԻԸ

Յուլիս 6-ին «Յուսարեր»-ը լոյս է տեսել 28 էջից բաղկացած՝ ամբողջապէս նւիրած իրանական ազգային մեծ բանաստեղծ Ֆերդուսի ծննդեան հազարամեակին: Բովանդակութիւնը շատ նոյս է ու բազմակողմանի: Առաջ են բերւած բազմաթիւ նկարներ՝ իրանական մշակոյթից եւ արւեստից: Աշխատակիցների շարքում կան շատ իրանցի ու հայ յայտնի անուններ՝ գիտնականներ, գրողներ, բանաստեղծներ, պետական մարդիկ: «Բացառիկ»-ի կազմութեան մէջ գործօն մասնակցութիւն է ունեցել նորերս վախճանւած հմուտ պարսկագէտ Յ. Միրզայեանը: Յօդւածների մէջ առանձնապէս աչքի են ընկնում Ներսէս Արքեպ. Մելիք - Թանգեանի, պրոֆ. Ն. Աղոնցի, Ն. Աղբալեանի, Բադի - Օզ - Զեմանի, պրոֆ. Հանս Հայնրիխ Շիդերի գրութիւնները: Հետաքրքրական են եւ միւս նիւթերը.

մանաւանդ իրենց արծարծած գաղափարներով՝ իրանցի հեղինակների յօդւածները:

«Բացառիկ»-ի հիմնական նպատակն է, անշուշտ, զարկ տալ հայ - իրանական բարեկամական մերձեցման: Սակայն, նկատում է եւ որոշ քաղաքական միտում՝ «Արիական ցեղերու եղբայրութեան Մեծ Տանարը» (խմբ.), կամ, աւելի որոշ՝ «Իրանական բոլոր ազգերի ազատութիւնը եւ բացարձակ անկախութիւնը Հիմալայէն մինչեւ Կովկաս, մի ընդհանուր դաշնակցութեան մէջ» (Ռուբէն): Քաղաքականութեան մէջ ամենէն վնասակար բանը երազատեսութիւնն է, քէկուզ այդ երազը Հիմալայի բարձունքներից գայ ... Ինչպէս յաջողւումով, այնպէս եւ իրացումով գեղեցիկ գործ է «Յուսարեր»-ի բացառիկը: Ափսոս՝ միայն, որ չի հրատարակւած գրքի ձեւով. գիրքը կը մնար գրադարանների մէջ. լրագիրը մէկ օրւայ կեանք ունի:

ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

«Նոր էջ»-ը «իրանահայ երիտասարդ գրողների» կողմից ՆՈՐ էջ հրատարակւող մի ժողովածու է, որի առաջին համարի խումբագրականում պարզւած է ձեռնարկի նպատակը՝ «քափ տալ իրանահայ ցամաքած միտքը եւ հանել այն ամուլիւնից, որին դատապարտւած է եղել մինչեւ այսօր»: «Ունենալ սեփական հզօր կուլտուրա, որ ամենից առաջ հպարտութիւն ներշնչի մեզ ինքներին»: «Ուրիշ խօսքով, ստեղծել զուտ իրանա-

հայ գրականութիւն»: «Իրանահայ երիտասարդ գրողները» ուզում են «նպատակաւ լինել հիմքը դնելու կուլտուրական մի գեղեցիկ քրադիսիոնի - գրել: եւ ոչ միայն գրել, այլեւ հրատարակել»:

Նպատակը, ի հարկէ, բարի է, գրել, հրատարակել, ստեղծել իրանահայ ազգային գրականութիւն, որի բացակայութիւնը իրօք որ «ոչ մի արդարացուցիչ համգամամք չունի»: Պարսկահայութիւնը ունի տեղական ազգային կեանք, կեն-

ցաղ, հետեւաբար պէտք է լինի եւ տեղական գրականութիւն: Երիտասարդները այդ միջոցին են նկատել, բայց դարձան իրենց միջոցներ են ցոյց տալիս: «Նոր էջ»-ը այդ տեսակէտից ամուլ գործ է: ոչ միայն «Նոր էջ», այլեւ ոչ մի նորութիւն չկայ նրա մէջ:

Սեփական գրականութեան - «կուլտուրական քրադիսիոն» - առաջին պայմանն է միջավայրի եւ ապրումների արծարծումը գեղարեստական երկերի մէջ, մինչդեռ «Նոր էջ»-ում իրանահայ միջավայրին առանձնատուկ բան չիկայ: «Նոր էջ»-ը իր բովանդակութեամբ կարող էր հրատարակել եւ երապայում կամ Ամերիկայում նոյնքան յաջողութեամբ, որքան եւ իրանում: «Իրանահայ երիտասարդ գրողներ»-ը նպատակ են դրել «գրել» եւ «հրատարակել»: կարեւորը, սակայն, ա՛յդ չէ. կարեւորը ինչ եւ ինչպէս գրելն է: Իրանահայ գրականութիւն ստեղծելու համար պէտք է լրջօրէն ուսումնասիրել իրանահայ կեանքը, համակել նրա ոգով ու գաղափարներով, լսել ու հասկանալ այդ կեանքի զարկերակը, ապրել նրանով, եւ այդ ամենը անցկացնել գեղարեստական ստեղծագործութեան բովից: Միայն ա՛յդ ձեւով կարելի է «հիմք դնել կուլտուրական մի գեղեցիկ քրադիսիոնի»:

Իսկ ի՞նչ են տւել մեզ «Նոր էջ»-ի հեղինակները. ժողովածուի երկու երրորդը լեցած է ոտանաւորներով, ուր երգում է «վայելքը», «անցորդ ու բոսոր», «սէր ու գառանցանք», «ափսոսանք» եւ «յուսահատութիւն», «սիրոյ անմեան բովչանք», «միայն սիրելի, միայն սիրո՛վ լինելի գոհ», «հոգու ծիածան յոյսեր», «գիշերայ դիւքանմանք»:

«Նոր էջ»-ի բանաստեղծները տեղում են՝

Ա՛յս, ինչ անուշ է մարմաշէ փափուկ Անկողնում քնել... քնել միասին՝

Շուրթ շրթի սեղմած եւ մարմին մարմին,

Ամենից ծածուկ,
Ամենից գաղտնի...

Ա՞յս է «կուլտուրական գեղեցիկ թրքադիսիոնը»: Ա՞յս է լինելու իրանահայ սեփական գրականութիւնը - այդ հի՛մ, անհամ, մաշւած երգերը իրենց «գաւառական» յուսահատ յաւակնութիւններով:

Նոյն «սյրովինցիայիզմն» է բուրում եւ ժողովածուի մի հատիկ արձակ կըտորից: Այդտեղ էլ իրանահայ միջավայրին յատուկ բան չկայ. հոգեբանական սովորական մի «էտիլդ»:

Լեզու ու ոնի տեսակէտից էլ ոչ մի նորութիւն չի բերում «Նոր էջ»-ը - արեւելահայ առօրեայ լեզուն համեմատած էտապ, անալիզ, դեւիզ, կուլտուրա, թրադիսիոն եւ նման օտար բառերով: Գէթ հայերէն լեզուն լաւ սովորէին: Գէթ իրանահայ լեզուի բնորոշ խօսքերը, ոնն ու ասացածքները տային՝ տեղական գոյնով ներկելու համար իրենց գաղափարները:

Մենք մի քիչ երկար կանգ առինք այս ձեռնարկի վրա, որովհետեւ նա իրօք որ արժանի է լուրջ ուշադրութեան: Իրանահայ երիտասարդ գրողները՝ մասը դրել են վերքի վրա. ախտահանչումը միշտ է: Դարմանումը սակայն սխալ: Պէտք է ա՛յս ուղղութեամբ աշխատանք: Պէտք է տան իրանահայ միջավայրի պտուղը հանդիսացող գրական երկեր:

Այս էլ է նոր ձեռնարկ - գրական ամսաթերթ: Զեռնարկողները նոյնպէս «երիտասարդներ» են, որոնք «կը ձգտին ու կը հաւատան արդիական ու մեր մէջ նոր ըմբռնումով մը խմբագրել այս քերթը, հետո մընալով գայն հասարակ ժողովածուի մը վերածել: Այլ՝ անոր պիտի տան կեանք»:

Քի հետ ընթացող, կեանքը իր նորութիւններու մէջ նշմարող, գաղափարներու եւ մտածումներու աշխարհը ցուցնող, հետեւաբար ապրող, բարախուն եւ առնցմով իսկ երիտասարդ, յառաջապահ նկարագիր մը:» «Մշակոյթ» որքան նոր արժէքներու հետամուտ, նոյնքան ալ պիտի լծի հին արժէքներու վերագնահատման աշխատանքին, ամենէն «մեծ համբաւ»-ներէն իսկ առանց ամենադոյզն չափով ազդելու: «Վերագնահատական այս աշխատանքը պիտի չսահմանափակուի լոկ դէմքերու շուրջ, այլ պիտի տարածուի գաղափարներէն մինչեւ շարժումները:» «Մշակոյթ»-ը ըլլալու է այն օրինակը, որ իր շուրջ համախմբէ ու պահէ հանգիստութեան եզրեր պարունակող բոլոր ուժերը:»

Ինչպէս տեսնում էք, խոստումները բաւական մեծ են: Իսկ ի՞նչ է տրւած դրա դիմաց: Կարելի է ասել ոչինչ: Եթէ մի կողմ բողոքներն են, Թափալեանի բանաստեղծութիւնները, միւս կողմէն նկարները առնալով՝ աշակերտական շարադրութիւններ են՝ տեսա մտքի եւ սգեղանքի յատուկ մեծատուրեան արդիւնք: Մի քանի վկայութիւն այս ու այն օտար հեղինակից, մի քանի փոփոխ խօսքեր, նոր բան ասելու մարմաջ, յուսահատ տգիտութիւն մայրենի մշակոյթի բնագաւառում - անա տիրող ոգին «Մշակոյթ»-ի գրական - բնագաւառական՝ «վերագնահատական» բաժնում: Իսկ գրական - գեղարեստական մասի մեջը՝ «Պարոն Կալունի»՝ գոհիկ ու տափակ մի պարսաւագիրն է: Ա՞յս է «գաղափարներու եւ մտածումներու աշխարհը ցուցնող» գործը: Ա՞յս «գաղափարներով ու մտածումներով» է հրատարակ գալիս «երիտասարդ սերունդը»:

Փարիզը Թեհրան չէ: Փարիզում ապրող ու սնուող երիտասարդներից իրաւունք ունենք պահանջելու անելի լուրջ

մտաւոր պաշար եւ անելի ձեռնհաս մտեցում դէպի հայ գրականութիւնն ու մշակոյթը ընդհանրապէս:

ՄԱՄՈՒԼԸ ԼԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեւանի «Նորիդ» Հայաստան» բերթի 5 մայիս համարում հետեւեալ տեղեկութիւններն են տրւած Հայաստանի մամուլի ներկայ քաղական վիճակի մասին.

Առ 1 մայիս 1935 թ. Հայաստանի սահմաններում հրատարակում էին 55 անուն բերթեր 222.600 միջին տիրածով. որից

12 կենտ. բերթ	161,500 տիրածով
27 շրջանային բերթ	44,300 տիրածով
1 երկարուղու բերթ	2,800 տիրածով
9 բազմատիրած	9,500 տիրածով
6 խորհրդակցային	4,500 տիրածով

Հետեւեալ քաղական տեղեկութիւնները ցոյց են տալիս մամուլի անման աստիճանը.

1927 թ-ին Հայաստանում հրատարակում էր 5 կենտրոնական բերթ 26,700 տիրածով. 1932ին՝ 10 բերթ 89,700 տիրածով. 1935ին՝ 12 բերթ 161.500 տիրածով:

1931-ին Հայաստանում լոյս էր տեսնում 10 շրջանային բերթ 10,900 միջին տիրածով. 1932ին՝ 13 բերթ 29,200 տիրածով. 1933ին՝ 18 բերթ 33,600 տիրածով. 1934ին՝ 21 բերթ 38,000 տիրածով. եւ, վերջապէս, 1935 թ. մայիսին՝ 27 բերթ 44,300 միջին տիրածով: Այս հաշուով, Հայաստանի բոլոր 27 շրջանները ունին իրենց բերթերը:

Հետաքրքրական են Հայկումկուսի եւ Հայգործկուսի կենտրոնական պաշտօնաթերթ «Նորիդ» Հայաստան»-ի քանակական զարգացման ցուցանիշները: Ըստ տարիների այս բերթի տիրածը հետեւեալ պատկերն է ցոյց տալիս.

1928 թ-ին	8,000
1929-ին	8,200
1930-ին	14,100

1931-ին	20,300
1932-ին	27,000
1933-ին	25,800
1934-ին	33,400
1935-ին	45,000

Հետաքրքրութիւնից գուրկ չեն եւ Հայաստանի ազգային փոքրամասնութիւններին պատկանող մամուլի մասին տրւած տեղեկութիւնները: 1935 թ. մայիսին Հայաստանում հրատարակուում էին:—

1 համրապետական օրաթերթ թուրքերէն.

1 համրապետական օրաթերթ ռուսերէն.

1 ,, հնգօրեայ թերթ ֆրանսերէն.

3 շրջանային թերթ թուրքերէն.

1 շրջանային թերթ ռուսերէն.

1 շրջանային թ. ֆրանսերէն-հայերէն.

3 շրջանային թ. թուրքերէն-հայերէն.

Այս տեղեկութիւնները կարդալիս չպէտք է մոռնալ երկու պարագայ. 1) ցոյց տրւած թերթը վերաբերում են *տիրաժին*, այսինքն՝ տպագրող, տըպարանից ելնող թերթերի ֆանակին, որ, անշուշտ, աւելի մեծ է, քան թերթերի իրական սպառումը. 2) խորհրդային երկրներում շատ անհատների եւ հիմնարկութիւնների համար որոշ թերթերի բաժանորդագրութիւնը պարտաւորեցուցիչ է. անտարակոյս, բոլորովին այլ կը լինէր պատկերը, եթէ բաժանորդագրութիւնը լինէր ազատ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ-Ի ՏԱՐԵԳՐԻՐՔԸ

«Համազգային» ընկ. կեդր. վարչութիւնը մամուլին ուղղել է հետեւեալ յայտարարութիւնը:—

Որոշած ըլլալով յառաջիկայ Սեպտեմ-

բերին սկսել Համազգային Տարեգրքի տպագրութեան, ստիպողաբար կը խնդրենք մեր աշխատակիցներէն փութացնել իրենց գրութիւնները, տպագրութեան գործը չդանդաղեցնելու եւ յապովան տեղի չտալու համար:

Ձկրցանք մեր ձեռնարկին համակիր եւ բարեկամ բոլոր մտաւորականներուն առանձին հրաւեր ուղղել, մեզի անծանօթ ըլլալով անոնց ուսանց հասցէները: Կը խնդրենք ներկայ կոչը նկատել աշխատակցութեան հրաւեր:

Բոլոր այն հեղինակները կամ հրատարակիչները, որոնք կուզեն իրենց գործերը ծանուցած տեսնել մեր տարեգրքին մէջ, պէտք է օրինակ մը զրկեն անոնցմէ՝ ուղղակի տարեգրքի խմբագրութեան:

Ձերմագին կը խնդրենք բոլոր այն բարեկամ ու համակիր անձնատրութիւններէն, որոնք իրենց մօտ ունին նահատակ կամ մեռած գրագէտներու անտիպ նամակներ եւ նկարներ, ինչպէ՞տ նաեւ պատմական վաւերագրեր, զրկել մեզ անոնց օրինակը կամ բնագիրը, տըպագրութենէն ետք վերադարձնելու պայմանով:

Տարեգրքին գինն է 20 ե. դ., լաւ թուղթի վրա, եւ 25 ե. դ. լաւագոյն թուղթի վրա: Այժմէն կընդունինք պատւերներ, կանխիկ վճարումով:

Յօդւած, գիրք եւ նամակ ուղարկել խմբագրութեան անունով.

ALMANACH HAMAZGAINE
B. P. 868. Le Caire (Egypte)

Իսկ դրամական առաքումները կատարել թժ. Հ. Օհանջանեանի անուն, նոյն հասցէով:

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ԸՆԿ. ԿԵՂՐ. ՎԱՐՉ.



ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Գ. ԼԵՒՈՆԵԱՆ «Հայոց Պարբերական Մամուլը», լիակատար ցուցակ հայ լրագրութեան սկզբից մինչեւ մեր օրերը. (1794 - 1934).

Հրատ. Մելիքեան ֆոնդի, 1934, Երեւան.

Մելիքեան ֆոնդի հրատարակած արժեւոր մատենաշարի մէջ այս գործը առանձին տեղ է գրաւում: Նա տալիս է ամփոփ պատկերը հայ պարբերական մամուլի՝ սկսած ծագման օրից մինչեւ 1934 թւականը: Գ. Լեւոնեանի աշխատութեան մէջ կան բազմաթիւ ցաւալի թերութիւններ, որոնք բայցաւորելի չեն նման հրատարակութեան մէջ:

Դրանց մասին մենք կը խօսենք առանձին, իսկ այստեղ կը ջանամք տալ գրքի ամփոփ պատկերը:

Գ. Լեւոնեանի գործը ունի հետեւեալ բովանդակութիւնը 1) *յառաջաբան*, ուր պարզում են գործի բնոյթը եւ հատորի կազմութեան հանգամանքները. 2) *ներածուծիւն*՝ պատմական մի համառօտ տեսութիւն հայ մամուլի ծագումից սկսած մինչեւ խորհրդային իշխանութեան հաստատուելը. 3) *Հիմնական նիւթ* - լրագրութեան մայր ցուցակը ժամանակագրական կարգով. 4) *պարբերականները ըստ հրատարակութեան վայրերի*. 5) *Նոյնը՝ ըստ բնոյթի եւ բովանդակութեան*. 6) *Խմբագիրները եւ հրատարակիչները ցանկը*. 7) *Հայ տպարանները, ուր տպւել են պարբերականները*. 8) *պարբերականների ընդհանուր այբբենական ցանկը*:

Մայր ցուցակում հրատարակութիւնների անունները բերւած են իրենց բնական տեսքով, որով նշգրիտ գաղափար է տրուում հրատարակութեան արտաքին մասին: Առաջ են բերւած տեղեկու-

թիւններ հրատարակութեան ժամանակի, վայրի, խմբագրական կազմի, տպարանի եւայլնի մասին: Օրինակի համար մէկ նմոյշ.

ԱԶԱՏԱՄԱՐՏ
Օրաթերթ

(Հ. Յ. Դաշնակցութեան)

Կ. Պոլիս Արտօնատէր խմբագրապետ՝ 1909-1912 Ռուբին Զարգարեան Տպ. Թիքաբեան 4 էջ, 48 ուղճ Ե. մետ. *Մանօթութիւն*. - Այս թերթը 1912-ին, Ոգ 907-ից կոչւում է «Առաջամարտ». դարձեալ նոյն թւից անունների փոփոխումներ է կրում՝ (յաջորդաբար տեսնել իրենց տեղերում) «Բագին», «Բիւրանիս», «Ազգակ», «Մեղու», «Շանթ», մինչեւ 1914 թ. Ոգ 1430-ը. ապա 54 համար հրատարակելով որպէս «Ճակատամարտ», դադարում է: 1918 թ. վերսկսւում է «Արդարամարտ» անունով եւ դարձեալ անունների փոփոխումով՝ («Արիամարտ», «Ճակատամարտ», «Մարմարտ») շարունակւում է մինչեւ հիմա եւ կոչւում է «Ճակատամարտ»:

Նմոյշը առաջ բերինք միայն ցանկի մէջ տրւած անունների մասին ընդհանուր գաղափար տալու նպատակով. փաստական սխալների մասին չէ մեր խօսքը: Ընդհանրապէս այս ձեւով ներկայացւած են գրքի բոլոր հրատարակութիւնները:

Ըստ Գ. Լեւոնեանի 1794-1934 թւականներին, այսինքն՝ 140 տարւայ ընթացքին հրատարակել է հայերէն ընդամենը

1586 անուն բերք-պարբերական, որոնք բաժանած են 22 երկրների՝ հետեւեալ ֆանակով. Հնդկաստան՝ 11, Իտալիա՝ 11, Ռուսաստան՝ 661, Աւստրիա՝ 6, Թիւրքիա՝ 436, Ֆրանսա՝ 86, Անգլիա՝ 8, Եգիպտոս՝ 69, Պարսկաստան՝ 37, Բուլղարիա՝ 40, Սվեդիա՝ 1, Հիւս. Ամերիկ. Միաց. Նահանգներ՝ 126, Յունաստան՝ 29, Ռումանիա՝ 18, Զվիցերիա՝ 8, Գերմանիա՝ 2, Սիւրիա՝ 24, Հունգարիա՝ 1: Արժանտին՝ 6, Կիւբա՝ 2, Քանադա՝ 2, Բելգիա՝ 1: Երկու բերքի վայր մնացել է անյայտ: Գ. Լեոնեանը մտացել է Պաղեստինը, ուր հրատարակուի է «Սիւն»-ը:

Այս 1586 անուն հրատարակութիւնները ըստ բովանդակութեան բաժանուի են հետեւեալ ձեւով. ֆազակական, հասարակական եւ գրական բերք՝ 601, ֆազակական, հասարակական եւ գրական հանդէս՝ 270, առեւտրական եւ տնտեսական հանդէս՝ 11, գիւղատնտեսական՝ 17, պատմա - բանասիրական, հայագիտական, ֆննական՝ 31, կրթական, մանկավարժական՝ 31, փիլիսոփայական՝ 2, գրական, գեղարեստական, գիտական՝ 157, երգիծարանական՝ 89, կրօնական - բարոյական՝ 58, իրաւաբանական՝ 7, բժշկա - առողջաբանական՝ 32, ռազմական - զօրական՝ 8, մարմնամարզ - զբօս՝ 10, մանկա - պատանեկան, աշակերտական՝ 44, արհեստակցական՝ 11, վիճակագրական՝ 1, տնտեսագիտական՝ 5, տեղեկատու՝ 48, նորաստեղծութիւն՝ 3, զանազան գիտելիքներ՝ 36, գերատեսչական, պաշտօնական՝ 18, անյայտ՝ 58:

Ըստ լոյս տեսնելու ժամանակի ստացուի է հետեւեալ պատկերը. տարեգիրք՝ 77, վեցամսեայ՝ 20, ֆառամսեայ՝ 8, եռամսեայ՝ 27, երկամսեայ՝ 8, ամսագիրք՝ 280, կիսամսեայ՝ 166, տասնօրեայ՝ 87, երկօրեայ՝ 48, ամենօրեայ՝ 173, օրը 2 անգամ՝ 2, անկանոն՝ 231, անձամօք՝ 86:

Այս բերքերը տպող տպարանների

բիւն է՝ Պոլսում՝ 68, Թիֆլիսում՝ 23, Երեւանում՝ 19, Փարիզում՝ 22, Գահիրէ՝ 14, Բագու՝ 9, Զմիւռնիա՝ 10, Ալեքսանդրապոլ՝ 8, Մոսկու՝ 7, Ալեքսանդրիա՝ 11, Բոստոն՝ 5, Ադանա՝ 8, Վան՝ 5, Թեհրան՝ 4, Վառնա՝ 5, Նիւ Եորք՝ 5, Աթէնք՝ 5, Կալկաթա՝ 3, Մարսէյլ՝ 3, Վենետիկ՝ 3, Մաֆիա՝ 3, Բէյրութ՝ 3, Բուխարեստ՝ 2, ժընեւ՝ 2, Տրապիզոն՝ 2, Գորիս՝ 2, Վաղարշապատ՝ 2, Պարտիզակ՝ 2, Ստեփանաւան՝ 3, Պետերբուրգ՝ 2, Շուշի՝ 1, Ալսալցիա՝ 2, Հալէպ՝ 2, եւ 35 ֆազակեանում՝ 1-ական, ընդամենը՝ 302 տպարան: Այս բիւերը, ի հարկէ, չի կարելի համարել լրիւ. օրինակ, չեն յիշուած Լիւնը, Բուէնոս Այրէս. Ֆրէզուայում յիշուած է 1 տպարան, այն ինչ աւելի է, եւայլն:

Հայերէն բերքերի ու պարբերականների խմբագրիչների եւ հրատարակիչների ցանկում, սկզբից մինչեւ 1934 թ., Գ. Լեոնեանը տալիս է 1220 անուն: Այս բիւն էլ շատ հեռու է իրականութիւնից: Հրատարակութիւնների մեծ մասի նկատմամբ Գ. Լեոնեանը բաւականացել է ձեւական վերաբերումով. դրել է միայն պաշտօնական խմբագրի կամ հրատարակչի անունը, որոնք, յաճախ, շատ հեռուոր առնչութիւն են ունեցել հրատարակչութեան ու խմբագրութեան հետ:

Այս բիւերը պերճախօս ասպացոյց են, թէ որքան գրասէր ժողովուրդ է մեր «փոքր ածուն»: Եւ, ի հարկէ, երախտապարտ պէտք է լինենք պ. Գ. Լեոնեանին այն ծանր աշխատանքի համար, որ նա քափել է այսօրէն նիւր, հաւաքելու, կարգաւորելու եւ խմբաւած տըպագրութեամբ հրատարակ հանելու համար: Աշխատութեան պակասաւոր կողմերին, ինչպէս ասացինք, կանդաղատնանք առանձին: Այն ժամանակ խօսք կը լինի եւ հատորին կցուած «ներածութեան» մասին, ուր ներկայացուի է հայ լրագրութեան անցեալը: Ա. Վր.

ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռ. Արբանձեան, «Ֆերդուսին եւ իր Շահնամէն», Ա. հատոր. Հրատ. Թեհրանի Հայ Ակումբի, 1934, Թեհրան:

Վ. Գէորգեան, «Պատմութիւն հին Յունաստանի», դասագիրք ազգային վարժարաններու համար, 1935, Պէյրութ. Հրատ. «Ջահակիր»-ի, բիւ 17:

Բարս Թահէր Օրիան Համադանի, «Բառեակներ եւ Ղազալներ», քարգմ. պարսկ. բնագրից Ռ. Արբանձեան, 1930, Թեհրան:

Էջմիածնէցի, «Տասնեւհինգ տարի բուշեիկեան երկիրներու մէջ», 1935, Պոսթըն:

Ոստանիկ, «Շահէնի հրեիքը», ժողովրդ. պատկերագրագիրք հեֆեսք. Հրատ. Թեհրանի Դաւթեան երկսեռ Դպրոցի, 1935, Թեհրան:

Վ. Ջորդարեան, «Յիշատակարան», Գ. հատոր, բիւ 37-40, 1935, Գահիրէ: «Հայրենիք», ամսագիրք. բիւ 3, 4, 5, 6, 7, 8:

«Բարձրակէպ», բիւ 1, 2, 3, 4, 5, 6:

«Հանդէս Ամսօրեայ», Յուն.-փետր., Մարտ-Ապրիլ, բիւ 1-2, 3-4:

«Սիւն», բիւ 4, 5, 6:

«Հասկ», բիւ 4, 5 - 6:

«Անահիտ», Մարտ-Յունիս, բիւ 3-4: «Երկունք», բիւ 9-12:

«Միութիւն», Մայիս-Յունիս:

«Հայ Սկսուտ», բիւ 14, 15-16:

«Հայ-Բոյժ», բիւ 4.5.6.7.8, 9, 10:

«Մշակոյթ», 1935 թ. Փարիզ, բիւ 1:

«Մասիս», Մանկ. Գրագ. բիւ 4.5.6:

«Մրգաստան», Մանկ.-պատանեկ. հանդէս: բիւ 2:

«Փունջ», Մանկ. երկշաբաթ. Գահիրէ, բիւ 4:

«Կանթեզ», բիւ 9:

«Կորհրդ. Արեւստ»,

«Կրական Թերթ»:

«Կաւկազ», (ռուս.):

«Նոր էջ», ժողովածու իրանահայ երիտասարդ գրողների, 1935, Թեհրան, բիւ 1:

Մ. Ֆ. Շիրոտայով, «Ազով - Անվճռվան կուսկազմակերպութեան գտման արդյունքները», Հրատ. «Կրոն» քերթի, 1935, Ռոստով:

Վ. Լեբեդիեւ, «Վարդերի եւ արեան երկրում», Ստամբուլիսկիի Բուլղարիայի մասին (ռուսերէն), 1935, Փարիզ: "Massis", London, № 1, 2, 3.

ՎԷՄ ՆԻՒՐՈՂՆԵՐ

Պ. Գ. Շահլամեան, Մարտչից, խմբագրութեան տրամադրութեան տակ է դրել 300 ֆր. չունեւոր հաստատութիւններին «Վէմ» ուղարկելու համար: Շնորհակալութեամբ ընդունելով նւերը՝ հետեւեալ հաստատութիւններին յատկացրինք երկու տարւայ «Վէմ».

«Արշալոյս» Օրիորդաց Միութիւն», Սեւանիկ:

Համանայի Ազգաբնարան, Սիւրիա: Ազգային Վարժարան, Հասիճէ:

Ազգային Վարժարան, Տէր Զօր:

Ի. Օ. Ambrookian, Նիւ Եորք, մէկ տարեկան «Վէմ» է նւիրում Քերթուկի Ազգային Վարժարանին, Իրաք:

Վ. Խրիմեան, Սէնթ Էթիէն - Միւրան հրիմեանին, Բէյրութ:

Հ. Ն. Գազանճեան, Եթովպիա - իր եղբոր Գ. Ն. Գազանճեանին եւ իր քրոջ Ս. Թօսունեանին, Սիւրիա:

Ար. Յովհաննիսեան, Արագան - իր եղբոր՝ Ա. Յովհաննիսեանին, Կալկաթա:

“V E M,”

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE

Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱԻՐԵԱՆ. — Կովկասի մշակութային պատմութիւնը 1
 Կ. Վ. ՏԱՅՔ. — Լեւոն Շանթի գեղարվեստական երկերը . . . 15
 Յ. ԻՐԱԶԵԿ. — Հայկական տպագրութեան անցեալից . . . 27
 ԳՐՕ. — Մի հատուած յուշերից . . . 45
 ԱՆԴՐԷՆ. — ՄԱՆԴԷԼՇԱՄ. — Ռուսաստանի քաղաքականութիւնը
 Թուրքիայում մեծ պատերազմից առաջ . . . 55
 ՇԱԽԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ. — Նպաստ մը հայ եւ թուրք աշուղական
 գրականութեան համեմատական ուսումնասիրութեան . . . 78
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ . . . 89
 ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ. — Երկու վաւերագիր. — Գրիբոյէդովի սպա-
 նութիւնը . . . 97
 ԱՆՅԵԱԼՔ. — Յարութիւն Յոլդանանեան. — Միհրան Սվազի.
 Յովսէփ Միրզայեանց. — Տիգրան Մուշեղեան, Ա. Մոնդ-
 կարեան . . . 102
 ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ. — Դարձեալ ազգ. — եկեղեցական սահմա-
 նադրութիւնը. — Երւ. Տէր-Անդրէասեան. — Տիկ. Ե.
 Զօրեանի յարեւանը. — Նուպարեան Մատենադարանը. —
 Ա. Ահարոնեանի առողջութիւնը. — Կովիտասի անտիպ
 գործերը. — Բաֆֆիի ծննդեան հարիւրամեակը . . . 110
 ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ. — «Յուսարեք»-ի բացառիկ թիւը. — Նոր
 պարբերականներ. — Մամուլը Հայաստանում. — Հա-
 մագգայի թարգմանքը . . . 119
 ԳՐԱԽՕՍԱԿԱՆ. — Գ. Լեւոնեան, «Հայոց Պարբերական Մամու-
 լը», Ս. Վր. . . 123
 ՅԱԻԵԼԻԱՇ. — Վ. Եպ. Մանկունի, Գէորգ Գ. եւ իր ժամանակը 145

Gérant : V. Hampartzoumian

Ըստ խնդրանաց սորա կազմեալ էր Աղգ. Պատրիարքարան զյա-
 սուկ Մանաթողով առ ի հաւաքել զկամաւոր նուէրս ի ձեռնհաս ազ-
 դայնոց ի նպաստ հրկիզեալ Հայոց Պրուսայու: Այլ սակայն հակա-
 ոակ ջանից Գէորգայ Արքեպս. ի եւ Մանաթողովոյ մի զկնի միոյ
 խուժէին ձախորդութիւնք եւ դատապարտէին զճիզս նոցա յամլու-
 թիւն: Ի միոյ կողմանէ ոչ դադարէին գժտութիւնք ներքինք ի ժո-
 դովականս կեդրոնական վարչութեան եւ յազգայինս, հրաժարա-
 կանք եւ հակառակութիւնք, եւ ի միւսմէ՝ հրկիզութիւնք մեծամեծ,
 հիւանդութիւնք եւ տաղանայք մաղձայուզք (քօլէրա) յարուցանէին
 զմեծամեծ արդելս եւ զխոչընդոտս ընդ դէմ նուիրահաւաքութեան,
 որ դանդաղել դանդաղէր եւ ոչ յաջողէր ըստ արժանոյն:

Վերջին աղիտարեր ձախորդութիւնն էր հիւանդութիւն մաղձա-
 յուղութեան (քօլէրա), որ չարաչար տարածեալ էր աստ ի Կ. Պո-
 լիս եւ յոմանազաւասոս, եւ յամսեանս Յունիսի, Յունիսի, Օգոստոսի,
 Սեպտեմբերի եւ Հոկտոմբերի մանդաղեաց անխնայ աստ ի Կ.
 Պոլիս զանձինս առաւել քան զքառասուն հազար, եւ վերահաս եղա-
 նակն ձմեռնային ընդ առողջապահական ինամոց եւ զզուլութեանց
 կայսերական կառավարութեան դադարեցոյց զպատուհասն զայն:
 Իսկ հրկիզութիւն մեծ եղեւ ի 25ն Օգոստոսի, յորում այրեցան ի
 բունիսկ ի Կ. Պոլիս՝ սկսեալ ի Պահճէ-Գարուլէ զԳում-Գարու՝
 տանք, խանութք, օթեանք, վաճառանոցք, մթերանոցք, եկեղեցիք,
 մզկիթք, վարժարանք եւայլք առաւել քան գերեք հազար (3000): Վա-
 սըն որոյ ծանրացան կրկնակի հարուածք, թշուառութիւնք եւ տա-
 ոսպանք ի վերայ բազմաց անձանց յայլ եւ այլ ազգաց եւ բնակչաց.
 բազումք անկան ի սնանկութիւն եւ ի կործանումն անկանգնելի, ո-
 րոց ականատես եղաք եւ մեք: Մնացին ի բացօթեայս անձինք առա-
 ւել քան զերեսուն հազար:

Արդ Տ. Գէորգ Արքեպս. ոչ դիտէր եւ ոչ իսկ ներէր անձին
 ձանձրանալ եւ անկանել ի յուսահատութիւն յաղագս այսպիսեաց
 բազմախուռն ձախորդութեանց, եւ յուսացեալ յԱստուած եւ ինա-
 մրս Նորա ինքնին դիմէր այս եւ անդր, գրէր զնամականի, եւ տա-
 կաւ առ տակաւ ջանայր արդիւնաւորել զնպատահաւաքութեան
 Մանաթողովոյ՝ համաձայն ներելոց միջոցաց եւ ժամանակի:

Իսկ ժողովուրդ Հայոց Պրուսայու թախանձէր զսա եւ աղաչէր
 վերադառնալ ընդ փոյթ ի Պրուսա, եւ ինքնին հանել ի դուրս զչի-
 նութիւն վարժարանի, եւս եւ հիմնարկել շինութեան նորոյ եկեղեց-
 ւոյ: Մանաւանդ երկամեայ բացակայութիւն նորին սրբազնութեան
 եւ ձախորդութիւնք ներքինք եւ արտաքինք ընդ դանդաղ ընթացից
 նուիրահաւաքութեան առթէր Պրուսացոց զյուսահատութիւն, եւ

յուսային զօրանալ եւ մխիթարել ներկայութեամբ Առաջնորդ-Թեմակալի իւրեանց, եւ ինքնին հնարել եւ հոգալ զկարեւոր միջոցաց ի լրումն շինութեան վարժարանի եւ ի կառուցման եկեղեցւոյ:

Վասն որոյ առեալ զգանձեալ զուժարս նուիրահաւաքութեան ի Մասնաժողովոյ կազմելոյ ի Պատրիարքարանէ, խնդրեց ի Պօղոս Արքեպս. Պատրիարքէ եւ յորդորեաց զանդամս Մասնաժողովոյ շարունակել զնուիրահաւաքութիւն որչափ լիցի հնարաւոր, եւ ինքն պատրաստեցաւ վերադառնալ ի Պրուսա:

ԳԼՈՒԽ ԼԷ.

ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՅ Տ. ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊՍ. Ի Ի ՊՐՈՒՍԱ,
ԵՒ ՍԱԿՍ ԱԻԱՐՏՄԱՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ

Էր 26 Դեկտեմբերի 1865 թուականի, մեկնեցաւ նորին սրբազնութիւն ի Կ. Պօլսոյ, եւ ի յաջորդ աւուր եհաս ի Պրուսա՝ յետ գիշերելոյ ի Կէմպէյիկ: Սրտաշարժ եղեւ հանդէսն. զիմաւորելոյ զնորին սրբազնութիւն, եւ մխիթարութիւն մեծ կարօտակէզ ժողովրդեան, լցեալ անչափ ոգեւորութեամբ եւ իրաւացի իմն ակնկալութեամբ:

Համաձայն հրամանի եւ պատուիրանի սորա գանձեալ հազիւ ուրեմն Ազգ. Գաւառական վարչութեան զկայսերաշնորհ 500 ոսկիս ի կառավարական արկղէ Պրուսայու՝ աշակցութեամբ Առաջնորդական փոխանորդի՝ ի 10րդ աւուր Օգոստոսի (1865) ձեռնարկեալ էր ի շինութիւն նորոյ վարժարանի ի նմին իսկ տեղւոյ ուր հաստատեալ էր այրեցեալն վարժարան Ս. Պօղոսեան՝ ի հիւսիսային կողմըն եկեղեցւոյ՝ յառանձին փոքու բարձրաւանդակի ի գեղեցկատեսիլ գիրս յաջակողմեան եզերս Կէօք-տէրէ ձորոյ: Էր երկայնութիւն շինուածոյ յարեւելից յարեւմուտս իբր քառասուն եւ երեք կանգուն ցղունն աստիճանաց, եւ ըստ լայնութեան իբր վեշտասան կանգուն, իսկ ըստ միջատեղեան-կեղրոնական լայնութեան ընդ խաչաձեւ թրւոյն՝ իբր քսան եւ երկու կանգուն: Համայն շինուած բովանդակէր զեօթն հարիւր եւ զյիսուն (750) քառակուսի կանգուն: Ճարտարապետ շինութեան էր Պ. Խաչատուր Կ. Պօլսեցի՝ Հաջի-Ուստա մականուանեալ ի Պրուսացւոց:

Իսկ ի սպասել 50,000 դահեկանւոյն նուիրելոց յօգոստ. Կայսրէ ի Սուլթան-Ապտ-իւլ-Ազիզ ինքնակալէ, դադարեալ մնայր լրումն ներքին շինուածոց վարժարանի:

Վասն որոյ Տ. Գէորգ Արքեպս. զուժարօք պատրաստելովք ի նպաստահաւաքութեանց եւ փոխառութեամբ փութացոյց եւ վերջա-

ւորեաց զշինութիւն վարժարանի՝ թերի թողեալ զգետնայարկն յասկացեալ ի սեղանատուն, սակաւուք թերի ըստ առաստաղացն զերկրորդ յարկ, եւ լրացուցեալ զվերին - զառաջին յարկ ըստ արժանւոյն եւ դմբեթաձեւ ի վերայ չորից սեանց ի միջնտեղւոյ (ի կեդրոնի): Ծախք շինութեան եղին 125,000 (հարիւր քսան եւ հինգ հազար) դահեկան:

Էր 20 Փետրվարի 1866 թուականի եւ Բ. Կիրակի Մեծ Պահոց՝ խօսեցաւ նորին սրբազնութիւն զքարոզ սրտաշարժ եւ աղեխորով յեկեղեցւոյ ի ժամ Ս. Պատարագի նախ քան զճաշու գիրս, ելաց ժողովուրդ ամենայն հեկեկանօք: Յետ աւարտման առաւօտեան ժամերգութեան կից ընդ Ս. Պատարագի, արարեալ զյատուկ պաշտօն հանդստեան վասն ննջեցելոց համայն նուիրատուաց որ ի նպաստ շինութեանց վարժարանի եւ այլոց, կազմեաց ապա զհանդէս եւ զթափօր եկեղեցական, և երգովք շարականաց ելեալ յեկեղեցւոյ էջ ի նորակերտ վարժարան հոյակապ եւ եռայարկ հանդերձ խուռն բազմութեամբ ժողովրդեան, կազմեաց զնաւակատիս բացման Գէորդեան վարժարանի, կատարեաց զաղօթս եւ զխաչահանդիստ յառաջին յարկի, յաւել խօսել զխրախոսական բանս առ ժողովուրդ, օրհնեաց զվարժարան, զԱզգս եւ զս. Եկեղեցի Հայոց, զբարեխնամ եւ զառատաբութ Սուլթան Ապտ-իւլ-Ազիզ Կայսր հանդերձ բարեմաղթութեամբք, զօսմանեան նախարարս, եւ զհամայն նուիրատուս յանուն եւ ի նպաստ շինութեան վարժարանի, եւ ասացեալ զպախալանիչ՝ կնքեաց զհանդէս, եւ արձակեաց զժողովուրդ ի խաղաղութիւն՝ մըխիթարելով յոյժ յոյժ զհայս զորդիս իւր:

Յետ որոյ ել յԱռաջնորդարան (վանք) եւ ընդ յառաջաւորս Ազգիս եւ ընդ վարչական ժողովոյ զբաղեցաւ ինքն կարեւոր կարգադրութիւնս սակս վարժարանի եւ վասն սկզբնական պատրաստութեանց վերակառուցման այրեցեալ եկեղեցւոյ:

Իսկ ժողովականք ամենայն խնդրեցին ի պատիւ հիմնադրի վարժարանի Տ. Գէորգայ կոչել զանուն Գէորդեան վարժարան, ընդ որ հաճեցաւ Նորին Սրբազնութիւն:

Ի յաջորդ աւուրն սկիզբն եղեւ դասատուութեանց ի Գէորգեան նորոք վարժարանի՝ յատկացուցեալ զերկրորդ յարկն միայն ի վարժարան արականաց, և զերկուս սենեակս որ անդ յարեւմտեան կողմն ի դպրոց օրիորդաց՝ տուեալ զառանձին մուտս ի կողմանէ Եկեղեցւոյ: Ըստ որում հարկ էր ի բարձրագոյն յարկի, իմա՝ ի վերնայարկի կազմել զեկեղեցի ի վերաշինութեան այրեցելոյն: Թիւք աշակերտաց եւ աշակերտուհեաց հասանէին ցհինգ հարիւր և առաւել հոգիս:

Արժան համարիմք դնել աստին գլխատակարան վարժարանիս որ
ի ճակատու արեւելեան մեծի դրան հոյակապ շինուածոյ :

- « Դպրոցս Գէորգեան աստ կառուցանի՛
- « Պարգեւօք հղօր մերս ինքնակալի՛
- « Եւ բարեպաշտից Արամեան Ազգի ,
- « Զանիւք բազմերախտ քաղաքիս դիտի
- « Տեառն Գէորգայ Արք Եպիսկոպոսի
- « Եւ Պօլսոյ նախկին Վեհ . Պատրիարքի :»

1 8 6 5 .

ԳԼՈՒԽ ԼԸ .

ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ Ս . ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ապաւինեալ Տ . Գէորգայ Արքեպս .-ի ի խնամս եւ յօգնականու
թիւն Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ , որում էր պաշտօնեայ ,
փութայր ի վերականգնել զայրեցեալ Ս . Աստուածածին եկեղեցի
միակ , ընդ կից եկեղեցաց կամ մատուանց , եւ ազատել զժողովուրդ
Հայոց յանպատասպար եւ յանապահով վիճակէ՝ որում ենթարկէր ի
ձմեռնային , յանձրեւային եւ ի հողմոտ եղանակս ընդ առժամա-
նակեայ տանեօք այրեցեալ եկեղեցւոյ ի վերայ որմոցն խարխալելոց
հանդերձ նորօքն : Որոյ վասն տակաւ դադարէր ժողովուրդ ի յաճա-
խւոյ ի Ս . Եկեղեցի՝ բաց ի հանդիսաւոր եւ ի տօնական աւուրց եւ
այն եթէ ներկայ լինէր Սրբազան Առաջնորդ թեմակալն :

Աւելորդ իմն է կրկնել եւ յիշել զանձուկ վիճակս եւ զտագնապս
Հայոց Պրուսայու , յերեսաց ոչ սակաւ ձախորդութեանց այլեւայլից ,
դորոց համառօտեալ եմք կարեւոր տեղիս ի շարս պատմութեան մե-
րոյ : Ոչ արդիւնաւոր եղեւ եւ նպաստահաւաքութիւնն որ ի Կ . Պօ-
լիս եւ ի շրջակայս : Եւ տակաւին ոչ էր յոյս արդիւնաւորելոյ զնը-
ուէրս որ յարտաքնոց՝ ցորչափ ոչ պակասէին ձախորդութիւնք ,
հրկիզութիւնք եւ տաղնապք համատարած հիւանդութեանց ի Կ . Պօ-
լիս եւ ի կարեւոր գաւառն ոմանս :

Հարկ էր անհրաժեշտ յենուլ ի սեփական միջոցս ներքինս մի-
այն , այսինքն առնուլ ի կշիռ զնիւթական վիճակ եկեղեցւոյ եւ ժո-
ղովրդեան , եւ այնպէս ելանել ի գործ , զի մի՛ ի վերայ աւաղոյ
հիմնեացի շինուածն :

Իսկ ժողովուրդ թախանձել թախանձէր միանգամայն ընդարձա-
կել զգլխոս եկեղեցւոյ , մինչ զժուլարանայր հոգալ զձախուց շինու-
թեան եկեղեցւոյ ի վերայ առաջին հիմանց , եւ մնային տակաւին
պարտք փոխառութեանն որ ի լրումն կարեւոր մասի շինուածոյ Գէ-

որգեան վարժարանի : Տ . Գէորգ Արքեպս . կամէր ի վերայ հիմանց
և որմանց այրեցելոյն վերականգնել զեկեղեցի նոր ըստ ներելոյ դը-
րամական միջոցաց եւ վիճակի եկեղեցւոյ եւ ժողովրդեան , թէպէտ
ինքն իսկ փափաքէր հոգուով չափ առաւել քան զժողովուրդ ընդար-
ձակել զգլխոս շինութեան նորոյ եկեղեցւոյ եթէ ըստ լայնութեան եւ
եթէ ըստ երկարութեան :

Եղեալ աստ զփակագլխօ համառօտեացուք զպատմութիւն շինու-
թեան այրեցեալ եւ նախկին եկեղեցեաց :

Յետ տեղափոխելոյ առաջին գաղթականութեան Հայոց Պրուսա-
յու ի Մուրատիէ , յիշնէպէկ եւ յԱրապա-եաթաղը թաղից յարեւ-
մըտեան-հարաւային եզերաց քաղաքին ի ներկայ թաղս Սէթ-Պաշը ,
Գարաղաչ , Սաքալ-տէօքէն , Էօմիւր-պէկ ևայն , յարեւելեան սահ-
մանս առ մերձաւոր ստորոտով Ողիմպիան լերին (Քէշիւ-թաղ) ,
զինի գաղթելոյ մեծամասնութեան ի Կ . Պօլիս ընդ Յովակիմայ Եպ-
ի յաւուրս իշխանութեան յալթոզ (Փէթիլի) Սուլթան Մէհմէմէ-
տի , զնոյ առնուն տեղափոխեալք զգետին ինչ ի ներկայ վայրի եկե-
ղեցւոյ ի Գարաղաչ առ ձորեզերք , յորում հիմնեն զփոքրիկ մատուռ ,
եւ շուրջ զնուաւ զխցիկս խիտ առ խիտ եւ իբրեւ զգետնայարկ խա-
նըս - օթեանս (իբր օթալար) : Եւ յանցելում եւ ի նախընթաց դա-
րըս ընդարձակեն Գէորգ Արքեպս . - Պատրիարք (ՌՄ) , Սուլթաս
Եպս . եւայլք զըջակայս մատուան , փոյթ կալեալ հեռացուցանել և
զխցիկս , զի մի՛ ձայնք օրօրոցոց եւ աղմուկք տանց խանգարեացեն
զժամերգութիւնս : Իսկ Տ . Եղիազար Արքեպս . (ապա Կաթողիկոս
ամենայն Հայոց ի Ս . Էջմիածին) - 1682 - եկեալ ի նուիրակու-
թիւն ի դիմաց Ս . Երուսաղէմի ի Պրուսա , ի տեղոջ մատուանն հնա-
ցելոյ կանգնէ զփոքրիկ եկեղեցի (1654-1662) յառաջ քան զամս եր-
կերիւր եւ քառասուն կամ յիսուն , առեալ զստորագրութիւն ի Հա-
յոց Պրուսայու՝ զի ոչ երբեք ունին նոքա իրաւունս միջամտելոյ ե-
լից եւ մտից եկեղեցւոյ , որ վերաբերի ն . է սեփականութիւն Ս .
Յակոբեանց վանուց Երուսաղէմի , եւ պարտին իբրեւ զաղօթաւորս
միայն գալ ի ս . եկեղեցի : Յայտոցիկ տեղեկութեանցս երեւին ոչ
միայն ողորմելի վիճակ Հայոց Պրուսայու , այլեւ շփոթութիւն եկե-
ղեցական - իրաւարանական կանոնաց եւ օրինակ տարօրինակ իմն
զեղծմամբք վիճակային ինքնակառավարութեան եւ դրութեան եւ
այն յԱռաջնորդանիստ քաղաքի :

Իսկ յաւուրս թեմակալ - Առաջնորդութեան Պօղոս Արքեպս .-ի
Քարազօչեան՝ (միացեալ վիճակս Պրուսայու եւ Նիկոմիտա) , ի վեր-
ջին ամս անցելոյ ԺԸ-րդ դարու եւ ի սկզբան ներկայ ԺԹ-րդ դա-
րու (ց1825) , յորժամ բազմացեալ էին հայ բնակիչք Պրուսայու աս-

տի եւ անդի, միանգամայն հնուժիւն եւ անձկութիւն փոքրիկ եկեղեցւոյ հիմնելոյ յեղիագարէ եւ վերանորոգելոյ քանիցս յայլոց ըստիպէ զնա (զՊօղոս Արքեպս.) ի նորոյ կառուցանել ի նմին խկ տեղւոջ զեկեղեցի ընդարձակ առաւել քան զառաջինն՝ տրօք եւ նպաստիւք ժողովրդեան եւ միացեալ վիճակին՝ համանման այրեցեալ Ս. Գէորգ Եկեղեցւոյ Սամաթիոյ, զոր եւ այրեն հակառակորդք ոմանք ի Մահմէտականաց: Եւ Պօղոս առեալ ի նորոյ զթագաւորական հըրովարտակ, եւս եւ կաշառեալ զպղղեցիկ Մահմէտականս ոմանս (որպէս յիշեալ եմք վերագոյնս սակաւօք) ի վերայ որմացն առաջնոց վերականգնէ զՍ. Աստուածածին եկեղեցի: Զորոյ զյիշատակարան շինութեան յաւելուք ի ծանօթութեան*), որ եւ այրեցաւ երկըրորդ անգամ լեալ՝ 1863 ամի փրկչական: - Իսկ առթիւ շինութեան Ս. Հովհաննիսեանց օր. գպրոցի, Յարութիւն Եպս. փակէ զարեւմտեան զսեծ դուռն գաւթի, ի տեղի որոյ զնէ զպղբիւր մշտահոս, եւ ի հիւսիսային կողմն գաւթի հաստատէ զնոր դուռն մեծ հակառակ ձեւոց Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց:

Վասն որոյ յորժամ ծածկէին առժամանակեայ եւ միապաղայ տանեօք զայրեցեալ զեկեղեցիս, ճարտարապետք եւ որմնադիրք ցուցին զխարխլագոյն վիճակ որմոց Ս. Աստուածածին եկեղեցւոյ կեղրոնականի, զոր գիտէր Տ. Գէորգ Արքեպս., եւ կամէր լուրջ իմն եւ շրջահայեաց խորհրդակցութեամբ կանխել որոշել Գաւառական ազգային ժողովով զոր պարտ էր առնել:

Ուստի յամսեանն Մարտի յաւուր Կիրակէի հրաւիրեաց Տ. Գէ

*) «Հրաշակառոյցս այս Սբ. Եկեղեցի,
 «Որ շինեալ յանուն Սբ. Աստուածածնի,
 «Նորոգ հիմնեցաւ հնացեալն կարի,
 «Ի ձեռն վեհի Տեառն Պօղոսի,
 «Որ քաջ արթուն դէտ ի Պրուսա քաղաքի,
 «Արքեպիսկոպոս Յարեթեան ազգի,
 «Ծննդեամբ Կեսարիայն գոլով հայրենի,
 «Որոյ հօրն անուն Ղարաղօջ ձայնի,
 «Ի աշակերտաց Չաքարիա վեհի,
 «Ազգասէր կոչեալ Պատրիարք Պօլսի,
 «Աշխատակցութեամբ իշխանացն յարգի
 «Եւ գործակալօք մերոյս քաղաքի,
 «Ընթացք շրջանի թուոյս Հայկազնի
 «Հազար երկհարիւր քառասն երեքի»:

որդ Արքեպս. յընդհանուր ժողով զհամայն երեւելիս, զժողովականս վարչականս եւ զգլխաւորս արհեստաւորաց, եւ որպէս առենարանեաց յեկեղեցւոջ, նոյնպէս խօսեցաւ ի ժողովի աստ պարզեալ զկարեւորութիւն շինութեան եկեղեցւոյ, զմտադրութիւն իւր եւ զչանս առ ի վերականգնել զեկեղեցին ի վերայ որմոցն հնոց, զկարծիս ճարտարապետաց, զթխանձանս ժողովրդեան առ ի ընդարձակել զեկեղեցի եւ հիմնել ի նորոյ, զչրամական անձկութիւնս եւ զվիճակ եկեղեցւոյ եւ ժողովրդեան, զանհրաժեշտ կարօտութիւն վաճառելոյ զկարեւոր մասն գործածելի արծաթեղինաց եւ անօթաց եկեղեցւոյ եւ այլոց, զպէտս նպաստահաւաքութեան ի Հայս Պրուսայու, աչլովքն հանդերձ, առաջարկեաց համախորհուրդ որոշել զոր պարտ էր առնել. միանգամայն ընտրել զյատուկ մասնաժողով ի պէտս նպաստահաւաքութեան, ի պէտս շինութեան եւ ի մատակարարութիւն մտից եւ ծախուց:

Անդ էր տեսանել զեռանդ եւ զողբելորութիւն ժողովականացն հարիւրաւորաց, որք անմիջապէս ընտրեալ զհաւատարիմ անձինս վստահելիս յանգամ Մասնաժողովոյ շինութեան, միահամուռ եւ միասիրտ թողին լիազօր կամաց եւ անօրէնութեան Ս. Առաջնորդի իւրեանց եւ Մասնաժողովոյ զոր պարտ եւ արժանի իցէ առնել ի շինութիւն եկեղեցւոյ, որում փափաքէին անձկանօք եւ ջերմեռանդ իմն բարեպաշտութեամբն:

Միանգամայն բացեալ անդէն զստորագրութիւն նպաստահաւաքութեան՝ այր իւրաքանչիւր կամաւորապէս որոշեաց եւ ստորագրեաց ըստ բարեպաշտութեան իւրում զնուէր իւր, խոստացեալ կրկնել եւ երեքինել զնպաստսն մինչեւ ցվերջաւորութիւն շինութեան եկեղեցւոյ:

Արդ արձակեալ Տ. Գէորգայ Արքեպս. ի զժողովուրդ ի խաղաղութիւն հանդերձ օրհնութեամբ եւ շնորհակալութեամբ, ի յաջորդաւոր սկսաւ տնօրինել ընդ Մասնաժողովոյ ի հայթայթել զչրամս ի պէտս շինութեան, զպատրաստութիւն ատաղձից քա այլոց, եւս և յորոշել ի հալել եւ ի վաճառել զարծաթեղէն զգարչա, զխաչս, զանօթս եկեղեցւոյ ընդ մնացորդ հին եւ նոր քճուար. արծաթիայս հալեալս (քիւլիւզէ):

Ղգեւորութիւն մեծ տիրէր ի ժողովրդեան ընդ եռանդուն բաւաստակցութեան: Կանայք եւ օրիորդ մրցէին ընդ արւանջ՝ տալով ի նպաստ շինութեան եւ ի նուէր զոսկիս, զմատանիս, քաղաքանջանս եւ զայլս այսպիսիս զղարդս իւրեանցք, ոմանք եւ զղրամս:

Զկնի հոգալոյ զնախնական պատրաստութեանց զրամականաց և շինուածանիւթոց, ի 4ն Ապրիլի 1866 թուականի սկսաւ Ս. Առաջ-

նորդ Տ. Գէորդ Արքեպս. եռադիշերային հսկմանց ըստ ծիսի եւ ա-
բարողութեանց Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ մասնակցութեամբ
բազմախուռն եւ բարեպաշտ ժողովրդեան՝ արտասուախառն աղօ-
թիւք եւ խնդրուածովք:

Իսկ յ՛ն Ապրիլի յաւուր տօնի Ս. Աւետեաց, յետ աւարտման
Վառաձորեան ժամերգութեան եւ Ս. Պատարագի, Տ. Գէորդ Արքեպս.
կօսեցաւ բազմախուռն ժողովրդեան բանս սրտառուչս եւ զյոջող-
ականս սակս վերաշինութեան եկեղեցւոյ համառօտ իմն ատենարա-
նութեամբ հանդերձ օրհնութեամբ եւ մաղթանօք, մինչ արտասուէր
ժողովուրդ առհասարակ, վառեաց զսիրտս ի հուր բարեպաշտու-
թեան, աստուածպաշտութեան եւ ազգասիրութեան, եւ ոգեւորեաց
զամենսին առհասարակ:

Յետ որոյ ելեալ արտաքս, յայրեցեալ եկեղեցւոյ, հրամայեաց
անմիջապէս հաւաքել զհամայն կազմածս եւ զպարունակութիւնս
սեղանաց եւ եկեղեցւոյ: Ապա հրամայեաց, եւ ահա հիւսանք, մշա-
կըք, այլ արհեստաւորք եւ խուռն բազմութիւն Հայոց լցեալ բուռձ
ջերմեռանդութեամբ, սիրով եւ ոգեւորութեամբ մեծաւ՝ ձեռն ար-
կին ի բառնալ զառժամանակեայ տանիս եկեղեցւոյ, փլուղին սակա-
ւուք եւ զըջապատսն խարխուլս ի սուղ ինչ միջոցի: Զոր եւ բաւա-
կան համարեալ, օրհնեաց Տ. Գէորդ Արքեպս. զաշխատաւորս եւ
զհամայն ժողովուրդ, արձակեաց երթեալ ի խաղաղութիւն, եւ ին-
քըն եւ յԱռաջնորդարան առ ի առնուլ հանգիստ սակաւիկ ինչ, եւ
ապա կազմել զնիստ խորհրդակցութեան ընդ Հոգաբարձական Մաս-
նաժողովոյ շինութեան:

Որոշեաց եւ կարգադրեաց կազմել զեկեղեցի յերրորդ - բար-
ձրագոյն յարկի նորակերտ Գէորդեան վարժարանի, յորում էին
յարեւմտեան կազմն ի լայնութեան շինուածոյ երեքին սենեակք ի
պէտս դասարանաց, եւ ի միջին սենեկի ընդարձակի եղ ակամայ եւ
առ անհրաժեշտ հարկի զՍեղան եւ զՎէմ առժամանակեայ զէպ յա-
րեւմուտս առ ի մատուցանել զՍ. Պատարագ, որպէս եւ սկսեալ յե-
րեկոյեան ժամերգութենէ աւուրն Ս. Աւետեաց (յ՛ն Ապրիլի) կատա-
րէր անդ կարգն Աստուածապաշտութեան մինչեւ ցաւարտ շինու-
թեան եկեղեցւոյ: Անդ արար Տ. Գէորդ Արքեպս. եւ զձեռնադրու-
թիւն քահանայական ի պէտս Պրուսայու եւ Եհնիքե գեղջ: Քահա-
նայք եւ զպիքք պաշտէին զկարգս եւ զպարտս իւրեանց կացեալ ա-
ռաջին միջին սենեկի, իսկ Տ. Գէորդ Արքեպս. Առաջնորդ եղ զաթո-
ւրն յաջակողմն եւ առաջի սեղանոյ ի նմին իսկ սենեկի, եւ ի ձա-

խակողմն կային վարդապետքն Պետրոս եւ Ստեփաննոս՝ աշակերտք
իւր:

Ապաքէն համեմատութեամբ բազմութեան ժողովրդեան էր ան-
ձուկ յոյժ առժամանակեայ եկեղեցին այն որ բարձրագոյն յարկի
վարժարանի, եւ ի հանդիսաւոր եւ ի տաղաւարական աւուրս շնոր
ժողովուրդ եւ զյարկն երկրորդ, եւ զոհանայր զՏեառնէ՝ լուեայ
անձամբք եւ եթ զեղանակս Աստուածպաշտութեան՝ առանց ակնա-
նելոյ անձամբ զհանդէս Ս. Պատարագի եւ զայլ արարողութիւնս եւ
զհանդէսս: Եւ զի մի՛ վտանգ ինչ զիպեսցի շինուածոյ վարժարանի
եւ աղօթաւորաց ի ծանրութենէ բազմութեան ժողովրդեան, ետ դը-
նել ի նորոյ դառժամանակեայ սիւնս եւ զկապս ի ներքին եւ յերկը-
րորդ յարկս ի միջավայրսն:

Իսկ ի վաղուեան աւուր յուրբաթու յճն Ապրիլի շարունակեցաւ
փլուզումն որմոց եկեղեցւոյ ի ձեռն վարձեալ գործաւորաց եւ բազ-
մաթիւ կամաւոր աշխատաւորացն ձրիաբար եւ ինքնայօժար եկելոց,
որպիսիք ոչ պակասեցան երբեք մինչեւ ցվերջ շինութեան: Եւ ընդ
երեկս յատակեցան որմունք:

Խախուտ որմունք եւ հիմունք հնոյ շինութեան հարկադրեցին
զճարտարապետ Խաչատուր ի բանալն զնոր հիմունս առաւելագոյնս
չորիւք կանգնով չափ՝ ցցահարել եւ ապահովել զսեւաջրեալ հաստա-
տութիւն հիմանց, մանաւանդ զի մերձ էին եղերք արհեստաւորեալ
բարձրաւանդակի տեղոյ եկեղեցւոյ ի ձորակոյս ընդ կողմն արեւ-
մուտեան եւ զառիւյս թեթեւ ի ձորեղերս, վտանգ երկրաշարժի
գօր հանապաղ կայր առաջի ականց, հարկ էր զգուշանալ ըստ ամե-
նայնի, զի մի՛ վտանգ ինչ զիպեսցի որմոց եւ շինուածոց եկեղեցւոյ,
ըստ որում եւ բարձրութիւն մտադրեալ նորոյ եկեղեցւոյ առաւե-
լոյր տասն կանգնով չափ առաւել քան զհնոյն, թող զընդարձակու-
թիւն շինութեան եւ զհաստատութիւն որմոց:

Յընդարձակելն զերկայնութիւն կեդրոնական եկեղեցւոյ ընդ ա-
րեւելս՝ հարկն անհրաժեշտ ստիպեաց առնուլ ի վայր զկամարս սե-
ղանացն երկց, զքարուկրեայ զկամարակապ դանձարանն հաստա-
տուն, եւ զմասնատունն (ուր պատրաստէին զմասն եւ զնշխար), որք
եւ յաւելուին բանալ զըրունս նորոց ծախուց ակելորդաց, ցորչափ ոչ
ներէր անձկութիւն միջոցի արեւմտեան կողման՝ եկեղեցւոյ ընդար-
ձակել: Սակայն անչափ էր ոգեւորութիւն եւ եռանդ ժողովրդեան եւ
միւթարական, մինչեւ խրախուսել զՏ. Գէորդ Արքեպս. եւ զշին-
ուածական Հոգաբարձութիւն ոչ երկնչել ի ծախուց, մանաւանդ զի
անձնանուիրական ջանք՝ ձրի աշխատակցութիւնք եւ շինուածանիւ-
թական նուիրատուութիւնք ժողովրդեան, մեծաց եւ փոքունց, ա-

րանց եւ կանանց, երկտասարդաց եւ կուսանաց, հարստաց եւ աղքատաց, դիւրացուցանէին, զեղէին զմի երրորդ մասն ծախուց շինութեան: Եւ անձնական աշխատութիւնք կամաւորք ի կրել զհող, զաւազ եւ զքարինս ի կից ձորոյն Կէօք-տէրէի թեթեացուցանէին զգործն յոչ սակաւ իրս, միանգամայն փութացուցանէին զշինուածն: Թողումք յիշել զարհեստական նուէրս եւ զձրի աշխատութիւնս հիւսանց, քարակոփաց, մշակաց, ատաղձադործաց, դարբնաց, երկաթագործաց և այլոց: Յաւելորդացն իմն էր յիշել եւ զայս, զի ձրի էին աւազ, քարինք, մարմարիոնք եւ այլք սոյնպիսիք: Մարմարիոնք էին ի հայ գերեզմանատանէ Չամլըճայի:

Արդ՝ աւարտեալ պատրաստութեանց զհիմանց շուրջանակի, Տ. Գէորգ Արքեպօ. Ս. Առաջնորդ զոյգ ընդ երեկոյեան ժամերգութեան կատարեաց զհիմնարկութիւն եւ զօծումն հիմնաքարանց շինութեան եկեղեցւոյ փառաւոր եւ սրտաշարժ իմն հանդիսիւ յաւուր շարթու ի 23ն Ապրիլի:

Եւ այսպէս անձամբ վարէր զշինութիւն եւ փութացուցանէր աւուրք յառաջ աւարտել, յորում մըցէին ընդ միմեանս Առաջնորդ, Մասնաժողովն եւ ժողովուրդ առհասարակ, որպէս եւ մեծ մասն գործաւորաց շինութեան: Յաջողութեամբ պսակէր Տէր զջանս եւ զաշխատութիւնս Ս. Առաջնորդի եւ ժողովրդեան: Խնդիր եւ ընտրութիւնն կաթողիկոսական յաւել եւ զայլ շարժառիթ ոգեւորութեան եւ փութաջանութեան, զի մի՛ թերի մնասցէ շինութիւնն եկեղեցւոյ, զոր ինքեանք Պրուսացիք զժուարանալոց էին աւարտել:

Ստիպեալ ի պատճառաց կարեւորաց, եւ զի մի՛ վտանգ ինչ ծագեսցի ի ներկայութեան ժողովրդեան, Տ. Գէորգ Արքեպօ. կատարեաց առանձին զօծումն խաչի ձակատու կամարի աւազ սեղանոյ զկէս ժամու յետ մտիցն արեւու յառաջին պահու զիշերոյ որ ունէր լուսանալ ի 25ն Նոյեմբերի:*)

Լրացեալ պատրաստեալ էին համայն ներքին շինուածք եկեղեցւոյ, որպէս եւ արտաքինք բացի ծեփոց արտաքին երեսաց որմոց լրացեալ էին եւ շինութիւնք կից եկեղեցեացն Ս. Լուսաւորչի (արանց) եւ Ս. Խաչի (կանանց) ընդ զանձարանոյն եւ պահարանացն:

*) Ի 4-ն Գեղտեմբերի ընդ երեկս գմետասան ժամու կատարեաց Սարիմ Սըրբազմուքիւն քեքեւ իմն հանդիսիւ զօծումն երկտասան խաչից որմոց յանուանս առաքելոց եւ զայլ խաչս ցակատուց կիսակամարաց սեղանաց Ս. Լուսաւորչի, Ս. Խաչի (նոր անուանելոյ փոխանակ Ս. Աստուածածնի), եւ փռուց սեղանաց, որ յերկուս կոչմանս Աւագ սեղանոյ, այս է Ս. Կարապետի եւ Ս. Ստեփաննայի:

Վասն որոյ հոգացեալ Սորին Սրբութեան նորընտիր Կաթողիկոսի ամենայն Հայոց զկարեւոր պատրաստութեանց հոգեւոր հանդիսի եւ նաւակատեաց օծման եկեղեցւոյ Ս. Աստուածածնի, յաւուր կիրակէի բարեկենդանի պահոցն Ս. Յակոբայ, ի 11ն Դեկտեմբերի, փառաւոր եւ շքեղաշուք հանդիսիւ մեծաւ կատարեաց զնաւակատիս եւ զվերջնական օծումն Ս. Եկեղեցւոյ եւ սեղանաց, հանդերձ հսկամարք եւս, եւ մատոյց ինքն զառաջին Ս. Պատարագ ի նորակառոյց տաճարի, որ եւ եղեւ առաջին Ս. Պատարագ իրր կաթողիկոսական: Այսու առթիւ խօսեցաւ ժողովրդեան քարոզ համառօտ, միանգամայն սրտառուչ, փառս տուեալ Աստծոյ, օրհնեաց զհամօրէն ամենայն աշխատաւորս եւ զնուիրատուս հանդերձ բարեմաղթութեամբք:

Իսկ ժողովուրդ լցեալ էր յանչափս եւ բերկրապատար ուրախութեամբ պանծայր ընդ լրումն շինութեանց, որպէս վարժարանի, նոյնպէս ս. եկեղեցւոյ, թէպէտ ի միւսմէ կողմանէ տիրէր թախծութիւն մեծ ի սիրտս ամենեցուն՝ առթիւ կաթողիկոսական ընտրութեան, որով զրկելոց էին ի բարեխնամ հովուէ իւրեանց եւ ի բազմերախտ Առաջնորդէ:

Սորին Սրբութիւն այսու առթիւ եւ ստիպեալ ի հարկէ անուանեաց զեկեղեցին կանանց յանուն Ս. Խաչի, որ յառաջ անուանէր Ս. Աստուածածնի, անուանեաց եւ զԱջակողմեան պահարան յանուն Ս. Գէորգայ զօրավարին, որ յառաջ կոչէր Ս. Խաչ:

Ընտրութիւն կաթողիկոսական եւ եղանակն ձմեռնային ոչ ետուն միջոցս եւ ժամանակ շինելոյ լրիւ զզանգակատուն եկեղեցւոյ եւ զհոյակապ խաչկալս, զվանդակս գաւթի եւ զարտաքին ծեփս եկեղեցւոյ, եւ զայլ կազմածս ինչ եւ զներկս երկուց վերնատանց կանանց որ յարեւմտակողմն աւազ եկեղեցւոյ:

Արդ՝ համառօտեսցուք զձեւոց եւ զչափուց եկեղեցւոյ ընդ կից փոքրիկ եկեղեցեաց:

Լայնութիւն բուն տաճարի մնաց ըստ հնոյն քան եւ հիմք կանգուն. կից եկեղեցեացն էին լայնութիւնք իրր վեց - վեց կանգուն: Երկայնութիւն տաճարի եհաս մինչեւ ցլխաւն եւ չարս կանգուն, յաւելեալ ի նորոյ գեօքն կանգուն եւ եթ: Ոչ էր հնար առաւել ընդարձակել, զի մերձ էր պողոտայն: Բարձրութիւն տաճարի է իրր քան կանգուն, և եկեղեցեացն իրր տասնական: Հաստատեալ են փայտեայ դռնիք տաճարի բացի յորմացն ի վերայ հանդիպակաց հաստահիմն սեանցն (գերանաց) հինգից զուգից, կամարակապ, յեզերսն՝ առաստաղի: Կամարակապ են եւ փոքրիկ եկեղեցիք:

Քարուկրեայ են որմունքն ամենայն եւ ամրացեալ երկաթակա.

պովզը ի կարեւոր տեղիս եւ յանկլինս . փայտածածկ տանիքն ապահովեալ են յարտաքին հրկիզութեանց :

Հանդիպակաց երկշար պատուհանք են ի հիւսիսային , ի հարաւային եւ յարեւմտեան որմունս , ստորինքն ի մեծ դիրս , եւ վերինքըն ի միջակ դիրս , ապահովեալք երկաթամփեղկովք :

Կամարքն են ծեփածոյք ի տախտակաշարս (պաղտատի) , որպէս եւ առաստաղքն :

Ձեւք ճարտարապետական ոչ են մոռացեալք ըստ ամենայնի եւ յամենայնի : Յորպիսիս քաջամուտ էր երիտասարդ Յարութիւն Աբգարեան Պրուսացի օգնական - ճարտարապետն՝ ուսեալ առ ոտս Պալեան ճարտարապետաց : Էր սա քեռորդի թաշատուր ճարտարապետի , որ էր հմուտ ի գործնականին եւ եթ :

Կիսամուտք աւագ սեղանոյ եւ այլոցն են աղիւսակրեայ եւ հաստահիմն , մարմարեոնք բիմիցն բերեալք ի գերեզմանատանէ , որպէս եւ սիւնք դրանց եւ սանդխաքարինքն (մարմարեայ) :

Քարուկրեայ եւ աղիւսախառն են կամարակապ պահարանք աշակողմեան (որ՝ որպէս եւ գանձարանք՝ ոչ այրեցան) , եւ նորաչէն գանձարանքն - աւանդատունք որ յարեւելեան կողմն եւ կից սեղանաց տաճարի յերկուսէ :

Ի յետկոյս աւագ սեղանոյ հաստատեցաւ գլխաւոր հիմնամասն գանդակատան ի վերայ առանձին եւ նախադուռեան բաժնի նորաչէն գանձատան , ի քառակուսի դիրս :

Միայրկ էր վերնատուն կանանց յայրեցեալ եկեղեցւոջ , որ երկյարկի եղեւ ի նորաչինի , եւս եւ առ ի նպաստել կարօտութեանց եւ պիտոյից եկեղեցւոյ՝ սահմանեցաւ վաճառել անդ կանանց գերիս կարգս յառաջոյ մինչեւ ցվանդակս երբեակ դասակարգութեամբ եւ գնովք՝ պայմանաւ վայելելոց ցկեանս եւ ոչ երբեք ժառանգական իրաւամբք :

Յիշատակարան շինութեան Սրբոյ տաճարիս հաստատեցաւ ի ճակատս աւագ դրանն արեւմտեան , եւ ունի օրինակ զայս :

« Ողորմութեամբն Աստծոյ ի հիմանց կառուցաւ Սբ. Տաճարս « յետ հրկիզութեան , տրովք բարեպաշտ ժողովրդեան Հայոց , փոյ- « թեռանդն ջանիւք բազմերախտ Առաջնորդ Հօր Տն. Գէորգայ Սբզն . « Արքեպս .-ի Նախկին Պատրիարքի Կ. Պօլսոյ , որ ընտրեցաւ Կա- « թողիկոս եւ ամբարձաւ յԱթոռ Հայրապետութեան*) ամենայն « Հայոց յայսմ ամի : 1866 :

*) Թէեւ ընտրեցաւ ի Կաթողիկոս Ամենայն Հայոց , այլ յետ օժման ի Ս. Էջմիածին կարէր ամբռնալ եւ նստել յաթոռ Հայրապետութեան բացարձակապէս : Հայֆէպ տագնապաւ եղիւ սոյն այս քերութիւն բառական :

« Ի փառս Ամենասուրբ Երրորդութեան յանուն Մեծահրաշ Սբ. Աստուածածնի» :

Հին յիշատակարան Ս. Լուսաւորչի էր ի վերայ արեւմտեան դրան :

« Շինեցաւ Սբ. Տաճարս (եկեղեցիս) ջանիւք բազմերախտ Ա- « աջնորդի մերոյ Տն. Գէորգայ Սբզն . Արքեպս .-ի Նախկին Պատ- « ըրարքի Կոստանդնուպօլսոյ , արդեամբք բարեպաշտ ժողովրդեան : « 1862 Յուլիս 5 :»

Արձանադրեսցաք ասդէն գհաշիւս շինութեան համառօտիւք իմն : Հաշուեկշիւ ելեմտից շինութեան Ս. Աստուածածին եւ կից եկեղեցւոյն , սկսեալ ի 1-էն Մարտի 1866 եւ կնքեալ ի 14 Յունվարի 1867 թ .

Մուտք .	Գահեկան	Ստակ
Ի վաճառմանէ այլեւայլ արծ . խաչից եւ անօթաց , եւ արծաթացն քծուռելոց ի հրկիզութեան եւ յետ հրդեհի	229,308	--
Դրամական նպաստք Հայոց Պրուսայու , արանց	165,060	--
,, ,, կանանց	45,874	-- 5.
Փոխարժէք յարծաթեղինաց եւ յայլ եւ այլ նիւթեղինաց նուիրելոց յիգական սեռէ Հայոց Պրուսայու , եւ դրամական նպաստք առաքեալք ի Կ. Պօլսոյ , յեղիպտոսէ , յերուսողէմէ եւ յայլ տեղեաց	46,370	--
Արդիւնք կնքահայրական պնա- կի յաւուր օժման եկեղեցւոյ	9,170	-- 20
	<hr/>	
	Համագումար	491,782 — 25

Ծախսք .	հատ	դահեկան	ստակ
Կղմինտր նորաձեւ (թաւաքիւրէմիտի)	7,782	— 8,267	— —
Կղմինտր հին	15,950	— 1,515	— 30
Աղիւս թրծեալ , երկար (թաւափաղ)	51,757	— 9,566	— —
Աղիւս թրծեալ , տափաք (տապուն)	10,085	— 7,199	— —
	<hr/>		
	փոխադրելի գումար	26.547	30

	փոխադրեալ գումար	26,547	—	30
Աղիւս թրծեալ, (քառակուսի (պայրաք)	29,943	—	13,320	—
Պատուհանական թափ-ծու վանդակ	2	—	3,575	— 20
Երկաթագամ եւ թելարեւեռ			6,416	— 30
Ատաղձ եւ տախտակ			65,902	— 10
Կիր (քար), 370,898 հօխայ			51,129	— 20
Աղիւսաւազ (խորասան)			3,425	—
Քէօֆէքէ քար եւ մարմարիօր սիւնացուք եւայլն			20,241	— 20
Գործաւորք եւ արհեստաւորք՝ Գարակոփ, 1604 օրական			23,350	—
Որմնադիր, 1013 ,,			37,462	— 20
Հիւսն եւ ատաղձագործ, 2987 օրական			38,675	— 20
Մեփարար, 1690 օր			23,672	— 10
Մշակ, 4419 օր			65,628	—
Ճարտարապետ			7,550	—
Տեսուչ - Գրագիր			3,725	—
Միւնացու եւայլն մեծամեծ գերանաց բերողչէք, պարգեւ			53,603	— 25
Մնացորդ պարտք շինութեան վարժարանի վճարեալ			—	— 20,020 —
Երկաթեայ չորս հատ մեծ դրունք			3,978	— 20
Համագումար	491,782	—	25	

Բաց ի նպաստից եւ ի գրուածոց՝ ընծայեալ են դարբին արհեստաւորք գերեսուն եւ չորս (34) մեծ երկաթափեղկս պատուհանաց, եւ պ. Յովհաննէս Մարաշլեան ընծայեալ է դերկաթեայ մեծ դուռն տաճարի՝ ծախսեալ դասան եւ մի հազար հինգ հարիւր (11,500) դահեկան:

Իսկ մարմարեայ քարինք բերեալք ի Չամլընա անուն գերեզմանատանէ Հայոց անցանէին առաւել քան զերեք հարիւր տապանաքարս, որք գործածեցան ի պէտս բեմի, սեղանաց, սանդխոց, դրանց, յատակաց գաւթի եւ մտից եւ այլոց կարեւորութեանց: Ս. Ա. ռաջնորդ ետ օրինակել զարձանագրութիւնս գերեզմանաքարանց եւ

պահել ի գանձատան եկեղեցւոյ, յորում արձանադրեցաք եւ մեք իբր զվերնադիր զտեղեկութեան ինչ համառօտագոյն:

ԳԼՈՒԽ ԼԹ.

ՅԱՂԱԳՍ ՎԱՅՈՒՆԻ Տ. ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԳՈՐԾՈՑՆ ՈՍԱՆՑ, ԵՒ ՎԱՍՆ ԽՆԴՐՈՅ ՊԱԼԱԺԵՆԻԱ ԱՆՈՒԱՆԵԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ 1836 ԹՈՒԱԿԱՆԻ

Տ. Տ. Մատթէոս Ա. Կաթողիկոս - Կոստանդնուպոլսեցի, - որ նստաւ յԱթոռ Հայրապետութեան Ամենայն Հայոց ի Մայրավանս Ս. Էջմիածնի յԱրարատեան աշխարհի յամի Տեառն 1859՝ ընտրեալ եւ հաստատեալ ի 1858 - կնքեաց զերկրաւոր կեանս իւր յետ փոքու հիւանդութեան ի գիշերի ուր ունէր լուսանալ ի Կիւրակէ ի 22ն Օգոստոսի 1865 ամի, ի հասակի - 72 - եօթանասուն եւ երկու ամաց, վարեալ զիշխանութիւն Հայրապետական առաւել քան զամս եօթն:

Սպանեալ էր կանխաւ Տ. Պետրոս պիտականուն Կաթողիկոս Աղթամարու, եւ ի 1ն Հոկտեմբերի (1865) վախճանեցաւ Տ. Կիրակոս Պիտականուն Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ (Սսոյ):

Այսպէս ապա մնային թափուր Արարատեան Մայր Աթոռ եւ պիտակ աթոռքն Սսոյ եւ Աղթամարու:

Տ. Մատթէոս Կաթողիկոս էր այր հնարադէտ, խորամանկ եւ ճարտարախօս, միջակ յուսմունս կրօնի եւ լեզուի, անհանգարդ բարութ, այլ զուրկ ի վարչական եւ ի դիւանագիտական հմտութեանց եւ ի փորձառութեանց, զորպիսիս ապացուցանեն յաւէտ պաշտօնական տեղափոխութիւնքն ի Նիկիոմիդա, ի Պրուսա, ի Չմիւռնիա, ի Կ. Պօլիս եւ այլն:

Վասն որոյ ի ստանձնելն զպաշտօն իւր ծայրագոյն ի Մայր Աթոռոջ, յորժամ աջակցէր նմա բարենախանձն Տ. Մակար Եպս. (ապա Կաթողիկոս - 1885 - որ եւ եկն յէջմիածնական Հրաւիրակ առ Տ. Մատթէոս Կաթ. այսր ի Կ. Պօլիս) որպէս եղև առաքել քան զամ մի ի Ս. Էջմիածնի, բարւոք վարեալ է զգործս եւ զյարարեւրութիւնս, ահնաճէին միաբանք եւ սինօդականք, իսկ ի Կարգել նորա զՄակար Եպս. ի թեմակալ - Առաջնորդ Հայոց վիճակին Վրաստանի եւ Իմէրէթի (Տփլիսեաց, 1860.1.) ի տեղի Տ. Մարգիս Եպս. -ի Չալալեան համաձայն ինդրանաց Ժողովրդեան եւ երիտասարդացն զարգացելոց, տկարացաւ Տ. Մատթէոս Կաթ. ի դեկավարութեան իւրում, անփորձութեամբ իմն դժտեցաւ ընդ ծերունադարդ եւ բազմափորձ Տ. Ղուկաս Արքեպս. -ի Մաստարացւոյ՝ Կաթ. Տեղապահի,

որ բազմօք ազդէր սինօղականաց եւ միաբանից եւ պատկառէին առ-
 Հասարակ ի նմանէ: Ոչ յամեցաւ վախճան կենաց Ղուկաս Արքեպ-
 ս.-ի, եւ այսու առթիւ ներէ ինքեան Տ. Մատթէոս Կաթ., լցեալ
 հակառակութեամբ, ասել ի Մայր Տաճարի դանպատշաճ իմն քա-
 ըող իբր դամբանական՝ առեալ ի բնարան զայս բան. «Անմիտ, յայ-
 սըմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջեցին, եւ զոր ժողովեցերդ
 ո՞ւմ լինիցի»: Յետ այսորիկ երես առեալ միաբանից եւ զբզոռեալ ի
 ներքուստ եւ յարտաքուստ՝ դամ քան զգամ դառնացուցին զվիճակ
 Մատթէոսի. սինօղականք սկսան ելանել զմիմեամբք, Զալալեան
 Եպս. ոչ դադարէր ի գրգռելոյ զվեղարաւորս եւ օր աւուր յաճա-
 խէր ի վրէժխնդրական ջանս ընդ դէմ նորա, ուստական կառավա-
 ըութիւն հնարէր ի դադանի եւ յաւելոյր զմեքենայութիւնս իւր
 ցորչափ ոչ համակերպէր Տ. Մատթէոս Կաթ. ջանից եւ ազգաւոր-
 ծան նպատակացն կառավարութեան: Մինչ զի անկեալ Մատթէոսի
 ի յուսահատութիւն մեծ՝ սկսաւ յաւելուլ ի ստորագրութեան իւ-
 ըում տղայամտաբար դածականդ վշտալի, միանգամայն խնդրեալ է
 ի ուստական կառավարութենէ թոյլատրել ինքեան ելանել արտաքս
 ի ուստական սահմանաց եւ վերադառնալ զալ այսր ի Կ. Պօլիս, ու-
 ըում ոչ ներէր երբեք Կեղրոնական Կառավարութիւն Պետերսբուր-
 գի՝ հակառակ յօժարակամութեան եւ թելադրութեան Կովկասեան
 փոխարքայական Կառավարութեան՝ ի յականէ՝ փոխարքայ եւ Կայ-
 սերագուն Միքայէլ Մեծ-դքսի (եղբորը Աղեքսանդր Բ. Կայսեր):

Կամեցեալ է Նորին Սրբութեան Վեհ. Կաթողիկոս վերանորո-
 գել զարտաքին որմունս Մայր Տաճարի Ս. Էջմիածնի, դէթ զբարի-
 նըս ծակոտեայս եւ մաշեայս, հիմնարկել եւ կարգել զնոր տպարան
 յարտաքին բակի որ ընդ մէջ դրանն Տրդատայ եւ հիւսիսային մեծի
 դրան պարիսպի, (ուր լեալ է ի հնումն շուկայն Վաղարշապատու,
 յառաջ քան գնեղկայ շուկայն որ արտաքոյ պարսպի), հիմնել հուսկ
 ուրեմն զընդարձակ ուսումնարան մեծ ի կողմն արեւելեան ի մէջ
 պարսպի դառաջեալ հնոյ ուսումնարանի, որոց եւ ձեռնարկեալ է
 յայլ եւ այլ ժամանակս, այլ միաբանք ի գիշերի խանդարեալ յա-
 ճախ գոտնեակս (խոկէյէ) որմոց՝ արգելեալ են զվերանորոգութիւնս,
 անգամ զփոփոխութիւնս քարանց. իսկ սինօղականք դադարեցուցա-
 նեն զշինութիւնս տպարանի եւ ուսումնարանի՝ յետ բանարոյ զհի-
 մունս եւ արկանելոյ զբարինս ինչ՝ առարկեալ իրաւամբ զպակասու-
 թիւն դրամոց եւ զանձկութիւն գանձարանի Ս. Էջմիածնի:

Կամեցեալ Տ. Մատթէոս Կաթողիկոսի ինքնին եւ միայնակ բա-
 րեփոխել զՊալատէնիա (1863) անուն կանոնադրութիւն Ս. Էջմիածնի,
 կազմեալ առաջարկեալ է զկանոնադրութիւն նոր եւ հակասական եւ



Բաժանորդ կարելի է գրել հետեւեալ տեղերը --


- Ֆրանսա՝ Լ. Գեւորեան, 17, Rue Damesme, Paris.
- Ն. Կակոսեան, 49, Rue Nationale, Marseille.
- Յունաստան՝ «Նոր Օր», 20-A, Rue Vouli, Athènes.
- Կիպրոս՝ Յ. Մահտեսեան, Arasta St. No. 1, Nicosia.
- Բուլղարիա՝ Յ. Տէվէճեան, 78 Bld. Hristo Boteve, Sofia
- Ռումանիա՝ Ե. Սարգսեան,
Typ "Astoria", 14, Str. Pictor Lichian, Bucarest.
- Եգիպտոս՝ Գ. Միթիթարեան, խմբագր. «Յուսարեր»-ի,
B. P. 868, Le Caire.
- Եթովպիա՝ Յ. Գ. Պուրսայեան, Hirna.
- Պաղեստին, Վահան Կէտիկեան, Haret-el-Nasara. Jerusalem.
- Սիրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 208, Alep.
- ,, Հ. Ապաճեան, B. P. 870, Beyrouth.
- ,, Ս. Պոյաճեան, B. P. 321, Damas.
- Իրաք՝ Մ. Սօսեան, South Gate Badaveen, 27-1, Bagdad.
- Իրան՝ Խ. Մելքումեան, Թաւրիզ:
,, Ա. Գէորգեան (Խուզիստանի ընդհ. գործակալ),
Արագան, P. O. Box 22,
,, Վ. Յովհաննիսեան, Թեհրան,
Teint. "Havar", Khiabane Nadery, Tehéran.
- Սպահան - Զուղա՝ Թաղ. Թաղէտեան
- Հիւս. Ամերիկայի ընդհ. գործակալ՝ Յ. Կօբոյեան,
H. Gopioian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.)
- Հարաւ. Ամերիկա՝ Եղ. Խաչերեան, Canning 1245, Buenos-Aires

« Վ Է Մ »

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Խալիսա՝
 տարեկան 70 ֆրանք
 Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրանք
 Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան Սիրիա, եւ
 Պարսկաստան՝ ,, 50 ֆրանք
 Հասցէ՝ նամակների, դրամի, յօդաձմերի եւ ուրիշ ամէն
 տեսակ առաքումների համար --

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)



Imp. ARTISTIQUE, — 42, Rue de la Jonquière, PARIS (17^e)